

ISSN 1829-0531

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
№ 1 (39)

ԵՐԵՎԱՆ - 2018

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
АРМЕНОБЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Խմբագրական խորհուրդ՝

Ռ. Կ. Միրզախանյան (նախագահ),

Մ. Գ. Գիլավյան (**գլխավոր խմբագիր**),
Ա. Ա. Ավագյան, Ս. Դ. Դանիելյան, Ա. Գ. Դոլուխանյան,
Ա. Կ. Եղիազարյան, Լ. Մ. Խաչատրյան, Ա. Վ. Գալստյան,
Հ. Հ. Հակոբյան, Վ. Գ. Համբարձումյան, Լ. Շ. Հովհաննիսյան,
Ա. Ա. Մակարյան, Ռ. Ռ. Ղազարյան, Է.Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,
Ա. Սեփեթճյան (Բեյրութ), Հ. Նալբանդյան (ԱՄՆ), Մ. Ադամյան (Մեծ Բրիտանիա)

Լ. Մ. Ալեքսանյան (**տեխնիկական խմբագիր**)

Գրանցման վկայական՝ 211.200.00182

Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003 թ.

Պարբերականությունը՝ եռամսյա

Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն վերադարձվում:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

«Հայագիտական հանդես» ամսագիրն ընդգրկված է թեկնածուականատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ԲՈՀ-ի կողմից ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում (12.05.06թ. 133-01):

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-20)

Էլեկտրոնային փոստ՝ alexanyan00@mail.ru

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
ռումանագերմանական լեզուների ամբիոնի ափստենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 81

**«ՎԱԽ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ և ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

*Վախկոտությունն իր ծաղկման շրջանում վերածվում է դաժանության
Հ. Յ. Իրսեն*

Բանալի բառեր և արտահայտություններ. հույզ, վախ, լեզվամշակութային առանձնահատկություն, դարձվածք, վերլուծություն:

Ключевые слова и выражения: эмоция, страх, особенность лингвистической культуры, идиома, анализ.

Key words and expressions: sense, fear, linguo-cultural peculiarity, idiom, analysis.

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել «Վախ» հուզական հասկացույթը հայերենում և անգլերենում, ինչպես նաև անցկացնել զուգադրական լեզվամշակութային համեմատություն:

Հույզերի մասին տեսությունները սկսել են ձևավորվել դեռևս 19-րդ դարում՝ Ջեյմս-Լանգեի տեսություն, Ու. Քեննոնի առաջարկած տեսակետ, Ս. Շախտերի տեսություն և այլն, սակայն հույզերի լուրջ ու գիտական ուսումնասիրությամբ հոգեբանությունը սկսել է հետաքրքրություն ցուցաբերել ու զբաղվել միայն վերջին տասնամյակներին: Հույզերի կոնկրետ ձևակերպման մասին գիտնականները տարակարծիք են: Այնուամենայնիվ, գերակշռող կարծիքն այն է, որ հույզերը մարդու առաջնային մտիվացիոն համակարգի հիմքն են: Այսինքն, մարդու կատարած ցանկացած քայլ մեծապես պայմանավորված է հույզերով: Մարդկային վարքագիծը ամբողջովին հիմնված է հույզերի վրա, վերջիններիս միջոցով է, որ իրագործվում է ընկալման գործընթացը, գտվում ու մշակվում զգայարաններով ստավցած ողջ տեղեկությունը: Մարդը հույզերը ձեռք է բերել էվոլուցիոն զարգացման ընթացքում: Չնայած առկա բազմապիսի տեսություններին, մինչ օրս չի ստեղծվել համապարփակ այն պատկերը,

ըստ որի պարզ կդառնա այն դերը, որ յուրաքանչյուր հույզ խաղում է մեր կյանքում:

Վախը առավել տարածված հույզերից է: Գրեթե բոլորս բավականին հաճախ ապրում ենք այս հույզը: Ինչպես իրական, այնպես էլ երևակայական վտանգը կարող է վախ առաջացնել: Ա. Նալչաջյանը սարսափի երկու հիմնական տեսակ է առանձնացնում. «Մարդու ուժերը շարժման մեջ դնող կենտրոնացնող, ստենիկ, հույզ, բայց երբեմն ուժերը թուլացնող, կաշկանդող՝ աստենիկ սարսափ»:¹ Մարսափը, հանդիսանալով վտանգի ազդանշան, մարդուն կարող է մղել անհրաժեշտ գործողությունների և որոշ դեպքերում նպաստել կյանքը վտանգից փրկելուն: Վախեցած մարդու մոտ բոլոր իմացական գործընթացները փոխվում են, դառնում նեղ մակերեսային: Իր ֆիզիկական գոյության նկատմամբ սպառնալիք տեսնելով՝ մարդն իրեն անպաշտպան է զգում:

Վախը առաջանում է վտանգավոր օբյեկտների հայտնվելու, ինչպես նաև մարդուն պաշտպանող ուժերի բացակայության դեպքում: Մենությունը, օտար միջավայրում գտնվելը, որևէ առարկայի հանկարծակի մոտենալը, բարձրությունը, ինչպես նաև շատ այլ գործոններ մարդուն փոխանցվում են ժառանգաբար, այդ պատճառով դրանց նկատմամբ հիվանդագին վախ չկա և մարդկանց մոտ բոլոր տարիքներում դա պահպանվում է:

Ե՛վ հայերենում, և՛ անգլերենում վախի գրեթե բոլոր աստիճաններն ունեն իրենց անվանումները, ինչը նշանակում է, որ երկու ազգերի պատմահոգեբանական փորձի կուտակման ընթացքում դրանք գիտակցվել և ամրագրվել են որպես հոգևոր մշակույթի երևույթներ. սարսափ, տագնապ, կասկած, պատկառանք, ակնածանք, երկյուղ, սոսկում, ահ, զարհուրանք, խուճապ, դողահարություն/ fear, cowardice, terror, dread, anxiety, horror, awe, trepidation, tremor, apprehension, suspicion etc.

Թեև վախն ունի ժառանգական արմատներ, այնուամենայնիվ, դրա շատ տեսակներ առաջանում են ուսուցման հետևանքով, կյանքի որևէ փուլում: Դրանք վախի իրացիոնալ տեսակներն են՝ ֆոբիաները: Վերջիններս ձեռք են բերվում որոշակի տպավորությունների ազդեցության տակ և հաճախ հիվանդագին բնույթ ստանալով՝ խաթարում են մարդու անկաշկանդ գործունեությունը:

Հույզերի ուսումնասիրության ոլորտում իր լուրջ ներդրումն է ունեցել ամերիկացի գիտնական Ֆլորիդայի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Պլուչիկը: Գիտնականն առանձնացնում է հույզերի ութ հիմնական տեսակ՝

¹ Նալչաջյան Ա. Հոգեբանության հիմունքներ. Երևան. 1997 թ.

վախ, զարմանք, տխրություն, զզվանք, գայրույթ, կանխազգացում, ուրախություն և համակրանք:

Նրա համոզմամբ այս բոլոր հույզերը այս կամ այն չափով էվոլյուցիոն զարգացում են ապրել կենդանի օրգանիզմների մոտ, որպեսզի նպաստեն վերջիններիս վերարտադրմանը, օգնեն հարմարվել շրջակա միջավայրին ու գոյատևել: Ըստ Պլուչիկի, օրինակ, վախը առաջացնում է «կովիլի կամ ծլկիլի հակազդեցությունը (թարգմանությունը հեղինակին է)»² Անզվերենում դա տրվում է բառախաղի տեսքով՝ “fight or flight response”.

Բոլոր հույզերը Պլուչիկը ներկայացնում է մի շրջանակի վրա, որը կոչվում է «Պլուչիկի հույզերի անիվ»: Այս անիվի վրա իրար նման հույզերը տեղավորված են կողք կողքի, իսկ հակառակ կողմում գտնվում են իրար հակադարձ հույզերը: Օրինակ, վախին գիտնականը հակադրում է գայրույթը:

Պլուչիկի հույզերի անիվը հիշեցնում է գույների ներկապնակ, որտեղ միևնույն հույզի տարբեր աստիճաններ են լինում, ինչպես մեկ հիմնական գույնը ունենում է տարբեր նրբերանգներ: Դիցուկ, վախի տարբեր «երանգներն» են սարսափն ու անհանգստությունը: Ավելին, կարելի է առաջնային երկու հույզերի միախառնումից ստանալ նոր երկրորդային հույզեր: Ինչպես օրինակ վախի և վստահության ձուլումը առաջ է բերում հնազանդություն, իսկ վախից ու զարմանքից առաջանում է ակնածանք:

Ռոբերտ Պլուչիկը տարածական սխեմայի միջոցով շատ հաջողված ցույց է տվել նաև հույզերի տրամաբանական կապը միմյանց հետ: «Վախվորած կանխազգացման, վախի և սարսափի միջև կապն ակնհայտ է: Եթե, օրինակ, որևէ տհաճ իրադրություն կանխատեսող ու թեթև տագնապ ապրող մարդը պարզապես ավելի զգոն է դառնում շրջապատի նկատմամբ, ապա վախեցած մարդն արդեն կարող է եռանդուն գործողություններ կատարել, իսկ սարսափի վիճակում կորցնել ինքնատիրապետումն ու նպատակի գիտակցումը»³:

Մեր խորին համոզմամբ, չնայած ատկա որոշ տեսությունների, իրավացի են այն գիտնականները, որոնք հույզերը համարում են համընդհանուր, գենետիկորեն ծրագրավորված՝ անկախ ազգային պատկանելիությունից կամ անհատի ծավալած գործունեությունից: Իհարկե, կարող են տարբեր լինել մարդկանց վերաբերմունքն ու հարաբերությունները հույզերի նկատմամբ՝ ազգային

² Plutchik R. Emotion: Theory, research and experience. New York. 1980

³ Plutchik R. Emotion: Theory, research and experience. New York. 1980

լեզվամտածողությունից, մշակութային առանձնահատկություններից կախված:

Լեզվամշակութային նման առանձնահատկությունների տարբերությունների ուսումնասիրության դաշտ են ծառայում հայերենի և անգլերենի առաձների և ասացվածքների ուսումնասիրությունը:

Այս մասին է փաստում ականավոր հայագետ Արամ Ղանալանյանը իր «Հայկական Առաձանի» ծավալուն աշխատության մեջ.

«Առաձներն ու ասացվածքները բացահայտում են ժողովրդի կողմից մարդկային վարքագծի այս կամ այն արտահայտությանը տրվող դրական կամ բացասական գնահատականները, լավի ու վատի, չարի ու բարու, վախկոտի ու քաջի մասին նրա հայտնած կարծիքները: Դրանք բխում են աշխատավոր մասսաների բարոյախոսական ընդհանուր սկզբունքներից և համերաշխ են ու համահնչյուն վերջիններիս: Բարոյական այնպիսի ընդհանուր հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ, «չարն ու բարին», «վախկոտն ու անվախը», «արդարն ու մեղավորը» յուրաքանչյուր պատմական դարաշրջանում և յուրաքանչյուր միջավայրում ստացել են սոցիալական համապատասխան երանգ ու բովանդակություն»⁴:

Սույն աշխատությունից դուրս ենք բերել այն առաձներն ու ասացվածքները, որոնք վերաբերում են այնպիսի հատկանիշների, ինչպիսիք են անսկզբունք և հարմարվող, վախկոտ և անարի լինելուն.

- Ում սելին որ կը նստի, նրա հոռովելը կը կանչա
- Ուր որ ահ կա, ամոթ էլ կա
- Նա, ով Աստծուց կվախենա, նա մարդուց կամաչնա
- Վախը մահից ուժեղ է
- Ահը կուգա մահը կը տանե
- Վախի գլուխը ողջ կըլի
- Գելը որ ամպերից վախենա, գլխի ծածկոց կը կարի
- Աստծուց մարդի ահը սրտից չի տանի, ամոթը երեսից
- Ում կուտես կոմշին /սերկնիլ/ կը քշես նրա գոմշին
- Ինչ դայդա /եղանակ/ որ ածեն, են դայդեն կը խաղա
- Դվորը փչում են, դեն ես էթում
- Որտեղ գուռնա, դու պար բռնա
- Ջուրը տեսնա ձուկ կըլլա, կատուն տեսնա մուկ կըլլա
- Իշին նստի իշավոր ի, ձիուն նստի ձիավոր ի

⁴ Ղանալանյան Ա. Տ. «Հայկական Առաձանի». Երևան. 1951 թ. էջ XLVI

- Որ կեմին /նավ/ մտնե, անոր դափտանը /նավավար/ կը գովե
- Տուտուց-տուտուց /հիմար/ կարմիր կտուց, համ պասուց ու համ ուտիսուց
- Ինքն իր շուքեն կը վախնա
- Վախկոտն ահից արջին ափու կը կանչի
- Վախկոտ շունը որս չի անի

Վախի մասին տարաբնույթ ու բազմաթիվ առած- ասացվածքներ ենք գտել Ջ. Լ. Ափերսոնի համանուն բառարանում, ինչը պայմանավորված է անգլիախոս ժողովրդի հարուստ լեզվամշակութային անցյալով: Փորձել ենք տալ մեր սեփական թարգմանությունները, ընթերցողների ավելի լայն շրջանակներին գոհացնելու նպատակով: Ստորև բերենք դրանցից մի քանիսը.

- All temptations are found either in hope or fear Թե հույսը, թե վախը լի են գայթակղություններով
 - When we have gold, we are in fear Հարստությունը վախ է
 - There is no remedy for fear but cut off the head Վախին բուժում չկա
 - Fear has a quick ear Վախի ականջները երկար են
 - Fear has magnifying eyes Վախի աչքերը լայն են բացված
 - Fear is the prison of the heart Վախը ստրկություն է
 - All fear is bondage Վախը ստրկություն է
 - Fear is a great inventor Վախից գյուտեր են ծնվում
 - All weapons of world can not arm fear Վախին չեն կարելի զինել անզամ աշխարհի բոլոր զենքերը
 - Better face danger once than be always in fear Ավելի լավ է մեկ անգամ առերեսվել վտանգին, քան միշտ երկյուղել
 - He who is feared by many, fears many Շատերին վախեցնողը ինքն է սարսափի մեջ
 - Fear makes the wolf bigger than he is Վախը գայլին չափերով հսկա կդարձնի
 - Fear blows wind into your sails Վախը նավիդ առագաստներին քամի փչելով կտանի
 - A guilty conscience feels continual fear Մեղքի մեջ թաթախված խիղճը շարունակ վախի մեջ է⁵
- Անզլերենի և հայերենի բառային ֆոնդը հարուստ է այնպիսի բառային միավորներով, որոնք նկարագրում, փոխանցում են վախ – հույզը .

⁵ Apperson G. L. The Wordsworth dictionary of proverbs. New York. 1993

ա/ մակբայներ և ածականներ՝ վախեցած, վախվորած, սարսափած, երկյուղած, երկչոտ, քարացած, պապանձված և այլն

afraid, fearfully, scared, terrified, alarmed, frightened, startled, petrified, anxiously, dismayed, terrorized, abashed, lily-livered, terror-stricken etc.

բ/ բայեր՝ վախենալ, սահմոկել, սարսափել, երկյուղել, ահաբեկվել, դողալ, ցնցվել, զարհուրել, տատամսել, փշաքաղվել, դողահարվել, վեհերել, երկնչել և այլն

to frighten, to scare, to horrify, to terrorize, to dismay, to dishearten, to awe, to alarm, to spook, to petrify, to intimidate, to daunt etc.

գ/ գոյականներ, որոնք հայերենում արտահայտվում են հիմնականում գործիական հոլովով, իսկ անգլերենում with նախդիրով՝ վախով, ակնածանքով, սարսափով, երկյուղով, սարսուռով, դողով⁶ և այլն

with fear, with horror, with panic, with dismay, with terror, with inquietude, with distress, with worry, with tremor, with reverence, with anxiety etc.

Վախի նկարագրության ցայտուն տարբերակներից է նաև մարմնի որոշ մասերի կինամայի նկարագրությունը՝ աչքեր, շրթունքներ, բերան, դեմք, ինչը պատկերավոր փոխանցում է հույզը՝ բերանի թուփը կպչել, չորանալ, գայլի աչք ցույց տալ, երեսը թան դառնալ, երեսի գույնը գնալ, պատի ծեփ դառնալ/ his heart leapt into his mouth, his face twisted with fear, his face grew white, etc.⁷

«Վախ» հասկացույթը ավելի խորությամբ ուսումնասիրելու և ներկայացնելու նպատակով հետևյալ աղյուսակներում ըստ հիմնական հատկանիշների առանձնացված են հայերենի և անգլերենի դարձվածքները .

Արտաքին փոփոխություն	Մազերը բիզ-բիզ, կամ դիք-դիք կանգնել, մազերը գլխի վրա ցցվել, պոռշը ճաքել, վախից սփրթնել, երեսը թան դառնալ, գույնը գցել, գույնը պատի ծեփ դառնալ, գույն տալ՝ գույն առնել, երեսի գույնը գնալ, ծնկները դողալ կամ թուլանալ, հինաձ դառնալ, ձեռքն ու ոտը դող ընկնել, ջանը դող
----------------------	---

⁶ Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան. Երևան. 1960

⁷ Webster's Revised unabridged dictionary. Springfield. 1913

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

	ընկնել,
Արտասովոր փոփոխություն	Շավարը լցնել, ոչ մեռած, ոչ կենդանի, փոխանը կատու ընկնել, փորը կատու գցել, փորում սիրտ չմնալ, ջուրը քաշվել, ահն էլ անցնել, մահն էլ, աչքի ճիճուն կոտրել, արյունը երակներում սառչել, արյունը ջուր դառնալ, արյունը սառչել, բերանում լեզուն չորանալ, երկինքը գլխին մթնել, թուքը բերանում սառչել, չորանալ, լեղաճաք լինել, լերդը կատիկը թռչել, կոկորդը սեղմվել, վախից լեղին պատռվել
Ներքին դող	Ահ ու դող, ահ ու զարգանդ, ահ ու սարսափ, ահ ու դողի մեջ ընկնել, մարմնով դող անցնել, մարմնով սարսուռ անցնել, ահ գցել, ահ առնել, ահը սրտումը, ահ տալ, ահ քաշել, ահ ու դողը ջանն առնել, ահ ու փախ
Վախ – կենդանի էակ	Ահը լավ է, քանց մահը, ահը սիրտն է առել, ահը սրտեն՝ ամոթն երեսեն, սարսափ է կաթում աչքերից, գլուխը լաչակ, դագանակի ծայրը ցույց տալ, դող ու թունդ հանել, իր սովերից խրտնել, կրակի պես մեկից վախենալ,
Վախ-առարկա	Վախը առնել, վախը բռնել, վախը չափել, ահ տալ
Վախի ազդեցությունը սրտի վրա	Սիրտը ահ ընկնել, սիրտը ահ ու սարսափ գցել, սիրտը բերնին տալ, սիրտը դող ընկնել, սիրտը երկյուղ ընկնել, սիրտը կտրվել՝ փորն ընկնել, սիրտը ճաքել, սիրտը պորտի գլուխը թռչել, սիրտը ջուր դառնալ, սիրտը վախ ընկնել, սիրտը փորը գցել, սիրտը փորումը ձիավոր դառնալ, սիրտը դող ու թունդ հանել

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

Վախի ազդեցությունը հոգու վրա	Հոգին ահ պատել, հոգին կորեկի հատ դառնալ, հոգին տապ անել, հոգին ջուր կտրել
Վախի անձնավորումը	Վախ բռնող, նապաստակ փախցնող, մածունը անփչել ուտող, լաչակ կապող
Վախը կարող է մահվան հասցնել	Մահու չափ վախենալ, մահվան դողերի բերել/հասցնել, դանակ ցույց տալ/քաշել, դազանակի ծայրը ցույց տալ, գլխին սուր կախել/ճոճել, ահն ու մահը բերել
Վախի անձնավորումը կենդանիների միջոցով	Աղավնու լյարդ, ծտի սիրտ, մկան սիրտ, նապաստակի սիրտ ունենալ, գայլի աչք, ճնճղուկի լեղի/սիրտ ունենալ, փորը կատու մտնել
Վախը մարմնավորող հերոս	Քաջ Նազար

Մարմնով դող անցնելը	To shake in one's boots, to shake from fear, to quake in one's boots, nearly jump out of your skin, to give someone the willies, to get the jitters, to shake like a leaf, one's heart is in one's boots,
Մրտի թրթռոց	His heart sank, his heart leapt into his mouth, his heart missed a beat, to have one's heart in one's mouth
Մահվան վտանգը	To frighten someone to death, to scare someone to death, scare out of one's wits, scare daylights out of

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

	someone
Քարանալը	To scare someone stiff, fear turned him to stone, to become petrified, to grow dumb, fear rooted him to the ground, to be paralyzed/frozen with fear, his tongue was swollen with fear, the legs got numb, to be struck dumb, to be tongue-tied,
Փշաքաղվելը	To tremble in every bone/ all over, I feel a tingling in my limbs, fear makes his flesh/blood creeps, cold shiver ran down his spine
	To put the fear of God into somebody, she avoids him as the devil avoids the holy water
Վախ-կենդանի էակ	Fear has a hundred eyes, fear sees danger everywhere, fear eats one's heart out, fear took his breath away
Վախ-առարկա	To put fear in someone's heart, to fall into fear, to throw a scare into someone
Արտաքին փոփոխություն	That makes one's hair stand on end, his knees failed under him, fear twists one's mouth, his face grew white
Ներքին սառնություն	To grow cold with fear, fear makes his blood freeze, to break out in a cold sweat

Այսպիսով, տեսանք, որ վախը լեզվամշակութային տեսանկյունից ունի իմաստային որոշակի համապատասխանություններ երկու լեզուներում էլ: Սակայն այս հուզական հասկացույթն ունի նաև իր ազգային առանձնահատկությունները. անզլերենում բացակայում էր վախի այլաբանական մոդելը: Պարզ դարձավ նաև այն, որ հասարակության պատմական զարգացման վաղ շրջանում հուզական ռեակցիաներ առաջացնող իրադարձությունները և առարկաները լեզվաբանական փոփոխության չեն ենթարկվել: Ե՛վ հույզը, և՛ այն առաջացնող երևույթը կամ պատճառը դիտարկվող երկու լեզուներում էլ հաճախ նույն բառով են արտահայտվել:

Ռ. Ասատրյան

**«Վախ» հասկացույթի զուգադրական վերլուծությունը հայերենում և անզլերենում
Ամփոփում**

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել «Վախ» հուզական հասկացույթը հայերենում և անզլերենում, ինչպես նաև անցկացնել զուգադրական լեզվամշակութային համեմատություն: Վախը առավել տարածված հույզերից է: Գրեթե բոլոր բավականին հաճախ ապրում ենք այս հույզը: Ինչպես իրական, այնպես էլ երևակայական վտանգը կարող է վախ առաջացնել: Ե՛վ հայերենում, և՛ անզլերենում վախի գրեթե բոլոր աստիճաններն ունեն իրենց անվանումները, ինչը նշանակում է, որ երկու ազգերի պատմահոգեբանական փորձի կուտակման ընթացքում դրանք զիտակցվել և ամրագրվել են որպես հոգևոր մշակույթի երևույթներ:

Р. Асатрян

**Сравнительный анализ концепта "Страх" в армянском и русском языках
Резюме**

Целью этой статьи является представление эмоционального понятия «Страх» в армянском и английском языках, а также проведение его лингвокультурного сравнения. Страх самый распространенный из эмоций. Почти все мы довольно часто переживаем это чувство. Страх может возникнуть как от реальной так и от воображаемой опасности. Как в армянском, так и в английском языках почти все степени страха имеют свои названия. Это означает, что в процессе накопления историко-психологического опыта двух народов они были осознаны и закреплены как явления духовной культуры.

R. Asatryan

Comparative analysis of the concept of "Fear" in Armenian and English

Summary

The aim of the present article is to present the concept of “Fear” in Armenian and English as well as to make a linguo-cultural comparison between the two languages. The sense of fear is commonly encountered. Almost everyone is faced with it on a regular basis. Fear can be caused by both real and unreal danger. Both English and Armenian have words expressing all possible degrees of fear with varying intensity suggesting that during the course of history the two nations have experienced and registered those feelings as being spiritual and cultural values.

ՌՈՒԶԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
ռումանագերմանական լեզուների ամբիոնի դասախոս,
մանկավարժական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 81

**ԱՆՔԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ՝ ԱՌՆՄԱՆՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Բանալի բառեր և արտահայտություններ. առնմանում, առաջընթաց առնմանում, ետընթաց առնմանում, փոխադարձ առնմանում, հպական, շփական, ձայնեղ, խուլ, հնչյուն, հնչույթ, ենթահնչյուն:

Ключевые слова и выражения: ассимиляция, прогрессивная ассимиляция, регрессивная ассимиляция, двойная ассимиляция, констриктивная, окклюзионная, озвученная, глухая, звуковая, фонема, аллофон

Key words and expressions: assimilation, progressive assimilation, regressive assimilation, double assimilation, constrictive, occlusive, voiced, voiceless, sound, phoneme, allophone.

Անգլերենի և հայերենի առնմանման համեմատական քննության դերը մեծ է երկու լեզուներում: Այս ուղղությամբ աշխատանքներ են տարվել Ս. Բադդասարյանի, Ս. Պետրոսյանի, Փ. Ռոչի, Ս. Սակալովայի և Վ. Վասիլիկ կողմից, ովքեր վերծանել են երկու լեզուներում առնմանման երևույթի պատմական զարգացման և դիրքային ազդեցությունների դերը: Սույն աշխատանքի նպատակն է ուշադրություն դարձնել անգլերեն և հայերեն առնմանման որոշ առանձնահատկություններին: Ժամանակակից անգլերենում, այն հիմնականում համահունչ հնչույթաբանական երևույթ է, որը ազդում է լեզվի թե՛ ուսուցման, թե՛ ուսումնասիրման գործընթացին:

Առնմանումը անգլերեն և հայերեն լեզուներում բնականոն երևույթ է, որն ազդում է հնչույթի արտաբերման տարբեր հատկանիշների վրա, և այս հնչյունաբանական երևույթը ունի զանազան արտաբերման ձևեր և ուղղություններ երկու լեզուներում: Չնայած նրան, որ առնմանմանումը առկա է բոլոր լեզուներում, այն չի կարող կիրառվել նույն կերպ:

Առնմանումը, որին մենք առնչվում ենք մեր առօրյա խոսքում կոչվում է կենդանի առնմանում, այն առնմանմանումը, որը ի հայտ է եկել լեզվի ավելի վաղ պատմական փուլում կոչվում է պատմական առնմանում: *Պատմական է կոչվում հնչյունափոխության, այն տիպը, երբ լեզվի զարգացման*

պատմության ընթացքում տարբեր պատճառներով որոշ հնչյուններ կամ հնչյունակապակցություններ փոխում են իրենց որակը կամ սղվում են:¹

Պատմական առնմանումը բնորոշվում է հնչյունների փոփոխությամբ, երբ բաղաձայներն ու ձայնավորները փոխակերպելով իրենց որակը, կրճատվելով կամ վերամշակվելով, պատմական տարբեր շրջափուլերում հնչյունափոխության են ենթարկվում: Ինչպես, օրինակ՝ հայերենում՝ յօգուտ-հօգուտ, խաբել-խափել, դարձ-դարց: **Հին հայերեն.**

• **Ի**-հնչյունը կրճատվել է որոշ բառերում, օրինակ՝ *արծուի-արծիվ, տեղի-տեղ, հիւսիս-հյուսիս:*

• **Յ**-հնչյունը կրճատվել է <<ա>> և <<ո>> հնչյուններից առաջ, օրինակ՝ *ծառայ-ծառա, քահանայ-քահանա, կաթսայ-կաթսա, շղթայ-շղթա, երեկոյ-երեկո:* **Յ**-ն դառնում է **հ** ժամանակակից հայերենում, ինչպես օրինակ՝ յիսուն-հիսուն, յիշել-հիշել, յիմար-հիմար, յար-հար, յարկ-հարկ, յարուցանել-հարուցել:

• **Հ**ին հայերենում վերջածանց “ուցան” (ել) դարձել է “ց”, “(ու)ց”, “ցն” ժամանակակից հայերենում, ինչպես օրինակ՝ խաղաղեցուցանել-խաղաղեցնել, մատուցանել-մատուցել, յարուցանել-հարուցել:

• **Ն**-հնչյունը կրճատվել է միավանկ և բազմավանկ բառերում, օրինակ՝ *գառն-գառ, դուռն-դուռ, ձուկն-ձուկ, մուկն-մուկ, ուսումն-ուսում, լուծումն-լուծում, որոշումն-որոշում,* բայց **ն** հնչյունը պահպանվել է հետևյալ բառերում, օրինակ՝ *գառ-գառներ, գառնարած, դուռ-դռնեղուռ, դրնապան, ուսում-ուսումնական, ուսումնասեր* և այլն:

Շատ անգամ հնչյունափոխության այս կամ այն երևույթի պատճառները անհայտ են: Այն կարևոր է դիտարկել պատմական հնչյունափոխության օրինակներով:

Ժամանակակից թե՛ հայերեն, թե՛ անգլերեն լեզուներում կարելի է նշել առնմանման հետևյալ առանձնահատկությունները:

• Առնմանումը հնչյունաբանական երևույթ է, այն կարևորագույնն է լեզվի պատմական զարգացման և արտաբերման բազմաթիվ փոփոխությունների գործընթացներում: *Երբ հնչույթները փոխազդում են միմյանց վրա, ազդելով կամ նմանվելով մեկը մյուսին, տեղի է ուենում առնմանում:*

¹ Սուբիայան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզու, (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Համալսարանի հրատարակչություն, Երևան, 1982, էջ 67:

• Հնչույթները միանալով կարող են ազդել միմյանց վրա, որոշ չափով նմանվել իրար, ինչի հետևանքով առաջանում են հնչույթների տարբերակներ(ենթահնչույթներ-allophone):

• Առնմանումը թե՛ հայերենում, թե՛ անգլերենում սահմանվում է որպես հնչյունափոխական երևույթ:

• Առնմանումը երկու լեզուներում լինում է լիակատար (*complete*) և թերի (*partial*)²:

Լիակատար (complete), ինչպես օրինակ հայերենում՝ *ծույժ* (<ծոյժ<զոյժ<զ-ոյժ), *զ-ոյժ-կալ*>*զուժկալ*>*ծուժկալ* (*զ<ժ=ժ-ժ*), *բոկիկ*>*բոբիկ*, *ցրցամ* (*ջրցամ*), *նանիկ* (*հանիկ*), *ջաղջպան* (*ջազազապան*) արեան+բ>արեամբ, քաջության+բ >քաջությամբ (ն>բ –մ-բ), փողովակ(փող, փողք, փողոց)>խողովակ(փ<ղ, դ-խ), զքողել>սքողել և այլն³:

Թերի (partial) առնմանման օրինակ է՝ “ճանաչել” բառը, երբ այն նախկինում եղել է “ծանաչ”, “ծ” հնչյունը դարձել է “ճ”, “չ” հնչյունի ազդեցության ներքո: Նմանատիպ օրինակներից է՝ արեան+բ>արեամբ, քաջության+բ>քաջությամբ(ն>բ–մ-բ), փողովակ(փող, փողք, փողոց)>խողովակ(փ<ղ,դ-խ), զքողել>սքողել, գփոփել>սփոփել, զթափ(վ)ել>սթափվել (զ>ս), ընդ+բռնել>ընդբռնել-ընբռնել-ըմբռնել (ն-բ>մ+բ), սովորությանբ>սովորութեամբ>սովորությամբ, ուրախությամբ, զգացմամբ (<զգացմանբ), արյամբ, մասամբ, հիմամբ և այլն⁴:

Անգլերենում թերի առնմանմամբ է արտաբերվում բոլոր այն խուլ բաղաձայնները, որոնց հաջորդում են ձայնորդներ: Օրինակ՝ *tram*, *thread*, *eat rice*, և այլն, որտեղ խուլ [t]-ն փոխազդելով [r] ձայնորդին մասամբ դարձնում է խուլ:

Ազդերենում առնմանումը ըստ ուղղության բնութագրվում է՝ առաջընթաց (*progressive*), ետընթաց (*regressive*) և փոխադարձ (*double*), իսկ հայերենում այն բնութագրվում է միայն առաջընթաց և ետընթաց⁵:

² Համ. Սուքիասյան Ա. Ս., Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Համալսարանի հրատարակչություն, Երևան, 1982, էջ 69, և *Соколова М. А., Практи. Фонетика Английского Языка, Москва, 2001, стр. 8.*

³ Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, 1988, էջ 127-128:

⁴ Լ. Մ. Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն, Եր., 1987., էջ 104-105:

⁵ Համ. Սուքիասյան Ա. Ս., Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Համալսարանի հրատարակչություն, Երևան, 1982, էջ 70, և *Соколова М. А., Практи. Фонетика Английского Языка, Москва, 2001, стр. 12.*

ա) Առաջընթաց-progressive A ⇒ B: Երբ հնչույթը առնմանվում է աջից ձախ:

Առաջընթաց առնմանումը երկու լեզուներում էլ բավականին մեծ տարածում ունի: Անգլերենում առաջընթաց առնմանումը առկա է երկու պայթակաների առկայության դեպքում, երբ դրանք հանդիպում են զույգերով, օրինակ՝ [pp, pb, bp, tt, td, kk, gg, kg, gk] և այլն՝ առաջին պայթականը ունենում է պայթյունի կորուստ: Անգլերենում երկու պայթականների ժամանակ առաջին պայթականը արտաբերում են առանց պայթյունի, ինչպես, օրինակ՝ *hot day, stop bagging, bookcase, apt, act* և այլն: Առաջընթաց առնմանման օրինակներ են հանդես գալիս պայթական խուլ բաղաձայները, որոնց հաջորդում են բաղաձայններ: Օրինակ՝ *back-backs, nib-nibs, pick-picks*: Կամ *desks* բառում [s] հնչյունը խուլ [k] ազդեցությամբ ամբողջովին խլանում է:

Հայերենում երկու պայթականների պայթյունը համեմատաբար ավելի թույլ է, ինչպես օրինակ՝ կուտ առւր, մոտ թող, փակ կ գիրք, սուսիկ փուսիկ, պստիկ առստիկ, և այլն:

Թե՛ հայերենում, թե՛ անգլերենում առկա է բաղաձայն հնչյունների շնչեղության կորուստ: Երբ շնչեղ խուլ բաղաձայնները [p], [t], [k] կորցնում են իրենց շնչեղությունը գտնվելով [s] ծերպավոր (constrictive) բաղաձայնից հետո, օրինակ՝ *stick, skate, sport, stick, skate* բառերում [st, sk, sp] զույգերում [p, t, k] արտաբերում են շնչեղության կորուստով:

Հայերենում առաջընթաց առնմանման օրինակ է՝ ձուազեղ>ձվազեղ>ձվածեղ, ի գրաս գալ>գրաս գալ>գրագ, մնամք>մնանք, զարմանամք>զարմանանք, ամպ>ամբ, ընկեր>ընգեր, և այլն⁶:

բ) Ետընթաց-progressive (A ← B): Երբ հնչույթն առնմանվում է ձախից աջ: Անգլերենում ետընթաց առնմանման օրինակ է պայթական բաղաձայնների [p, b, t, d, k, g] առկայությունը [l] կողային (*lateral*) ձայնորդից առաջ, ինչպես օրինակ՝ *little, middle* բառերում [l] կողային ձայնորդը ի հայտ է բերում կողային պայթյուն [p, b, t, d, k, g] բաղաձայնները արտաբերելով և ակնատես ենք լինում ետադարձ առնմանման [l]-ն փոխազդում է [p, b, t, d, k, g] պայթական բաղաձայնների վրա: Նմանատիպ ետընթաց առնմանում է տեղի ունենում, երբ [p, b, t, d, k, g] պայթական բաղաձայններին հաջորդում են [n, m] ռնգային բաղաձայնները: Այս դեպքում նույնպես [p, b, t, d, k, g] բաղաձայնները արտաբերվում են ռնգային պայթյունով [n, m] ռնգային

⁶ Լ. Մ. Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն, Եր., 1987, էջ 104:

ձայնորդների ազդեցության ներքո, ինչպես օրինակ՝ *garden, mitten, happen*, և այլն:

Անգլերենում ետընթաց առնմանման օրինակներ են [ð], [θ] առամնային բաղաձայնները, որոնք ազդելով լնդերքային [t, d, s, z, n, l] բաղաձայնների վրա արտաբերվում են դրանց առամնային տարբերակով, ինչպես օրինակ՝ *is this, in the text, at the desk, lead them, և այլն:*

Ետընթաց առնմանման օրինակներ են՝

news -> /'nju:z/ newspaper -> /nju:spɛɪpər/

goose -> /gu:s/ gooseberry -> /gu:zbəri/

five->/faiv/ five pence -> /faɪfəns/ և այլն:

Իսկ հայերենում ետընթաց առնմանումը առկա է՝ ծանաչել>ճանաչել, գթողել(գ+թողել)>սքողել, անբարիշտ> ամբարիշտ, շարժք>ժածք, ցրցամ>ջրցան, փիլիսոփոս>փիլիսոփա բառերում, կամ ձայնավորների առնմանում, ինչպես օրինակ՝ յանուար>յունուար>հունվար, երեխայ>երեխա, փիլիսոփոս>փիլիսոփա, գոռեխ>գոռոխ իշամեղու: Ոչ միայն բաղաձայնները այլև ձայնավորները փոխազդում են միմյանց վրա և առնմանվում բառում: Նմանատիպ առնմանումը տեղի է ունենում բարբառներում, բայց գրական լեզվում հազվադեպ են պատահում: Օրինակ՝ հայերենում ուսուցիչ>ուշուչիչ, աչք>աշկ, քաշք>քաշկ, ոտներ>ոններ, մատներ>մաններ, թուղթ>թուխթ, աստիճան>աշտիճան, բանալիք>բալանիք>բալնիք>բալլիք, ծանաչել>ճանաչել, և այլն:

զ) Փոխադարձ-double (A ↔B): Փոխադարձ առնմանման դեպքում երկու կից հնչյունները փոխազդում են միմյանց վրա: Հայերենում փոխադարձ առնմանում առկա չէ:

Անգլերենում փոխադարձ առնմանումը առկա է, [w] երկշրթնային բաղաձայնի առկայության դեպքում, երբ այն կից հանդես է գալիս [t, d, k, g, s]/բաղաձայնների հետ: Ինչպես, օրինակ՝ *twin, quick, dwell, read well, twince*, որտեղ [t, d, k, g, s] բաղաձայնները շրթայնացվում են [w] երկշրթնային բաղաձայնի ներքո, կամ անգլերենում *twist* բառում [t]-ն շրթնայնացվում է, իսկ [w]-ն մասամբ խլացվում է:

Առնմանումը կարող է նաև ներառել այն երևույթները, երբ երկու հարակից հնչույթները ազդելով միմյանց վրա ստեղծվում է մեկ այլ՝ նոր հնչույթ, որը ամբողջովին տարբերվում է իր արտաբերմամբ: Ինչպես օրինակ՝ *sandwich* բառը շատ հաճախ արտաբերում են [sændwɪtʃ] այնինչ այն արտաբերում են [sænwɪdɪʃ]:

Ինչպես, օրինակ՝ յոզուտ-հոզուտ, խաբել-խափել, դարձ-դարց և այլն: Նաև լավագույն օրինակներից է առնմանման բաղաձայնների տեղաշարժը, մասնավորապես բարբառներում՝ բերան-պերան, ջուր-ճուր:

Զուգադրելով առնմանումը երկու լեզուներում, կարելի է եզրակացնել, որ՝

- առնմանումը հայերենում այնքան էլ արտահայտված չէ որքան անգլերենում,
- հայերենում փոխադարձ առնմանումը առկա չէ, այնինչ անգլերենում այն մեծ կիրառում ունի,
- երկու լեզուներում էլ լիակատար և մասնակի առնմանումը առկա է,
- առաջընթաց առնմանումը անգլերենում ավելի ուժգին է երկրորդ պայթականների դեպքում, քան հայերենում: Հայերենում երկու պայթականների առկայությամբ, ավելի թույլ է արտաբերվում առաջին բաղաձայնը,
- առնմանման բացակայությունը խոսքում խախտում է անգլերենի ռիթմայնությունը՝ կորցնելով խոսքի սահունությունը և հստակությունը:

Ռ. Խաչատրյան

Անգլերենի և հայերենի՝ առնմանման համեմատական քննություն Ամփոփում

Առնմանումը ժամանակակից անգլերենում հիմնականում համահունչ հնչույթաբանական երևույթ է, որը ազդում է լեզվի թե՛ ուսուցման, թե՛ ուսումնասիրման գործընթացում: Անգլերեն և հայերեն լեզուներում առնմանումը բնականոն երևույթ է, որն ազդում է հնչույթի արտաբերման տարբեր հատկանիշների վրա, և այս հնչյունաբանական երևույթը ունի զանազան արտաբերման ձևեր և ուղղություններ երկու լեզուներում: Չնայած նրան, որ առնմանումը առկա է բոլոր լեզուներում, այն չի կարող կիրառվել նույն կերպ:

Р. Хачатрян

Сравнительный анализ армянской и английской ассимиляции.

Резюме

На современном английском языке это в основном синтезированное явление, которое затрагивает как язык, так и обучение. На английском и армянском языках это естественное явление, которое влияет на различные особенности воспроизведения звука, и это фонетическое явление имеет различные способы выражения его на двух языках. Хотя он доступен на всех языках, он не может применяться таким же образом.

Comparative Analyses of Armenian and English Assimilation.

Summary

In modern English assimilation is a phonetic phenomenon which affects both languages in teaching and learning process. It is a natural phenomenon, that affects the various features of sound reproduction, and this phonetic phenomenon has various ways of expressing it in both languages. Although it is available in all languages, it can not be applied in the same way.

ՆԱԲԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի ասիստենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 811.19

ԳՐԱԲԱՐԻ ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. ապառնի դերբայ, -ոց, -ի, -ոյ, -ու վերջավորությամբ դերբայներ, բաղադրյալ ժամանակներ, ապառնի դերբայի անկախ և կախյալ կիրառություններ:

Key words and expressions: the future particle, particles with -ոց, -ի, -ոյ, -ու endings, compound tenses, independent and dependent applications of the future particle.

Գրաբարի ապառնի դերբայը կազմվում է անորոշ դերբայից՝ **-ոց** և **-ի** վերջավորություններով, ինչպես աղալ-աղալոց, աղալի, սիրել-սիրելոց, սիրելի, թողուլ- թողլոց, թողլի: Միջին հայերենում գրաբարի ապառնի դերբայի **-ոց** և **-ի** վերջավորությունները պահպանվում են, բայց միաժամանակ այս ձևերին զուգահեռ գործածվում են նաև **-ոյ** մասնիկով ձևեր: Այդ մասնիկի առաջացումը պայմանավորված է հայերենին հատուկ **ոյ > ու** հնչյունափոխությամբ: Պատմական հնչյունափոխության համաձայն՝ **ոյ** երկբարբառը դառնում է **ու**. «...գրաբարյան անոյշ, ոյժ, շոյտ, բոյթ և այլ բառեր աշխարհաբար գրականին են անցել անուշ, ուժ, շուտ, բութ գրությամբ»¹:

Միջին հայերենում ապառնի դերբայը հանդես է գալիս չորս տարբերակներով՝

-ոց, -ի, -ոյ, -ու: Սրանցից երկուսը՝ **-ոց** և **-ի** տարբերակները, գրաբարաբանություն են և շարունակում են գործածվել միջինհայերենյան ստեղծագործություններում:

Առանձին-առանձին անդրադառնանք հիշյալ չորս տարբերակների՝ միջին-հայերենյան բնագրերում հանդիպած գործածություններին:

-Ոց մասնիկով ապառնի դերբայը միջին հայերենում

¹ Ա. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 116:

-Ոց վերջավորությամբ ապառնի դերբայը միջինհայերենյան շրջանում գործածվում է եւ օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերի հետ՝ կազմելով **սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի** և **սահմանական եղանակի անցյալ ապառնի բաղադրյալ ժամանակաձևեր**: Այն շարունակվում է գործածվել նույնիսկ միջինհայերենյան երկրորդ շրջանի հեղինակների՝ Ամիրդովլաթ Ամասիացու, Գր. Աղթամարցու, մինչև անգամ ուշ միջնադարյան շրջանում՝ Նաղաշ Հովնաթանի ստեղծագործություններում:

Բնագրային օրինակներ **սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի ժամանակով**՝ «...թէ որոյ անուն շինեցից զեկեղեցիքս իմ, գոր **շինելոցս եմ**» (ՊՇԲ, 34): «Քանզի լեառն, որ **փչանելոց է**՝ փլցի» (ՎՄՊՏ, 210): «Դու **զըրկելոց ես** ողորմած» (Ֆր., 74): «...և ամէն ծուռ դատաստաննի համարս **տալոց են** առաջի ուղիղ դատաւորին Քրիստոսի» (ՍԳԴ, 19): «Դատաստանին ակն կալ, զի **տալոց ես** անդ պատասխան» (ԽԿ, 31): «**Գալոց է** յաւուրըն վերջին (ԳԱ, 50): «...և առողջ առնէ, թէ Աստուած կամի զայն՝ որ առողջ **լինալոց է**» (ԱԱՕԲ, 20): «Զձեզ **առնելոց եմ** խայտառակ» (ՆՀ, 98):

Սահմանական եղանակի անցյալ ապառնի՝ «Երբ հանց ցեղ էր **լինելոց**» (Ֆր., 25): «Գիտելոց գոր ինչ **առնելոցն էր** զվերստին նորոգումն» (ՎՄՊՏ, 7):

-Ոց **մասնիկով ապառնի դերբայ+իցեմ** կառույցով բայաձևերի չենք հանդիպում այս շրջանում, որը պայմանավորված է միջին հայերենում գրաբարի ստորադասական եղանակի բայաձևերի քայքայվելու հետ²:

Ուսումնասիրությունից պարզվում է, որ **-ոց** մասնիկով **ապառնի դերբայ+եմ/էի** բայաձևերը ոչ հաճախակի կիրառություն ունեն այս ենթաշրջաններում: Այս մասին են վկայում մեր կողմից կատարված վիճակագրական հետևյալ տվյալները՝ Ֆրիկի տաղերում՝ **4** բայաձև, որից **3**-ը գործածված է ներկայի օժանդակ բայի հետ, **1**-ը՝ անցյալի: Խ. Կեչառեցու տաղերում՝ **2** բայաձև (-ոց+եմ), Գր. Աղթամարցու տաղերում՝ **1** (-ոց+եմ), Մմբատ Գունդստարի երկում՝ **2** (-ոց+եմ), Նաղաշ Հովնաթանի երկում՝ **3**, Նահապետ Քուչակի քառյակներում չեն հանդիպում:

-Ի մասնիկով ապառնի դերբայի կիրառությունները միջին հայերենում

-Ի մասնիկով ապառնի դերբայը, որը գրաբարում բավական լայն տարածում ուներ, շարունակում է գործածվել նաև միջին հայերենում:

² Նշված կազմությամբ ձևերը գրաբարում ևս սակավ կիրառություն ունեին:

Մակայն որպես դերբայ նրա գործածությունը նվազում է, ավելի շատ հանդիպում են գոյականական և ածականական կիրառությունները: Մա խոսում է այն մասին, որ գրաբարի **-ի** մասնիկով ձևերի փոխանցման երևույթը միջին հայերենում ավելի ակնհայտ է դառնում: **-Ի** մասնիկով ապառնի դերբայը միջին հայերենում շարունակում է գործածվել օժանդակ բայի հետ՝ հանդես գալով որպես ստորոգելիական վերադիր: Այս կառույցներում ապառնի դերբայը պահում է իր դերբայական իմաստը՝ «Ողորմ ու **լալի է** նա մեզ յամէն սրբոց՝ սեւերես» (Ֆր., 55): «Զի քեզ ժամ է **աշխատելի**» (ԽԿ, 36): «...ն երկու՝ ի միւսն, և այս **լինելի է**» (ՄԳԳԴ, 388): «Զայս իրաւունս **պահելի է**» (ՄԳԳԴ, 351): «Ամենայն մըտաց **ես ախորժելի**» (ԳԱ, 82), «...նա **չէ ընդունելի** առաջի Աստուծոյ, և նզոված է» (ՄԳԴ, 59): «Էր **չէք խնդալի**, որ այսօր ունենք լաւ գինի սառն» (ՆՀ, 78):

Ըստ վիճակագրության՝ **-ի** մասնիկով **ապառնի** դերբայ+**եմ/է օժ. բայով** կադա-պարը ունի հետևյալ հաճախականությունը:

Ֆրիկի տաղերում՝ **5** բայաձև, Կեչառեցու տաղերում՝ **4**, Աղթամարցու տաղերում չենք հանդիպում, Սմբատ Գունդստաբլի երկում՝ **7**, Նահապետ Քուչակի քառյակներում՝ **1**, Նաղաշ Հովնաթանի տաղերում՝ **5**:

-Ի մասնիկով ապառնի դերբայը միջին հայերենում հանդես է գալիս նաև անկախ կիրառությամբ՝ կորցնելով դերբայական իմաստը և հանդես գալով այլ խոսքի մասերի՝ գոյականի, մեծ մասամբ ածականի իմաստով:

Միջինհայերենյան բնագրերում հանդիպում են կիրառություններ, որտեղ **-ի** մասնիկով ապառնի դերբայը անկախ գործածությամբ պահել է իր դերբայական իմաստը, ինչպես՝ «Երբ որ մըտար դու **խնդալի**» (Ֆր. 26): «Զայն որ քեզ ամօթ թըւի Եւ ահոկ՝ խիստ **մեղադրելի**» (ԽԿ, 33): Միրեցելոյն աշակերտի այբոռ գլով **փոխադրելի** (ՆՇ, 70): «...սակայն կանոնք **փոխելի** զախոն ցուցին» (ՄԳԳԴ, 110): «Շաքա՞րն իւր լեղի թըւի, եւ լեղին իւրան **խըմելի**» (ՆՔ, 214): «Երեսն քսեն **գործելի** մուրն» (ՆՀ, 186):

Վերոհիշյալ որոշ օրինակներում ապառնի դերբայը արտահայտում է ենթակայական դերբայի իմաստ. **-ի** մասնիկով ներգործական սեռի ապառնի դերբայի՝ ենթակայական դերբայի նշանակությամբ հանդես գալը սովորական երևույթ էր գրաբարում, որն էլ, որպես գրաբարաբանություն, շարունակվում է կիրառվել նաև շրջանում:

Ստորև ներկայացնենք բնագրային օրինակներ, որտեղ հստակորեն երևում է **-ի** մասնիկով ապառնի դերբայի անցումը ածական անվան՝ «Այլ թանձրամած, **ջօշափելի**, զինչ մուրջ անլոյս է այս զիշեր» (ՆՇ, 186): «Ապա թէ լինի **անբժշկելի** բորոտութիւն» (ՄԳԴ, 48): «Լուծեալ կապիմք **անլուծելի**» (ԳԱ, 73): «...և ի դժարաբար և **յանհասկանալի** գրոց ի մեր հեշտալուր» (ՄԳԴ, 15): «Յաշխարս ես ի ժուռ եկա, չըգտայ լըղորդ **սիրելի**» (ՆՔ, 6):

Ֆրիկի տաղերում՝ **գովելի** (էջ 101), **պաշտելի** (էջ 101), **խոտելի** (էջ 102), **աններելի** (էջ 20), **անզննելի** (էջ 105), **անտանելի** (էջ 106), **տնազելի** (էջ 107), **անքննելի** (էջ 108), Ն. Հովնաթանի տաղերում՝ **անճառելի** (էջ 126), **եղկելի** (էջ 139), **ողբալի** (էջ 135), **գարշելի** (էջ 134), Խաչ. Կեչառեցու տաղերում՝ **անկասկածելի** (էջ 105), **անզերծանելի** (էջ 48), **տենչալի** (էջ 166), Մմբատ Գունդաստաբլի երկում՝ **անբժշկելի** (էջ 48, 53), **անբաժանելի** (էջ 53), **անհասկանալի** (էջ 15):

Միջին հայերենի շրջանում հանդիպում են նաև դերբայներ **-իք** ձևով, որոնք ամբողջովին կորցրել են հոգնակիի իմաստը և հանդես եկել որպես գոյականներ՝ «Եւ չէ այլ իրաւունք, որ տայ մեռելն, քան զիր հալան ու **պառկելիքն**» (ՄԳԴ, 35): «Մնտի **սիրելիքըդ** քո Զքեզ թողուն ւ ի քնն հեռանան» (ԽԿ, 35):

-Ոյ վերջավորությամբ ապառնի դերբայը միջին հայերենում

Միջին հայերենում հետաքրքիր կիրառություններ է դրսևորում **-ոյ** վերջավորությամբ ապառնի դերբայի տարբերակը: Նրա կիրառությունը վկայված է դեռևս 5-րդ դարի մատենագրության մեջ, իսկ հետագա դարերում (VI-XI) այն ակնառու է դառնում, որն էլ հիմք է հանդիսանում միջին հայերենում **-ոյ** վերջավորությամբ նոր ապառնի դերբայի առաջացմանը:

Հ. Աճառյանը անպայմանորեն շեշտում է, որ **-լոյ** վերջավորությամբ դերբայի ձևը առաջացել է անորոշ դերբայի սեռականից, բայց ոչ տրականից³:

Ապառնի դերբայի այս տարբերակը բավական լայնորեն սկսեց կիրառվել միջին հայերենում՝ հանդես գալով տարբեր գործառույթներով.

ա) **Որոշիչ**՝ «Գիտես **ըզտալոյ** տեղին, զարժանն ու զարժանաւոր» (Ֆր., 50): «...և այնոր **ծախելոյ** վճարն մենակ լինի» (ՄԳԴ, 61): «Ի **սերմանելոյ** ժամըն կու լինի, այստեղ հանդիպած» (Ֆր., 52): «Չի կար **ապրելոյ** ճարակ...Չկայ **առնելոյ** ճարակ» (ԽԿ, 59-60): «...և **հանգչելոյ** տեղիք շինացին վտանգելոց» (ՄԳԴ, 31):

բ) **Պարագա**՝ «Հանց **փորձելոյ** ինձ տայ լեղի» (Ֆր., 26): «Եւ ջուր հանել ի գետոյ **ջրելոյ** կամ ջաղցնոց **համար**» (ՄԳԴ, 20): «Ինձ **կենալոյ** մի մընար» (ԽԿ, 56): «Ես մնացի կարօտ՝ **տեսնելոյ** համար...Ես մնացի կարօտ՝ ձեռք **տալոյ** **համար**» (ՆՀ, 14):

³ Հմմտ. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն..., հ. V, էջ 231:

զ) **Գոյականական նշանակությամբ**, ինչպես՝ «...և իմանալ **զմտելոյն** որպէսն և վարձն ու ամէն կերպ» (ՄԳԴ, 21): «Եւ հանց պատասխան տայ իւրն, որ նուաղի ի խեղճ **ասելոյն**» (Ֆր., 95): «Եւ թէ ոչ անասացէ՛ կապիցի փոխանակ **կապելոյն**» (ՄԳԳԴ, 35):

Սակայն վերոհիշյալ կիրառությունների քննարկումից պարզ է դառնում, որ միջին հայերենում ստեղծվում է երկակի վիճակ. անհնար է դառնում առանձնացնել անորոշ դերբայի հոլովված տարբերակը **-ոյ** վերջավորությամբ ապառնի դերբայից, քանի որ վերջինս ևս ազատորեն գործածվում է անկախաբար:

դ) **օժանդակ բայի** հետ՝ «...նա **ապաշխարելոյ է** արժան» (ՄԳԴ, 31): «Ժամ է փեսային **գալոյ**» (ԳԱ, 64): «Ժուկն **չէ գալոյ** յայս տեղի» (ԽԿ, 54): «Մեկ օր **գալոյ եմ քո** քերխանէն» (ՆՀ, 18): «Ես էլ **չեմ տալոյ** քեզ դադար» (ՆՀ, 112):

Ի մի բերելով բնագրային օրինակները՝ կարող ենք ասել, որ **-ոյ** վերջավորությամբ ձևը հազվադեպ է հանդես գալիս դերբայական իմաստով (Ես էլ **չեմ տալոյ** քեզ դադար, ՆՀ, 112):

Նշենք, որ **-ոյ** վերջավորությամբ **ապառնի դերբայ+եմ/էի** կառույցը միջին հայերենում ունի գործածության հետևյալ հաճախականությունը՝ Խաչ. Կեչառեցու տաղերում՝ **1** օրինակ, Ֆրիկի տաղերում՝ **4**, Նահապետ Քուչակի հայրեններում և Գր. Աղթամարցու տաղերում չկան, Սմբատ Գունդստաբլի երկում՝ **4**, Նաղաշ Հովնաթանի տաղերում՝ **11**:

- Ու վերջավորությամբ ապառնի դերբայի գործածությունները միջին հայերենում

Ինչպես արդեն նշել ենք, միջին հայերենում առաջանում է **-ու** վերջավորությամբ ապառնի դերբայը՝ **-ոյ>ու** պատմական հնչյունափոխությամբ պայմանավորված: Այստեղից էլ ընդհանրանում և տարածվում է **-ու** վերջավորությամբ մի նոր դերբայ, որը հաստատուն կիրառություն է ձեռք բերել ժամանակակից գրական հայերենի երկու տարբերակներում էլ:

-Ու վերջավորությամբ ապառնի դերբայը ևս միջին հայերենում հանդես է գալիս և՞ անկախ, և՞ կախյալ գործառույթներով:

Ստորև ներկայացնենք անկախ կիրառության օրինակներ՝

ա) **որոշիչ**՝ «...«և իր **սուգելուն** կերպն այս է» (ԱԱԱԱ, 197): «Չունիմ **կենալու** ճարակ, Չունիմ **գնալու** ճարակ» (ԽԿ, 28): «Ինձ **գնալու** ստեն այլ անպատեհ է» (ԳԱ, 104): «Նշան կոպին **կպչելուն** այն է» (ԱԱՕԲ, 186): «Դու՛ ինձ **գրկելու** կարօտն՝ սըրտումս մնաց» (ՆՀ, 28): «Գէմ անդէնըն չի գնացի, որ չլինայ ինձ **դառնալու** ճար» (ՆՔ, 116):

բ) **պարագա**՝ «Շունչըս հատեալ, հոգիս մնաց քեզ **տալու**» (ԽԿ, 22): «...և կամ յաւելի քամու լինայ, կամ բարձր տեղաց **վագելուն**» (ԱԱՕԲ, 405):

«Երկուշաբթի լուացք **անելու**, Աման-լուալ քուլ **հանելու**, Սրբանքն ամեն դուրս **տանելու**» (ՆՀ, 106):

զ) **ստորոգելիական վերադիր**՝ «Եւ գիտացի՞ր, որ երակին շարժունքն ի սրտէն է և շնչին **տալուն է և առնելուն է**» (ԱՍՕԲ, 68): «Ձուքն որ ետ անկանի, որ հայեայ կիճինի առեն կամ սաֆրայէ **իջնելուն է...** և թէ արեան **իջնելուն է**» (ԱՍՕԲ, 398):

Ընդ որում հաշվել ենք նաև **-ու** վերջավորությամբ ապառնի դերբայի անկախ կիրառությունները միջինհայերենյան որոշ բանգրերում, ինչպես՝ Գր. Աղթամարցու տաղերում՝ **2** օրինակ, Ֆրիկի տաղերում՝ **7**, Նաղաշ Հովնաթանի տաղերում՝ **6**, Կեչառեցու տաղերում՝ **9**, Սմբատ Գունդստաբլի երկում չի հանդիպում:

-Ու վերջավորությամբ ապառնի դերբայը կախյալ գործառույթով հանդես է գալիս բաղադրյալ ժամանակաձևերի կազմում, ինչպես՝ «Ժանգոտ պղղինձ ենք հաւասար, ներքեւ հողին **ենք փըտելու**» (Ֆր., 37): «Այլ առանց քո տեսուղ **չեմ ես ապրելու**» (ԽԿ, 22): «...եւ որ ջուր **իջնելու է**» (ԱՍԱՍ, 61): «Զերդումն ալ ի բերանն էառ. **«Գնալու եմ, չեմ կենալու**» (ՆՔ, 124): «Ով **գնալու է** սարով, քարով» (ՆՀ, 89):

-Ու տարբերակով ապառնի դերբայի **եմ/էի** գործածությունները միջինհայերենյան որոշ բնագրերում ունեն հետևյալ վիճակագրությունը. Ֆրիկի երկերում՝ **3** օրինակ, Գր. Աղթամարցու տաղերում՝ **1**, Խաչ. Կեչառեցու տաղերում և Սմբատ Դունդստաբլի երկում չկան, Ն. Քուչակի քառյակներում՝ **2**, Ն. Հովնաթանի տաղերում՝ **7**:

Ապառնի դերբայի ձևագործառական հատկանիշները վաղ աշխարհաբարում՝ ըստ XIII-XVIII դդ. ժամանակագրությունների, ունեն հետևյալ վիճակագրությունը: Նրա 4 տարբերակներն էլ շատ հազվադեպ են գործածվում. Գր. Կամախեցու (XVII դ.) երկում՝ **2** բայաձև (ոց+եմ, ու+եմ), Մարտիրոս դի Առաքելի (XVIII դ) երկում՝ **2** (ի+օժ. բայ), Աստուածատուր, Հովհան, Առաքել Ակնեցիների (XVIII դ.) երկում՝ **1** (ոց+եմ):

Ամփոփելով վերոբերյալը՝ կարող ենք ասել, որ միջին հայերենում ապառնի դերբայն ունի **-ոց, -ի, -ոյ, -ու** ձևերով տարբերակներ: Մրանցից առաջին երկուսը գրաբարաբանություն են և շարունակում են գործածվել միջինհայերենյան երկերում: **-ոց** մասնիկը **եմ** օժանդակ բայի ներկայի և անցյալի հետ կազմում է **սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի** և **սահմանական եղանակի անցյալ ապառնի** ժամանակաձևերը:

Վիճակագրական փաստերը վկայում են, որ **-ոց** մասնիկով ապառնի **դերբայ+եմ/էի** կառույցը ոչ հաճախ է հանդիպում այս շրջանում /վիճակագրությունը կատարվել է ըստ Խ. Կեչառեցու, Գր. Աղթամարցու, Ս. Գունդստաբլի, Ն. Հովնաթանի երկերի և Ն. Քուչակի քառյակների/:

Վիճակագրությունը այսպիսին է՝ ապառնի դերբայ+են՝ 11, ապառնի դերբայ+էի՝ 1:

Ի մասնիկով ապառնի դերբայը գործածվում է և՛ օժանդակ բայի հետ, և՛ անկախաբար: Անկախաբար գործածվելիս նրա դերբայական իմաստը նվազում է՝ ձեռք բերելով անվանական արժեք, որը դեռևս նկատելի էր գրաբարում:

Գործառական լայն շրջանակներ ունեն ապառնի դերբայի **-ոյ** և **-ու** մասնիկներով տարբերակները, որոնք հանդես են գալիս և՛ օժանդակ բայի հետ՝ կազմելով բաղադրյալ ժամանակներ, և՛ անկախաբար՝ հանդես գալով շարահյուսական տարբեր պաշտոններով: **-ու** մասնիկով ապառնի դերբայի տարբերակը ավելի հաճախ է գործածվում միջին հայերենի երկրորդ շրջանում և լայնորեն տարածվում է ժամանակակից գրական հայերենի երկու տարբերակներում:

Ն. Մարկոսյան

ԳՐԱԲԱՐԻ ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻՈՒՄ

Ամփոփում

Ապառնի դերբայը միջին հայերենում ունի **-ոց**, **-ոյ**, **-ու**, **-ի** ձևություններով տարբերակներ: Ապառնի դերբայ+ոց օժանդակ բայ կադապարով կազմվում է երկու բաղադրյալ ժամանակաձև՝ սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի՝ գտանելոց եւ, և սահմանական եղանակի անցյալ ապառնի՝ գտանելոց էի: **-Ոյ**, **-ու** մասնիկներով տարբերակները գործածվում են և՛ օժանդակ բայերի հետ՝ կազմելով ժամանակաձև, և՛ անկախաբար՝ հանդես գալով շարահյուսական տարբեր պաշտոններով: **-Ի** մասնիկով ապառնի դերբայը ևս գործածվում է օժանդակ բայի հետ՝ կազմելով միադիմի բայ: Մեծ մասամբ գործածվում է անկախաբար՝ հանդես գալով շարահյուսական տարբեր պաշտոններով: Թեև գրաբարում այն բայական հասկացություն էր, սակայն անկախաբար կիրառվելիս դրսևորում էր մեծ մասամբ անվանական արժեք:

Н. Маркосян

ПРИЧАСТИЕ БУДУЩЕГО ВРЕМЕНИ ГРАБАРА В СРЕДНЕАРМЯНСКОМ

Резюме

Причастие будущего времени грабара в среднеармянском имело формы **-ոց**, **-ոյ**, **-ու**, **-ի**.

С помощью конструкции причастие будущего времени с частицей **-ոց**+ вспомогательный глгол образовывались две составные временные формы; будущее сложное изъявительного наклонения՝ գտանելոց եւ, будущее в прошедшем изъявительного наклонения՝ գտանելոց էի:

Формы -ոյ, -ու употреблялись и со вспомогательными глаголами, образуя аналитические формы, и независимо, выступая в разных синтаксических функциях.

Причастие будущего времени с частицей -ի в среднеармянском использовалось со вспомогательным глаголом, образуя одноличный глагол, однако на самом деле оно использовалось независимо, выступая в различных синтаксических функциях. Хотя вариант с частицей -ի в грабаре был еще глагольным понятием, при независимом употреблении он все же имел номинативную функцию.

N. Markosyan

FUTURE PARTICIPLE IN GRABAR IN MIDDLE ARMENIAN

Summary

The future participle in the middle Armenian has “-ng”, “-ոյ”, “-ու”, “-ի” morpheme variations. With the future participle “+ng” and the auxiliary two compound tenses are formed: the compound future indicative “գոսանելոց եմ” and the past future indicative “գոսանելոց էի”: Variations with “-ոյ”, “-ու” particles are used both independently presenting syntactic functions and with auxiliary verbs forming a separate tense. The future indicative with the particle “-ի” is used with the auxiliary as well, forming one-uniform verb. In an overwhelming number of cases it is being used independently in different syntactic functions.

Although it was a verbal concept in grabar, when applied independently, it was featured mostly in nominative value.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՀՏԴ 821.19.0

**ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԳԴՅԱՆ ՎԵՐԴՅԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՑՆ
ԵՐԱԶԱՆՔՆ ԷՐ**

Ключевые слова: Богдан Вердян, полководец Андраник, Согомон Тейлерян, геноцид, мститель, Арцах, свобода.

Key words: Bogdan Verdyan, commander Andranik, Soghomon Teylerian, genocide, avenger, Artsakh, freedom.

Բոգդյան Վերդյանը արդեն հայտնի անուն էր Հայաստանի գրողների միությունում, երբ գրեց իր լավագույն վեպը՝ «Ծաղիկներս մնացին հեռվում»: Ծնված լինելով Մեծ Հայքի նշանավոր Գանձակ¹ քաղաքի մոտ, որը բոլշևիկների կամքով և Քեմալ Աթաթուրքի թելադրանքով հանձնվել էր նորաստեղծ Ադրբեջանին, ապագա գրողը զգացել է թուրքերի ռասսայական խտրականության ահավորությունը: Նա 1941-ին ավարտել էր Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը և անմիջապես մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1943-ին ծանր վիրավորվել է և զորացրվել: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով: 1943-44-ին ուսուցիչ է եղել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզում: 1944-ին ընդունվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄԻ-ի ասպիրանտուրան՝ հայոց լեզու մասնագիտությամբ: Դրանից հետո նրա ողջ կյանքը կապված է եղել մանկավարժական մայր բուհի հետ: 1965-1970 թթ. Բոգդյան Վերդյանը մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատանքների գծով պրոռեկտորն էր: 1970-ին սիրված դասախոսն արդեն ուներ բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան և պրոֆեսորի կոչում: Նա լայն հետաքրքրությունների տեր մարդ էր և մտավորական էր բառի իսկական

¹ Ֆրանսիացի նշանավոր հայագետ Մեն-Մարտենը մեզ է ավանդել Գանձակ քաղաքի անվան բացատրությունը: Նրա կարծիքով Գանձակ տեղանունն առաջացել է հայերեն *գանձ* բառից, որովհետև անկասկած այդպես է կոչվել հայոց հին թագավորների գանձերն այդ քաղաքում պահվելու պատճառով (տե՛ս J.-A. Saint-Martin, Mémoires historique et géographique sur l'Arménie, t.I, Paris; 1818, p.150).

իմաստով: Ջերմ էր իր ուսանողների հետ, և պատահական չէ, որ գրեց «Երրորդ կուրսը» վիպակը (1975թ.), որը դարձավ ուսանողության սիրելի գիրքը: Հիանալի վեպ էր նաև «Լեռների որդին», որը 1965-ին Մոսկվայում հրատարակվեց նաև ռուսերենով:²

Այսօրվա նման հիշում եմ 1965 թվականի ապրիլի 24-ը, երբ հայ մտավորականները, նրանց թվում Սիլվա Կապուտիկյանը, Երևանի Լենինի անվան հրապարակում՝ կառավարական շենքի առջև, բողոքի ցույց էին կազմակերպել՝ նվիրված 1915 թվականի Հայոց ցեղասպանության մեկ ու կես միլիոն նահատակների հիշատակի օրվան:

Մի քանի օր էր անցել այդ օրվանից և Մաշտոցի անվան Մատենադարանի ընթերցասրահում հայտնվեցին մի քանի երիտասարդ գիտաշխատողներ՝ բոլորը խուզած մազերով:

Հավանաբար հենց այդ իրադարձություններն ազդակ դարձան Բոգդան Վերոյանի համար գրելու իր լավագույն վեպը՝ նվիրված երկու երանելի հայորդիներին՝ Անդրանիկ գորավարին ու Սողոմոն Թեհլերյանի³ (1969թ.): Արցախյան շարժման առաջին տարիներին գրողը վերահրատարակեց «Ծաղիկներս մնացին հեռվում» վեպը՝ որոշ բարեփոխումներով:

Սողոմոն Թեհլերյանի անունը հավերժորեն պահվելու է ցեղասպանությունների դատապարտման միջազգային աղբյուրներում՝ որպես արդար ցասման ու վրիժառության մարմնացում:

2003 թվականին Միացյալ Նահանգների մարդու իրավունքների պաշտպան Սամանտա Պաուերը հրատարակեց «Դժոխային խնդիր» ծավալուն հետազոտությունը՝ նվիրված ցեղասպանությունների պատմությանը: Այդ գիրքը սկսվում է աշխարհի առաջին՝ Հայոց Մեծ եղեռնին նվիրված էջերով, Սողոմոն Թեհլերյանի և ԱՄՆ-ի 1915-1916 թթ. Թուրքիայի դեսպան Սորգենթաուի կերպարներով ու երկուսի դիմանկարներով:

² Բոգդան Վերոյանի գրքերից են՝ «Քեզ համար Լենինգրադ», Երևան, 1951, «Ինչպես է գալիս երջանկությունը», Երևան, 1958, «Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն», Երևան, 1970, «Այրվող ալիքներ» (եռագրության առաջին գիրք), Երևան, 1977, «Երկխոսություն» (եռագրության երկրորդ գիրք), Երևան, 1980, «Արտակարգ դեսպաններ», Երևան, 1985:

³ Անտարակույս առաջին հերթին Բ.Վերոյանն օգտվել է հետևյալ երկու գրքերից՝ 1) «Վերհիշումներ» (Թալեաթի ահաբեկումը), Կահիրե, 1956, 2) «Դատավարություն Թալեաթ փաշայի», սղագրական զեկուցում, Վիեննա, 1921:

Հենրի Մորգենթաուն 1915-ին Վաշինգտոն ուղարկած զեկույցում գրում է, թե Թուրքիայում իրականացվում է հայոց ազգի համակարգված ոչնչացում:⁴

Գրքում առկա է նաև Մորգենթաունի և 1915 թվականին Թուրքիայում ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի երկխոսությունը: Երբ Մորգենթաուն Թալեաթին մեղադրում է, թե հայերի տեղահանումը ակնհայտ ցեղասպանություն է, Թալեաթը հարցնում է. «Ինչու՞ եք հետաքրքրվում հայերով: Դուք հրեա եք, այս ազգը քրիստոնյաներ են: ...Ինչու՞ չեք թողնում այդ քրիստոնյաների հետ վարվել այնպես, ինչպես մենք ենք ուզում»: Մորգենթաուն պատասխանում է. «Կարծես թե Դուք չեք գիտակցում, որ ես այստեղ եմ ոչ որպես հրեա, այլ որպես Միացյալ Նահանգների դեսպան»:⁵

Սամանտա Պաուերը հստակ բացատրում է, թե ինչու Սողոմոն Թեհլերյանը սպանեց Թալեաթին: Նա պատմում է, որ 1915 թվականի հունիսին Սողոմոն Թեհլերյանի հայրենի բնակավայրը լիովին դատարկվում է և վերջինս իր ընտանիքի անդամների հետ քշվում է անապատ: Հայ տեղահանվածները թվով 20.000 հայեր էին: Քարավանի մեջ էին Սողոմոնի մայրը, երկու քույրերը՝ քույրերից մեկն իր հետ տանում է 2 և կես տարեկան երեխային: Նրանց հետ էին նաև եղբայրները՝ 22 և 26 տարեկան: Հայ գաղթականների ճամփորդությունը լի էր սարսափներով: Ասկյարները Թեհլերյանի աչքի առաջ քարավանից դուրս են քաշում և թփերի հետևում բռնաբարում ու սպանում նրա քույրերին, հետո նրա աչքի առաջ կացնահարում են 22 տարեկան եղբոր գլուխը, կրակում են մոր վրա և խփում Սողոմոնի գլխին: Բոլորին սպանելուց հետո՝ թուրքերը հեռանում են: Սողոմոն Թեհլերյանը, սակայն, մեռած չէր, և երբ արթնանում է մեռած մարմինների մեջ, տեսնում է, որ 20.000 հոգուց բաղկացած քարավանից միայն ինքն է մնացել կենդանի:⁶

Բոգդան Վերոյանը հետաքրքիր խորագիր է ընտրել իր վեպի համար՝ «Ծաղիկներս մնացին հեռվում»: Ծաղիկները, որոնցով այնքան հարուստ էր Արևմտյան Հայաստանը, խորհրդանշում են և՛ հայերի կորցրած ծաղկանկար հայրենիքը, և՛ նրա նահատակ անմեղ զոհերին՝ մանուկներին, կանանց, աղջիկներին, երիտասարդներին, ծերերին:

Այս այլաբանական ընկալումը պարզաբանում է Ջոնին, որի հայրը Աբդուլ Համիդի ջարդերից փախած ապաստանել էր Նյու Յորք քաղաքում՝

⁴ Samantha Power, A Problem from Hell, New York, 2003, p.7.

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 3-4:

հայրենիքից իր հետ տանելով միայն ջրի կուլա: Հայրը շարունակ կարոտում էր և՛ հայրենի ջրին, և՛ իր ծննդավայրի բնաշխարհին՝ ծաղիկներին, ծառերին, խոտերին, լավաշ հացին:

Բոգդան Վերդյանը «Ծաղիկներս մնացին հեռվում» վեպում երևան է հանել գրողի պատմաբաղաբական ճշգրիտ գիտելիքների հարուստ պաշարը: Նրա գրչի տակ մեր աչքի առաջ կանգնում է Արևմտահայաստանի հայերի ողբերգական ճակատագիրը՝ սկսած Աբդուլ Համիդի ջարդերից, մինչև 1921 թվականը՝ մինչև Թալեաթի սպանությունը:

Պարզորոշ երևում է, թե ինչ դժոխային տարիներով է անցել հայ ժողովուրդը, որի ազատասիրական ձգտումներն ավարտվել են ցեղասպանությամբ: Հայերի ոչնչացմանը նպաստել է նաև Ռուսաստանում կատարված Հոկտեմբերյան հեղափոխությունը, որի հետևանքով Ռուսաստանի կազմի մեջ մտնող հայկական նահանգների մեծ մասը տրվեցին Թուրքիային և Ադրբեջանին:

«Ծաղիկներս մնացին հեռվում» վեպում բավականին հատվածներ նվիրված են Անդրանիկ գորավարի և նրա կամավորական ջոկատների ազատագրական կռիվներին: Թուրքերի և Անդրանիկի կամավորական ջոկատների բախման մարտական տեսարանները նկարագրվում են վարպետորեն: Դրանից երևում է, որ Բ.Վերդյանը Մեծ հայրենականի ժամանակ եղել է գործող բանակում: Մարտական բախումներին մասնակցում են Սողոմոն Թեխլերյանը և Ջոնին, որը եկել էր Նյու Յորքից: Հենց այդ երկուսն էլ հետագայում զինվորագրվում են Մեծ եղեռնի գլխավոր հանցագործներին ահաբեկող «Նեմեսիս» գործողության խմբին: Վեպում պատկերված է, թե ինչպես թուրք սակյարները հայ սպանված կանանց մատներից հանում էին մատանիները և ամեն տեսակի զարդերն ու ոսկի ատամները: Ամայացած հայկական քաղաքներում ու գյուղերում թուրքերը տենդագին որոնում էին ոսկի:

Սպանությունների կողքին թուրքերն իրականացնում էին նաև հայերին թուրքացնելու գործընթացը: Դրա լավագույն ու խոսուն օրինակը վեպի վերջում հանդես եկող Ալի բեյն է, որը գիտի իր գտարյուն հայ լինելու մասին ու գաղտնի ձևով օգնում է «Նեմեսիս» խմբի անդամներին:

Հայոց Մեծ եղեռնը թուրքերն արդարացնում էին՝ ապավինելով Ղուրանին. «Ղուրանն ասում է գյավուրի ինչքը քոնն է»:⁷

«-Ջիհա՛թ,- գոչեց մուլան և գոտկատեղից հանեց յաթաղանը: Արև էր, բայց ոչ ոք չէր նայում արևին, կար միայն յաթաղանը՝ սառած մի

⁷ Բ.Վերդյան, Ծաղիկներս մնացին հեռվում, Երևան, 1990, էջ 162: Այսուհետև վեպից բերվող մեջբերումների էջերը կնշվեն վերևում – Ա.Դ.:

լուսնեղջյուր, որ իր ետևից տանում էր ամբոխը՝ ինչո՞ւնների պատասխանը չգտած, անհայտի, անորոշի դեմ գազազած մարդկանց: Գլխաբաց էին և փափախներով, և աչքեր, որոնք փնտրում էին չունեցածը, հայի գնգացող ոսկին, հայի կայքը, հայի տուն ու տեղը, որ փայլատակում էր բարձունքից ու կանչում էր՝ արի՛, տիրացի՛ր, արի...» (էջ 163):

Թուրքիայի հայաջինջ պետական քաղաքականությունը դարավոր արմատներ ուներ: Տարիների ընթացքում նրանք ոչնչացնում էին ամեն հայկականը՝ փոխելով անգամ աշխարհագրական տեղանունները. Բաղեշը դառնում էր Բիթլիս, Կարինը՝ Էրզրում, Եղեսիան՝ Ուրֆա և այլն:

Բ.Վերդյանը պատկերել է, թե ինչպես Անդրանիկի զինվորները քրիստոնեական վերաբերմունք ունեին թուրք կանանց ու երեխաների նկատմամբ:

Պատկերելով հայերի ցեղասպանությունը՝ գրողը վեպի հերոսուհիներից մեկի՝ Լորանայի կերպարով ներկայացնում է նաև հրեաներին բաժին ընկած նման ճակատագիրը: Լորանան Սողոմոնին պատմում է, թե իր պապը եղել է Սուվորովի քաջ զինվորներից, բայց նրան հրեա լինելու համար Օդեսայում վիրավորել են, պապն էլ ապտակել է վիրավորողին և դրա համար սպանվել է: «-Հայրս քաջ էր, բայց հրեա էր, իսկական հրեա, ճարպիկ, հարմարվող, գործունյա... Նա երկու ռուբլով հասավ Պետերբուրգ, իսկ մեռնելիս ուներ երկու միլիոն: Եվ ազգանունն էլ հարմար գալիս՝ Գոլդբերգ: Գիտե՞ս ինչ է նշանակում:

Սողոմոնը կրկին գուրգուրեց նրա մատները» (էջ 148):

Վեպի հեղինակը տիրապետում էր թուրքերենին, դրա համար էլ վեպում տեղին օգտագործում է թուրքերեն նախադասություններ ու բառեր, որոնց շնորհիվ պատումը դառնում է առավել ներգործող ու տեսանելի:

Վեպում շարունակ պատվում է կորցված երկրի կարոտը: Անգամ Փարիզում՝ մի հայի տանը, թավայի մեջ թխած լավաշը տեսնելով Սողոմոնը կարոտում է իր մոր թխած լավաշին. «Սողոմոնը չէր ուզում լսել, Սողոմոնն ուզում էր հավատալ, որ ավստի մեջ իսկական լավաշ է՝ դանակով կտրտած, և նրա մեջ կարող է փաթաթել խորովածը: Եվ նրա մեջ կարող ես պանիր դնել, թարխուն ու կանաչ սոխ... Ու դրանով կբուրի Երկիրը» (էջ 301):

Ահա, թե ինչպես է եղեռնի վերապրած հայը Սողոմոնին բացատրում հայրենիք բառը. «Ես հայ եմ, և Հայաստան եմ ուզում, իմ տունն եմ ուզում: Գտա՛, Սողոմո՛ն, հայրենիքը նա է, որ չես զիջի ոչ ոքի, ոչ մի Աստծու, ոչ մի դավանանքի, ոչ մի գենքի» (էջ 95-96):

Ռուսական գորքերի Թուրքիայից նահանջելուց հետո՝ հայ կամավորականները ցրվում են՝ Սողոմոնը գնում է Պոլիս՝ հուսալով իր գերդաստանի 85 անդամներից որևէ մեկին գտնելու: Ավա՛ղ, ոչ մեկը չկար այլևս: Նա մեկնում է Եվրոպա՝ Թալեաթից վրեժը լուծելու: Սողոմոնը

հայկական խաչքարի առաջ երդվել էր. «-Երդվում եմ՝ Աստծո, տուն չունեցող այս մարդկանց, իմ ավեր երկրի առաջ, երդվում եմ» (էջ 247):

«Ծաղիկներս մնացին հեռվում» վեպի երրորդ մասը պատկերում է Սողոմոնի դեգերումները Թալեաթին գտնելու և վրեժը լուծելու սրբազան երդումն իրագործելու համար:

Գրողը պատկերում է, թե ինչպես Քեմալ Աթաթուրքը ցեղասպանությունը կազմակերպած թուրք պարագլուխներին դատապարտում է մահապատժի, իրականում նրանց հեռացնելով Թուրքիայից և նրանց հետ սերտ կապեր պահպանելով:

Սողոմոն Թեհլերյանը Փարիզի հայոց եկեղեցու առաջնորդարանում տեսնում է Կոմիտասին, որը եղեռնի ահասարսուռ դեպքերին ականատես լինելով, համրացել էր և կտրվել իրական կյանքից: Սողոմոնը հանդիպում է նաև Մուսա լեռան հերոսամարտի մասնակցի, որը հուսահատ ու միաժամանակ անկոտորում վրեժով բացատրում է. «Մուսա լեռան մոտ կորցրի ընտանիքս և քառասուն օր վրեժ կրակեցի թուրքերի վրա, վրեժ՝...Մեզ ասում են՝ ինչպե՞ս դիմացաք քառասուն օր, ու չգիտեն, որ մի ամբողջ բանակի դիմացանք հենց դրանով...Մեր ամեն մի գնդակի մեջ մեջ թույն կար, հրդեհված տներ կային, հրդեհված եկեղեցիներ կային և մանուկների լաց...» (էջ 316):

Սողոմոն Թեհլերյանը Բեռլինում վերջապես «Նեմեսիս» կազմակերպության տված նկարով ճանաչում է Թալեաթին և սպանում Շարլոտենբերգ⁸ արվարձանում: Քանի որ սպանությունը կատարվել է 1921 թվականի մարտի 15-ին, գրողը այդ ցնցող դեպքն ու գարունը միմյանց հակադրելով ու համադրելով հուզիչ շեշտերով առաջ է տանում արդար դատի վիպասքը: Սողոմոնի դատավարության տեսարաններում հանդես է գալիս ցեղասպանության ականատես դոկտոր Լեպսիուսը, որն իր բողոքի ձայնն էր բարձրացրել հայ նահատակների համար:

Համաձայն երդվյալների որոշման՝ Սողոմոն Թեհլերյանը ճանաչվում է անմեղ:

Բողոքն Վերդյանը հայ դատի պաշտպաններից էր: 1987 թվականի ամռանը երկու ամսով գնում էի Մոսկվա: Նա մեր տուն եկավ Միխայիլ Գորբաչովին հասցեագրված մի նամակով, որի մեջ փաստերով ասվում էր, որ Ադրբեջանի պաշտոնաթերթը մշտապես Հայաստանի զինանշանը տպագրում է առանց Մասիս սարի պատկերի: Նա, որպես հայ գրող, մտավորական, խնդրում էր վերացնել այդ անարդարությունը: Ես խոստացա նամակը հանձնել համապատասխան մարմնին հենց Մոսկվա

⁸ Շուլենբերգն այժմ Բեռլին քաղաքի մեջ է- Ա.Դ:

հասնելու առաջին օրը և այդպես էլ արեցի: Սակայն այս նամակը դարձավ Ակսել Բակունցի «Նամակ ռուսաց թագավորին», և գրողը ոչ մի պատասխան էլ չստացավ:

Բոգդան Վերդյանը չտեսավ այսօրվա ազատագրված Արցախը, շեն ու գեղեցիկ Ստեփանակերտն ու Շուշին: Նա իր վեպը գրել էր, որ հայերի մեջ արթուն մնա երկու մեծ հայերի՝ Անդրանիկի ու Սողոմոն Թեղեկյանի ազատատենչ ու հայրենանվեր հոգին:

Թող նրա հոգին հանգիստ լինի՝ ողջ հայ ժողովուրդն այսօր կանգնած է Արցախի կողքին և երբեք չի մոռանա ազգակործան Մեծ եղեռնը:

А. ДОЛУХАНИЯН
ЧЛЕН-КОРРЕСПОНДЕНТ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НЕЗАВИСОМОСТЬ АРЦАХА БЫЛА ЗАВЕТНОЙ МЕЧТОЙ БОГДАНА ВЕРДЯНА

Посвящается 100-летию Освободительной борьбы армян

Резюме

Богдан Вердян был уже известным именем в Союзе писателей Армении, когда написал свой лучший роман: «Цветы мои остались вдали».

В первые годы Арцахского движения писатель переиздал роман «Цветы мои остались вдали» с некоторыми преобразованиями.

Имя Согомона Тейлеряна навсегда останется в международных источниках, осуждающих геноциды, как воплощение праведного гнева и мести.

Богдан Вердян выбрал интересное заглавие для своего романа – «Цветы мои остались вдали». Цветы, которыми была так богата Западная Армения, символизируют как потерянную армянами украшенную цветами Родину, так и её невинных жертв – детей, женщин, девушек, юношей и стариков.

Многие части романа «Цветы мои остались вдали» посвящены освободительным битвам полководца Андраника и его добровольческих отрядов. Мастерски описаны боевые картины столкновений турок с отрядами добровольцев Андраника.

Богдан Вердян не увидел нынешнего освобожденного Арцаха, обустроенных и красивых Степанакерта и Шуши. Он написал свой роман,

чтобы среди армян остался жив свободолюбивый и патриотический дух двух великих армян – Андраника и Согомона Тейлеряна.

A.DOLUKHANYAN

CORRESPONDING MEMBER OF
THE NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

**THE INDEPENDENCE OF ARTSAKH WAS THE DEAREST DREAM
OF BOGDAN VERDYAN**

Dedicated to the 100th Anniversary of the Armenian Liberation Struggle

Summary

Bogdan Verdyan was already a well known name in the Union of Armenian writers when he wrote his best novel *My Flowers Remained Far Away*.

During the first years of the Artsakh movement the writer reprinted his novel *My Flowers Remained Far Away* with some amelioration.³⁶

The name of Soghomon Teylerian will stay forever in the international sources condemning genocides as the incarnation of righteous anger and vengeance.

Bogdan Verdyan chose an interesting title for his novel: *My Flowers Remained Far Away*. Flowers which enriched the nature of Western Armenia, symbolize either the lost homeland, beautified with flowers, of Armenians or its innocent victims: children, women, young girls and boys, old people.

Many parts of the novel *My Flowers Remained Far Away* are devoted to the liberation battles of commander Andranik and his detachments of volunteers. The fighting scenes of clashes between Turks and Andranik's volunteer detachments are masterly described.

Bogdan Verdyan had seen neither the nowadays liberated Artsakh nor the reconstructed and beautiful cities of Stepanakert and Shushi. He wrote his novel to keep awake among Armenians the freedom loving and patriotic spirit of two great Armenians: Andranik and Soghomon Teylerian.

ՌՈՒԶԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՊՀ դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
ghazaryanruzan@ysu.am

ԱՆՆԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԵՊՀ դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
anna.khachatryan@ysu.am

ՀՏԴ 81' 25

**ՇԵՔՍՊԻՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. թարգմանություն, մշակութային արժեքներ, թարգմանական գործունեություն, Շեքսպիր, անգլիական գրականություն, հոգևոր կյանք, թարգմանական սկզբունքներ, դասական թարգմանիչ, համարժեքություն, համեմատական վերլուծություն:

Ключевые слова и выражения: перевод, культурные ценности, переводческая деятельность, Шекспир, английская литература, духовная жизнь, переводческие принципы, классический переводчик, эквивалентность, сравнительный анализ.

Key words and expressions: translation, cultural values, translation activity, Shakespeare, English literature, spiritual life, translation principles, classical translator, equivalence, comparative analysis.

Թարգմանության շնորհիվ մեկ երկրի ժողովուրդը ծանոթանում է մյուս երկրների կյանքին, կենցաղին, պատմությանը, գրականությանը, գիտական ձեռքբերումներին և այլն: Թարգմանությունը մարդկային գործունեության շատ հին տեսակ է: Թարգմանական գործունեության արմատները գնում են դեպի ժողովրդների պատմության խորքը, և թարգմանության էության և խնդիրների մասին խորհրդածում էին դեռևս հին փիլիսոփաները: Իրենց խորհրդածություններում նրանք փորձել են սահմանել թարգմանության տեղը հասարակական կյանքում, դրա մշակութային դերն ու առանձնահատկությունները:

Թարգմանություն հասկացության էական առանձնահատկությունը դրա բազմակողմանի և բարդ բնույթն է: Նախ և առաջ, այն սոցիալական երևույթ է, քանի որ չի կարող առաջանալ և գոյատևել հասարակությունից դուրս. թարգմանության պատմությունն սկսվում է այնտեղ, որտեղ սկսվում

Է քաղաքակրթության պատմությունը, և թարգմանությունը զարգանում, հարստանում և կատարելագործվում է հասարակության զարգացմանը զուգընթաց: Երկրորդ, թարգմանությունը գիտական երևույթ է, քանի որ այն չի կարող ընկալվել և գիտականորեն սահմանվել առանց դրա լեզվական էության, լեզվաբանական հիմքերի և բնույթի բացահայտման: Երրորդ, թարգմանությունը գեղագիտական երևույթ է, քանի որ այն, մասնավորապես՝ գեղարվեստական թարգմանությունը, հնարավոր չէ ըմբռնել՝ առանց հաշվի առնելու դրա գեղագիտական էությունը և պատկերավոր բնույթը: Չորրորդ, թարգմանությունը պատմական երևույթ է, քանի որ այն հայտնվում է մարդկային պատմության զարգացման որոշակի փուլում և զարգանում է հասարակական գործընթացներին զուգահեռ: Եվ վերջապես, թարգմանությունը մշակութային երևույթ է, քանի որ էական ազդեցություն է կրում ազգային մշակույթի կողմից և ինքն էլ իր հերթին է ազդում դրա վրա: Այն ազգային մշակույթի զարգացման միջոց է և մշակութային գործընթացների հզոր գործոն:

Առանց մշակույթի, գրականության զարգացման հնարավոր չէ թարգմանության զարգացումը: Մշակույթը հսկայական, նույնիսկ առաջնային դեր է խաղում լեզուների հարաբերակցության հարցում: Եթե բնագրի և թարգմանության լեզուների միջև լեզվական և մշակութային տարբերություններն աննշան են, ապա թարգմանության իրականացումը կրնա անառանց առանձնահատուկ դժվարությունների: Սակայն հարկավոր է հաշվի առնել, որ ցեղակից լեզուների հետ գործ ունենալիս՝ թարգմանիչը կարող է խաբվել մակերեսային զուգադիպություններով, ինչի արդյունքում թարգմանությունը ձախողվում է: Երբ մշակույթները փոխկապակցված են, այսինքն՝ զուգահեռ են զարգացել, սակայն լեզուների համակարգերը միանգամայն տարբեր են, թարգմանիչը բազմաթիվ ձևափոխություններ է կատարում: Այնուամենայնիվ, հարաբերակցվող մշակույթներում առկա բազմաթիվ զուգադիպությունները ապահովում են նաև բովանդակության զուգահեռությունը: Նման դեպքերում թարգմանության իրականացումը շատ ավելի դյուրին խնդիր է, քան այն դեպքերում, երբ անհամատեղելի են և՛ լեզուները, և՛ մշակույթները: Հարաբերակցվող մշակույթներում առկա տարբերությունները ավելի մեծ խոչընդոտ են թարգմանության իրականացման ժամանակ, քան լեզվական կառուցվածքների անհամատեղելիությունը:

«Լեզուների առնչության առթիվ կարևոր է հոգևոր կյանքի ճանաչումը, այն համակրանքն ու հետաքրքրությունը, որ դրսևորվում է տվյալ ժողովրդի պատմության, գիտության, մշակութային արժեքների, նույնիսկ առտնին կյանքի նկատմամբ, որոնք բնութագրում են այդ ժողովրդին, նրան դարձնում մոտիկ և ծանոթ: Այդ կերպ հեշտանում, անմիջական է դառնում գրական

առնչությունը, որը յուրակերպ ամբողջացնում է ընդհանուր ծանոթությունը գրական պատկերով ևս»¹:

Թարգմանության վրա հարաբերակցվող մշակույթների ազդեցությունն անհերքելի է: Ի դեմս թարգմանության՝ դրանք միաժամանակ բախվում են միմյանց հետ և հաշտության, համատեղելիության ուղիներ փնտրում: Թարգմանչի առջև խնդիր է դրվում փոխանցել օտար մշակույթը ազգային մշակույթի տարրերի միջոցով:

Այս կապակցությամբ Ա.Կ. Եղիազարյանը մի հետաքրքիր տեսակետ է առաջ քաշում, մասնավորապես այն, որ թարգմանությունը գեղարվեստական երկի գոյության անհրաժեշտ ձևերից մեկն է, քանի որ այն նպաստում է բնագրի էության, գեղարվեստական բովանդակության բացահայտմանը: «Թարգմանված երկը հեռանում է այն ազգային լեզվամշակութային միջավայրից, որի մեջ ընկալվում էր նախքան թարգմանությունը: Այն մտնում է նոր կապերի ու հարաբերությունների մեջ, դրանով իսկ ի հայտ է բերում նոր երանգներ: Երբեմն թարգմանությունը օգնում է բնագրին վերահաստատել իր հեղինակությունը»²:

Ցանկացած ստեղծագործության գեղարվեստական բովանդակությունը, նախ և առաջ, դրա ոճական երանգավորումն է: Թարգմանիչը պարտավոր է այնպես վերարտադրել բնագիրը, որ այն գեղարվեստական արժեք ունենա թարգմանության լեզվով ընթերցողի համար և միաժամանակ ընդունելի լինի նրա կողմից՝ մշակութային և լեզվական նորմերի տեսակետից:

Թարգմանության տեսակետից հատկապես բարդ են լեզվին արտահայտչականություն և պատկերավորություն հաղորդող ոճական հնարներն ու լեզվաարտահայտչական միջոցները, որոնք յուրաքանչյուր լեզվում իրենց ուրույն գծապատկերն ունեն և որոշակի իմաստով արտացոլում են այն մշակույթը, որի ներկայացուցիչն է հեղինակը: *Արտահայտչականությունը /expressivity/* խոսքի հատկանիշ է, որը նրան տալիս է գնահատիչ բնույթ և տարբերակում սովորական չեզոք խոսքից: Զգացմունքների, ապրումների արտահայտումը խոսքի միջոցով, որը վերջինիս հաղորդում է պատկերավորություն և հուզականություն: *Պատկերավորությունը /figurativeness/* խոսքի հատկանիշ է, որ պայմանավորված է լեզվական միջոցներով կառուցվող գեղարվեստական

¹ Փարթամյան Վ. Հ., Հայ-անգլիական գրական առնչությունները, Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1975, էջ 10

² Եղիազարյան Ա.Կ., Գեղարվեստական թարգմանությունը և ժողովուրդների մերձեցումը, Ե., ՀԽՍՀ ԳԱ, 1977, էջ 20

պատկերի առկայությամբ: Պատկերավորության շնորհիվ մտքի առարկան ստանում է կոնկրետություն, և նկարագրությունները զգայապես ընկալունակ են դառնում: Պատկերավորությունը դրսևորվում է դարձույթների /tropes/ և բանադարձումների /figures of speech/ միջոցով, ուստի հաճախ վերջիններս կոչվում են լեզվի պատկերավորման միջոցներ³:

Թարգմանության տեսությունը ներառում է երկու փոխկապակցված բնագավառ: Առաջինը հենց թարգմանության էության ուսումնասիրությունն է, որը հանգում է համարժեքության ընդհանուր տեսության մշակմանը: Երկրորդ բնագավառը թարգմանական գործընթացն է, այսինքն՝ բնագրի տեքստի փոխակերպումը թարգմանության տեքստի: Այստեղ ուսումնասիրվում են թարգմանական գործընթացի փուլերը, տեքստի միավորները և թարգմանության ժամանակ այդ միավորների ձևափոխության տեսակները:

Այսպիսով, թարգմանության տեսության խնդիրը թարգմանական գործունեության էության բացահայտումն է, թարգմանության տեսական կադապարի ստեղծումը, որը կբացահայտի ինչպես համարժեքության ընդհանուր հասկացությունը, այնպես էլ թարգմանության տեքստի առաջացման գործընթացի հիմունքները: Թարգմանության շնորհիվ օտարալեզու գրականությունը դառնում է հարազատ, իսկ թարգմանված ստեղծագործությունը դառնում է մայրենի գրականության նվաճում: Թարգմանիչն իր առջև նպատակ պետք է դնի ոչ թե տեղեկացնել կամ ծանոթացնել ընթերցողին տվյալ գործի հետ, այլ ներկայացնել նրան մի կենդանի ստեղծագործու- թյուն, որով ապրել է թարգմանիչը՝ իր մտքով և սրտով անցկացնելով առաջին էջից մինչև վերջինը այնպես, ինչպես արել է հեղինակը:

Յուրաքանչյուր ժողովրդի մշակութային մակարդակ որոշելու համար կարելի է վերցնել միայն մեկ չափանիշ, այն է՝ թե երբ է այդ ժողովրդի լեզվով Շեքսպիր թարգմանվել: Ռուսաստանում և Գերմանիայում առաջին անգամ Շեքսպիր թարգմանվել է միայն 18-րդ դարի երկրորդ կեսին, իսկ հայերին Շեքսպիրը ծանոթ է դեռևս 17-րդ դարից: Շեքսպիրին և նրա ստեղծագործությունները հանգամանալի ներկայացրել և բացահայտել է դեռևս Հովսեփ Էմինը՝ իր հայտնի «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» հուշագրության մեջ, որը լույս է տեսել 1792 թ.՝ Լոնդոնում, անգլերեն լեզվով: Անցյալ դարի 60-ական թթ. հայերը եղել են առաջին ժողովուրդը

³ Խղաթյան Ֆ. Հ., Ոճաբանական բառարան հայերեն-ռուսերեն-անգլերեն, Ե., Չանգակ-97, 2000, էջ 145

արևելքում, որ ունեցել են Շեքսպիրի մի շարք գործերի թարգմանություն, այդ թվում նաև **Համլետը**:

Հայոց թարգմանական պատմության մեջ Շեքսպիրի դրամատուրգիան կենտրոնական տեղ է զբաղեցնում: Շեքսպիրյան ստեղծագործությունների թարգմանությունները առանձնահատուկ դեր են կատարել հայ գեղարվեստական թարգմանության զարգացման գործում և հայ ժողովրդի հասարակական – քաղաքական կյանքում: Ընդհանրապես, հայ հասարակական միտքը զգալի տեղ է հատկացրել անգլիական իրականության և նրա հոգևոր կյանքի ճանաչմանը: Հայերի՝ անգլիական գրականության հետ առնչությունը ունեցել է բազմակողմանի հիմնավորվածություն, իսկ դա հնարավորություն է տվել գեղարվեստական արժեքների գնահատման ու գաղափարական հայացքների ճանաչման հարցում ամուր ելակետ ունենալ: Հայ միտքը առավելաբար շեշտը դրել է այն համամարդկային արժեքների վրա, որ ստեղծել է անգլիական գրականությունը, ձգտել է դրանք ընկալել ու իրացնել:

Շեքսպիրի հայերեն թարգմանությունների պատմությունը՝ մեր երկրում նրան աստիճանաբար ըմբռնելու, նրա ստեղծագործության մեջ խորանալու պատմությունն է: Եվ այդ պատմության յուրաքանչյուր փուլը կապված է, մի կողմից, թարգմանական սկզբունքների ընդհանուր զարգացման հետ, մյուս կողմից, Շեքսպիրի իմաստավորման հաջորդող փուլի հետ: Թարգմանական սկզբունքների զարգացումը և Շեքսպիրի աստիճանական իմաստավորումը զուգահեռաբար իրականացվող գործընթացներ էին: Այն փաստի գիտակցումը, որ Շեքսպիրի մոտ չկա պատահական որևէ բան, նրա ստեղծագործության բոլոր տարրերի իմաստավորումը, լինելով Շեքսպիրի նվաճման հերթական փուլը, թելադրում էր թարգմանության նոր սկզբունքներ:

Շեքսպիրի հայերեն թարգմանությունների պատմությունը բաժանվում է երեք շրջանի, որոնք ընդունված է կոչել հայ դասական թարգմանիչ Հովհաննես Մասեհյանի անունով. նախամասեհյանական /մինչև 1890-ական թթ./, մասեհյանական /1890-1930-ական թթ./ և ետմասեհյանական /1940-ական թթ. մինչև այսօր/: Առաջին շրջանը նախապատրաստական էր: Շեքսպիրը մուտք էր գործում հայ իրականություն, իմաստավորվում և հայացվում էր: Կատարվում էին չափածո և արձակ թարգմանություններ ինչպես բնագրից, այնպես էլ միջնորդ լեզուներից, հատվածաբար և ամբողջական, գրաբար և աշխարհաբար: Այստեղ առանձնանում են երկու դպրոց՝ Զմյուռնիայի լուսավորիչ թարգմանիչների և Թիֆլիսի դպրոցի շեքսպիրյան թարգմանությունները: Առաջին շրջանում, երբ հայերը նոր էին բացահայտում Շեքսպիրին, նրա ստեղծագործությունների մեջ շատ բան

պատահական էր թվում, և թարգմանիչները Շեքսպիրից վերցնում էին միայն այն, ինչ անհրաժեշտ էին համարում: «Ծանոթության» փուլի համար դա միանգամայն բավական էր: Հետագայում պարզ դարձավ, որ Շեքսպիրի առաջին թարգմանիչներին վանող «բարդ փոխաբերական պատկերայնությունը» հենց շեքսպիրյան ստեղծագործությունների էությունն է:

Գոյություն ունեն «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգության հատվածներ՝ լույս տեսած այս ու այնտեղ, արձակ, բովանդակության շարադրանքի հետ մեկտեղ: Սակայն առանձին գրքով ամբողջական թարգմանությունը հրատարակվել է միայն 1866թ. Ջոյնտնիայում Արամ Կարապետ Տետեյանի կողմից: Տառադարձված էր այսպես՝ «Հռոմեոս եի Ճիլիէէդդա»: Լուսավորիչ թարգմանիչ Արամ Տետեյանը փորձել է հնարավորին չափ հավատարիմ մնալ բնագրին, ուստի և դիմել է խոշորագույն շեքսպիրագետների՝ Սթիվենսոնի, Մալոնի, Ջոնսոնի խմբագրությամբ հրատարակած տեքստերին: Բացի բուն թարգմանությունից Տետեյանն ընթերցողին որոշ տեղեկություններ է հաղորդում մեծ դրամատուրգի մասին: Առաջաբանում խոսում է Շեքսպիրի այլ գործերի և դրանց հերոսների մասին, տալիս է նաև անգլերեն բնագրի 1842 թ. առաջաբանը, Շեքսպիրի կենսագրությունը՝ թարգմանված անգլերենից, մի հատված Ալեքսանդր Դյումայի՝ Շեքսպիրին վերաբերող ուսումնասիրությունից և, վերջապես, Շեքսպիրի կտակը: Այստեղ թարգմանիչը պատմում է նաև Շեքսպիր թարգմանելու դժվարությունների և թարգմանական աշխատանքի առանձնահատկությունների մասին: «Շատ դժուարութիւն կրեցի մէջ գտնուած դարձուածաւոր անգղիաբանութիւնները, կերպ կերպ երկսայրաբանական դժուարիմաց և երբեմն անլուծելի իմաստները բացատրելով հայացնելու, որ ինչպէս որ բնական է, բնագրին անուշութեան մեծագոյն մասը կորսնցուց: Թարգմանութեանցս մէջ ըստ մեծի մասին առաւել բառ առ բառ թարգմանելը նախադաս սեպեցի, որպէս զի Շեքսպիրի էական գեղեցկութիւնը առանց խանգարուելու աւելի ճշդիւ ցուցուի»⁴:

Սակայն Տետեյանի թարգմանությունն այսօր հնացած է, նախ՝ որ արձակ է, երկրորդ՝ նոր մշակվող աշխարհաբարը չէր կարող տալ այն հնարավորությունները ինչ ներկայումս, և երրորդ՝ 19-րդ դարի հայ թարգմանական դպրոցը դուս չուներ Շեքսպիր թարգմանելու մեծ փորձ: Տետեյանի նպատակը եղել է ազգին ներկայացնել այդ մեծանուն գրողին և ճշգրիտ փոխանցել ողբերգության բովանդակությունը: Տետեյանի

⁴ Շեքսպիրայ Վլ., Հռոմեոս եի Ճիլիէէդդա, թարգմ. Ա.Կ.Տետեյան, առաջաբան, Ջոյնտնիա, 1866

թարգմանությունը կարելի է վերագրել Գյոթեի կողմից նշված առաջին՝ «Ծանոթության» փուլին:

1912 թ. Զմյուռնիայում հայտնվում է ևս մեկ «Ռոմեո և Ջուլիետ»՝ այս անգամ Մեսրոպ Նուպարյանի թարգմանությամբ, «Ռոմեո և ժիլիէդ» վերնագրով: Հայ շեքսպիրագիտությանը Նուպարյանը ծանոթ է որպես հրապարակախոս և թարգմանիչ - բառարանագիր: 19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբին նա Զմյուռնիայում հայտնի էր որպես ֆրանսերենի լավագույն գիտակ: Նրա հողվածները տարիներ շարունակ լույս են տեսել արևմտահայ մամուլում: Նուպարյանը հատկապես աչքի է ընկել ֆրանսերենից կատարած հմուտ թարգմանություններով, մասնավորապես՝ Շատոբրիանի և Ռասինի գործերը, Հյուգոյի «Փարիզի աստվածամոր տաճարը», Գյոթեի «Ֆաուստը», Լաֆոնտենի առակները, Մոլիերի կատակերգությունները, նաև ֆրանսերեն – հայերեն բառարանով՝ «Բառարան ֆրանսերեն հայաշխարհիկ»:

Մեսրոպ Նուպարյանը Տետեյան եղբայրների տպարանի շուրջ համախմբված թարգմանիչների մեջ էր և Շեքսպիրի ստեղծագործություններին ծանոթացել էր հենց Ա.Կ.Տետեյանի թարգմանություններով: Սակայն, իրականում, Շեքսպիրն սկսեց հետաքրքրել նրան միայն այն ժամանակ, երբ տեսավ Պետրոս Աղամյանին՝ շեքսպիրյան հերոսների դերակատարումներով⁵:

Նախքան «Ռոմեո և Ջուլիետի» վերոնշյալ թարգմանությանն անցնելը, նա ուշադիր ուսումնասիրել է Տետեյանի և Մասեհյանի, ինչպես նաև Ֆ.Շալի և Ֆրանսուա Վիկտոր Հյուգոյի ֆրանսերեն թարգմանությունները, ուսումնասիրել է բազմաթիվ քննադատականներ և մեկնաբանություններ: Եվ խոստովանել է, որ այս ամենն արել է անզլերեն լեզվին հմուտ չտիրապետելու պատճառով: Ուստի Նուպարյանի թարգմանությունը ոչ այնքան ինքնուրույն գործ է, որքան տարբեր թարգմանությունների համադրում: Այստեղ առկա են մի շարք լեզվատճական թերություններ: Մասնավորապես՝ ոճական հնարները, հատկապես բառախաղերը, գրեթե փոխանցված չեն: Տպագրելուց առաջ Նուպարյանն իր թարգմանությունը ցույց է տվել Գրիգոր Զոհրապին, սակայն վերջինիս ստույգ գնահատականն անհայտ է: Գրաքննությանը հանձնելուց միայն տաս տարի հետո՝ 1912 թ. նրան հաջողվել է լույս ընծայել այն: Այնուամենայնիվ, քանի որ Նուպարյանը հայտնի մտավորական էր, նրա թարգմանությունը ջերմ

⁵ **Հակոբյան Մ.**, Շեքսպիրական, գիրք 3, Ե., 1970, էջ 310 - 319

ընդունելություն գտավ ժամանակի մամուլի էջերում: Նույաբյանի թարգմանությունը ևս, ինչպես և Տետեյանինը, մեծ մասամբ «տեղեկատվական» բնույթ էր կրում, այսինքն՝ նպատակ ուներ ուղղակի ծանոթացնել հայ ընթերցողին մեծն Շեքսպիրի հետ:

19-րդ դարի վերջին հայ թարգմանական արվեստը քայլ առ քայլ մոտենում էր այնպիսի մակարդակի, որ արդեն ժամանակն էր, որպեսզի հայտնվեին այնպիսի թարգմանություններ, որոնք քիչ էին զիջում բնագրին: Այսպիսին էին 1894 թ. հրատարակված «Համլետը» և 1896 թ.՝ «Ռոմեո և Ջուլիետը» Հովհաննես Մասեհյանի թարգմանությամբ: Շեքսպիր թարգմանելու համար անհրաժեշտ էր օգտագործել մի նոր գրական լեզու և ոճ, որը հիմնովին տարբեր կլիներ նախորդների լեզվից և ոճից: Մասեհյանը գտավ այն՝ օգտագործելով հայոց լեզվի բոլոր հնարավորությունները: Համախմբելով գրաբար, նորակազմ, խոսակցական, արևմտահայ, բարբառային և միջին հայերեն բառերը՝ նա Շեքսպիրին վայել լեզու ստեղծեց թարգմանության համար: Նրան չէին ընկճում Շեքսպիրի բարդ կապակցությունները, որոնք հայերենում կարող էին խորթ ու անհասկանալի հնչել: Հովհ. Մասեհյանը իրավամբ համարվում է Շեքսպիրի ամենախոշոր թարգմանիչը:

Շեքսպիրյան թարգմանությունների երկրորդ՝ մասեհյանական շրջանը սկսվում է 1892 թ., երբ Մասեհյանը ձեռնարկում է Շեքսպիրի գործերի թարգմանությունը, և տևում ավելի քան քառասուն տարի: Թեև թարգմանիչը մտադրվել էր թարգմանել Շեքսպիրի բոլոր գործերը, սակայն այս ժամանակահատվածում կարողացավ թարգմանել միայն տասներկուսը, որովհետև չէր գոհանում մեկ անգամ թարգմանելով, այլ վերամշակում էր թարգմանածը, որոշ երկեր էլ երկրորդ անգամ թարգմանում, ինչպես «Համլետը» և «Ռոմեո և Ջուլիետը»:

Այսպիսով, հայ թարգմանիչները թարգմանական արվեստի զարգացման փուլերն անցել են սրընթացորեն: Թարգմանական արվեստի ներկայիս փուլում կենտրոնական տեղ է զբաղեցնում բնագրի ոճական երանգավորման, ինչպես նաև հեղինակի ամբողջական ստեղծագործական անհատականության վերարտադրման հարցը, այսինքն՝ առաջնային է համարվում գեղարվեստական բովանդակության փոխանցումը: Ստեղծագործության առարկայական-իմաստային բովանդակությունը շատ հեշտությամբ կարելի է հաղորդել ցանկացած այլ լեզվով: Սակայն գեղարվեստական բովանդակությունը շատ ավելի լայն է, քան առարկայական բովանդակությունը: Պատահական չէ, որ հանձարեղ գրողները և թարգմանիչները համառորեն պնդում են թարգմանական գործընթացի բարդությունների մասին: Հնուց է գալիս լատիներեն թևավոր խոսքը. «Traduttore – traditore», որը նշանակում է. «Թարգմանիչը դավաճան

է»։ Հովի. Թումանյանը թարգմանությունը համեմատել է ապակու տակ դրված վարդի հետ։ Վարդը տեսնում ես, բայց նրա անփոխարինելի բույրը, հմայքը չես զգում⁶։ Հենց այդ բարդությունների գիտակցումն էլ հսկայական պատասխանատվություն է դնում թարգմանիչների վրա։

Այսպիսով, համարժեքության ընդհանուր տեսության և թարգմանական գործընթացի, ինչպես նաև բնագրի և թարգմանության տեքստերի համեմատական վերլուծության հիմունքների ուսումնասիրությունը բերում է այն եզրահանգման, որ ցանկացած բնագրի համարժեք փոխանցման հարցի քննության համար նախընտրելի է դիտարկել միևնույն նյութի մի քանի թարգմանական տարբերակներ, որպեսզի դրանց համեմատության շնորհիվ հնարավոր լինի ամբողջական պատկեր կազմել բնագրի համարժեք փոխանցման ուղիների վերաբերյալ։

Ռ. Ղազարյան, Ա. Խաչատրյան
Շեքսպիրի ստեղծագործությունների առաջին հայերեն
թարգմանությունները
Ամփոփում

Հոդվածը նվիրված է գեղարվեստական թարգմանության որոշ մշակութային և լեզվական առանձնահատկությունների ուսումնասիրությանը, ինչպես նաև թարգմանական գործունեության բազմակողմանի բնույթի ընդհանուր դիտարկմանը։ Այն մասնավորապես կենտրոնանում է Շեքսպիրի ստեղծագործությունների առաջին հայերեն թարգմանությունների, դրանց ազգային արժեքի և նշանակության քննարկման վրա, որպես հայ ժողովրդի մշակութային մակարդակի որոշման կարևոր չափանիշ։ Թարգմանական սկզբունքների մշակումը և Շեքսպիրի աստիճանական իմաստավորումը զուգահեռաբար իրականացվող գործընթացներ էին, որոնք մեծապես նպաստեցին Հայաստանում թարգմանական արվեստի աննախադեպ զարգացմանը։

Р. Казарян, А. Хачатрян
Первые армянские переводы произведений Шекспира
Резюме

Данная статья посвящена рассмотрению некоторых культурологических и лингвистических особенностей художественного перевода, а также общему обсуждению разностороннего характера

⁶ Թումանյան Հ., Շեքսպիրի մասին, Ե., 1969

переводческой деятельности. В частности, изучаются национальная ценность и значение первых армянских переводов произведений Шекспира, как важный критерий определения культурного уровня армянского народа. Параллельно осуществляемые процессы разработки переводческих принципов и постепенного осмысления Шекспира в большой степени поспособствовали беспрецедентному развитию переводческого искусства в Армении.

R. Ghazaryan, A. Khachatryan

The First Armenian Translations of Shakespeare's Works

Summary

The present article deals with the study of some cultural and linguistic peculiarities of literary translation, as well as a general discussion of the versatile nature of the translation activity. It particularly focuses on the study of the first Armenian translations of Shakespeare's works, their national value and significance as an important criterion for determining the cultural level of the Armenian people. The parallel processes of working out translation principles and gradually conceiving Shakespeare greatly contributed to the unprecedented development of the translation art in Armenia.

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՇԱՐՈՒԹՅԱՆ

ԵՊՀ դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
E-mail: h.sharuryan@ysu.am
ՀՏԴ 82.0

**ՄԻՐՈ ԲՈՒԼԳԱԿՈՎՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ
ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Միխայիլ Բուլգակով, «Վարպետը և Մարգարիտան», փիլիսոփայական վեպ, սեր, Մարգարիտա, Վոլանդ, հոգեվերլուծություն, հայեցակարգ, ֆրոյդյան տեսություն, եռաբաղադրիչ տեսություն:

Ключевые слова и выражения: Михаил Булгаков, «Мастер и Маргарита», философский роман, любовь, Маргарита, Воланд, психоаналитическая концепция, теория Фрейда, трехкомпонентная теория.

Key words and expressions: Mikhail Bulgakov; “The Master and Margarita”; philosophical novel; love; Margarita; Voland; psychoanalysis; concept; Freudian theory; triangular theory.

Մերը բնորոշ է մարդ արարածին բոլոր տարիքներում: Այն ոգեշնչում է նրան արարելու և կերտելու, ինչ-որ առումով՝ նաև ավերելու և կործանելու. հիշենք հենց թեկուզ հին հունական առասպելներից քաջածանոթ Տրոյական պատերազմը: Անմեկնելի այդ զգացմունքը մինչ օրս էլ շարունակում է գերել մարդկային հոգին, ստիպել վերջինիս դեգերելու կյանքի ոլորապատյուններում և գտնելու «դրախտ» կամ «դժոխք» տանող սեփական արահետը: Ուստի ինքնին հասկանալի է, որ այս առիթնող զգացմունքն է կյանքի իրական աղբյուրը և, իբրև այդպիսին, չէր կարող անտեսվել ու արձագանք չգտնել արվեստների, այդ թվում՝ և գեղարվեստական գրականության էջերում: Ինչպես իրական կյանքում, այստեղ ևս սիրո գաղափարը ծնել է հակասական, երբեմն իրարամերժ բազում ենթաշերտեր և յուրօրինակ ու խոր ձևակերպումներ: Այս առումով հատկապես ուշագրավ է ռուս նշանավոր գրող **Միխայիլ Աֆանասևիչ Բուլգակովի** (1891-1940) «Վարպետը և Մարգարիտան» հանրածանոթ վեպը, ուր հեղինակը ներկայացնում է սիրո մի յուրօրինակ պատմություն՝ շաղախված աստվածաշնչյան թեմաներով և փիլիսոփայական սեփական մոտեցումներով:

Վեպի քննությունից պարզ է դառնում, որ հեղինակը պատկերում է սիրո գաղափարի միաժամանակյա երկու վիճակ. ընթերցողի աչքի առջև ընձյուղվում և ամբողջանում են Հիսուսի (նա այստեղ գործում է Յեշուա Հա-

Նոցրի անունով) և հերոսուհու՝ Մարգարիտայի անձնվեր սիրո պատմությունները: Եթե բժիշկ և փիլիսոփա Հիսուսը մարդկությանը բերում է իր անձնուրաց սերն ու նահատակվում հանուն դրա, ապա ֆիզիկական սերը մարմնավորող Մարգարիտան կանացի փխրուն երջանկության համար աննախադեպ համաձայնություն է կնքում անգամ սատանայի՝ Վոլանդի հետ: Ի դեպ, ամենայն հավանականությամբ հերոսուհու այս անունը վերցված է իտալացի արքեպիսկոպոս Յակոբոս դը Վարագինիի (1230-1298) հեղինակած՝ «Ոսկի լեզենդ» խորագրով աշխատությունից՝ նվիրված սրբերի վարքագրությանը: Միջնադարում մեծ համարում ունեցող այդ երկում հեղինակը պատմում է սուրբ Մարգարիտայի մասին, որը մայրության հովանավորուհին էր և, ըստ ավանդության, 4-րդ դարում նահատակվել է Անտիոքում: Ուշագրավ է, որ միջնադարում նրան միշտ պատկերել են խցում տեղադրված փակ վանդակում, որտեղից, տարածված լեզենդի համաձայն, նրան հաջողվել է փախչել: Ինչպես հայտնի է, Բուլգակովի վեպում սատանան հատուկ նշում է, որ իր պարահանդեսը պետք է գլխավորի Մարգարիտա անունով մի կին, որի երակներում ամեննին էլ սովորական մահկանացուի արյուն չի հոսում: Ինչ-որ առումով նմանության կա նաև այս երկու կանանց ճակատագրերում. բուլգակովյան Մարգարիտան ևս փախուստի է դիմում ամուսնու՝ իր համար բանտ դանձած նրա տնից. այն ոսկե ճաղերով մի մեծ վանդակ էր՝ լի հարուստ, բայց անհատականությունը անտեսանելի բազում կապանքներով շղթայող ու խեղդող կենսակերպով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ թեև իր ինքնատիպ մտածողության պատճառով Բուլգակովին ժամանակին փորձել են համարել անգամ ոգեհմայության ջատագով, և գրողն էլ անցել է ստեղծագործական կյանքի բավական բարդ, ներհակ ու փշոտ ճանապարհ, հայտնվել անգամ մեկուսացվածության մեջ, այնուամենայնիվ նա ըստ էության 19-րդ դարի ռուս գրականությանը բնորոշ փիլիսոփայական վեպի ավանդների ինքնօրինակ կրողն ու արժանավոր շարունակողն է, ասել է թե՛ Լ. Տոլստոյի և Ֆ. Դոստոևսկու գրական ժառանգորդը:

«Փիլիսոփայական վեպ» գրականագիտական եզրույթն առավել լայն տարածում գտավ 20-րդ հարյուրամյակի ընթացքում: Այս ձևակերպումը բնորոշում է գեղարվեստական երկերի մի ենթաշերտ, ուր կոմպոզիցիան համադրվում է փիլիսոփայական գաղափարների արծարծումների հետ: Գրական նման որոշ կոթողներ կարող են հանդես գալ նաև «դաստիարակչական վեպ» հասկացության ներքո, քանի որ վերոհիշյալ ստեղծագործությունների մեջ հեղինակն առանձնակի ուշադրություն է դարձնում իր կերտած կերպարների աշխարհայացքի ձևավորման պատմությանը, լուսաբանում է նրանց ներաշխարհում կատարվող

փոփոխություններն ու շեշտադրում հայեցակարգային իմաստավորումը: Սակայն, մյուս կողմից, երկու տեսակի այս վեպերը, անտարակույս, ունեն նաև ժանրային տարբերություններ, որի վառ ապացույցը գրական կերպարի՝ իբրև փիլիսոփայական որոշակի գաղափարների կրողի և արտահայտողի, ամբողջականացման գործընթացն է. փիլիսոփայական վեպում, օրինակ, պարտադիր չէ հերոսի հասունացման և բնորոշող հատկանիշների ձևավորման պատկերումը, մինչդեռ դաստիարակչական վեպում հիշատակված երևույթները կազմում են էական բաղադրիչ մաս: Բացի այդ՝ փիլիսոփայական կարող են համարվել նաև այն վեպերը, որոնք գրված են ուտոպիստական կամ հակաուտոպիստական որոշակի մոտեցումների համաձայն՝ կախված հասարակական կյանքում տեղ գտած իրադարձությունների փիլիսոփայական և պատմական վերլուծումից: Ուստի, ինչ վերաբերում է Մ. Բուլգակովի «Վարպետը և Մարգարիտան» վեպի ժանրային հստակեցման խնդրին, ապա այն բավական խնդրահարույց է, քանի որ հեղինակը միաձուլել է հնարավորն ու անհնարինը, մասնավորապես պատմությունն ու ֆելիետոնը, քնարականն ու առասպելականը, իրականն ու երևակայականը: Բայց և այնպես, այն որոշ վերապուհումներով կարելի է դասել փիլիսոփայական վեպերի շարքին:

Բուլգակովյան այս առաջին հայացքից հակասական գաղափարներով լեցուն վեպի դիտարկման համար ամենից առաջ անհրաժեշտ է անդրադարձալ դրա ստեղծման պատմությանը: Ինչպես հայտնի է, «Վարպետը և Մարգարիտան» գրողի կարապի երգն է, որի վերջին գլուխը հեղինակը թելադրել է կնոջը՝ Ելենա Մերգեննային 1924-ին՝ թմրանյութերի կիրառմամբ անասելի ցավերը հաղթահարելուց հետո: Գուցե հենց այս վերջին փաստով է նաև պայմանավորված վերոհիշյալ վեպի՝ առաջին հայացքից դժվարամատչելի թվացող հակասականությունը՝ իրականության ու երևակայականի շաղախը, որը վերջինիս հաղորդում է յուրօրինակություն, բայց և ընթերցողի մտապատկերում ծնում է իրարամերժ բազում զգացումներ:

Վեպի կերտման պատմության սկիզբը տանում է դեպի 1920-ականներ և շարունակվում գրողի մահից հետո: Այն լիակատար տարբերակով լույս է ընծայվել 1966-ին՝ հեղինակի մահից գրեթե քառորդ դար անց, վերջինիս այրու ջանքերի շնորհիվ: Այդ նույն ժամանակ էլ այն ընթերցողի սեղանին հայտնվել է ներկա խորագրով, իսկ մինչ այդ ունեցել է «Ինժեների սմբակը», «Սև մոզր» անվանումները, որոնք 1930թ. ոչնչացվել են հենց Բուլգակովի ձեռքով: Ուշագրավ է, որ այս հանրածանոթ գործը բազմիցս բեմականացվել և էկրանավորվել է: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ ռուս հայտնի արձակագիր, բանաստեղծ և կինոսցենարիստ Կոնստանտին Սիմոնովը, որը, ի դեպ, հեղինակել է վերոհիշյալ վեպի

առաջին հրատարակության նախաբանը, անդրադառնալով հակոտնյա զգացումներ ծնող բուլգակովյան վեպին, նշում է, որ հեղինակն այնտեղ ներդրել է «իր ծաղրական հայացքի ամբողջ սրությունը, անզուսպ երևակայությունն ու հոգեբանական հզոր դիտողականությունը»¹:

Ինչպես արդեն նշեցինք, վեպի առանցքային խնդիրներից մեկը սիրո հավերժական թեման է, որն արձակագիրը դիտարկում է միանգամայն նորովի, իսկ այդ նույն հիմնախնդիրը, հարկավ, քննվել է նաև հայտնի հոգեվերլուծաբանների կողմից, որոնք այն դարձրել են լայն տարածում ստացած իրենց տեսությունների հիմքն ու այդպիսով կերտել բարձրագույն ապրելակերպի մի ամբողջ հայեցակարգ: Ուստի, անդրադառնալով հանդերձ այդ հայեցակարգերին, փորձենք այն համատեղել բուլգակովյան փիլիսոփայության հետ, գտնել սիրո հայեցակարգի վերաբերյալ միմյանց լրացնող, ինչ-որ առումով հակասող, բայց և յուրօրինակ սահմանումներ առաջադրող եզրեր:

Այսպես, ավստրիացի հանրաճանաչ հոգեբան, հոգեվերլուծության նշանավոր ներկայացուցիչ և նյարդաբան Զիգմունդ Ֆրոյդը (1856-1939) սիրո հիմքը համարում է անհատի նյարդային համակարգի գործունեությունը, որը խարսխսված է «բավականության սկզբունքի» և «իրականության սկզբունքի» բախման վրա, ինչը մշտապես տեղի է ունենում ցանկացած անհատի հոգեկան աշխարհում՝ ծննդյան առաջին իսկ վայրկյաններից սկսած: Իսկ երբ այդ բախումն անհավասար է դառնում է անկառավարելի, ապա, հոգեբանի պնդմամբ, անհատն ընկնում է «ախտածին վիճակի» մեջ, քանի որ փորձում է խուսափել իրականության պարտադրած բռնությունից: Եթե այս տեսանկյունից դիտարկենք բուլգակովյան հերոսուհու՝ Մարգարիտայի սերը դեպի Վարպետը, ապա պարզ է դառնում, որ այն թելադրված է կանացի բնական զգացմունքով՝ սիրված լինելու անհրաժեշտությամբ, նրանով, ինչը տարաբախտ կինը չի կարողանում գտնել սեփական օջախում, և, ավստրիացի գիտնականի տեսության համաձայն, իրականության հետ բախման արդյունքում հայտնվում է հասարակության չափանիշներին հակասող հոգեվիճակում:

Սակայն մարդկային էակի սիրային նախասիրությունների առաջացման հիմնախնդրում, անշուշտ, առկա են բազում գործոններ, որոնցից Զ. Ֆրոյդն առանձնացնում է հատկապես երկուսը՝ տվյալ ազգին բնորոշ մշակույթն ու սիրած էակի ընտրությունը: Մշակույթ ասելով՝ գիտնականը նկատի ունի տվյալ հասարակության ավանդական

¹ См. и **Симонов К.**, Разговор с товарищами (Письма о литературе) // Вопросы литературы. 1968. N 9, էջ 86:

մոտեցումները, օրինակ, ամոթի զգացումը, խղճահարությունը, բարոյական արժեհամակարգը և այլն, որոնք անցնում են անհատի գիտակցության միջով և պայմանավորում վերջինիս սիրային պատկերացումները: Իսկ երկրորդ գործոնի, այսինքն՝ սիրո առարկայի ընտրության խնդիրը հոգեվերլուծաբանը կապում է ընտանեկան սխալ դաստիարակության, հասարակական անհարիր միջավայրի, ենթամշակութային արժեքների և այլ հիմնահարցերի առկայության հետ, որը կարող է բնականաբար հանգեցնել որոշակի շեղումների: Ուստի Ջ. Ֆրոյդի մոտեցման համաձայն՝ սերն այն ամենի ամբողջականացումն է, որը երևան է գալիս անհատի ներաշխարհում վերջինիս ստեղծման առաջին իսկ օրից «առաջնային ցանկությունների» հետ մեկտեղ: «Հոգեվերլուծությունը մեզ սովորեցնում է բոլոր երևույթները դիտարկել որպես առաջնային ցանկությունների ազդակներ»², - նկատում է գիտնականը:

Եթե բուլզակովյան հերոսուհուն դիտարկենք վերոհիշյալ տեսանկյունից, ապա ակնհայտ է, որ Վարպետի ընտրությունը պայմանավորված է նրա տաղանդի հանդեպ Մարգարիտայի անասելի ակնածանքով. կինն անընդհատ փայփայում է վերջինիս ստեղծած վեպը, հավաքում պատառիկներն իբրև մասունք և նրա մասին խորհելիս գուցահեռաբար անվերջ վերհիշում նաև այդ ձեռագրերի գոյության մասին «Արցունքները սրբելով, Մարգարիտա Նիկոլաննան ցած դրեց տետրը, արմունկները հենեց հայելու սեղանիկին և հայելու մեջ արտացոլված, նստած էր երկար ժամանակ՝ աչքը չկտրելով լուսանկարից: Հետո արցունքները չորացան: Մարգարիտան խնամքով դասավորեց իր ունեցվածքը, և մի քանի րոպե անց դրանք վերստին թաղված էին մետաքսե լաթերի տակ, ու մուտք սենյակում շրխկոցով փակվեց կողպեքը»³:

Ինչ վերաբերում է այն խնդրին, թե Վարպետի հանդեպ տածած սերը հակասում է հասարակության բարոյական օրենքներին, քանի որ Մարգարիտան ամուսնացած էր առաջին հայացքից բավական ընդունելի և բնականոն վարքագիծ ունեցող տղամարդու հետ, որը նրան պարզևել էր բարեկեցիկ կյանք և նաև թվացյալ երջանկություն, ապա, հոգեվերլուծաբանի տեսության համաձայն, հենց նույն հասարակության պարտադրած չափանիշներն են մղում այդ իսկ վաղուց ի վեր հաստատված օրենքների ժխտմանը. «Մարգարիտա Նիկոլաննան համատեղ

² **Фрейд З.**, Я и оно, Труды разных лет: В 2 кн., Кн. 1. - Тбилиси, Мерани, 1991, стр. 90-91.

³ **Բուլզակով Ս. Ա.**, Վարպետը և Մարգարիտան. թատերական վեպ, թարգմ. ռուսերենից Ա. Հովհաննիսյանի, Եր., «Սովետ, գրող» հրատ., 1985, էջ 245:

բնակարանում ապրելու սարսափներին ծանոթ չէր: Մի խոսքով... նա երջանիկ էր: Եվ ո՛չ մի բան: Այն պահից ի վեր, երբ ամուսնացել էր տասնինը տարեկան հասակում և առանձնատուն ընկել, երջանկություն չունեիր: Աստվածներ իմ, աստվածներ: Իսկ ի՞նչ էր պետք այդ կնոջը: Ի՞նչ էր պետք այդ կնոջը, որի աչքերում միշտ մի տեսակ անըմբռնելի կրակ էր վառվում, ի՞նչ էր պետք մի աչքը թեթևակի շիլ այդ վիուկին, որն այն զարնանը միմոզաներով պճնվեց: Չգիտեմ: Ինձ հայտնի չէ: Ակներևաբար, կինը ճիշտ էր ասում, նրան պետք էր նա՝ Վարպետը, և ոչ ամենևին գոթական առանձնատունը, ոչ առանձին այգին, ոչ էլ դրամը»⁴:

Ինքնին հասկանալի է և ակնհայտ, որ այստեղ ծնվում է հոգեվերլուծաբանի մյուս տեսակետը՝ առաջնային ցանկությունների ազդակները, որն այս դեպքում սիրված լինելու պարզագույն ցանկությունն է, ինչը բնական ձգտում է և խորապես բնորոշ կանացի հոգեբանությանը: Ուստի ինչ-որ առումով կարելի է եզրակացնել, որ բուլգակովյան հերոսուհին բացարձակապես համապատասխանում է սիրո ֆրոյդյան տեսությանը:

Շվեյցարացի հոգեբույժ, վերլուծական հոգեբանության հիմնադիր Կարլ Գուստավ Յունգը (1875-1961) իր «Կարմիր գիրք» խորագրով սովորածավալ աշխատության մեջ, որը ներառում է հեղինակի 1913-1916թթ. ընթացքում անձնական փորձառության վրա հիմնված ձեռագրերը, նույնպես անդրադառնում է սիրո թեմային ու տալիս այդ հասկացության յուրատեսակ ձևակերպումը: Ուշագրավ է, որ լիակատար տեսքով այս աշխատությունը լույս է տեսել և հանրության սեփականությունը դարձել 2009-ին՝ Ու. Նորթոնի հրատարակությամբ, իսկ հեղինակի կենդանության օրոք քչերին է հաջողվել ընթերցել այն: Վերոհիշյալ աշխատությունը պարունակում է Կ. Յունգի համապարփակ հայեցակարգը, և գիտնականն ինքը ժամանակին այն անվանել է «դիմահայաց հանդիպում անգիտակցականի հետ»⁵: Ինչ վերաբերում է սիրո հայեցակարգին, ապա գիտնականը հայտարարում է. «Ամեն երևույթի սկզբնավորումը սերն է, բայց երևույթների էությունը կյանքն է»⁶: Մակայն նա ավելի հեռուն է գնում և մասնավորեցնելով իր մտտեցումը՝ նշում. «Նա, ով սիրում է, լիքն ու զերհագեցած անոթ է, որ սպասում է տրվելու: Իսկ նա, ով հակված է

⁴ **Բուլգակով Մ. Ա.**, Վարպետը և Մարգարիտան. թատերական վեպ, էջ 242:

⁵ **St u Jung, Carl Gustav** (1961). Aniela Jaffe, ed. *Memories, Dreams, Reflections*, էջ 178-194:

⁶ **Jung Carl**, “The Red Book”, p 327

մտածելուն, խորն է ու սնամեջ և սպասում է իրականացման»⁷: Հոգեվերլուծաբանը մեծապես արժևորում է սիրո զգացմունքն ու հայտարարում, թե «մեծ է նա, ով սիրում է, քանի որ սերը մեծ Արարչի ներկա գործողությունն է, աշխարհ գալու և աշխարհ դառնալու վայրկյանը: Հզոր է նա, ով սիրում է: Բայց զորեղ է նա, ով իրեն սիրուց հեռու է պահում»⁸: Ասել է թե՛ համաձայն Յունգի մոտեցման՝ սերն անհատին տալիս է մեծագույն հզորություն, սակայն միևնույն ժամանակ խոչընդոտում է ինքնարտահայտմանն ու ինքնադրսևորմանը:

Եթե Բուլգակովի կերտած Մարգարիտային դիտարկենք նշյալ տեսանկյունից, ապա սատանայի հետ վերջինիս մեղսալից համաձայնությունն արդարացված է, քանի որ պայմանավորված է ամենակուլ սիրով, բայց և այնպես այն չի դադարում մեղք լինելուց, որովհետև միշտ չէ, որ նպատակն արդարացնում է միջոցները. «Որքան երջանիկ եմ, որքան երջանիկ եմ, որքան երջանիկ եմ ես, որ գործարքի մեջ մտա նրա հետ: Օ՛, սատանա, սատանա: Միրելիս, ստիպված եք լինելու ապրել վիուկի հետ»⁹: Մա, անտարակույս, արդեն հանուն սիրո ամեն ինչ զոհաբերող կնոջ ճիշ չէ, այլ անսանձ ազատության անհասկանալի ձգտում:

Հակասական, սակայն յուրովի գեղեցիկ այս հայեցակարգի դիտարկումն անկատար կլիներ, եթե անտեսեինք ամերիկացի հոգեբան Ռոբերտ Ստերնբերգի (1949) եռաբաղադրիչ տեսությունը, որը հիմնված է երեք տարրերի՝ մտերմության, կրքի և պարտականության սերտաձած փոխհարաբերության վրա: Այս տեսության համաձայն՝ մտերմությունը համամասնակցության, միության և կապվածության խառնուրդ է, իսկ կիրքը՝ սիրահարվածության և սեռական գրավչության համաձուլվածք: Ինչ վերաբերում է երրորդ՝ պարտականության բաղադրիչին, ապա այն մոտակա ժամանակի տեսանկյունից ենթադրում է սիրո զույգերի միմյանց հետ փոխհարաբերությունները շարունակելու ընտրություն, իսկ հեռահար նպատակով՝ միասնական ձեռքբերումներ և ապագայի վերաբերյալ համատեղ նախագծեր. «Որևէ անհատի սիրո ուժգնությունը,- գրում է Ռ. Ստերնբերգը,- կախված է այս երեք բաղադրիչների բացարձակ հզորությունից, իսկ որևէ անհատի ստեղծած հարաբերությունների տեսակը՝ միմյանց հանդեպ դրսևորած զգացմունքի ուժգնությունից»¹⁰:

⁷ Նույն տեղում, էջ 253:

⁸ Նույն տեղում:

⁹ **Բուլգակով Մ. Ա.**, Վարպետը և Մարգարիտան. թատերական վեպ, էջ 409:

¹⁰ **Sternberg, Robert** «A Triangular Theory of Love», in H. T. Reis/C. E. Rusbult eds., *Close Relationships* (2004) p. 258

Համաձայն հոգեբանի եռաբաղադրիչ տեսության՝ փոխհարաբերությունների կայուն և երկարատև զարգացման համար վերոհիշյալ տարրերի փոխկապակցվածության ցայտուն դրսևորումը խիստ անհրաժեշտ է, քանի որ դրանցից սուկ մեկի վրա հիմնված հարաբերությունները գոյատևելու ավելի քիչ հնարավորություն ունեն։ Իսկ բուլգակոմյան հերոսուհու ընտանեկան կյանքի պատկերներից ակնհայտորեն երևում է սուկ պարտականության իրականացումը, որը և պայմանավորում է այդ ամուսնական զույգի անկայուն հարաբերություններն ու նպաստում մեկ այլ անձի՝ Վարպետի երևան գալուն։

Ռ. Ստերնբերգը կատարում է նաև սիրո հայեցակարգի յուրատեսակ դասակարգում, որն ընդգրկում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են սիրահարվածությունը, ընկերական, ռոմանտիկ սերը, ինչպես նաև այդ զգացմունքի՝ ճակատագրական և բացառիկ ու կատարյալ կոչվող տարատեսակները։ Ռ. Ստերնբերգն անգամ ներկայացնում է դատարկ կամ սնամեջ սիրո գաղափարը, որին բնորոշ է պարտականությունների սուկ ավանդական դարձած կատարումը, բայց բացակայում են զգացմունքն ու կիրքը։ Այդպիսին է, անշուշտ, Բուլգակովի կերտած Մարգարիտայի ընտանեկան կյանքն իր ամուսնու հետ, որն ի վերջո խորտակվում է, ինչպես այն ամենը, ինչը սուկ երևութական է։

Ինչ վերաբերում է Մարգարիտայի՝ Վարպետի հանդեպ տածած սիրուն, ապա այն, անշուշտ, ճակատագրական է, քանի որ հիմնված է ամենակուլ կրքի վրա և իրականացման ճանապարհին միջոցների միջև որևէ խտրություն չի ճանաչում (սատանայի հետ կնքած հանցավոր համաձայնությունը)։ Մակայն, մյուս կողմից, այն նաև կատարյալ է, քանի որ Մարգարիտայի և Վարպետի սերը վերածվում է հավերժության, երբ վեպի ավարտին Հիսուսի ուղարկած պատվիրակը՝ Ղևի Մատթեոսը, երկնային հրամանն է փոխանցում Վոլանդին՝ իր հետ տանել Մարգարիտային, բայց նրան չբաժանել իր սիրած էակից։ Այսինքն՝ երկնային նախախնամության տեսանկյունից Մարգարիտայի և Վարպետի սերը հանցավոր է, ուստի վերին արքայության դռները փակ են նրանց առաջ, և նրանք կարող են հայտնվել միայն դժոխքում։ Դրա վառ ապացույցն է նաև այն, որ այս երկու սիրահարներին միմյանց հետ միավորում է սատանայի հովանավորությունը, և իրենց վերջին ճամփորդությունը ևս նրանք կատարում են նույն սատանայի՝ Վոլանդի ու վերջինիս շքախմբի ուղեկցությամբ։ Այս սերը, սակայն, նաև ընդունելի է, քանի որ հանուն դրա սիրահար զույգը պատրաստ է հաղթահարել ցանկացած խոչընդոտ, անգամ հակառակ գնալ համայն աշխարհին, ոտնահարել ավանդական ընդունված մոտեցումներն ու հասնել երանության։ Հետևաբար մահն ի գորու չէ բաժանել նրանց։ Այսինքն՝ նրանք հասել են Ստերնբերգի մատնանշած

կատարյալ սիրուն, որը, ցավոք, ինչպես հոգեբանն է նշում, չի կարող լինել հավերժական. արձակագրի մտահղացմամբ՝ այն կարող է շարունակվել միայն հանդերձյալ աշխարհում:

Այսպիսով, Մ. Բուլգակովի «Վարպետը և Մարգարիտան» վեպում տեղ գտած սիրո թեմայի քննությունից պարզ է դառնում, որ այս հավերժական խնդիրը չունի և չի կարող ունենալ սպառիչ մեկնություն, մշտական բուռն դրսևորումներ (այս առումով ուշագրավ է Վարպետը, որը սիրահարված է Մարգարիտային, բայց թվում է անհաղորդ իրենց սիրուն սպասվող հետագա ճակատագրի հանդեպ), չի ճանաչում սահմաններ և կարող է միաձուլել թույլատրելին ու անթույլատրելին (սատանայի՝ Վոլանդի ջանադիր հավաստիացումները Հիսուսի իրական գոյության մասին): Ուստի, ինչպես իրավացիորեն նշում է իռացիոնալիզմի հայտնի ջատագով գերմանացի փիլիսոփա Արթուր Շոպենհաուերը (1788-1860), «սերը հաճախ հակասության մեջ է մտնում նույնիսկ անձի անհատականության հետ»¹¹:

Հ. Ա. Շարության

Սիրո բուլգակովյան մեկնաբանումը հոգեվերլուծության հայեցակարգից Ամփոփում

Հոդվածը նվիրված է ռուս նշանավոր գրող Միխայիլ Բուլգակովի «Վարպետը և Մարգարիտան» վեպում կարևոր տեղ զբաղեցնող սիրո զգացմունքի հեղինակային մեկնաբանություններին, որոնք քննվում են հոգեվերլուծական զանազան տեսությունների հայեցակարգերից: Մասնավորապես ընդգծվում է, որ խնդրո առարկա վեպը, վերլուծության ենթարկվելով այդ տեսանկյունից (Զ. Ֆրոյդ, Կ. Յունգ, Ռ. Ստերնբերգ), բացահայտում է սիրո ընկալման ենթաշերտերն ու հավաստում վերոհիշյալ հոգեվերլուծական հայեցակարգերին սիրո բուլգակովյան մեկնաբանության համապատասխանությունը: Այդ տեսակետից հատկապես քննարկվել են վեպի գլխավոր հերոսուհու ճակատագրական սիրո ենթաշերտը՝ իբրև սկզբունք ընտրելով ամերիկացի հոգեբան Ռոբերտ Ստերնբերգի եռաբաղադրիչ տեսությունը, որը հիմնված է հիմնականում երեք տարրերի՝ մտերմության, կրքի և պարտականության սերտաձած փոխհարաբերությունների վրա:

¹¹ См. у Шопенгауэр А., Метафизика половой любви, Избранные произведения. М., 1992, էջ 576:

А. А. Шарурян

Психоаналитическая концепция булгаковской интерпретации любви

Резюме

Статья посвящена авторским интерпретациям чувства любви, занимающим важное место в романе «Мастер и Маргарита» известного русского писателя Михаила Булгакова, анализируемым в свете разных психоаналитических концепций. В частности, отмечается, что анализ романа с указанной точки зрения (З. Фрейд, К. Юнг, Р. Стернберг) позволяет раскрыть скрытые слои восприятия любви и свидетельствует о соответствии булгаковского восприятия любви вышеотмеченной психоаналитической концепции. С этой точки зрения с позиций трехкомпонентной теории американского психолога Роберта Стернберга, основанной на тесной взаимосвязи трех составляющих – близости, страсти и обязанности, особому анализу подвергается скрытый слой роковой любви главной героини романа.

H. A. Sharuryan

Bulgakov's Interpretation of Love from the Concept of Psychoanalysis

Summary

The article is devoted to the author's interpretations of the sense of love that has essential part in the novel "The Master and Margarita" by the famous Russian writer Mikhail Bulgakov that are studied from the perspective of concept of various psychoanalytical theories. It particularly underlines that the novel under consideration analyzed from this perspective (Z. Freud, K. Jung, R. Sternberg) reveals the sublayers of love's perception and justifies the corresponds of Bulgakov's interpretation of this feeling to the above mentioned psychoanalytical concepts. From that standpoint the sublayers of the main heroine's fatal love are discussed by the principal of the American psychologist Robert Sternberg's triangular theory which is mainly based on the close interrelation of three components, i.e. intimacy, passion and commitment.

ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 821.19.0

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆԻ «ԵՐԵՎԱՆ» ՎԵՊԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. քաղաքաշինություն, ստանդարտ, էպոպեա, ճարտարապետություն, արևելք, արևմուտք, խորհրդային մշակույթ, ավանդույթ, կոլորիտ, լեյտմոտիվ:

Ключевые слова и выражения: градостроительство, стандарт, эпопея, архитектура, восток, запад, советская культура, традиция, колорит, лейтмотив.

Key words and expressions: municipal building, standard, epopée, architecture, East, West, Soviet Culture, tradition, coloring, leythmoid.

Սա այն վեպն է, որը ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1933 թ. նոյեմբերի 14-ի որոշմամբ Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուի և այլ հրատարակությունների հետ մեկտեղ հանվեց շրջանառությունից՝ անցյալը իդեալականացնելու մեղադրանքով: Արդյո՞ք Արմենը իդեալականացնում էր անցյալը, եթե այո՞, ապա՝ ինչո՞ւ և ինչպե՞ս, եթե ոչ՝ ապա ինչո՞ւ սարքվեց այդ մեղադրանքը: Անտարակույս, հեղինակը ձգտում էր ճշմարտացի վերարտադրել ստեղծարար աշխատանքն ու նրանով ոգեշնչված հերոսի կերպարը, քաջ գիտակցելով, որ կյանքի հետ ամուր կապված և կյանքի կառուցմանը ակտիվորեն մասնակցող գրողը չի կարող հեռու մնալ առօրեական հարցերից՝ դառնալով անտարբեր դիտորդ: Մ. Արմենը հետագայում այլևս չանդրադարձավ այս վեպին և այն չզետեղեց իր երկերի ընտրանիների, ինչպես նաև երկերի ժողովածուի մեջ: Հավանաբար ժամանակի իսիստ քննադատությունը նրան հեռացրել էր այդ գործից:

Նախ՝ ինչո՞ւ «Էպոպեա»: Ի՞նչ է նշանակում էպոպեա: Ժանրային բացատրությունը հետևյալն է. «Դյուցազնավեպ, դյուցազներգություն: Պատմական խոշոր իրադարձությունների շարք, որոնք մի ամբողջություն են կազմում: Մեծ արդյունք առաջ բերող գործ, սխրագործություն»¹: Սա բառի ոչ միայն լեզվաբանական, այլև գրականագիտական բացատրությունն է: «Վեպ-էպոպեան երկու ձևերի՝ վեպի և էպոսի որոշ հատկանիշների

¹ Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան», 1976, էջ 395: Համանման բացատրություն է տրված նաև Է. Ջրբաշյանի և Հ. Մախչանյանի «Գրականագիտական բառարանում» (Եր., 1980):

սինթեզումն է, միաձուլումը, ներդաշնակումը: Դա պայմանավորված է հասարակական կյանքի օրինաչափությամբ, ժողովրդի, պատմության և անհատի փոխադարձ կապի նոր հայեցողությամբ»²:

Բայց հիմա հարց է առաջանում, արդյո՞ք Մ. Արմենի այս վեպն իր ընդգրկումով, իրոք, էպոպեա է: Հարցի պատասխանը փորձենք տալ վեպի վերլուծությամբ և դրան հաջորդող ամփոփիչ խոսքով:

Այս գիրքը Երևանի քաղաքաշինության, քաղաքաշինության մեջ ձևավորված երկու հիմնական ուղղությունների մասին է: Ուղղությունները երկուսն են՝ արևելյան (ազգային) և արևմտյան (ապազգային, ընդհանուր եվրոպական ստանդարտին մոտեցող): Արմենը «ազգային» բնորոշումը չի օգտագործում, դա կդիտվեր որպես նացիոնալիզմ, օգտագործում է «արևելյան» բնորոշումը, որը նշանակում է Երևանի համար ավանդական, տեղային, որն էլ հենց ազգայինն է: Արևմտյանը ընդհանուր խորհրդայինն է, պրոլետարականը, որն ստեղծում է իր ստանդարտները:

Ասենք, որ այս պատկերն ունի իրական հիմք: Երևանը, իրոք, 1920-ական թվականներից սկսած, հառնում էր դարավոր թմբիկից: Միջնադարյան քաղաքը վերածվում էր մայրաքաղաքի: Եվ հենց այս շրջանում մրցակցում էին ճարտարապետական երկու ուղղություններ: Ուղղություններից մեկի պարագլուխը Երևանի գլխավոր ճարտարապետ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանն էր, որն ամեն ինչ արեց Երևանի ազգային դեմքը պահպանելու համար՝ հիմք ընդունելով միջնադարյան հայոց ճարտարապետության լավագույն նմուշները: Իր ծրագրերը նա իրականացրեց այնպիսի առանցքային շինություններով, որպիսիք են Կառավարության տունը և օպերայի ու բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքը: Այն տարիների կավաշեն, խարխուլ, ծուռումուռ փողոցներով Երևանի համար այս շինություններն, իրոք, ունեցան առանցքային, ուղղորդող նշանակություն: Այդ տարիներին՝ 1920-1930-ական թվականներին, ազգային ճարտարապետության դեմքն ու սկզբունքները պահպանելը հեշտ չէր, որովհետև դրա դիմաց պրոլետարական (սոցիալիստական) ապազգային ճարտարապետությունն էր:

Երկրորդ ուղղությունը, որը մեկ ընդհանուր բառով բնորոշվում էր որպես նոր ճարտարապետություն, փորձում էր ճարտարապետության մեջ կիրառել պրոլետարական գաղափարախոսության առանցքային սկզբունքները՝ առաջ մղելով ընդհանուրի, պրոլետարական ձևի տարրերը:

² Մ. Արզումանյան, Սովետահայ վեպը, հ. 1, ,Հայաստանե հրատարակչություն, Ե. , 1967, էջ 189:

Այս ճարտարապետության հիմքը պարզ կառուցվածքային ձևերն են, ոճական միջոցներ ունենալով կոնստրուկտիվիզմի տարրերը: Թամանյանի օրոք Երևանը կառուցապատվեց նաև այդպիսի շենքերով: Օրինակ՝ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիայի (պետական անվտանգության) շենքը, որը նմանեցվել է գալիքը ձեռքով նավի: Մոսկվայում կառուցվեց հնգաթև աստղի նմանություն ունեցող հյուրանոցային համալիր:

Այդ երկու ուղղությունների հիմքում Մ. Արմենը դրել է որոշակի գաղափարախոսություն և հոգեբանություն: «Ինչպես են գրվում վեպերը» հոդվածի մեջ նա մանրամասնորեն անդրադառնում է իր «Երևան» վեպի ստեղծագործական հարցերին, իսկ հիշյալ ուղղությունների կապակցությամբ գրում. «Բուդաղյան-Փարսադանյան-Ասմար-Գնունի հանգույցը... գրվածքի հիմնական գործողության *ձևն է*: Իսկ *բովանդակությունը*՝ ազգային ձևի ու պրոլետարական բովանդակության... խնդիրներն են: Այդ խնդիրների տեսակետից էպոպեայի նկարագրական գլուխն ունի հետևյալ նշանակությունը:

Առաջին.- այստեղ պարզվում է, որ հին Երևանի *ձևի հետ միասին քանդվում է նաև նրա բովանդակությունը*: Քանդվում է ոչ միայն արևելյան բաղնիքը, այլև դրա հետ միասին մարդկային փոխհարաբերությունների մի ողջ սիստեմ... Քանդվում է ոչ միայն չայխանան, այլև չայխանան պայմանավորող հասարակական կեցությունը (աշուղի երգն ու ունկնդիրների վերաբերմունքը, չայխանայի գաղտնի սենյակը): Եվ այս ամենի մեջ հայտնաբերվում է իմ,- հեղինակի, վերաբերմունքը դեպի քանդվող հին դարավոր Երևանը»³: Հեղինակային այս բացատրությունը լրացուցիչ ցուցում է վեպում բխվող հին և նոր ճարտարապետության էությունը բացահայտելու և հասկանալու համար: Հիմա տեսնենք, թե ինչպես են այս սկզբունքները մարմնավորվել Մ. Արմենի վեպում:

Վեցամյա ընդմիջումից Երևան է վերադառնում ճարտարապետ Արշակ Բուդաղյանը: Նա ուսանել է Մոսկվայում, եղել արտասահմանում, որպես խճուղային ճարտարապետ աշխատել Լենինգրադում, ձեռք բերել աշխատանքային փորձ, կուսակցական է և, առաջին իսկ հնարավորությունն օգտագործելով, շտապում է հայրենիք՝ իրականացնելու իր ծրագրերը:

Բացահայտվում է նրա կերպարը: Պարզվում է, որ նախկինում նա գրել է նաև նոր կյանքը պատկերող բանաստեղծություններ, որոնք, ինչպես ինքն է հետադարձ հայացքով գնահատում, եղել են թույլ և գեղարվեստից հեռու: «... Իր ամբողջ կյանքում նա մի ձգտում ուներ՝ ստեղծագործել: Յոթ

³ «Գրական թերթ», 1932, թիվ 7, 30 ապրիլի:

տարի առաջ նա համոզվեց, որ իրեն բանաստեղծական շնորհք չի տրված: Դա նրա կյանքի առաջին մեծ հիասթափությունն էր: Երբ համոզվեց դրանում, որոշեց թողնել ամեն ինչ և նորից սկսել: Այս անգամ ձեռնարկեց բոլորովին տարբեր մի գործի՝ մտածեց դառնալ ճարտարապետ»⁴, - լրացնում է հեղինակը իր հերոսի կերպարը:

Երևանում նա ներկայանում է քաղաքի ամբողջ շինարարության ղեկավարին՝ նիհար, փոքրամարմին քառասունչորսամյա Արամ Գնունուն, ծանոթանում քաղաքի գլխավոր ճարտարապետ Գուրգեն Փարսադանյանի հետ, որը արտաքինով շատ նման էր իրեն: Մա պատահական նմանություն և նույնակնացում չէ, որովհետև նրանք ներկայացնում են ճարտարապետական նախասիրությունների երկու հակադիր ուղղություն, ինչը ցավալի կլիներ, որպեսզի միավորված լիներ մեկ ամբողջության մեջ: Բուդադյանը Փարսադանյանի հետ հավասար պետք է զբաղեցներ Երևանի գլխավոր ճարտարապետի պաշտոնը:

Առաջին օրը նա այցելում է հարազատներին, ճանապարհին հիշում մանկության և պատանեկության վայրերը, առանձին դեպքեր, իրադարձություններ և հատկապես առաջին սիրուն՝ Ասմարին, որի կերպարն անցնում է ամբողջ վեպի միջով և բացահայտվում վերջում շատ անակնկալ ձևով: «Ասմա՞ր, է՜յ, Ասմա՛ր...» կանչը զրնգում է ամբողջ վեպում՝ դառնալով մի յուրահատուկ լեյտմոտիվ:

Երևանի գլխավոր ճարտարապետ Գուրգեն Փարսադանյանի կերպարը ուր-վագծվում է իբրև հակակշիռ Արշակ Բուդադյանի կերպարին: Բուդադյանը ևս գլխավոր ճարտարապետ է և, բնական է, որ այս երկուսի առկայությունը երկու տարբեր հուն պիտի բացեր վեպում, առաջացներ սկզբունքային երկու տարբեր դիրքորոշում և հանգեցներ առձակատման: Հակառակ դեպքում մեկ գլխավոր ճարտարապետն էլ բավարար էր: Փարսադանյանը ճարտարապետության մեջ ընդունված ստանդարտների հետևորդ է՝ առանց երևակայության թռիչքի:

Սկզբունքային դիրքորոշումը խորանում է ճարտարապետների մեջ և արտաքին համակերպությամբ մտնում աշխատանքային գործունեության հուն: Նրանք որոշում են առայժմ կառուցել «չորսական պատերն ու առաստաղները», իսկ մնացածին անդրադառնալ առաջիկա քննարկումների ժամանակ: Ահա այսպես՝ սկզբունքների բախումով և առանց միասնական հայեցակարգի սկսվում է նոր Երևանի շինարարությունը:

⁴ Մ. Արմեն, Երևան (Էպոպեա), ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրատարակչություն, Մոսկվա, 1931, էջ 9: Այս գրքից կատարվող հաջորդ հղումների էջերը կնշվեն բնագրում:

Գործողությունների զարգացման բուն ընթացքով ցույց է տրվում քանդվող հին տների պատկերը. «Քանդվում է Երևանը, հողին է հավասարեցվում հին քաղաքը: Իսկ նորը, որ շինվում է, ոչնչի նման չէ», - Բուդաղյանի այս ցավոտ խոսքը այդուհետև դառնում է վեպի հերթական լեյամոտիվներից մեկը: Քանդվում է ոչ միայն հին տունը, այլև, դրա հետ մեկտեղ, անցյալը, պապերի հիշողությունը, խզվում է կապը սերունդների միջև: Ահա հոգեբանական այս ազդակներն են նաև, որ Բուդաղյանի սկզբունքային դիրքորոշումը դարձնում են արժեքավոր: Եվ սա հատկապես 1920–1930-ական թվականների գաղափարական մտայնության մեջ, երբ ամեն ինչ արվում էր մոռացության տալու անցյալի հետ կապող ամեն ինչ՝ հին քաղաքից ու հին բարքերից սկսած մինչև գեղարվեստ ու լեզու:

Գրողը նույնիսկ հակադրությունների ներքին հաշտեցման փորձ է անում՝ դրանով ցանկանալով ցույց տալ, որ հինն ու նորը պետք է միավորվեն որպես մեկ ամբողջություն: Ըստ Բուդաղյանի նոր Արևելքը միանգամայն տարբեր պետք է լինի հին Արևելքից: Մի պահ միավորվելու միտված երկու եզրերը նորից բաժանվում են որպես երկու սկզբունք, և Բուդաղյանն ու Փարսադանյանը շարունակում են իրենց սկսած վիճաբանությունը: «Ես սիրում եմ հին Երևանը: Յուրաքանչյուր ցեխաշեն տնակը, յուրաքանչյուր անձուկ նրբանցքը ինձ համար գեղարվեստական խոշոր կերտվածքներ են: Այն յուրաքանչյուր քարը, որ ձեր քլունգների տակ ընկնում է հին Երևանից, իմ աչքում հավասար է Ապոլոնի ու Վեներայի արձանները ջարդելուն: Ավելին. Ապոլոնն ու Վեներան մեռած մի կուլտուրայի թանգարանային մնացորդներ են, իսկ Երևանը՝ կենդանի, շարժվող կյանք է» (էջ 119-120): Մրա դիմաց Փարսադանյանի ծրագիրն էր, որը Երևանի այգեստանները պետք է վերածեր քառակուսիների ու խորանարդների, իր բառերով՝ ուղղահայացների ու հորիզոնականների: Մինչդեռ դրանք Բուդաղյանի աչքին երևում են որպես ապակե արկղերի ու սև պատերի շրջանակ. «Քառակուսու և շրջանակի այդ բացարձակ տիրապետության մեջ դուք մի՞թե չեք տեսնում իմաստից ու բովանդակությունից զրկված և դեպի անկումը քայլող դասակարգին...»(էջ 121),-շարունակում է Բուդաղյանը: Դրան ի պատասխան, Փարսադանյանն ասում է. «Դուք սխալվում եք: Եկեք ինձ հետ, և մենք միասին կկառուցենք նոր Երևանը...»(էջ 121): Վերջին արտահայտությունը ևս կրկնվում է մի քանի անգամ՝ յուրովի դառնալով մի նոր հավելյալ լեյամոտիվ: Փարսադանյանի դիրքորոշումն այն է, որ ինքն օգտվում է «ճարտարապետության վերջին խոսքից՝ քաղաքակրթված արևմուտքից», իսկ Բուդաղյանը՝ «Հետամնաց արևելքից»(էջ 123): Բանավեճը խորանում է: Բուդաղյանը առարկում է՝ ասելով, որ քաղաքակիրթ արևմուտքը շատ բան է վերցրել արևելքից: Արևմուտքի

արվեստը մտախլապատ է ու ցուրտ, իսկ արևելքինը՝ լուսավոր: «Ձեր արևմուտքը միայն նոր է հասել այն պարզությանը, ինչին մենք հասել ենք հարյուրավոր տարիներ առաջ» (էջ 125):

Վեպի այս էջերը մշակութաբանական ուղվածություն ունեն և արձագանքում են ժամանակի մամուլում արծարծվող բանավիճային քննարկումներին, որոնք վերաբերում էին ինչպես արվեստի առանձին ճյուղերին, այդ թվում՝ ճարտարապետությանն ու գրականությանը, այնպես և արվեստի նոր գեղագիտությանն ընդհանրապես: Այդ իսկ պատճառով վեպի այս էջերն ունեն նաև ընդհանուր կարգի ճանաչողական նշանակություն: Հարցը դրված է այսպես. մի կողմից արևելք, մյուս կողմից՝ արևմուտք և այս ամենի հակադրությունից ծնվող սոցիալիստական արվեստ: Ինչպես արդեն նշել ենք, արևելքն ու արևմուտքը նաև խորհրդանշաններ են, որոնցից առաջինն այս դեպքում միտվում է դեպի ազգայինը, արևմուտքը՝ դեպի ապագայինը: Ո՞րը պետք է հաղթեր: Պատասխանը գրողը պահում է վերջում:

Երկու ճարտարապետների գրույցը ավարտվում է նրանով, որ ոչ մեկը մյուսին չի համոզում: Փարսադանյանի վերջին խոսքն այս է. «Արևելքն իր լավագույնը տվել է արևմուտքին և սպառվել: Այժմ հերթը արևմուտքինն է, և մենք նրանից պետք է սովորենք»(էջ 130): Արդեն որերորդ անգամ կրկնվում է «Եկեք ինձ հետ, և մենք միասին կկառուցենք նոր Երևանը...», - հաշտեցնող կոչը, բայց Բուդաղյանը, ձեռքը շրիկացնելով Փարսադանյանի ավի մեջ, հայտարարում է. «Տո՛ւր ձեռքդ: Մենք հակառակորդներ ենք»: Եվ այսպես՝ մի կողմից եվրոպական ճարտարապետական մոդելի ստանդարտ, որը արագ է և էժան, մյուս կողմից Արևելյանի, այսինքն՝ ազգայինի վերահաստատման դժվարին ճանապարհ: Ըստ Բուդաղյանի՝ «ստանդարտը «աղքատության փիլիսոփայությունն է», քանի որ փողոցները նմանվում են իրար: Այսպես ստանդարտի են ենթարկվում նաև բնանկարները, ամբողջ կյանքն ու մարդիկ: Ստանդարտի է ենթարկվում մարդկանց հագուստը, սնունդը: Ոչնչանում է անհատական ճաշակը: Այլ կերպ՝ ես-ը կորչում է ընդհանուր մենք-ի մեջ, ինչը պրոլետարիատի այդ տարիների հնչել, բայց կործանարար կարգախոսն էր: Սա ժամանակի համար շատ համարձակ հարցադրում էր, ինչն էլ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի հատուկ որոշմամբ Արմենին պատժելու և այս վեպը շրջանառությունից հանելու առիթ դարձավ:

Բուդաղյանն իրեն զգում է ընդհանուր գործից դուրս մղվածի վիճակում: Նրա թիկունքում բաներ են կատարվում: Խորհրդակցություններ են հրավիրում առանց նրա: «Հաղթանակ» նախագծին հակակշիռ Բուդաղյանը ներկայացնում է «Արևելք» նախագիծը: Այս պահին ևս Բուդաղյանը տարվում է իր արևելապաշտությամբ և որպես լեյտմոտիվ ու

կրկներգ հիմա էլ հնչում է «Ի՞նչ է արևելքը» հարցումը: Հարցը հնչում է և հաջորդում են պատասխանները, որից պարզվում է, որ արևելքը Բուդաղյանի համար վերջնական ու ավարտուն աշխարհայացք է: Այս մտորումների մեջ նա հանկարծ զգում է, որ ինքը խաբված և պարտված է, ինչն էլ ննջած մարդու պատրանքի մեջ մտովի ինքնասպանություն գործելու շարժառիթ է դառնում:

Այս տեսարանն ըստ էության վեպի գազաթնակետն է, որից հետո ամեն ինչ գնում է դեպի աստիճանական հանգուցալուծում: Հետաքրքրականն այն է, որ այս ամենը կատարվում է երազի մեջ, ինչն արտացոլում է իրականությունն այնպես, ինչպես պետք է լիներ: Այս ամենը կատարվում է «Ի՞նչ է արևելքը» հարցումին պատասխան գտնելու մտատանջությունների ընթացքում: Հարցումը կրկնվում է ոչ թե մեկ-երկու անգամ, այլ առնվազն տասներկու: Եվ հանկարծ նրա հոգում կասկած է ընկնում՝ իսկ եթե արևելք ու արևմուտք բառերը սուսկ հին ու նոր աշխարհների խորհրդանշաններ են, և ինքն ակամա կանգնել է նոր աշխարհի դեմ: Բայց այս կասկածանքները ոչնչանում են՝ բախվելով նրա արմատացած համոզմունքներին:

Այս երազատեսության տեսիլքները սերտորեն ձուլվում են վեպի խիստ իրապաշտական պատումին և ներքին ապրումներով ու վիճակներով հագեցնում առարկայական աշխարհի ու հերոսների գործողությունների նկարագրությունները:

Իրար հաջորդող այս երազները, որ տևում են երեք գիշեր՝ Բուդաղյանի ստեղծագործական բռնկումի պահերն են, երբ նա վերջնական տեսքի է բերում իր նախագիծը: Ստեղծագործական երկունքը զուգակցվում է պատրանքներով, զուգահեռ ապրումներով, ինչը բնական է այդ հոգեվիճակի համար:

Բուդաղյանին բացատրում են, որ իրենց «Արևելք» պետք չէ, որ «բանվորներն ու գյուղացիները միայն մի կուլտուրա ունեն, որ արևելքն ու արևմուտքը արդեն լուծվում են այդ մի կուլտուրայի մեջ և խորհրդային արևելքն ու արևմուտքը այժմ անսահման նման են միմյանց: Բացատրեցին այդ բոլորը, ինչպես կբացատրեն մի երեխայի, կամ հիմարի»(էջ 265): Բուդաղյանին ծաղրում են և երկինք բարձրացնում խորհրդային ստանդարտն ստեղծողին ու տարածողին: Բուդաղյանը ծանր է տանում ոչ միայն իր անձի պարտությունը, այլև, որ ավելի կարևոր է, գաղափարի պարտությունը, ինչը նշանակում է, որ այն այլևս երկար ժամանակ չի վերագտնի իր տեղը հանրային գիտակցության մեջ: Արևելքի պարտությունն այս դեպքում ազգային արժեքների պարտությունն էր, ազգային ավանդույթների պարտությունը, ինչը ճշգրտորեն համապատասխանում է ժամանակի պաշտոնական գաղափարախոսությանը:

Այս ամենով հանդերձ Բուդաղյանն իր գործի պարտությունը չի ընդունում՝ մտածելով, որ պարտվեց ինքը և ոչ թե գաղափարը: Ուստի՝ «Արևելքը» մեռավ, կեցցե Արևելքը»: Այս միտքը ծրարած նա տանում է, որպեսզի հանձնի Արամ Գնունուն: Վերջինս տանը չէր, և ծրարը տալիս է նրա կնոջը, Բուդաղյանն ուշադիր նայում է կնոջ դեմքին և ճշում՝ «Ասմա՛ր»: Նրա առջև իր առաջին սերն ու վերջին երագն էր:

Վերջին տեսարանը յուրովի շարունակում է վեպում ներմուծված երագի տեսիլքը. «Արշակ Բուդաղյանը կտրուկ մի շարժում գործեց և իր ականջների մեջ իր ձայնն առնելով՝ արթնացավ: Ինչ խոսք, որ երագը տևել էր ամբողջ գիշերը և այժմ արդեն լույս էր: Գնացքը մոտենում էր Երևանին»(էջ 269): Սա նշանակում է, որ ամբողջ վեպի գործողություններն անցել են Բուդաղյանի երագի միջով: Բայց այսպիսի ավարտի բուն իմաստը «Արևելքի» նախագիծը նորից կյանքի կոչելն է:

Հաջորդում է ամենավերջին պարբերությունը, որով ավարտվում է վեպը. «Հեռացա գրասեղանից: Ոչ Արշակ, ոչ Լևոն, ոչ կայարան: Մեղանի վրա իմ վեպի վերջին թերթիկն էր դրված, դեռ թանաքը չչորացած վերջին վերջակետով»(էջ 270): Այսինքն՝ վեպը գրված է: Դեպքերը կատարված են, թեկուզև Բուդաղյանն այս ամենը տեսած լինի երագի մեջ:

Այս վեպը երիտասարդ գրողի հաջողության վկայությունն է: Արմենը վիպական շարադրանքի նյութ է դարձրել ժամանակի համար գաղափարական սուր հարցերը՝ արևելք, արևմուտք, խորհրդային մշակույթ, նոր ճարտարապետություն, հին ու նոր կենցաղ, մարդկային հարաբերություններ, գաղափարական վեճեր, ազգային ավանդույթ, տեղային կոլորիտ, ստանդարտ, որն ըստ էության սոցիալիստական ռեալիզմի մեթոդի շտամպն է:

Ակնհայտորեն զգացվում է գրողի ձիրքը: Երկում նա դիտողական և զգացմունքային ուժով ստեղծվում է հին Երևանի արևելյան կոլորիտը, քողարկված «հմայքները», փշրվող «երագները» և, ի վերջո կյանքը՝ բարդ ելևէջներով:

Առանձին խոսելու առիթ է տալիս շարադրանքի ոճը, որը պատմողական է, նկարագրական ու գործնական: Պատումը հագեցած է Երևանի թաղերի, նեղ փողոցների, տների, կենցաղի կենդանի պատկերներով, որոնք ստեղծում են քաղաքային բնանկար, ինչը հեղինակի հետևողական նախասիրություններից է:

Հեղինակային ոճը, ընդհանուր առմամբ, պատկերավոր է, ինչն արտահայտվում է թե՛ խոսքի ընդհանուր կոլորիտի մեջ (Երևանի արևելյան կոլորիտը) և թե՛ առանձին պատկերավոր արտահայտությունների, ինչպես՝ «Մթությունն ամբողջովին հագեցած էր խոնավությամբ» (էջ 3), «Փռշու և քրտինքի մեջ կորած՝ գալիս էր մի գյուղացի, իր մելամաղձոտ էշի հետ» (էջ

6), «Նրա ականջներից երևում էր, որ նա մտածում էր» (էջ 95), լուսինը «... ողողել էր քարավանը իր հեղուկ լույսով» (էջ 115), «Քաղաքի վրա թանձր անշարժությամբ կանգնած էր արևի տաք լույսը և լուսավոր ջերմությունը: Լույսն ու տապը այնքան հետ էին կանգնած, որ կարելի էր դանակով կիսել...» (էջ 227):

«Երևան» վեպի առթիվ պատասխանելով իր քննադատին, Արմենը ցանկանում էր տեսականորեն արդարացնել իր սկզբունքները: «Ինչպես են գրվում վեպերը» հոդվածում կարդում ենք. «Ընթերցողները նկատած կլինեն, որ իմ «Երևանը» ռեալիստական գրվածք չէ... Սակայն նա ռոմանտիկական էլ չէ: Նա սիմվոլիստական էլ չէ: Այստեղ կա և՛ ռեալիզմ, և՛ ռոմանտիզմ, և՛ սիմվոլիզմ»⁵: Ըստ Արմենի՝ հնարավոր չէ միայն մեկ անգամ կարդալով «Երևանը», բան հասկանալ, որովհետև վեպը բազմապլան է: Երիտասարդ գրողի համար սա առաջին լուրջ հաջողություններից մեկն էր: Քննադատական արձագանքների ժուժկալությունը պայմանավորված է պաշտոնապես վեպի հանդեպ ձևավորված բացասական վերաբերմունքով: Այդ վերաբերմունքի պատճառներից գլխավորը ճիշտ է նկատել Հր. Թամրազյանը. «Ցավոք, իր հոդվածում («Ինչպես են գրվում վեպերը»-Գ.Խ.) նա... գրել էր, թե իր վեպի մեջ յուրաքանչյուր բառ և նախադասություն, նույնիսկ թիվ ունի բազմակի իմաստ, որը հետո հիմք տվեց անագնիվ մարդկանց այստեղ փնտրելու զանազան թաքուն իմաստներ և մեղքեր»⁶:

Ի վերջո, Արմենն այս ամենի միջոցով փորձում էր ներկայացնել հին Երևանի «մահը» ու նորի ծնունդը, և այդ ամենը ինչ վերաբերմունք էր գտնում իր հոգում, իսկ դրանում կա թե՛ կարոտ, թե՛ թախիծ և թե՛ հրաժեշտի մորմոք՝ ուղղված թանկ, բայց հեռացող հարազատին:

Գ.Մ. Խաչատրյան

**Սկրուիչ Արմենի «Երևան» վեպը
Անփոփում**

«Երևան» վեպում պատկերվում է նոր քաղաքի կառուցումը՝ որպես նոր մարդու, նոր միջավայրի, որպես սոցիալական-կենցաղային նոր պայմանների հաստատման սկիզբ:

⁵ «Գրական թերթ», 1932, N7

⁶ Հր. Թամրազյան, Սովետահայ գրականության պատմություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1984, էջ 416:

Г. М. Хачатрян

Роман М. Армена “Ереван”

Резюме

Жанр романа “Ереван” автор определил как эпопею. Основная тема - строительство Еревана: каким он должен быть: сохранит ли он свой национально-восточный колорит, или же должен застроится как город европейского типа среднего стандарта? Роман стал серьезной удачей молодого писателя.

G. M. Khachatryan

The novel of Mkrtych Armen “Erevan”

Summary

Armen has characterized “Yerevan” novel as “epopee”. The bulk of the material is the construction of Yerevan. How should it be, whether it should preserve nationalwestern colour or a town of average standard should be built as a type of Europe. The novel was the young writer’s serious achievements which also brought peculiar artistic nuances of the material.

ՏԱԹԵՎԻԿ ՄԵՐՁԱՆՑԱՆ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի՝
ակադ. Հր. Թամրազյանի անվան
հայ գրականության պատմության
ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 821.19.0

**ԲԱՐՈՑԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՆԱՐ-ԴՈՍԻ «ՀՈԳՈՒՆ ՎՐԱ ՀԱՄԱՎ» ԵՎ «ՄԵՎ ՓՈՂԵՐԻ ՏՈՎՈՍԸ»
ՆՈՐԱՎԵՊԵՐՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Բարոյահոգեբանական անկում, «Հոգուն վրա հասավ», «Սև փողերի տոկոսը», օտարված մարդիկ, կյանքի մշտատև ընթացք, հոգս, պարտականություն, բանականություն, խիղճ:

Ключевые слова и выражения: нравственно-психологическое падение, «Нет моченьки», «Процент с медяков», отчужденные люди, повседневное течение жизни, забота, обязанность, рассудок, совесть.

Key words and expressions: moral-psychological decline, “Hogun vra Hasav” (“The Soul was Saved”), “Sev Pogheri tokosy” (“The Percentage of Black Money”), alienated people, life-long process, burden, commitment, rationality, conscience.

19-րդ դարավերջի և հաջորդ դարակրի հայ գրականության քննադատական իրապաշտության հոգեբանական ուղղության աննախադեպ զարգացումը պայմանավորված է Նար-Դոսի յուրօրինակ ստեղծագործությամբ: Այս գրողի զուսպ անհատականությունը, պարզ, բայց ոչ երբեք պարզունակ գրելաոճը, ինչպես նաև ստեղծագործական նուրբ խառնվածքն ու գեղագիտական խորաթափանց տեսողությունը յուրովի արտացոլեցին ժամանակաշրջանի հայ հանրային-քաղաքական կյանքի բեկումնային տեղաշարժերը: Կյանքի, մահվան առեղծվածի մեկնաբանման, ինչպես նաև բարոյահոգեբանական մի շարք որակների անկումների շուրջ նարդոսյան լրջմիտ հարցադրումները շարունակում են պահպանել իրենց արդիական հնչեղությունը նաև այսօր, որովհետև արվեստի ճշմարիտ երկերը տարածաժամանակային տիրույթներում նորովի են մեկնաբանվում հարավոփոխ սերունդների կողմից: Այս մասին են վկայում Ստ. Ջորյանի թողած հուշերի պատարիկները. *«Մկզբում անուշադիր մնացած ու չգնահատված, նա, իր նուրբ արվեստով, հետզհետե արժանացավ և*

արժանանում է սերունդների ուշադրության ու գնահատության, որպես մեր արձակի լավագույն վարպետներից մեկը, թերևս ամենանորրը:

Ժամանակակիցների համեմատ նա (**Նար-Ռոսը**. – ընդգծումը մերն է – Տ. Մ.) ծայրահեղորեն համեստ էր. Սակավախոս, ինքնամփոփ ու հայեցական բնավորությամբ՝ երբեք չէր խոսի իր անձի մասին, երբեք զգացնել չէր տա, որ ինքը վիպասան է կամ գրականությամբ զբաղվող մարդ. Մինչև ինքը չխոսեիր՝ նա խոսք չէր բանա գրողների և գրականության մասին, մանավանդ իր գործերի մասին¹:

Անուրանալի է Նար-Ռոսի «Մեր թաղը» ընդհանուր խորագիրը կրող նորավիպաշարի խնդրո առարկա նորավեպերի գաղափարագեղարվեստական, ճանաչողական արժեհամակարգի, կառուցվածքային, պատումային, ժանրային յուրահատկությունների, ինչպես նաև կերպարների հոգեբանության բացահայտման միջոցների ու եղանակների շուրջ ստեղծված գրականությունը: Գրական ասպարեզ մտնելով մարդկային ճակատագրի նկատմամբ ունեցած մտահոգ ու անհանգիստ խռիերով և մտածումներով՝ հոգեբանական իրապաշտության այս անխոնջ վարպետը փորձում էր «գրականության միջոցով մարդու ճակատին քսված մուրը», ցույց տալ սոցիալ-հասարակական տեղաշարժերն ինչ արտացոլում են ստանում մարդկային ներաշխարհում, ինչ է կատարվում մարդու ճակատագրի հետ, և ինչպես է նա դիմագրավում կյանքի դժվարություններին: «Հայտնագործելով այդ աշխարհը, գրողը, հիրավի, հայտնագործեց նաև իրեն, իր գեղարվեստական տաղանդի ուժն ու հմայքը»², - գրում է ակադ. Ս. Սարինյանը:

Այսուհանդերձ, գեղագիտական ուրույն որակներով օժտված այս վարպետը գեղարվեստականացնում է բոլորովին այլ, հույժ կարևոր և բոլոր ժամանակների համար արդիական խորհուրդ, որը շարունակաբար վրիպում է գրականագիտության տեսադաշտից, և որի ուսումնասիրմանն է միտված սույն հոդվածը: Առաջադրված հիմնախնդիրը բավական ուշագրավ է, որովհետև հեղինակը փոքրածավալ ստեղծագործությունների միջոցով դիտարկում է առաջին հայացքից պարզունակ և սովորական, բայց ներքուստ մեծ ողբերգություն պարունակող երևույթներ, որոնք ուղղակիորեն առնչվում են մարդու բարոյահոգեբանական հատկանիշների հետ: Հեղինակը, ելնելով այն իրականությունից, որտեղ ապրում է, խոսում է կենսական կարևոր ճշմարտությունների մասին: Այս իմաստով ակադ. Ա.

¹ **Ջորյան Ստ.**, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 11, Երևան, «Սովետ. գրող» հրատ., 1985, էջ 91-92:

² **Հայ նոր գրականության պատմություն**, 5 հատորով, հատ. 4, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 74:

Տերտերյանը իրավացիորեն նկատում է, որ Նար-Դոսի վրա ավելի ուժեղ տպավորություն են թողնում կենսական հանգամանքները: Անտարբեր չլինելով դեպի կյանքի անցողարձը՝ նա իր խուզարկու և սրատես աչքերով դիտում է կյանքը և *«տալիս է տիպեր»*³:

Գեղագիտական խորաթափանց տեսողականությամբ, բարոյահոգեբանական ընդհանրությունների ամփոփ տիպականացմամբ և գեղարվեստականացմամբ Նար-Դոսը թիֆլիսյան համայնապատկերից առանձնացնում է ինքնահռչակող, անհեռանկար և օտարված մարդկանց մի աշխարհ, որը դուրս է մնացել կյանքի մշտատև ընթացքից: Եվ սա դեռ ամբողջը չէ. Նրանք իրենց վարքագծով կատարյալ չարիք են դարձել ոչ միայն իրենց ընտանիքի, այլև հասարակության համար: Ի տարբերություն զինագործ Ասատուրի, դրոգապան Յագորի⁴ Դավթի ու Արտեմի պարտքի զգացումը բովանդակվում է հարբեցողությամբ և խաղամոլությամբ:

Սոցիումի բերած դժվարությունների հետևանքով հոգսաշատ առօրյայի է վերածվել նախշքար Դավթի (*«Հոգուն վրա հասավ»*) և Արտեմի (*«Սև փողերի տոկոսը»*) կյանքը: Վերջիններիս համար նույնիմաստ հնչեղություն ունեն հոգսի և պարտականության ընկալումները, մինչդեռ դրանք հստակորեն տարոտրոշված ըմբռնումներ են: Հոգսը մարդկության հավերժական ուղեկիցն է: Ապրելու հոգսն այս մարդկանց մեջ անմնացորդ ոչնչացրել է բանականությունն ու խիղճը, այլ խոսքով՝ տեղի է ունեցել մարդկային ու բարոյական անդառնալի անկում: Մի կողմից ծանր կենսապայմանները ձևավորում են կամային թույլ որակներ, որոնք իրենց հերթին հանգեցնում են ապրելու անկարողության, իսկ մյուսից՝ կաշկանդում հնամենի ավանդույթներով սրբագործված ապրելու պարտադրանքը, որը նաև պարտականության խորհուրդն ունի Դավթի և Արտեմի գիտակցության համար: Այս առումով պրոֆ. Վ. Սաֆարյանը իրավացիորեն ընդհանրացնում է. *«...ամենօրյա թշվառ վիճակը, կարիքն ու չքավորությունը այդ մարդկանց մեջ սպանում է մարդկային շատ հատկանիշներ»*⁵:

Այլ է պարտականության կամ պարտքի ըմբռնումը: Մարդը հասարակության մեջ արմատավորված պարտադրանքի խորհուրդը

³ Տե՛ս **Տերտերյան Ա.**, Երկեր, Երևան, Համալսարանի հրատ., 1980, էջ 109:

⁴ Այս մասին մանրամասն տե՛ս **Մերջանյան Տ.**, Բարոյական անկման նարդոյան ընկալումները (*«Հոպոպ»*, *«Թե ի՞նչ եղավ հետո...»*, *«Ադամամոլի»*), *«Հայագիտական հանդես»*, N 4 (38), Երևան, 2017, էջ 99-113:

⁵ **Սաֆարյան Վ.**, Գրողի և կերպարի անհատականությունը, Երևան, Մակմիլան-Արմենիա հրատ., 2001, էջ 193:

ընկալում է երկու իրարամերժ դիտանկյուններից: Դրանցից առաջինը պատժելիության հեռանկարից առաջացած վախն է, որը բնորոշվում է որպես ենթագիտակցական ու բնագոյային երևույթ, իսկ երկրորդը պարտքի գիտակցումն է: Մարդը գիտակցում է, որ իր առջև դրված պարտքը կամ պարտականությունն ինքը պիտի կատարի: Եթե հայրական պարտքի զգացումը Դավթի համար սահմանափակվում է թեկուզ երեխայի ձեռքից հափշտակված «*մի սբասի*» (**քսան կոպեկ**. – ընդգծումը մերն է – Տ. Մ.) փողով հարբեցողության գիրկը նետվելով, ապա Արտեմի համար որդիական պարտականությունը բովանդակվում է մորը մի քանի «*սև փողեր*» տալով և ապա դրանց դիմաց նրան կողոպտելու հեռանկարով:

Ուշագրավ է, որ թե՛ Նար-Դոսի, թե՛ Գրիգոր Չոհրապի նորավեպերի հերոսները նույն «փոքր» մարդիկ են: Հոգսը, կարիքն ու նյութական գրկանքները նրանցից ոմանց նետել են կյանքի հատակը, և այդ մարդիկ խորապես գիտակցում են, թե որքան նեղ է այն ջրափոսը, ուր իրենց նետել է կյանքը: Տրամագծորեն հակառակ են, սակայն, փրկության եղանակները: Չոհրապի Հուսեփ աղան, օրինակ, մինչև վերջ պահպանում է իր բարոյական բարձր կեցվածքը, հայրական առողջ բնագոյները (նա իր 14-15 տարեկան դուստրերին ջանում է ցավ չպատճառել, անհաղորդ պահել օր օրի նվազող իր դրամագլխից) և գերադասում է գնալ ինքնառչնչացման, մինչդեռ նարդոսյան նախշքար Դավիթն ու խաղամուլ Արտեմը դրսևորում են բարոյական անկման անմարդկային ու ցնցող վիճակներ: Երկուսն էլ «փրկվում են»:

«Մեր թաղը» նորավիպաշարի առաջին նորավեպերում գլխակորույս խառնաշփոթության նկատմամբ սկզբնավորված անհանգստությունն ու մտահոգությունն իրենց կատարելությանն են հասնում «Հոգուն վրա հասավ» նորավեպում: Ընթերցողի վրա խոր ազդեցություն է թողնում այս նորավեպի սկզբում ներկայացված փոթորկոտ բնապատկերը, որն ուղղակիորեն աղերսվում է Դավթի անհանգիստ ներաշխարհի վայրիվերումների հետ: Սոցիալական անբարենպաստ վիճակը զուգահեռելով հերոսի ներաշխարհային զարգացումներին՝ գրող-հոգեբանը կատարում է լուրջ ընդհանրացումներ: Հարավփոփոխ ժամանակների անցումների ընթացքում Նար-Դոսը նկատում է, որ մարդը, կորցնելով իր բարոյահոգեբանական որակները, վերածվում է բնագրով առաջնորդվող զազանի: Այս երևույթը գրականության պատմության ընթացքում միշտ զբաղեցրել է մարդկության և հատկապես գրողների ուշադրությունը: Ահա նրանցից մեկն էլ Նար-Դոսն է, որին հուզում էր անդառնալիորեն կործանվող գեղեցկությունների ողբերգության մշուշոտ պատճառները: Բոլոր ժամանակների համար միշտ արդիական թեման Նար-Դոսը հասցնում է մեծ ընդհանրացման՝ ցույց տալով, որ *մարդը կույ է գնում նոր*

հարաբերություններին, կորցնում է մարդկային իր բնավորությունն ու անհատականությունը⁶:

Նախշքար Դավթի ընտանիքը հագիվ է դիմակայում հոգսաշատ առօրյայի բեռան տակ: Կորոպտվել է ընտանիքի հոր ներաշխարհը. Նա տանը դարձել է բռնակալ, իսկ դրսում՝ խեղճուկրակ հարբեցող: Նրա բռունցքի հարվածի ահից ու հատընտիր հայհոյանքների տարափից սարսափած կինն ու երեխաներն աջ ու ձախ են ծվարում: Արհեստավորը կարծես շեղվել է կյանքի բնականոն ուղեծրից՝ առօրյա կյանքի հոգսը թողնելով կնոջ՝ Մայինի ուսերին. «Տունը ինքն էր պահում (Մայինը. Ընդգծումը մերն է – Տ. Մ.), երեխաներին ինքն էր հագցնում, կերակրում իր ձեռքերի աշխատանքով, ուրեմն էլ ինչացո՞ւ էր այդ միշտ արբած մարդը, էլ ի՞նչ սրտով էր բղավում, հայհոյում, ծեծում, ինչո՞ւ և ի՞նչ իրավունքով»:

Հեղինակի կողմից հնչեցրած ճարտասանական այս հարցերը մտատանջում էին նաև Մայինին, որը ոչ մի կերպ չէր գտնում հիմնավոր և սպառիչ պատասխան: Նար-Դոսը սոցիալական դաշտում մարդու կենսակերպի դրսևորման միջոցով քայլ առ քայլ լուսաբանում է նաև նրա բարոյահոգեբանությունը: Նա շատ լավ գիտի մարդու երկակի բնույթը: Վաղնջական ժամանակներից մարդու գիտակցությունը տատանվում է հոգու և մարմնի անհամատեղելի հարթություններում: Նախշքար Դավիթը մոռացել է իր հոգևոր արժեքները, օրերով հարբում է՝ առանց երեխաների և կնոջ մասին մտածելու: Խմելու նկատմամբ հակումը մարդուն ամենատղիղ և կարճ ճանապարհով զրկել է բանականությունից և ուղղորդել դեպի զազանային բնագոյ: Դավթին հավասարակշռությունից հանում է ոչ միայն ընտանիքի ցավի նկատմամբ իր անգորությունը, այլև խմիչքի բացակայությունը: Բայց հատկանշական է, որ բնագոյով առաջնորդվող հարբեցողը օդու ծարավին հագուրդ տալու համար սկսում է մտածել «կյանքի և մահվան առեղծվածի առջև կանգնած մարդու մտատանջանքով»⁷: Պահվածքի այսօրինակ դրսևորումը, ըստ պրոֆ. Վ. Սաֆարյանի, դիտարկելի է որպես շատ իրական մարդու հոգեվերլուծություն⁸:

Այս ստեղծագործությունն ավարտվում է մի տեսարանով, որն էլ թույլ է տալիս այն դիտարկելու նորավեպի ժանրային տիրույթներում. «Դավիթը

⁶ Տե՛ս **Հովհաննիսյան Գ.**, Նար-Դոս, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 34-35:

⁷ **Նար-Դոս**, Երկերի ժողովածու 5 հատորով, հատ. 1, Երևան, «Հայաստան» հրատ., 1968, էջ 71:

⁸ Նույն տեղում, էջ 74:

⁹ **Սաֆարյան Վ.**, նշվ. աշխ., էջ 194:

փողի անունը լսելուն պես ծոխ նման թռավ տեղից և մի ռստյունով հասավ դռան մոտ...

...Դավիթը փողը թոցրեց գետնից և խելագարի պես դուրս թռավ...»¹⁰:

Բոլոր ժամանակների համար միշտ արդիական, հարմարվողական և դյուրաշարժ այս ժանրը ենթադրում է փոքր ծավալ, նորություն կամ արտասովորի առկայություն, կառուցողական սեղմ պատում, դրամատիկ տարրի առկայություն, գործողության լարում, դիպաշարի սրընթաց զարգացում (միագիծ դիպաշար) և անսպասելի ավարտ: Նորավեպի հակիրճությունն ու բովանդակությունը երաշխավորում են նրա արժեքավորությունը: Նորավեպում դրամատիզմի առկայության առումով հատկանշական է Հակոբ Օշականի հետևյալ ձևակերպումը. «Նորավեպը թատերական փոքրիկ կառույց մըն է որուն մեջ տիրական է արագությունը գործողության»¹¹:

Ժանրային այս առանձնահատկությամբ է բնորոշվում նաև մյուս՝ «Մև փողերի տոկոսը» նորավեպը: Այստեղ նույնպես նկատելի է անհեռանկար մարդու նորավիպաշարային դասական օրինակը: Խաղամուկ և հարբեցող Արտեմը վերահաս չարիք է դարձել իր ծեր մոր՝ Մարանի համար: Այս նորավեպում բարոյահոգեբանական որակները քննվում են հակադրամիասնության սկզբունքով: Պառավ Մարանը մայրական բնագողմ սիրում է ոչ միայն իր որդուն, որը վաղուց արդեն մոռացել էր որդիական սիրո և պարտականության մասին, այլև իր «երկու հատիկ» հավերին, որոնք նրա օրվա ապրուստի միակ աղբյուրն ու հույան էին: Նա երբեք չէր քնում, մինչև որ չէր ստուգում նրանց ներկայությունը «խորճիթի պուճախում»¹²:

Գեղագետ-հոգեբանը հակադրականության միջոցով ցույց է տալիս մարդկային էության տարաբևեռ կողմերը: Հայ իրականության մեջ գեղարվեստականացվում է որդիական անտարբերությունը, որն ահագանգ է նաև մեր օրերում: Սակայն մարդկային էությունների դրսևորման կերպերը երբեք չեն կարող կրկնվել: Մարանի՝ հավերին նվիրված լինելու հանգամանքը այս նորավեպում պատահական չէ. Նար-Դոսը նրբորեն ցույց է տալիս կնոջ հոգեբանության նախաստեղծ, անխառն ու անխաթար մաքրությունը:

Նորավիպագրության տիպաբանական համապատկերում այսպիսի երևույթ է նկատվում նաև Համաստեղի «Տափան Մարգար» նորավեպում:

¹⁰ **Նար-Դոս**, նշվ. հրատ., էջ 76:

¹¹ **Օշական Հ.**, Համապատկեր արևմտահայ գրականության, հատ. 6, Արուեստագետ սերունդ, Պէրյութ, Տպ. Համազգային, 1968, էջ 255:

¹² Տե՛ս **Նար-Դոս**, նշվ. հրատ., էջ 98:

Գումեշների և Մարգարի միջև չկա ոչ մի խոսք ու գրույց. Նրանք իրար ճանաչում են միմյանց ներկայությունից: Տանը հանգստանալու ժամանակ անգամ Մարգարի միտքը բնության հետ է: Սա ուժի և աշխատանքի խորհրդանիշն է: Աշխատանքը գրականության մեջ շարունակ ներկայացվել է հավերժական տառապանքի ընկալումներով: Երևույթ, որը միշտ հանգեցնում է անհատականության խաթարման և ոչնչացման: Հայ նորավեպի համապատկերում հավերժական տառապանքի գեղարվեստականացման լավագույն օրինակներից են Երուխանի նորավեպերը: Նա, դրանցում առաջադրելով աշխատանքի և դրանից ծնված տառապանքի հիմնախնդիրը և դիտարկելով կյանքի մշտնջենական տառապանքն ու պայքարը, նկատում է, որ մարդը, ճիշտ է, աշխատում է, սակայն նյութին տիրանում են ուրիշները: Այս առումով աշխատանքը դառնում է ոչ թե հաճույք, այլ տառապանք: Եթե Մարանի ամբողջ բաղադրությունը, վերածվելով մեկ էության, դառնում է իր և հավերժի ընդհանրությունը, ապա որդին՝ Արտեմը, դեգերում է խաղամուլության, հարբեցողության, իսկ վերջում արդեն ծեր մորը լկտիաբար կողոպտելու գիտակցության տիրույթներում:

Եզրակացնելով կարելի է ասել, որ խնդրո առարկա նորավեպերի գուգահետ դիտարկումները՝ բարոյահոգեբանական որակների անկման ուղեծրով, ակնհայտ են դարձնում, որ մարդու հոգեբանության և սոցիալական կյանքի փոխհարաբերության քննությունը Նար-Դոսի գրչի տակ ստանում է որոշակի ոճավորում: Իրարից տարբեր այս իրողությունների հիմքում հեղինակը գտնում է մարդկային վարքագծի շատ ընդհանուր եզրեր: **Եթե մի դեպքում կողոպտվում է որդին, ապա մյուս դեպքում՝ ծեր մայրը:** Հեղինակը նրանց միջոցով լրջմիտ ընդհանրացումներ է կատարում մարդու բարոյահոգեբանական կարևոր հատկանիշների շուրջ: Նա ավելի շատ հակված է ընտրելու մարդուն բանականությունից զրկող և բարոյական անկման հասցնող սոցիալական ծայրահեղ պայմանները: Գլխապտույտ արագության ընթացքում բարոյական շատ որակներ տեղի են տալիս, և մարդն ուղղակիորեն կորցնում է ի վերուստ տրված մարդկային իր նկարագիրը: Նար-Դոսը յուրօրինակ, բառի դրական իմաստով տարօրինակ արձակագիր է. Նա իր նորավեպերը չի ծանրացնում անհարկի մանրամասներով: Նրան ավելի շատ հետաքրքրում են մարդկային ներաշխարհի ամենաթույլ զարկերը: Նար-Դոսի ընկալումների համաձայն՝ նոր կենսապայմանները, այնուամենայնիվ, իրենց կնիքը թողնում են մարդու, նրա վարքագծի և բարոյահոգեբանական մի շարք որակների վրա:

S. Մերջանյան

**Բարոյահոգեբանական անկման ընդհանրությունները
Նար-Դոսի «Հոգուն վրա հասավ» և «Մն փողերի տոկոսը»
նորավեպերում
Ամփոփում**

Ներկա հրապարակման նպատակն է ուսումնասիրել ու արժևորել Նար-Դոսի «Մեր թաղը» նորավիպաշարի երկու ուշագրավ գործերը՝ «Հոգուն վրա հասավ» և «Մն փողերի տոկոսը», որոնք կա՛մ հպանցիկ են ուսումնասիրվել, կա՛մ գրեթե դուրս են մնացել նարդոսագիտության առանցքից: Դրանցում արձակագիրն առանց ավելորդ մանրամասնությունների նորավեպերի առանցքային պլանում դիտարկում է հոգսի, պարտականության ընկալումները: Բարոյահոգեբանական տարաբնույթ երևույթների ուսումնասիրության արդյունքում եզրակացվել է, որ գիտական որոշակի ոճավորմամբ իրարից տարբեր այս իրողությունների հիմքում հեղինակն ընդհանրացնում է մարդկային վարքագծի՝ բարոյականությամբ պայմանավորված տարաբնույթ կողմերը:

T. Мерджанян

**Общности нравственно-психологического падения
в новеллах Нар-Доса «Нет моченьки» и «Процент с медяков»
Резюме**

Цель настоящей публикации – исследовать и оценить два примечательных рассказа, вошедшие в цикл Нар-Доса «Наш квартал», – «Нет моченьки» и «Процент с медяков». Эти произведения либо рассматривались поверхностно, либо порой вообще выпадали из поля зрения нардоведения. Показано, что в названных новеллах писатель, не прибегая к излишним подробностям, на первый план выводит понимание его героями обязанности, заботы. Исследование различных нравственно-психологических состояний героев, отображенных в новеллах, позволяет сделать вывод, что эти состояния обрисованы с определенной научной достоверностью. Автор художественно обобщает обусловленные нравственностью человека полярно противоположные стороны его поведения.

T. Merjanyan

**Common Features of the Moral-Psychological Decline in Novelette's
by Nar-Dos "Hogun vra Hasav" ("The Soul was Saved") and "Sev Pogheri
tokosy" ("The Percentage of Black Money")**

Summary

The aim of the given publication is to study and evaluate the two interesting works included in Nar-Dos's series of novelettes "Our Block" Hogun vra Hasav ("The Soul was Saved") and "Sev Pogheri tokosy" ("The Percentage of Black Money") that were studied either on surface or were nearly excluded from the axis of works analyzing Nar-Dos's works. In these works the writer observes the perception of burden and commitment in the context of novelettes without going into extra details. In the course of analyzing various moral-psychological phenomena it was concluded that by using some scientific style in those different realities the author basically generalizes the polar sides of human behavior which are conditioned by morality.

ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 821.19.0

ՀՐԱԶՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՍՏԵՂԾՄԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. պոեզիա, պատկեր, աշխարհընկալում, գույն, երանգ, խորհրդանիշ, երկրային, երկնային, մեղեդի, մետաֆոր:

Ключевые слова и выражения: Поэзия, образ, восприятие мира, цвет, оттенок, символ, земной, небесный, мелодия, метафора.

Key words and expressions: Poesy, image, worldview, color, nuance, symbol, earthly, celestial, melody, metaphor

Անտարակույս է, որ բանաստեղծները միմյանցից տարբերվում են պատկերաստեղծման յուրահատկություններով, որոնք էլ բնորոշում են նրանց ինքնատիպությունը, բացահայտում աշխարհընկալման մեթոդներն ու ձևերը:

Աշխարհը բանաստեղծի պատկերացումներում գույն է ու մեղեդի, պատկերների, մետաֆորների, խորհրդանիշների մի ներդաշնակ համաստեղություն, որտեղ միաձուլվում են իրականն ու երևակայականը, անցավորն ու մնայունը:

Բանաստեղծական <<պատկերներն այն հավիտենական գեղեցկության արտահայտությունն են, որի նախապատկերը շողում է տիեզերքում և բնության բոլոր ձևերի ու երևույթների մեջ: Պոետն ամեն բանի մեջ ձևեր, գույներ է տեսնում և ամեն ինչին ձև ու գույներ է տալիս, նյութականացնում է աննյութականը, երկնային է դարձնում երկրայինը, այո , երկրայինը լուսավորում է երկնային լույսով>>¹:

Յուրահատուկ կերպով է բանաստեղծը ընկալում աշխարհը, որի հետ <<նրա առաջին շփումը պատկերն է, գեղարվեստական խոսքը և

¹ Բելինսկի Վ. Գ. , Չերնիշևսկի Ն. Գ. , Դոբրոլյուբով Ն. Ա. , Ընտիր երկեր, Երևան, <<Սովետական գրող>>, 1980, էջ 32-33:

բանաստեղծի « զգայուն անպաշտպանվածությունը» այդ աշխարհի առջև»²:

Գրականագիտական միտքը, սկսած 19-րդ դարի սկզբից, հիմք ընդունելով Հեգելի ու Բեյլինսկու տեսությունները, տարբերում է գրական-գեղարվեստական պատկերի բազմազան տեսակները, բնութագրում « նրա կառուցման եղանակները, պատկերի միջոցով իրականության գաղափարական-հուզական գնահատման ձևերը»³:

Մասնավորապես առանձնացվում են պատկեր – կերպար, պատկեր-գործողություն, պատկեր- ապրում և այլն հասկացությունները: Առանձնակի տեղ են գրավում բնապատկերները՝ բնության տեսարաններն ու առարկայական աշխարհի նկարագրությունները, «թեև դրանք միշտ ծառայում են մարդկային բնավորության ամբողջացման գործին և այդ իմաստով չեն կարող կերպարներից անկախ դիտվել, բայց միաժամանակ ինքնուրույն պատկերի նշանակություն ունեն»⁴: Բնապատկերները հաճախ չեն « կապվում որևէ կոնկրետ աշխարհագրական տեղանվան հետ, բայց մանրամասների ճշմարտացիությամբ և բնության ընդհանուր զգացողությամբ մեր երևակայության մեջ ստեղծում են մի ամբողջական գեղարվեստական պատկեր»⁵:

Գրականագիտությունն առանձնացնում է նաև սիմվոլիկ, այլաբանական նկարագրությունները, որոնց «էական առանձնահատկությունն այն է, որ խոսելով բնության կամ կենդանիների մասին, միշտ նկատի ունեն մարդկային բնավորություններ, կապեր, զգացմունքներ և ընթերցողի համար էլ կարևորը դառնում է հենց նրանց այդ մարդկային իմաստը», գեղարվեստական պատկերի տեսակներից տարբերում են «այսպես կորված բառային պատկերները» կամ պատկերավոր արտահայտությունները (մակդիր, փոխաբերություն, համեմատություն և այլն), որոնք երբեմն սխալմամբ նույնացվում են բուն պատկերի հասկացության հետ»⁶:

Կոնկրետ դեպքում մենք գործ ունենք քնարական պատկերների հետ, որոնց « յուրահատկությունն այն է, որ նրանց մեջ հանդես են գալիս

² Էդոյան Հ. , Եղիշե Չարենցի պոետիկան, Երևան, ԵՊՀ հրատ., 1986, էջ 36:

³ Ավելի մանրամասն տես՝ Զրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, ԵՊՀ հրատ. , 1980, էջ 120-163:

⁴ Նույն տեղում, էջ 122:

⁵ Նույն տեղում, էջ 122-123:

⁶ Նույն տեղում, էջ 123:

կյանքի երևույթների ազդեցությամբ ծագած խոհր, զգացմունքը, զնահատականը>>⁷:

Այս տեսանկյունից ինքնատիպ են այն բանաստեղծները, ովքեր ոչ թե լուսանկարչական ճշգրտությամբ պատճենահանում են որևէ երևույթ կամ բնապատկեր, այլ ներկայացնում են դրանցից ստացած իրենց տպավորությունները, անցկացնում աշխարհընկալման իրենց պրիզմայով, դարձնում խոհ ու ներքին ապրում: Այս պարագայում է, որ բանաստեղծությունը խուսափում է նկարագրականությունից ու մոտենում երաժշտությանը, և այս պարագայում է, որ բանաստեղծության յուրահատուկ կառուցվածքում բառերը պատռում են իրենց կեղևը, ընդլայնում զուտ բառարանային իմաստները և կատարում նույն դերը, ինչ կատարում են նոտանները երաժշտության մեջ:

Հրաչյա Հովհաննիսյանի ստեղծած պատկերները պատկերապրումներ են՝ ներծծված հուզական – խոհափիլիսոփայական լիցքերով: Նրա պոեզիայում ամեն ինչ սկսվում է ծննդյան պատկերով. բանաստեղծ չեն դառնում այլ ծնվում են աստվածային օրհնությամբ ու ժամանակի պահանջ-հրամայականով:

Բանաստեղծը ծնվում է, երբ պայծառ առավոտները երգ ու կարոտ են սփռում <<արոտներում արձակ>>, երբ <<Շամանդաղն է դանդաղ քաշվում գետի ափից// Ու լասերից խոտի, //Օդն է փշաքաղվում տերևների ծափից// Արծաթ առավոտի>>, երբ

Թփերի տակ քնած արտույտները շաղոտ
Թներն էին բացում,
Հածում-թևածում էր մի անեզր կարոտ
Լազուր լուսաբացում:
Արևն իր մատներով վերջին մութն էր փնտրում
Կանաչ դեզերի տակ,
Քաղցր արբեցումից վաղուց մայր չէր մտնում
Լուսնեղջյուրը ճերմակ:
Մի ծուխ քուլա-քուլա երազներ էր տանում
Ժայռից քարանձավոտ:
Անհուն հեռուներում ծնվում էր մի անհուն
Անսպասելի կարոտ:⁸

⁷ Նույն տեղում, էջ 125:

⁸ Հովհաննիսյան Հր., Վայրի վարդ, Երևան, <<Հայաստան>> հրատ., 1968, էջ 3:

Բանաստեղծը ծնվում է, «<Եվ աշխարհից այս լույս հավաքելով բոլոր կարոտները պայծառ>> ու «<փշերի վրա բոբիկ քայլերով>>, Քրիստոսի նման տանում է իր ծանր խաչը ու «<Երկրայինը լուսավորում >> երկնային առավոտների անխառն գունախաղերով:

Հրայրա Հովհաննիսյանի պատկերամտածողության հիմքում ընկած են հայ դասական պոեզիայի ավանդույթները, որոնք սկսվում են միջնադարյան բանաստեղծներից ու շարունակվում մինչև Դ. Վարուժան, Վ. Դավթյան, Հ. Սահյան...

Այս առումով հետաքրքիր բացահայտումներ կարելի է անել Դ. Վարուժանի «<Հացին երգը>>, Վ. Դավթյանի «<Գինու երգը>> և Հր. Հովհաննիսյանի «<Հրաշալի այգեպան>> շարքերի տիպաբանական համադրումների արդյունքում:

Նշված երեք շարքերում կա մի ընդհանուր համեմատության եզր. երեք դեպքերում էլ մարդու, բնության ու արարումի փառաբանությունն է, հավերժականի ու անցավորի, գոյի փիլիսոփայական իմաստավորումը, և երեք դեպքերում էլ լիարյուն կերպով են տրոփում մեր պոեզիայի հիմնական երակները:

Երեք բանաստեղծներն էլ նույն թեմաներն են շոշափում՝ բնության և մարդու ներդաշնակություն, արարումի՝ հացի, գինու ու արևահամ մրգերի վայելում ու հաճույք:

Բայց երեք դեպքերում էլ մենք տեսնում ենք պատկերակերտման տարբեր համակարգեր, երևույթների հուզական իմաստավորման տարբեր մոտեցումներ: «<Հացին երգի>> «<Ռոմանտիկական գույները միահյուսվում են առարկաների ռեալ ձևերի հետ... այուժեն և գաղափարը զարգանում են նկարչական և երաժշտական սկզբունքների միասնությամբ>>⁹, - գրում է Հ. Ռշտունին: Ահա բնապատկերի մի անկրկնելի օրինակ.

-Հովէ ր կանցնին.-

Ու ցորյաններս հուշիկ- հուշիկ կարթնանան,

Իրենց խորքեն կհոսի դող մ'անսահման:

Գեղադալար կողերն ի վար բլուրին

Ծովէ ր կանցնին...¹⁰

Վահագն Դավթյանը «<Գինու երգ>>- ում համայնապատկերային գեղանկարչությունից անցնում է «<պատկերային խճանկարին>>, ուր ամեն ինչ գույն է ու մեղեդի.

⁹ Միամանթո, Դ. Վարուժան, Հայ դասականների գրադարան, Երևան, «<Սովետական գրող>> հրատ., 1979, էջ 221:

¹⁰ Նույն տեղում, էջ 478:

Կամ՝

Կարմիր ճիչեր կան օդում, աղաղակներ կան դեղին,
Ու շշուկներ կան խարսոյաշ,
Այդ ճաքած նուռն է ճչում, վազն է կանչում խաղողի
Ու փշատին բեռնաբարձ:

Այգեպանի թուխ աղջիկն այսօր խաղող է ճմլում,
Ու սրտիկն է թրթռում աստղի նման ու գանգի,
Ոտքերի տակ՝ ծփացող եռք է, կայծ է ու փրփուր.
Գինին է իր հարսանիքի:

Անուշաբույր զգեստի չթե փեշը հավաքել,
Ծնկներից վեր է առել ու քիչ էլ վեր ավելի,
Զինվոր տղան է տեսել, ու սիրտն, ու սիրտն է ծակել
Ինչ-որ անուշ ցավերից:¹¹

Բնությունից ստացած իր տպավորությունները թանձր գույներով ու յուրահատուկ հնչյունավորմամբ է ներկայացնում Հր. Հովհաննիսյանը <<Հրաշալի այգեպան>> շարքում: Այգին բանաստեղծին ներկայանում է որպես մտասևեռումներում ստեղծած մի կանաչ մոլորակ: Զինվոր-բանաստեղծի հիշողության դաշտում այգին ծփում է մեղմորեն ու կանչում է տերևների մեղմ շրշուկով, ծաղկած նշենիների բույրով.

Թողել եմ հեռվում չնաշխարհիկ այգիս,
Աշնան մառախուղն է լալիս տերևներին,
Հանդարտ կայլակում են զուլալ ջրերն առվիս
Ու կանչում են, կանչում իրենց հեռավորին:
Իմ թզենին կանաչ՝ բխած հնձանիս մոտ,
Փշատենին՝ արծաթ փռշով իր շպարված,
Տերևների լեզվով շշնջում են կարոտ,
Ու թախծում են իմ լուռ, իմ լուռ հուշով տարված:¹²

Հր. Հովհաննիսյանի բանաստեղծական համակարգում առավել զգալի տեղ են զբաղում պատկեր-գործողությունները, պատկեր-սարքումները՝ շարժման կորագիծը համադրելով զգացմունքային, խոհական ներթափանցումներին.

Աչքերիս առաջ ձգվեց գյուղիս ճամփան նորից,
Կանաչ բարդիների հարսնեպարը...

¹¹ Դավթյան Վ., Երկեր երկու հատորով, հատոր 1, Երևան, <<Սովետական գրող>> հրատ., 1985, էջ 233:

¹² Հովհաննիսյան Հր., Ծովի լռությունը, Երևան, <<Հայպետհրատ>>, 1964, էջ 88:

Ալիքի պես պոկվեց աշնան այգիներից

Կոմիտասի քաղցր <<Սոնա յարը>>¹³

Այգին ներկայացվում է <<երանության խաղաղ օրորոցի>>, առվի ափին փոված փշատենու, ծաղկած կեռասենու ու բալենու տեսքով, որոնք ոչ թե համեմատություններ են, այլ կենդանի, շարժման մեջ գտնվող բնապատկերներ, որոնք հուզական լիցքեր են հաղորդում բանաստեղծությանը, տեսանելի դարձնում բնական երևույթների շարժման կորագիծը:

Հր. Հովհաննիսյանի բնապատկերներում բնության անշունչ առարկաները շնչավորվում ու մարդեղենացվում են, խորհրդանշում տարբեր զգացմունքներ: Նրա բնապատկերներից շատերը վարպետորեն հյուսված խորհրդանիշներ են և ամբողջացնում են բանաստեղծի բնապաշտական մտասևեռումները: Բնապատկերներում ծառը պարզապես ծառ չէ, լեռը լեռ չէ, ժայռը ժայռ չէ, գետը գետ չէ: Դրանք բանաստեղծության ընդհանուր կառուցվածքում զգացմունքի ու խոհի, ապրումի կենսատու լիցքեր են հաղորդում ու ամբողջացնում բնապատկերը:

Հր. Հովհաննիսյանը բնապատկերներում անտեսանելի դարձնում է տեսանելի, ծիածանի յոթ գույների մեջ տեսնում նոր երանգներ, արևահամ մրգերով ծանրաբեռնված այգու շրշուններում լսում հողի ձայնը.

Հողն է սնել այգիս անգին,
Հողի արյունն է բոց ավիշ դարձել,
Հոսել մրգերի մեջ ու երկունքի
Գիշերներում այգիս հրաշագործել:

Հողն է պահել իր մեծ, բարի ծոցում
Ու կյանք տվել բոլոր արմատներին,
Ամառները տվել մեղմ զովություն,
Ձմեռները դարձել տաք անկողին:¹⁴

Բանաստեղծի քնարական հերոսը միշտ հուզական վիճակում է ու ներկայացնում է իր ապրումների գեղարվեստական մարմնավորումները: Ահա քնարական ապրումի մի բնորոշ օրինակ.

Չգիտեմ, ծառե՞րն են խշշում,
Թե՞ գետը՝ իմ այգին գրկող,
Բայց խշշոցն օրոր է հուշում,

¹³ Նույն տեղում, էջ 90:

¹⁴ Նույն տողում, էջ 124:

Փռում է մեղմության մի քող:
Բացվում է վարսանդը ծաղկի,
Ու ցողն է նրա մեջ կաթում,
Օրոր է ինձ ասում թղկին,
Օրոր է նշենին կարդում:¹⁵

Բնապատկերը տեսանելի է դարձնում աշնանային տաք կեսօրվա պատկերը և այգու ու աշնան նկատմամբ բանաստեղծի սիրո դրսևորումը. այգու խշշոցը թափանցում է բանաստեղծի հոգու խորքերը ու ավետում նրա կյանքի աշնանամուտը.

Հասմիկն է փսփսում վարդին,
Առուն է խոխոջում անքուն,
Լուսնին է համբուրում բարդին,
Խշշում է գիշերն իմ այգում:

Խշշոցն այդ հնչում է հոգուս
Մինչև խոր, մինչև ու՛շ աշուն...
Այդ գիշերն է խշշում այգուս,
Այդ կյանքիս աշունն է խշշում:¹⁶

Գարնան բնապատկերները խորհրդանշում են բնության զարթոնքն ու բանաստեղծի երիտասարդական տարիների ռոմանտիկ ապրումները, ամառվա տաք օրերն ու գույները՝ մրգերի հասունացման ու մարդկային ջերմ զգացմունքների համապատկերը և այսպես շարունակ...

Հր. Հովհաննիսյանի պոեզիան, այսպիսով, պատկերային մի ուրույն համակարգ է՝ միտված դեպի բանաստեղծի քնարական ապրումների խորքերը: Նրա պատկերաստեղծման արվեստը մի առանձին ուսումնասիրության նյութ է և լավագույն կերպով կարող է բացահայտել Հր. Հովհաննիսյանի պոետիկայի յուրահատուկ կողմերը:

Տ. Պողոսյան

Հրաչյա Հովհաննիսյանի պատկերաստեղծման արվեստը

Ամփոփում

<<Հրաչյա Հովհաննիսյանի պատկերաստեղծման արվեստը>> հոդվածում քննարկվում են մի շարք հարցեր, որոնք կարող են լույս սփռել բանաստեղծի պոետիկայի՝ մասնավորապես բնապատկերներ ստեղծելու

¹⁵ Նույն տեղում, էջ 120:

¹⁶ Նույն տեղում, էջ 120:

նրա յուրահատկությունների վրա: Նշվում է, որ հետևելով դասական ավանդույթներին՝ Հրաչյա Հովհաննիսյանը դրանք հարստացնում է նոր մոտեցումներով, որոնք սերտորեն պայմանավորված են բանաստեղծի աշխարհընկալման յուրահատկություններով:

Т. Погосян

Искусство создания образа Грачья Оганисяна

Резюме

В статье "Искусство создания образа Грачья Оганисяна" обсуждаются множество вопросов, которые могут пролить свет на поэтику поэта, в частности на свои особенности в создании пейзажей. Отмечается, что следуя классическим традициям Грачья Оганисян обогащает их новыми подходами, которые тесно связаны с особенностями восприятия мира поэта.

T.Poghosyan

Hrachya Hovhannisyán's Art of Imaging

Summary

In the article of "Hrachya Hovhannisyán's Art of Imaging" a number of points are discussed which can shed light on poet's works, particularl on his peculiar abilities of creating landscapes.It is stated that Hrachya Hovhannisyán, following the classical traditions, enriches them with new approaches which are closely related to the poet's unique worldview.

ՕՏԵԼՅԱ ԴԱԼԱՔՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի
անվան գրականության ինստիտուտի հայցորդ
ՀՏԴ 821.19.0

Վ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ ԿՑԱՆՔԻ ՆՈՎԵԼՆԵՐԻՑ» ՇԱՐՔԸ

Բանալի բառեր. Դիմանկար, նովել, շարք, փոքր արձակ, դիրքորոշում, հպարտություն:

Ключевые слова: портрет, история, серия, небольшая проза, позиция, гордость.

Key words: portret, novel, series, short fictional prozes, position, pride.

Վ.Պետրոսյանի ստեղծագործությունների մեծ մասը նվիրված է երիտասարդության հոգեբանության բացահայտմանը («Քաղաքի կիսաբաց լուսամուտներ», «Դեղատուն Անի», «Ապրած և չապրած տարիներ», «Մայրիկ, ես արդեն մեծացել եմ» և այլն):

«Դիմանկարներ կյանքի նովելներից» շարքը զետեղված է «Անավարտ դիմանկարներ» գրքում: Իսկ ինչու՞ անավարտ. Հեղինակը համոզված է, որ «Իսկական մարդու կենսագրությունը կիսատ շենքի է նման.չի ավարտվում երբեք, և անգամ մահը անկարող է այդ շենքը դազաղ դարձնելու: Իսկական մարդիկ չեն հասնում տանիքին, որովհետև նրանց տանիքը երկինքն է, որին անհնար է հասնել»¹:

Այս և մյուս ստեղծագործությունների մեջ հեղինակի մտասևեռումների կենտրոնում Մարդն է: Նա յուրաքանչյուր կերպարի մեջ որոնում է Մարդուն: «Ուզում եմ, որ մարդիկ իրենց ծախսեն այնպես, ինչպես արևն է իրեն ծախսում.չսպասեն հատուցման, լավ զգան հենց նրանով, միայն նրանով, որ սպառվում են ուրիշների համար: Ուզում եմ՝ աշխարհում երեք մլդ արև լինի»²,-ասել է հեղինակն իր հարցազրույցներից մեկում:

Այս շարքի որ նովելն էլ թերթենք, պարզ ուրվագծվում է հեղինակի դիրքորոշումը մարդու մասին: Դրանցից է «Կինը, որին ես այլևս չհանդիպեցի» նովելը: Կին, որը մի կողմ թողած կանացի ինքնասիրությունը, հպարտությունը շտապում է հիվանդ ամուսնուն օգնելու, որը ոչ վաղ անցյալում հեռացել և տաքուկ անկյուն էր գտել ուրիշ

¹ Վ.Պետրոսյան, Անավարտ դիմանկարներ, Եր., 1963, էջ 235:

² Գրական թերթ, 1963,14 հունիս:

կնոջ գրկում: Բայց այս հանգամանքը տեղիք չտվեց, որ Մարդը մեռնի կնոջ մեջ և << -Ամուսինս լքեց, երբ մեր առաջին և միակ երեխան՝ Մանվելիկը, վեց տարեկան էր>>³: Սակայն, եթե կա խիղճ, ապա հետին պլան են մղվում հպարտությունը, անձնասիրությունը. << Գուցե և ոչ ոք չարդարացնի իմ արածը, բայց ես չեմ կարող նրան լքել, մանավանդ, երբ նա մենակ է>>⁴:

Բնորոշ օրինակ է <<Չորս անավարտ դիմանկար>>, նովելը, որտեղ համար 27 հիվանդասենյակի երեք <<հերոսները>>, հաշվի չառնելով, որ իրենք էլ հիվանդ են, օգնության կարիք ունեն, փորձում են օգնել 4-րդ հիվանդին, ում ողջ մարմինն այրվել էր, բացառությամբ <<խոսող>> աչքերի. <<Իսկ ես քնել չեմ կարողանում: Նախ՝ մտածում եմ հազար ու մի բանի մասին և հետո՝ գուցե պետք լինեմ Ուժեղին: -Տուր,- հանկարծ լսում եմ: Անմիջապես վեր եմ կենում: Ու հանկարծ մութի մեջ տեսնում եմ, որ վեր են կացել նաև Թույլն ու Բարին: Նրանց ձեռքին էլ ջրով լիքը բաժակ է, և նրանք էլ արդեն Ուժեղի անկողնու մոտ են >>⁵: Հեղինակը որսացել է կյանքի մի ակնթարթ, չորս անծանոթ մարդիկ հանդիպում են հիվանդանոցում՝ ամեն մեկն իր հոգսերով ու խնդիրներով: Բայց յուրաքանչյուրն իր հոգսը ի պահ տալով ժամանակին՝ ապրում է դիմացինի ցավով: Բոլոր մարդկանց մեջ էլ այս հակադրությունը՝ Ուժեղ, Թույլ, Բարի կա, և ժամանակի թելադրանքով դրանցից մեկը դրսևորվում է... <<Ի՞նչ սիրտ, եթե այն չի բաբախում մարդու համար>>, բացականչում է << Վերջին գիշեր>>ի հերոսը և կյանքն այրում ուրիշների համար: Հեղինակի բոլոր հերոսներն ապրում են այս սկզբունքը որդեգրած:

<<Բարի լույս, Ջեյ, ինչպես անցավ գիշերը>> նովելն առաջին հայացքից թվում է, թե պատահաբար է հայտնվել այս շարքում: <<Գիշերը>> հենց այն թունելն է, խավարը, մութը, որի մեջ ապրում է Արսենը, իր նման ընկերները՝ Վիուլը, Թումը, որոնք կյանքը տեսնում են միայն <<ոսկե երիտասարդության>> պատուհանից: <<Եվ միթե պարտադիր է, որ աշխարհում բոլորն աշխատեն>>⁶: Այստեղ կարծես տեսնում ենք Շիրվանզադեի Միքայելին՝ ավելի թույլ գույներով կերտված: Ինչպես Միքայելն է այդ ճանապարհի կեսից սթափվում շնորհիվ Շուշանիկի, այստեղ էլ Մերին այն լույսն է դառնում, որ վառվում է Ջեյի կամ Արսենի ճանապարհին. <<-Արդեն հինգ շենք եմ կառուցել...կառուցել ենք,-նշում է Մերին: Հինգ շենք: Իսկ ես այս քաղաքում միայն ծնվել եմ,-մտածեց Արսենը:

³ Վ.Պետրոսյան, Անավարտ դիմանկարներ, Եր, 1963, էջ 8:

⁴ Նույն տեղում, էջ 12:

⁵ Վ.Պետրոսյան, Անավարտ դիմանկարներ, Եր, 1963 էջ 84:

⁶ Նույն տեղում, էջ 23:

Ուրիշ ոչինչ»⁷: Եվ հենց այդ պահից դրվում է նրա մղձավանջից դուրս գալու սկիզբը: Նրա մեջ էլ Մարդը չէր մեռել, թեկուզ դժվարությամբ, բայց կարողանում է ճշմարտություն ասել Մերիին: Մեծ հաշվով միայն Արսենը չէ մեղավոր, որ ձրիակեր է: «Երջանիկ բան. հայրիկը համարյա երբեք ժամանակ չի ունենում» կամ «Բայիկ, կոֆեն բերեմ-ձայն է տալիս Արսենի մայրը»⁸, երբ Արսենն այդ նույն ժամանակ անկողնում պառկած է: Ղ. Հայրապետյանը նշում է, որ Վ. Պետրոսյանը այս նովելում չի կարողացել պահպանել ազգայինը. «Սակայն, ցավոք, պետք է ասել, որ այս պատմվածքում դոմինանտը մնացել է ձեր, իսկ բովանդակությունը ինչ-որ չափով կուլ է գնացել հեղինակի ձևապաշտական տենդենցին: Այս պատմվածքում հեղինակը շատ է նմանվում արտասահմանյան որոշ գրողների, որի հետևանքով էլ կորցնում է սեփական, ազգային դեմքը»⁹:

Շարքում կարելի է նկատել մի փոքր հակադրություն. Շարքն ամբողջովին պարուրված է մարդասիրությամբ, ուրիշին օգնելու ձգտումներով, բայց «Ճանապարհն հիշողություն չունի» նովելում տեսնում ենք հակառակը. մարդն ինչ-որ բան անում է առաջին հերթին իր համար, որ ինքն իրեն լավ զգա. «Օհան պապն անցնում է գյուղի «կենտրոնական» փողոցով ու ինչքան քար է տեսնում, հավաքում, դեն է գցում ճանապարհից: Եվ ահա մի օր փողոցով անցնող մի տղա որոշում է գումար տալ ծերունուն: Օհան պապը վերցնում է: «Ես քարեր եմ հավաքում ճանապարհից և ուրախանում դրա համար. երևի այն տղան էլ ուրախացավ՝ ինձ փող տալով: Ոնց կոտրեի նրա ուրախությունը: Մարդը որևէ լավ բան անում է իր համար, և դա ուրախություն է բերում առաջին հերթին իրեն»¹⁰:

Այս շարքը միայն Մարդու փնտրտությամբ չէ, որ առանձնանում է. Այստեղ կա նաև կիսատ թողած սեր, կիսատ թողած պահ: Հերոսները հաճախ ապրում են հիշողությունների գրկում, անցյալի մեջ, որտեղ մի ժամանակ երջանիկ են եղել: Մի քանի նովելներ կարծես նույն պահին գրված լինեն. նույն ապրումները, բառերը, բնորոշումները: Տեսնում ենք տարիների հեռվից իրար նայող բաժանված զույգերի, որոնց արանքում անջրպետ է՝ հինգ կամ տասը կամ քսան տարվա տեսքով: Դրանցից է օրինակ՝ «Ինչու ես կորցրի իմ սերը» նովելը, որտեղ հերոսուհին ժամադրությունից ուշանում է քսան տարի: Հանգամանքների բերումով նա

⁷ Նույն տեղում, էջ 28:

⁸ Նույն տեղում, էջ 20:

⁹ Սովետական Հայաստան, 1963, 29, օգոստոս:

¹⁰ Վ. Պետրոսյան, Անավարտ դիմանկարներ, Եր, 1963, էջ 113:

հեռանում է երկրից՝ առանց որևէ մի երկտող թողնելու: Նա վերադառնում է, երբ հանիրավիմեղադրված հորն արդարացնում են: <<Համարյա քսան տարի անց՝ եսնորից այստեղ եմ ու կանչում եմ քեզ: Հիշում ես մեր նստարանը, ես երեկ տեսա, դեռ այնտեղ է...>>¹¹: Գրեթե նույն պատկերն է <<Ուշացած երջանկություն>>, <<Եթե երկինքը կապույտ լիներ>>, <<Իսկ ես դեռ ջրում եմ քո ծաղիկները>>, <<Երրորդ հարկի ութերորդ պատուհանը>> նովելներում... Վերջին նովելում նույնպես տարիներ են անցել, բայց սերը մի՛տ մնացել է արթուն:

Այս շարքի գործող անձինք, բացառությամբ, մեկ երկուսի, երիտասարդներ են, ինչը շատ բնորոշ է հեղինակին: Վ. Պետրոսյանը փոքր կտավի վրա կարողանում է ներկայացնել մի ողջ կյանք՝ զերծ մնալով ավելորդաբանություններից: Նրա խոսքը հագեցած է դիպուկ և ճշմարիտ պատկերավորման միջոցներով, ինչու չէ նաև կծու հեգնանքով, որը նրա ստեղծագործությունների աղն է: Ինչպես հեղինակն է ասել, եթե գրողն աշխարհին ասելու բան ունի, ունի սեփական տառապանքի կենսագրություն, ապա ասելիքի ձևը, ոճը գալիս է ինքնաբուխ, առանց առանձնահատուկ ջանքերի: <<Վ. Պետրոսյանի արձակի առանձնահատկություններից մեկն այն է, որ նա նովելի, պատմվածքի զարգացման, նրանց ֆաբուլայի մեջ ներմուծում է դատողական տարրեր, դնում է իր խոսքը, բայց այդ արվում է չափի զգացումով, մի հանգամանք, որ ավելի ներգործուն է դարձնում խոսքը>>¹² Վ. Պետրոսյանը ընթերցողին գրավում է խոսուն վերնագրերով, որոնք ընթերցողին միանգամից իրենց <<ցանցն>> են զգում: <<Ահա և մի կարևոր մոմենտ,-գրում է Ղ.Հայրապետյանը,-ոիթմի խնդիրը: Այն արձակը, որը ներքին ոիթմ չունի, փայտե արձակ է: Վ. Պետրոսյանի գրեթե բոլոր նովելներն ու պատմվածքներն ընթերցողին գեղագիտական հաճույք են պատճառում իրենց ներքին երաժշտության ոիթմի խոր արտահայտմամբ: Պետրոսյանը բռնում է իր գրվածքների ոիթմը, որով և կենդանի շունչ, բանաստեղծականություն է հաղորդում նրանց>>¹³:

¹¹ Նույն տեղում, էջ 37:

¹² Սովետական Հայաստան, 1963, 29, օգոստոս:

¹³ Սովետական Հայաստան, 1963, 29, օգոստոս:

Օ. Դալաքյան

**Վ. Պետրոսյանի «Դիմանկարներ կյանքի նովելներից» շարքը
Ամփոփում**

Վ. Պետրոսյանը փոքր արձակի ճանաչված վարպետներից մեկն էր նորագույն շրջանի հայ գրականության մեջ: Նրա «Դիմանկարներ կյանքի նովելներից» շարքում դրսևորվում են հեղինակի աշխարհընկալման սկզբունքները, ինքնասիրության, արժանապատվության, սիրո, ընտանիքի ու բարոյականության վերաբերյալ պատկերացումները:

Օ. Далакян

**Из серии «Портреты из истории жизни» В. Петросяна
Резюме**

В. Петросян был одним из самых известных мастеров армянской литературы в современный период. Его серия «Портреты из истории жизни» подчеркивает то, как он воспринимал мир, его жизненные ценности, чувства собственного достоинства, любовь к семье, и, конечно же, нравственный аспект его жизни.

O. Dalakyan

**Portraits of life's novels by V. Petrosyan
Summary**

V. Petrosyan was one of the most famous masters in the modern period of Armenian literature. In one of his series called "Portraits of life's novels" are illustrated the author's world perception, the perception of self-esteem, dignity, love, family and morality.

ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՁՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի հայցորդ
ՀՏԴ 821.19.0

**ՄԱՐԴՈՒ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐՈ ՋՈՐԻ
ԲԱԼԱՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր և բառակապակցություններ. բնապաշտություն, կապեր, լեռներ, գույներ, նրբերանգներ, ոգի, բնավորություն, գենետիկ կոդեր, հողի պաշտամունք, ծիածանի գույներ:

Ключевые слова и выражения: пантеизм, контакты, горы, цвета, оттенки, дух, характер, генетические коды, культ земли, цвета радуги.

Key words and expressions: pantheism, contacts, mountains, colors, shades, spirit, character, genetic codes, cult of the earth, the colors of the rainbow.

Անժխտելի է, որ աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները մեծ ազդեցություն ունեն անհատականության ձևավորման, բնավորություն գծերի մշակման, լայն առումով՝ աշխարհընկալման եղանակների ու մեթոդների ընտրության գործընթացներում: Այս առումով անուրանալի է, որ Արցախի բնությունը՝ իր բարձրաբերձ ու անմատչելի լեռներով, անդնդախոր ձորերով, լեռներից հովիտները գահավիժող գետերով, մեծ ազդեցություն է գործել իր գրկում ապրող ժողովրդի հոգեկերտվածքի ձևավորման վրա, նրա մեջ մշակել ազգային արժանապատվության գիտակցման յուրահատուկ մոտեցումներ: Եվ պատահական է, արդյոք, որ Արցախը երբեք չի երկնչել ոչ մի նվաճողից, հերոսաբար պայքարել ու շարունակում է պայքարել իր ազատության, ինքնուրույնության համար:

Իր հող ու ջրին, իր օջախին արմատներով է կապված արցախցին, և հենց դրանով է նա առեղծվածային քոչվորի կյանքով ապրող, սեփական եզերք չունեցող ցեղախմբերի համար:

Իր «Դժոխք և դրախտ» գրքում Ջորի Բալայանը ներկայացնում է մի դրվագ՝ ցույց տալով, թե ի՞նչ է սպասվում մարդուն, երբ նա կտրվում է բնությունից՝ մայր հողից ու բնավորվում օտար եզերքներում. “Վազգեն Նաջարյանը Հայաստանից ծիրանի կորիզ տարավ Լոս Անջելես: Տնկեց իր այգում: Աձեց-մեծացավ Հայաստանի խորհրդանիշ այդ ծիրանենին... Սակայն պտուղները բոլորովին նման չէին Հայաստանի խորհրդանիշին... Ոչ ձևն էր հայկական, ոչ գույնն էր արևային... Հոտի մեջ էլ ինչ-որ

անհարազատ բան կար... Փորձված այգեպանները հավանաբար, երկար բացատրություն կարող են տալ, թե ինչու են ծառը տեղափոխում... Բայց կարծում եմ, որ հարգելի մասնագետը ոչինչ չի ասի ամենագլխավորի մասին, ոգու մասին, քանի որ ամբողջ դժբախտությունը նրանում է, որ փոխել են ոչ միայն մայրցամաքն ու կլիման, հողն ու օդը. փոխել են ոգին»¹:

Բայց լինում է նաև, որ “ծառը թողնելով հարազատ հողում, բռնությամբ փոխում են նրա հոգու ներկայակակը, կոտրելով ծիածանի բանաձևը: Այսպես ասած, պատվաստում են... Բայց միշտ (վաղ թե ուշ) նման փորձերը վերջանում են դժբախտությամբ, եթե բռնությամբ փոխում են առանձին խումբ մարդկանց ծիածանի գույները. առավել ևս մի ամբողջ ժողովրդի»²:

“Ծիածանի գույները փոխելու՛ քաղաքականություն էին վարում ազերիները խորհրդային տոտալիտար համակարգի պայմաններում՝ հալածելով ու բռնադատելով Արցախի լավագույն մտավորականներին, արգելելով կամ խոչընդոտելով Հայաստանի մտավորականների մուտքը Արցախ:

Ձ. Բալայանի բոլոր ստեղծագործությունների հերոսները, դժվար չէ նկատել, բնության իսկական զավակներ են, և նրանց բնավորության գծերը ձևավորվել են դարերի ընթացքում իրենց նախնիների՝ բնության նկատմամբ ունեցած պաշտամունքի անմիջական ազդեցությամբ:

Մեծ թե փոքր, կին թե տղամարդ ապրում են հայրենի եզերքի սիրով, որը երբեք չի լքում նրանց:

Այդպիսին է հինգերորդ դասարանցի Գեղամ Աղաջանյանը Մատաղիս գյուղից: Պատանի բանաստեղծը տեսել է, թե ինչպես են ազերիները ու խորհրդային տանկերը ներխուժում գյուղ: Նա երբեք չի մոռանա այդ օրը. “Չի մոռանա, որովհետև այդ պահին, երբ տանկերը մոտենում էին իր տանը, հանկարծ մտածեց, որ չի լսում դրանց դրոշյունը՝, հետո “հասկացավ, որ Մատաղիսի ծխապատ երկինքը բռնել է բոլոր մայրերի ճիչը, և այդ ճիչն է, որ խլացնում է շարժիչների աղմուկը: Իսկ հետո “երբ բլուրն անցնելուց գյուղն այլևս չէր երևում, Գեղամը մտածեց, որ երեք տարում գրած իր բոլոր բանաստեղծությունները մնացին տանը: Աչքերը լցվեցին արցունքով: Բայց նա թաքցրեց դա եղբայրներից ու ծնողներից»³:

Արցախի բնությունը, նրա անկրկնելի գեղեցկություններին են նվիրված եղել Մատաղիսի հայրական տան հետ այրված նրա

¹ Բալայան Ձ., Դժոխք և դրախտ, Եր., 1995, էջ 285:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 289:

բանաստեղծությունները, որոնց կորուստը Գեղամի համար մանկության կորուստ էր, երազների կորուստ: Գաղթի ճանապարհին նա հասունանում է միանգամից, ընդամենը մի քանի օրում: Նա հետո դարձավ արցախյան ազատամարտի այն “տրուբադորներից” մեկը, որի բանաստեղծություններից շատերը խրամատներում շուրթից շուրթ էին անցնում:

Արցախի բնությունը տոկունությամբ ու համառությամբ, ամենաօրհասական պահերին մարտահրավերիներին դիմակայելու աներեր կամքով է դաստիարակել ոչ միայն խրամատներում, սահմանապահ դիրքերում մարտնչող ռազմիկներին, այլև կանանց: Դարեր շարունակ Արցախի կանայք տղամարդկանց հետ հավասար լինել-չլինելու խնդիր են լուծել, նեցուկ ու սատար են եղել նրանց համար, իրենց ներկայությամբ ոգևորել-ոգեշնչել են նրանց, օջախի ծովին են պահել անմար, երեխա են ծնել ու նրանց դաստիարակել են նախնիների անկոտրում ոգով:

Նրանցից մեկն է գրողի մայրը՝ Գոհար Բալայանը: Բազմաթիվ դժբախտություններ տեսած, ստալինյան գեհենի պարունակներով անցած այդ կինը տոհմիկ արցախցի կնոջ՝ հայ կնոջ խորհրդանշական կերպարի մարմնացումն է: Գոհար Բալայանը “ամենից շատ տառապում էր այն բանից, որ հանկարծ չդադարի գործել իր կենսական սկզբունքը սիրո մասին, այն մասին, որ չարը միշտ չարիք է ծնում, որ ատելությամբ չես վերացնի ատելությունը»⁴:

Իսկ այդ սկզբունքը նրա մեջ մշակվել է հայրենի Քյաթուկ գյուղում: Լեռների մեջ ծվարած, մեծ աշխարհի հետ միայն նեղ կաճանով կապված մի փոքրիկ գյուղ էր Քյաթուկը՝ իր անկրկնելի բնությամբ, դրախտային այգիներով, մրգառատ այգիներով: Մինչև խոր ծերություն Գոհար Բալայանի մտապատկերներում մանկության եզերքն էր, հայրենական տունը, տան առջև՝ հինավուրց թթենին, որը յուրահաստով խորհրդանիշ է յուրաքանչյուր արցախցու համար: Մահվան մահճում անգամ Գոհար Բալայանը հիշում է Քյաթուկը, թթենին, որի սաղարթախիտ ճյուղերի մեջ ճովողում էին ճնճողուկները, որի ստվերում հազար ու մի պատմություն էին պատմում գյուղի տարեցները՝ բացելով հին օրերի կծիկը: Մահվան մահճում անգամ տիկին Գոհարը հմայվում ու ոգեշնչվում է հայրենի եզերքի բնության գեղեցկություններով, հասուն մրգերի գույնով ու հոտով. “Այդ երեկո շատ երկար մնացի մորս մոտ: Նա անընդհատ հարցնում էր Քյաթուկի մասին: Ոչ առանց հպարտության ասաց, որ հունիսի կեսերին Արցախում ամենուր

⁴ Բալայան Զ., Հաղթելով մահին, Եր., 2009, էջ 9:

այգիներում տարածվում է հասած թթի բույրը, իսկ այ Քյաթուկում և Շուշիում այդ սաթե սեզոնն ուշանում է»⁵:

Թթենու պաշտամունքը դարերի խորքից է գալիս և ունի խորհմաստ բովանդակություն. «Ղարաբաղում չես գտնի մի գյուղ, որտեղ բակում՝ հենց տան մուտքի առաջ, այդ ծառը տնկած չլինեն: Դա ավելին է, քան ավանդույթը: Դա կենսակերպ է, դա հիշատակ է անցյալի մասին: Թթենին Արցախում կյանքի խորհրդանիշ է, առողջության փաստարկ: Թուֆը միայն մեղրանուշ հատիկ չէ, միայն չամիչը չէ, որով ամռանը միշտ լիքն են ազգային տարագ կրող տատիկների բազմաթիվ գրպանները: Թթենին մետաքս է: Այնպես որ՝ պետք չէ այդ ծառի մասին հաճախակի հիշողություններն ընդունել որպես գրական հնարք»⁶:

Մահվան մահճում անգամ տիկին Գոհարի մտասևեռումներում միշտ ամուսինն է նաև, ով բարձր պաշտոններ է վարել Հաղրություն, 1937-ին որպես «Ժողովրդի թշնամի՝ աքսորվել և 1939-ին սպանվել է Կոմի ինքնավար հանրապետության ճամբարում:

Մահվան մահճում անգամ նրան ոչ այնքան ցավերն են տանջում, այլ այն, որ այդպես էլ չկարողացավ գտնել ամուսնու գերեզմանն ու արժանացնել հայրենի եզերքի հողին:

Չ. Բալայանի ստեղծագործություններում բազմաթիվ են Գոհարի պես կանայք, ովքեր ամուսիններ ու որդիներ են կորցրել համակենտրոնացման ճամբարներում, Մեծ հայրենականի տարիներին, արցախյան գոյամարտի օրերին: Բայց նրանց համար ամենահատկանշականն այն է, որ նրանք երբեք թևաթափ չեն եղել, հավատացել են, որ արդարությունը մի օր կվերականգնվի: Նրանք չեն կորցրել իրենց հույսը՝ քաջ գիտակցելով, որ դրանով հուսախաբ կանեն նաև ուրիշներին:

Բնությունը նրանց միշտ լավատեսություն է ներարկել, դաստիարակել մարդկանց հավատալու հոգեբանությամբ. խիստ հատկանշական է, որ տիկին Գոհարն իր նման մի խումբ կանանց հետ այն դժնդակ օրերին փորձել է արդարություն գտնել մոսկվաներում՝ իրենց ամուսիններին գտնելու հույսով դիմել բարձր ատյաններին, ինչի համար բանտախուց են նետվել կամ աքսորվել համակենտրոնացման ճամբարներ: Նրանց միաժամանակ հասկացրել են, որ եթե շարունակեն բողոքել, այլևս չեն տեսնի իրենց զավակներին, իսկ ազգուտակին կուլակաթափ կանեն ու կաքսորեն հեռավոր սիբիրներ:

⁵ Նույն տեղում, էջ 318:

⁶ Նույն տեղում, էջ 323-324:

Զորի Բալայանի ստեղծագործություններում շարունակվում է մեր գրականության բնապաշտական մայր երակը՝ յուրահատուկ դրսևորելով տարածության ու ժամանակի միասնականության վերաբերյալ հեղինակի յուրահատուկ պատկերացումները:

Մ. Մկրտչյան

**ՄԱՐԴՈՒ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԶՈՐԻ
ԲԱԼԱՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ամփոփում

Հոդվածում քննարկվում են մարդը՝ բնության և բնությունը՝ մարդու մեջ փոխհարաբերությունների հարցերը: Մասնավորապես նշվում է, որ Արցախի ժողովրդի մարտնչող ոգին, անկոտրում կամքը ձևավորվել են նաև աշխարհագրական գործոնների անմիտելի ազդեցությամբ: Բնության հետ միշտ ներդաշնակ է եղել Արցախի ժողովուրդը, և բնությունը շռայլորեն փոխհատուցել է նրան:

M. Mkrtchyan

**ECOLOGICAL-PSYCHOLOGICAL RELATIONS OF MAN AND NATURE
IN THE CREATIVE PROJECTS OF ZORI BALAYAN**

Summary

The article discusses the issues of the relationship between man and nature in man. In particular, it is said that the militant spirit, the unshakable will of the people of Artsakh were formed under the indisputable influence of geographical factors. The people of Artsakh were always in harmony with nature and nature generously compensated it.

М. Мкртчян

**ЖИЗНЕННО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ЧЕЛОВЕКА С
ПРИРОДОЙ В ПРОИЗВЕДЕНИЯХ ЗОРИ БАЛАЯНА.**

Резюме

В статье обсуждаются вопросы о взаимоотношений – человек в природе и природа в человеке. В частности говорится, что воинствующий дух, непреклонная воля народа Арцаха были сформированы также под бесспорным воздействием географических факторов. Народ Арцаха был всегда в гармонии с природой и природа великодушно отплачивала ему.

ՎԱՐՐՈՒԶԻ ՄԿՐՏՁՅԱՆ

Գորիսի N 4 ավագ դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
ՀՏԴ 821.19.0

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄՈ ՄԱՀՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. Համո Սահյան, պոեզիա, բնություն, բանաստեղծություն, Ջանգեզուր, Որոտան, հայրենիք, կատարելություն, բնության երևույթներ, մարդ:

Ключевые слова и выражения: Амо Сагиян, поэзия, природа, стихотворение, Зангезур, Воротан, родина, совершенство, природные явления, человек.

Key words and expressions: Hamo Sahyan, poetry, nature, a poem, Zangezur, Vorotan, motherland, perfection, natural phenomena, a human.

Ն. Սահյանի բանաստեղծություններում մանկություն-բնաշխարհի մարդիկ-բնություն-հավերժություն սերտ կապված են իրար հետ: Դրանք առանձին հասկացություններ չեն, փոխկապակցված են իրար հետ և առանձին-առանձին գոյություն չունեն: Ն. Սահյանը հանդես է բերել մի զարմանալի նրբանկատություն՝ վեր հանելու բնության մեջ եղած իրերի գույների գեղագիտական հանդիպադրությունները, որոնց ամենանուրբ երանգներն անգամ չեն վրիպում նրա տեսողությունից: «Կանաչ-կարմիր աշուն» ժողովածուով սկսվում է հեքիաթը.

Մարերով լիքը երկինք
Երկինքով լիքը ձորեր...
Հասկերի թուխ ստվերում
Թուխս նստած թխիկ լորեր...

Հեքիաթը բարձրաբերձ Ջանգեզուրն է, և հեքիաթի հերոսն էլ ինքն է՝ բանաստեղծը, որը մեծացել, երգեր էր գրում և իր թույլ ուսերով դաժան դարն էր տանում: Հենց այս հեքիաթ աշխարհում էլ հաստատվեց բանաստեղծի ինքնությունը: Բանաստեղծին հաստատվելու համար օգնեցին լավկան քարանձավները, անհանգիստ օրերը, հեթանոս ջրվեժները, ճգնավոր մասրենիները, քարասապատ սարերը... Այսպես շարունակվում է շարքը և ի վերջո.

Հունցեցին, որ և գնա
Եվ հյուսվի տանը
Օրորոցներդ օրորող
Հավերժությանը:

Բնությունը Մահյանի համար տիեզերական զգացողություն է, և որքան մարդեղենացած, այնքան հարազատ է բնությունը: Այս կապի զգայուն ընկալողն է Մահյանը:

Օրը հիվանդ է կարծես,
Գույնը փոխել է մի քիչ:
Ձեռքը դրել է սրտին,
Հոնքը կախել է մի քիչ:

Բայց ցավը բնությունը մերժում է, և, ինչպես Շիրազի «Բիրլիականում», ցավը կարող է տանել միայն մարդը: Բնությունը մերժում է ցավը, որովհետև սեփական ցավ չունի, բայց իր գիրկն է առնում մարդու ցավը՝ իբրև մարդկային ողբերգության միակ ամոքիչ:

Ահա Մահյանի նկարագրած անձրևը: Բանաստեղծությունը կազմված է երեք մասից: Առաջին մասում նախաամպրոպային լարվածություն է.

Ամպը կախվել է ամպից,
Ամպամած օր է,
Վերը երկինք է մթին
Ներքևը ձոր է:

Հավքերն են կույզ եկել, քամին է քարայրը մտել, շանթը զարկել է ամպին: Երկրորդ մա սում արդեն հորդառատ անձրևն է, որովհետև կապույտ մրրիկը պայթել է, և ուռին ճչում է վա խից, առուն ուշքի է եկել, որոտում է փլված երկինքը: Անձրևից հետո հոգնած ամպի մի պատան ծիածանի թևի տակ ավանդեց հոգին:

Հավքը բախվեց ուռենուն..
Ոստերից նրա
Մոլորակներ թափվեցին
Քարերի վրա:

Քամին ելնում է քարայրից և թավալ տալիս խոտերում... անձրևից հետո մաքրություն է աշխարհում.

Վերը երկինք է վճիտ,
Ներքևը ձոր է,
Ամեն ինչ թարմ է այնպես,
Ամեն ինչ նոր է:

Այա գալիս են փշատենին, մասրենին...

Մասրենին Մահյանի պոեզիայում նաև հայրենիքի խորհրդանիշ է: Մի դեպքում որպես «կարմիր սարսուռ»՝ նրա պտուղը կաթում է ժայռից, մյուս դեպքում որպես աշնան ուլունք-ու լունք խորհրդանշան՝ ջրերն են տանում նրան: Իսկ մի այլ դեպքում մասրենին խառնվում է բա նաստեղծի էությունը, և նմանվում են իրար, որովհետև մասրենին ևս ոչ մեկին չի նեղում, ոչ մե կից բան չի խնդրում, ոչ մեկի ջուրը չի կտրում: Ծաղկում է ամեն տարի՝

բաժանելով իր բարիք ներք. բուրմունքը հովին է տալիս, նեկտարը մեղվին է տալիս, պտուղը՝ մարդուն.

Խփում է ցուրտը ձմռան,
Մտնում ես քո ներսը դու...
Տեսնում ես, թե ես ու դու
Ինչքան ենք իրար նման:

Լինելով բնության սիրահար՝ Սահյանը, իր բոլոր բանաստեղծությունների մեջ իր հայացքներին համահունչ, դրականը, գեղեցիկը պատկերելիս պետք է դիմեր բնության օրինակներին:

Բնության ամենագեղեցիկ անկյունները մեկն անտառն է, որը տարբեր կերպարներով երևում է Սահյանի բանաստեղծություններում: «Անտառում» բանաստեղծությունն է. աշնան նիրհող անտառի մի բնապատկեր, որտեղ տեսանելի են բոլոր գույներն, ու լսելի են բոլոր շշուկները: Անտառային այս առօրյան «խորին խորհուրդ» ունի. ինչպես անսահման տիեզերքում՝ անտառում ևս կյանքն ու մահը ապրում են կողք կողքի. մեկը մեռնում է, իսկ մյուսը, անտեսելով ընկերոջ մահը, անտարբեր ապրում է: Պատկերը փոխվում է «Քամու համբույրը» բանաստեղծության մեջ: Փոքրիկ տերևը ալեկոծում է ողջ անտառը, իսկ կյանքում հաճախ է պատահում, երբ ոչ չնչից մեծ աղմուկ է առաջանում:

«Հողմը անտառում...»-ի² նչ է կատարվում. ճշում են հավքերը, հառաչում են ձորերը, շառա չում են կաղնիները, ծառերը կառչում են իրարից, ծառերը փախչում են իրարից: Բայց այդ թռուիթներից հետո հոգնած ու հուսախաբ հողմը անմիջապես «չքվում է գրողի ծոցը»: Պատկերը փոխվում է, հանգստացել է հողմը.

Եվ հետո... հսկաներ տապալված,
Եվ բներ, և բներ խափանված
Հավքի ճիչ... Մեղվի թիռ... Աշխարհ.

Ամենուր աշխարհն է, լույս ու մթին, պարզ ու խրթին, հանդարտ ու խոր, անիրական, անպարտելի, անտիրական աշխարհը: Եվ այդ աշխարհի մի մասնիկն է նա.

Նա իր կյանքն ապրեց օտարության մեջ,
Բայց հոգով այստեղ, այս տանն էր նա
Հայոց դպրության մեծ տերության մեջ,
Այս քարափների դեսպանն էր նա:

«Ինձ բացակա չղներ» ժողովածուի մեջ անտառի պատկերը փոխվում է: Անհանգիստ է անտառը, որովհետև զգացվում է ծերության շունչը: Ձորերը լցված են տենդի դողով և ամենուր ճաղատ բլուրներ են՝ փոշոտ կողերով: Բայց այստեղ կա վերհուշ հին ու լավ

օրերի,որը պատմում է «անգաղտնապահ» գետը, որը ամռանը մի թել առու է դառնում: Բայց իրականում.

Անտառ է այստեղ...
Քարե ծառեր են , ծառացած քարեր,
Նրանց ոտքի տակ մրափած դարեր
Դաշնության հեքիաթ ծառի ու քարի....

Հաստատ համոզված լինելով, որ կատարելությունը սահման չունի, Սահյանը զգուշացնում է, որ այդ ճանապարհը տանում է դեպի բնություն, ուստի քանաստեղծությունն էլ պիտի չափվի բնության ստուգանմունքով, որովհետև

Կատարյալ երգը շշուկն է հասկի
Եվ սևահողի շնչառությունն է:

Եվ քանաստեղծը միախառնվում է այդ կատարելությանը, դառնում բնության քար ու քեր ծը /«Ես քար ու քերծ էի»/:Քանաստեղծը անեղծությունը, պարզությունը տեսնում է միայն այս տեղ՝ բնության գրկում: Նա վստահում է բոլորին, որովհետև նրան լսում էին, հասկանում էին,և նրանց էլ ինքն էր հասկանում, իմաստնանում, հոգով հարստանում:

Բնության բոլոր երևույթները Սահյանի քանարվեստում են: Ահա օրվա պահերը: ԻՆչպես է ընկալում Սահյանը լուսաբացը.

Լույսը առավ սարին	Քարայծն ելավ քարին,
Սարսռում է սարը,-	Սարսռում է քարը,-
Սարերը վեր թռան:	Քարերը վեր թռան:
Հավքն արթնացավ ծառին	Եվ ինձ մի պահ թվաց՝
Սարսռում է ծառը,-	Քարերի տակ քնած
Ծառերը վեր թռան:	Դարերը վեր թռան:

Իսկ «Օրվա սկիզբը» քանաստեղծության մեջ լուսաբացի պատկերը փոխվում է, քանի որ օրվա սկիզբը քանաստեղծը համեմատում է աշխարհաստեղծման սկզբի հետ և այդ պահի վկան ինքն է՝ մեծ քանաստեղծը:

Իսկ ապա միջօրե է՝
Կապույտ հովեր են իջնում լեռներից
Եվ կանաչում են դաշտերի վրա:

Կապույտ ջրերը, կապույտ թիթեռը, կապույտ զանգերն են ամբողջացնում բնապատկերը, որովհետև լաջվարդ երկինք է ու ոսկի արև :

«Բնությունը առաջվա նման կողքներիս է»,-հիշեցնում է Սահյանի պոեզիան: Ձորերի, անտառների, դաշտերի վրա ժամանակը ոչ դանդաղեցնում է ընթացքը և ոչ էլ կանգ առնում, որովհետև ժամանակի

զարժումը շարժում ու կենդանություն է ենթադրում նաև անկենդան բնության ներսում:

Համո Սահյանի չափածոն, թաթախված լինելով բնության պատկերներով, բնության պատառիկներով, բնության գույներով, լույսերով, ստվերներով և ձայներով, բնության բուրմունքներով, ընդհանրապես ստեղծել է մարդու և հարազատ բնության ներթափանցման սքանչելի օրհներգ:

Գրականության ցանկ

1. Համո Սահյան, Երկեր, Երկու հատորով, Երևան, 1984:
2. Համո Սահյան, «Բնձ բացակա չրնեք», Երևան, 2003:
3. Ֆելիքս Բախչիկյան, «Բանաստեղծության հայելու խորքում», Երևան, 2004:
4. Շոբրա Դավթյան, «Համո Սահյան–Բանաստեղծի հավատամքը», Երևան, 2004:

Վ. Մկրտչյան

Բնությունը Համո Սահյանի պոեզիայում Ամփոփում

Համո Սահյանը մեծ բնապաշտ է: Հ. Սահյանի բանաստեղծության հողը, պատվանդանն ու զինանոցը բնությունն է, որտեղից բանաստեղծը վերցրել է իր գույները, ձևերը, նկարները, ձայները: Սահյանի բանաստեղծություններում մանկություն–բնաշխարհի մարդիկ–բնություն–հավերժություն սերտ կապված են իրար հետ: Բնությունը բանաստեղծի համար տիեզերական զգացողություն է, և միայն ինքը գիտի այդ զգացողության վերելքի իր չափը, որի մեջ սուզվում է ու նույնանում էությամբ: Բանաստեղծի չափածոն, թաթախված լինելով բնության պատկերներով, բնության պատառիկներով, բնության գույներով, լույսերով, ստվերներով և ձայներով, բնության բուրմունքներով, ընդհանրապես ստեղծել է մարդու և հարազատ բնության ներթափանցման սքանչելի օրհներգ:

В. Мкртчян

Природа в поэзии Амо Сагияна Резюме

Амо Сагиян - большой любитель природы. В стихах Сарьяна и земля, и заповеди, и весь его арсенал-это природа, откуда поэт берёт свои цвета, формы, картины, голоса. В стихах Сарьяна детство, окружающие его люди,

природа, бессмертие тесно связаны друг с другом. Природа для Сарьяна - космическое ощущение, и только он знает высоту и меру этого ощущения, в которое он окунается и которому уподобляется всей своей сущностью. Стихи поэта, наполненные картинами природы, обрывками, красками природы, ароматами природы, воспевают гимн воссоединению человека с родной природы.

V. Mkrtchyan

Nature in Hamo Sahyan's poetry

Summary

Hamo Sahyan worshiped nature greatly. Nature was the land, pedestal and the arsenal of Sahyan's poetry, where he took colours, shapes, pictures and melodies. In Sahyan's poetry the childhood, the earth, the people are all in harmony with one another. The nature for Sahyan was a cosmic feeling and only he knew the extend of that feeling in which he was diving and becoming identical with its essence. The poet's verses, being painted with landscapes, with colors, lights, shadows, sounds and flavors of nature, have created a wonderful hymn of human being and nature.

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ

ԵՊՀ պրոֆեսոր,
բանասիրական գիտությունների դոկտոր
E-mail: albert.makaryan@ysu.am
ՀՏԴ 37.016:378

**ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄՏԵՂՍԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Պետրոս Դուրյան, ուսուցման մեթոդիկա, խճանկարի մեթոդ, կյանքի պատկերներ, Ջակոմո Լեոպարդի, դրամատուրգիա, քնարերգություն, նամակ, միայնություն, անանձնականություն:

Ключевые слова и выражения: Петрос Дурян, методика обучения, метод мозаики, картины жизни, Джакомо Леопарди, драматургия, лирика, письмо, одиночество, безличность.

Key words and expressions: Petros Durian; teaching method; method of mosaics; episodes from life; Giacomo Leopardi; dramaturgy; lyrics; letter; loneliness; unselfishness.

Գրականության ուսուցման կազմակերպման ժամանակակից մեթոդներն ու ձևերը բազմազան են. դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, առավելությունները, ինչու չէ, նաև վիճելի կողմերը և հետապնդում է ուսուցման կոնկրետ նպատակ: Հատկանշականը, սակայն, այն է, որ ժամանակակից մեթոդների հիմքում ընկած են ուսանողի ստեղծագործական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման ընթացքում նրա անմիջական ու եռանդուն մասնակցությունը: Ասել է թե՛ սովորողը լսողի պասիվ վիճակից աստիճանաբար անցում է կատարում դեպի անմիջական աշխույժ միջավայր, որն ընդունված է անվանել *ինտերակտիվ* կամ *ներգործուն մեթոդներ*: Դրանց առավելությունն այն է, որ ուսանողի մեջ զարգանում է ինքնուրույն ստեղծագործական մտածողությունը. նա կատարում է և՛ անհատական, և՛ խմբակային աշխատանք՝ ձեռք բերելով համագործակցային կարողություններ, որոնք ձևավորվում են ինքնակրթության միջավայրում: Բայց և այնպես, այստեղ դարձյալ էական են մնում ուսուցանողի հմտությունը և ուղղորդման վարպետությունը: Կարծում ենք՝ այդ ընթացքում համագործակցային ուսուցման ժամանակակից մեթոդներից

նպատակահարմար է կիրառել հատկապես *խճանկարը*, որի ժամանակ ուսանողներին բաժանում են մի քանի խմբերի ու ենթախմբերի. նրանցից յուրաքանչյուրը խորությամբ ուսումնասիրում է ուսուցանվող նյութի հատկապես մի հատվածը և իր տպավորությունները հաղորդում մյուսներին, այնուհետև լսում այլ ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքներն ու այդպես շարունակ:

Այժմ փորձենք կոնկրետ՝ Պետրոս Դուրյանի կյանքի և ստեղծագործության ուսուցման օրինակով, փաստել ասվածը: Իսկ ինչո՞ւ հատկապես Դուրյանի: Հայտնի է, որ բուհերի հայ բանասիրության ֆակուլտետներում ամենևին էլ դյուրին չէ արևմտահայ գրականության, մասնավորապես քնարերգության ուսուցումը: Եթե դժվարությունը մի կողմից արևմտահայերենի համակողմանի ընկալման մեջ է, ապա մյուս կողմից՝ բնամարզի ինքնօրինակության ու արևելահայ հատվածից բավական տարբերվող հատկանիշների:

Ուսանողներին ամենից առաջ պետք է բացատրել, որ աշխարհի մեծ ռոմանտիկների՝ անգլիացի Բայրոնի, իտալացի Լեոպարդիի, ֆրանսիացի Մյուսեի, գերմանացի Հայնեի, ռուս Լերմոնտովի և ուրիշների պես հայ բանաստեղծը ևս մշտապես նայել է «երկրես հեռու»՝ լույս եզերքներին, ինչպես գրել է Տիգրան Ադամյանին ուղղված մի նամակում՝ երազել «փիլիսոփա աշխարհը», ուր մարդ արարածը սիրում է իր նմանին. «Միշտ ձանձրալի է այժմյան աշխարհը, անոր համար, որ ուղեղին մեջ ջահ մ'ունի (իմա՝ սեր չունի.- Ալ. Մ.). աշխարհի քաղցրությունը վայելելու համար այն դարին մեջ շնչելու է, որ քուրձ կը հագնի և կը սիրե, փիլիսոփա աշխարհը ըսել կ'ուզեմ, որ արդեն ուղեղներու մեջ կը սաղմնի...»¹:

Հենց այս բացատրությունից հետո ուսանողների տարբեր խմբերին կարելի է հանձնարարել պատրաստել փոքրիկ աշխատանքներ՝ մի դեպքում՝ Դուրյան-Մեծարենց, մյուս դեպքում՝ Դուրյան-Լեոպարդի, Դուրյան-Լամարտին կամ Դուրյան-Ռեմբո գուգորդումներով: Թեև հայ բանասիրության ֆակուլտետների ուսանողների համար բնականաբար ավելի մատչելի է առաջին՝ Դուրյան-Մեծարենց գուգահեռը, այնուամենայնիվ խիստ ցանկալի է թեկուզ հպանցիկ, բայց անհրաժեշտ տեղեկությունը եվրոպացի բանաստեղծների մասին, մանավանդ, եթե հաշվի առնենք մեր այսօրվա ուսանողների արդեն օտար լեզուների պատշաճ իմացությունը և հատկապես համացանցի ընձեռած լայն հնարավորությունները: Եվ հենց այստեղ ուսուցման խճանկարի մեթոդին

¹ Դուրյան Պ., Երկերի ժողովածու երկու հատորով, հ. 1, Երևան, 1971, էջ 162:

կարելի է հաջողությամբ զուգորդել մեկ ուրիշը՝ *վեր-որոնումը*, որն ուսուցանվող թեմային առնչվող նյութերի՝ համացանցի տարբեր աղբյուրներից հավաքագրման ու եզրահանգումներ կատարելու ուսումնական ինքնատիպ և այսօր արդեն անհրաժեշտ գործընթաց է:

Ուսանողների խմբերի ուղղորդումը կարող է լինել, ասենք, Դուրյան-Լեոպարդի օրինակով՝ բացատրելով, որ Պետրոս Դուրյանից առաջ հայացքն անհայտ հեռուներին էր հառել նաև իտալացի վաղահաս հանճարը՝ Ջակոմո Լեոպարդին (1798-1837)՝ գրելով.

Այդ անվերջության մեջ է սուզվում իմ միտքը,

Եվ հաճելի է նրան խորտակվել այդ ծովում²:

Երկու բանաստեղծներն էլ բռնված էին «երկնքի հիվանդությամբ»՝ թոքախտով, երկուսն էլ անսահման ապաբախտ էին: Բազմաթիվ հիվանդություններով տառապող Լեոպարդին ևս չըմբռնեց կյանքի մեծագույն վայելքը՝ սերը... Վախճանվեց 39 տարեկանում՝ ընկերոջ ու հետագայում իր առաջին կենսագրի՝ Անտոնիո Ռանյերիի ձեռքերում: Դուրյանը, սակայն, նրանից դժբախտ էր, թերևս ամենադժբախտը՝ մեր ճանաչած բոլոր բանաստեղծներից: «Ահ մ'էր սկիզբս, վա՛խ մ' եղավ վախճանս...»³, - ցավալիորեն իրավացի էր «Սկյուտարի սոխակը»: Նրանք երկուսն էլ հասունացել էին վաղաժամ. Դուրյանն ընդամենը 15-16 տարեկան էր, երբ գրում է առաջին պիեսները՝ «Տարագիր ի Սիպերիան», «Վարդ և Շուշանը», հեղինակի իսկ խոսքով՝ «սիրո և հանճարի փթթումը»: Ճիշտ նույն տարիքում էր Լեոպարդին ստեղծել գիտական իր առաջին աշխատությունը՝ «Աստղագիտության պատմությունը», որին քիչ անց հաջորդել էին հունարենով գրված՝ «Հիմն Նեպտունին» գլուխգործոցն ու անակրեոնյան օդաները: Պատանին դրանք ներկայացրել էր իբրև իր կողմից հայտնաբերված տեքստեր, հանգամանք, որը շփոթության մեջ էր գցել անգամ մասնագետներին, այդ թվում՝ գերմանացի հմուտ բանասեր Նիբուրին, և վերջինս հեղինակին անմիջապես հրավիրում է Գերմանիա...

Նույնը՝ նաև Արթուր Ռեմբոյի (1854-1891) պարագայում. ապրելով ընդամենը 37 տարի՝ ֆրանսիացի այդ հանճարն ստեղծագործեց միայն 16-19 տարեկանում՝ համաշխարհային գրականությանը նվիրելով սիմվոլիզմի բացառիկ ուժի այնպիսի երկեր, որոնց գայթակղիչ փորձն այնուհետև մնաց անհաղթահարելի:

Արդյոք նույն անբացատրելի հասունացո՞ւմը չէր ընկած, Եդ. Չարենցի բառերով ասած՝ «հիվանդ, հանճարեղ պատանու»՝ Միսաք Մեծարենցի

² Leopardi G., “L’infinito”, Nel: I poeti italiani / 8, L’Unita`, 1993, p. 23

³ Դուրյան Պ., Երկերի ժողովածու երկու հատորով, հ. 1, էջ 187:

կյանքի ու ստեղծագործության դրամայի հիմքում. տակավին պատանի՝ նա Կ. Պոլսի զանազան պարբերականներում պիտի տպագրեր զարմանալի գեղեցիկ տաղեր և շուտով հռչակվեր...

Ո՞րն է գաղտնիքը: Դժվար է ասել: Միգուցե բնության անբացատրելի ու անողոք օրենքներից մե՞կը՝ վաղաժամ հասունացում, աննախադեպ օժտվածություն և անմիջապես էլ նույն բնության կողմից գեղեցկության, բացառիկի հափշտակում... Մահվան տագնապն ու աշխարհի գեղեցկության խոր զգացողությունը, այնուհետև անդարձ հեռանալու ցավը վիթխարի ուժ են հաղորդել ինքնադրստորմանը, և հազվագյուտ ներհայեցությամբ օժտված պատանիներն շտապել են, զգացել վերահաս աղետը, ճակատագրի գալիք հարվածները...

Այսպես, երբ ուսանողների տարբեր խմբեր կարտահայտեն իրենց ամենատարբեր կարծիքները համանման ճակատագրերով միավորվող բանաստեղծների մասին, և աստիճանաբար կորոշարկվի խնդրո առարկա հարցը, դրանից հետո աստիճանաբար կծնվեն նաև կյանքի հանգամանքների խնդիրները: Այստեղ անհրաժեշտ է ուշադիր հայացք նկատելի է, որ որոշ ուսանողներ, չկարդալով անհրաժեշտ բնագրերը, բավարարվում են հեղինակի սուկ կենսագրական կցկտուր ինչ-որ տեղեկություններով և քննության ժամանակ նվազագույն դրական միավոր ստանալու արատավոր երևույթով: Իսկ դրան հաջորդում է դասախոսի արդարացի պահանջը՝ զանց առնել գրողի կենսագրությունը: Այս ընթացքում, սակայն, ծնվում է ծայրահեղությունը. չէ՞ որ կան գրողներ, առանց որոնց կենսագրական մանրամասների, նամակների կամ օրագրությունների, ժամանակակիցների վկայությունների և հուշերի պարզապես անհնար է ընկալել նրանց ստեղծագործության ներքին շերտերը: Իսկ երբ խոսքը վերաբերում է Դուրյանին, կենսագրական մանրամասնի խնդիրը ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն: Ֆրանսիացի նշանավոր գրաքննադատ Սենտ-Բյովը (1804-1869), օրինակ, իրավացիորեն կարծում էր, որ հեղինակի հոգեբանության ուսումնասիրությունը պետք է իրականացվի նրա մասին բոլոր հնարավոր կողմնակի վկայություններով: Այդ առիթով ահա ինչ է գրում ռուս ժամանակակից տեսաբան Օլգա Տուրիշևան. «Գրողի դիմանկարը վերակերտելիս նա (Սենտ-Բյովը.- Ալ. Մ.) օգտագործում է նամակներ, օրագրեր, հուշագրություններ և այդ կարգի այլ աղբյուրներ: Հեղինակի «բարոյական ֆիզիոլոգիան», Սենտ-Բյովի

համոզմամբ, հասկանալի կդառնա միայն հեղինակի անձի ամենատարբեր դրսևորումներին վերաբերող հարցերի պատասխանը ստանալուց հետո»⁴:

Եվ ահա ուսանողներին վերստին տարբեր խմբերի ու ենթախմբերի բաժանելով՝ նրանց հանձնարարվում են Դուրյանի նամականին, վավերագրերն ու հիշողությունները: Ընդ որում, կարելի է անգամ գրույց բացել ամենաբնորոշ մեկ-երկու նամակի շուրջ, խոսել ընդամենը մի քանի հուշի մասին: Ինչքան էլ դասավանդման մեթոդիկայի ժամանակակից որոշ մասնագետներ, հիմնականում նորամուծության անգուսպ կրքով համակված, շարունակեն պնդել, թե պետք է հրաժարվել դասախոսությունների ավանդական ձևերից, այնուամենայնիվ դա էլ մեկ ուրիշ ծայրահեղություն է. իսկ ուրիշ ի՞նչ ձևով է հնարավոր ուղղորդել սովորողին: Ուրիշ խնդիր է դասախոսության ձևի հմուտ փոփոխությունը, ասելիքի հակիրճ, բայց իմաստաբանական հագեցվածությունը: Ասել է թե՛ այստեղ ևս, կրկնում ենք, անչափ կարևոր է ուսուցանողի կենդանի դերը, խոսքը, հմտությունը, պատկերավոր ասած՝ նյութի զարկերակը ճիշտ բռնելն ու սովորողին ուղղորդելը: Վերցնենք, օրինակ, Դուրյանի հենց միայն ծննդյան թվականի խնդիրը. բանասիրությունը, ի տարբերություն Խաչատուր Աբովյանի ծննդյան թվականի, երբևէ չի վիճարկել այն: Բայց երբ ակադ. Ս. Սարինյանի՝ հումանիտար հոսքերի համար հեղինակած դպրոցական դասագրքի առաջին հրատարակության մեջ *թյուրիմացաբար* տեղ գտավ *1852 թվականը*, այն, չգիտես ինչու, արագորեն ստացավ օրինակի ուժ, և *սխալը* ցավալիորեն տարածվեց անգամ գիտական որոշ շրջաններում՝ աղավաղելով առանց այն էլ դժբախտ պատանու կենսագրության մի կարևոր փաստը:

Այսպես, ուսանողությանը պետք է հատուկ զգուշացնել, որ ընդամենը քսան գարուններ ապրած բանաստեղծը ծնվել էր *1851 թվականի* մայիսի 20-ին Կոստանդնուպոլսի Սկյուտար արվարձանի Նոր թաղում՝ Աբրահամ Զմպայանի ընտանիքում: «Հայրը օրական հացը ճարող, բայց պատվավոր երկաթագործ մ'էր», մայրը՝ Արուսյակը՝ «խիստ պարկեշտ կին մը, առաքինագարդ ըսվելու ճշմարտապես արժանի, նաև՝ շատ համբերատար»: Ընտանիքը բազմանդամ էր՝ չորս տղա (Հարություն, Պետրոս, Ագրիպաս, Միհրան-Եղիշե) և երկու աղջիկ (Էլպիս, Արտեմ): Ապրում էին դժվար. արհեստավոր հայրը հաճախ ստիպված վարձով էր տալիս նույնիսկ տան որոշ սենյակներ... «Երբ մանուկ էի, խաղալիք չունենալով՝ մորս գուլպա հյուսած ատեն կծիկով կը խաղայի, երբ խելահաս եղա՝ բազմոցին տեղ

⁴ **Տուրիշևա Օ. Ն.**, Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը, Երևան, 2017, էջ 31:

տախտակամածին վրա փռած հին գորգի մը վրա կը նստեի, երբ պատանի եղա՝ շատ անգամ արցունքս մորմես ծածկելով կուտեի ցամաք հացը»⁵, - տարիներ հետո իր մանկության ու պատանեկության անուրախ օրերի մասին այսպես պիտի հիշեր Պետրոսը:

Նախապատրաստված ուսանողներից ոմանք, կանխավ ստացած լինելով կոնկրետ հանձնարարականներ և նյութի տրամաբանության ներքին զարգացումներից ելնելով, արդեն ինքնուրույն կարող են շարունակել Դուրյանի մանկության ու պատանեկության շարադրանքը՝ մի կողմից հենվելով նամակների, մյուս դեպքում՝ այսօր արդեն մեզ համար անչափ թանկագին հուշերի բեկորների վրա: Եվ վստահաբար կարելի է ասել (դա է ապացուցում մեր երկարամյա փորձը), որ այդ ընթացքում անպայման կծնվեն մեծ ու փոքր հավելումներ, որոնք անգամ նկատված չեն լինի փորձառու դուրյանագետների կողմից. չէ՞ որ այսօրվա՝ տեղեկատվական անսահման աղբյուրներից օգտվող և արագացված ռիթմերով ապրող սերունդն ունի սուր հայացք, որը երբեք չի կարելի անտեսել:

Ուսուցանողը, իհարկե, կարող է շարունակել իր խոսքը հայտնի իրողությունների, մասնավորապես այն մասին, որ Պետրոսը չորս տարեկանում հարևանուհու՝ Պալասան տուտուի մոտ առաջին անգամ ձեռքն է առնում քերականն ու հեզարանը, մեկ տարի անց էլ Լայլա օղլու վարժարանում սերտում է սաղմոսը: Այնուհետև հետևում են Սկյուտարի հանրահայտ, բայց այդ շրջանում արդեն երբեմնի փայլը կորցրած ճեմարանում սովորելու տարիները: Ի դեպ, այստեղ ևս ուսանողներին պետք է զգուշացնել, որ այդ ճեմարանում նրան չի դասավանդել Հակոբ Պարոնյանը, ինչպես դարձյալ *թյուրիմացաբար* գրված է բնագիտական հոսքերի համար նախատեսված դպրոցական դասագրքում՝ այս անգամ հեղինակված պրոֆ. Լ. Մնացականյանի կողմից: Հարցը վաղուց՝ դեռևս 1970-ականների սկզբին, ստացել է բանասիրական անվիճելի պատասխանը. պարզապես պետք է մատնանշել աղբյուրը՝ երջանկահիշատակ պրոֆ. Ալ. Շարուրյանի «Պետրոս Դուրյան. կյանքը և գործը» մեծարժեք մենագրությունը:

Վեցամյա Պետեկը (այդպես էին նրան փաղաքշաբար անվանում տնեցիները) դառնում է ուսումնառության ընթացքը եռաստիճան կարգով կազմակերպած հիշյալ ճեմարանի միջին՝ «Նախակրթարանի» սանը: Ինչպես հավաստում են դասակիցները, առանձնապես չի փայլել առաջադիմությամբ, սակայն հաջողությամբ է հանձնել տարեվերջյան քննությունները, իբրև ընծա ստացել Լամարտինի գրքերից մեկն ու միան-

⁵ Դուրյան Պ., Երկերի ժողովածու երկու հատորով, հ. 2, 1972, էջ 451:

գամից տեղափոխվել բարձր կարգ, ուր սովորում էր ավագ եղբայր Հարությունը: Պետրոսը հենց այդ շրջանում էլ բառարանում որոնում է «զմպա» բառի հայերեն համարժեքը՝ «դուր», և հոր հետ համաձայնեցնելով՝ տոհմական ազգանունը փոխում Դուրյանի:

Դասախոսն ինքը պետք է փայլի իր քաջիմացությամբ և Դուրյանի ուսումնառության տարիների ուսումնասիրության մասին լայն ցուցումներ տա խճանկարի մեթոդին մասնակցող խմբերի բոլոր անդամներին՝ հստակ մատնանշելով բանասիրությանը հասած ազդեցիկ այն վավերագրերը, հուշերի այն բեկորները, որոնք տևականորեն սրբությամբ ու ամենայն բարեխղճությամբ հավաքել և մեկնել են երևելի գրագետներ Բարսեղ Էքսերճյանն ու Արշակ Չոպանյանը, նշանավոր դուրյանագետ Ալբերտ Շարուրյանը⁶: Ի դեպ, ինչպես ցույց է տալիս մեր սեփական փորձը, ուսանողները դրանք հիմնականում ընթերցում են սիրով: Այդ ընթացքում պետք է ուշադիր լսել նրանց, քննարկել ամենաբնորոշները, ընթերցել տալ, օրինակ, Եղ. Դուրյանի՝ Ա. Չոպանյանին ուղղված նամակի մի հատվածը. «Յուր ուսումն առած է Յուսկյուտարի ճեմարանի մեջ միայն: Ս. Թղյան դասախոսած է վերջին տարիներուն. կ'երևի թե Թղյան բան մը չէ նշմարած նախապես յուր հանճարավոր ուսանողին վրա. բայց Դուրյանի մահվանեն և գործոց հրատարակութենեն վերջ՝ դասարանի մեջ յուր աշակերտաց կըսեր. «Պզտիկ տղա մըն էր ասոնք գրողն, ու դուք գրածը չէք հասկնա կոր, խոշոր մարդիկնէ ր»: Դուրյանի դասախոսներեն է նաև Գաբրիել Ներշապուհ՝ իբրև թվաբան. մի օր ըսեր է Դուրյանի՝ յուր դասախոսության պահուն. «Ձգե՛ սա բանաստեղծական տքնությունները», «Ա՛խ,- պատասխաներ է Դուրյան,- չէ՛ս գիտեր, էֆենտի, շատ կը սիրեմ բանաստեղծությունը»: Յուր դպրոցական կյանքեն բան մը չեմ գիտեր, զայս միայն յուր ընկերներեն լսած եմ, թե է՛ր աշխատասեր և զգոն և թե կանուխ սկսած է ըսել՝ ինչպես ինքն յուր նամակներեն միույն մեջ ալ կակնարկե, թե «Ես երկնքի հիվանդությունն ունիմ»⁷:

Երիտասարդ սերնդին, անշուշտ, կհետաքրքրի՝ ինչպիսին է եղել սիրելի և իրենց հասակակից գրողի դեմքը, դիմագծերը՝ այսօր անչափ կարևոր, մանավանդ՝ ստույգ լուսանկարի բացակայության պայմաններում:

⁶ Տե՛ս **Էքսերճյան Բ.**, Ընդարձակ կենսագրություն բարեհիշատակ Պետրոս Դուրյանի, Կ. Պոլիս, 1893, **Չոպանյան Ա.**, Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, Թիֆլիս, 1894, **Շարուրյան Ալ.**, Պետրոս Դուրյան. կյանքը և գործը, Երևան, 1972, «Պետրոս Դուրյանը վավերագրերում և ժամանակակիցների հիշողություններում», աշխատասիրությամբ Ալ. Շարուրյանի, Երևան, 1982:

⁷ «Պետրոս Դուրյանը վավերագրերում և ժամանակակիցների հիշողություններում», էջ 43-44:

Այստեղ դասախոսը լսարանին պետք է տեղեկացնի Դուրյանի լուսանկարի բացակայության և դրա ստեղծման պատմության մասին⁸:

Դասընթացի հաջորդ մասը, անտարակույս, պետք է նվիրվի Դուրյանի ստեղծագործական ազդակների և գրական երախայրիքների քննությանը: Այդ ընթացքում ևս ուսանողները պետք է ստանան կոնկրետ առաջադրանքներ, բնագրերի ընտրողաբար կատարված ընթերցումներ: Կարելի է ստեղծել համագործակցական խմբեր, որոնց մեջ հնարավորինս հավասար բաշխվեն ուժեղ և միջին կարողություններով ուսանողները: Ասենք, 1-ին խումբն ուսումնասիրելու է Դուրյանի դրամատուրգիան, 2-րդը՝ քնարերգությունը, իսկ երրորդը՝ անհրաժեշտ գուգահեռները Մեծարենցի հետ: Նախապես զգուշացվում է, որ, դասագրքային հայտնի ճշմարտություններից զատ, պետք է առանձնակի ուշադրություն դարձնել նշանավոր գրականագետների ուսումնասիրություններին և այդ ամենից հետո կատարել սեփական եզրահանգումները: Եվ այստեղ ևս բացառված չէ, որ այդ ընթացքում ծնվեն թարմ հայացքն ու նոր տեսակետը. չէ՞ որ արվեստի ճշմարիտ երկերը վերժամանակյա են, իսկ Դուրյանի դեպքում էլ դրանք ուսումնասիրում են հասակակիցները:

Ելնելով դասավանդվող նյութի տրամաբանությունից՝ նպատակահարմար է դասախոսությունը բաժանել 2 մասի՝ ինչ նորություններ էին բերում հայոց գրականություն Դուրյան թատերագիրը և Դուրյան բանաստեղծը:

Նախ՝ ուսանողներին պետք է բացատրել, որ, որքան էլ տարօրինակ թվա, բավական համեստ է Դուրյան թատերագրի կատարած դերը. պատանուն դեռևս խանգարում էր ռոմանտիկական միամիտ հայացքը. նա հայոց դժբախտությունների բուն ակունքը տեսնում էր սոսկ անմիաբանության ու դավաճանության մեջ: Այդտեղից էլ՝ դուրյանական դրամաներում հաճախ առկա ավելորդ ճարտասանությունն ու արկածային տարրերը, բախումների հսպճեպ ու չպատճառաբանված լուծումները, հանկարծահաս մահերը... Հանճարը, սակայն, բոլոր դեպքերում բացառիկ է. անգամ այդ համապատկերում Դուրյանը նոր ուղիներ բացում հայ դրամատուրգիայում: Խոսքը վերաբերում է նրա «Թատրոն կամ Թշվառներ» դրամային. այն առաջիններից էր, որ, ի հակակշիռ պատմահայրենասիրական պիեսների, բերում էր ժամանակակից թեմատիկան, ինչպես հեղինակն է

⁸ Այդ մասին տե՛ս **Մակարյան Ա.**, «Նոճյաց տղայի» առասպելը (Պետրոս Դուրյանի ծննդյան 160-ամյակի առիթով), «Գիտության աշխարհում», հանդես, Երևան, 2011, թիվ 3, էջ 28-34:

գրում իր երկի առաջաբանում, ջանում էր «օրինակ ըլլալ ուրիշ թատերագրաց»՝ պատկերելու «արդի ընտանեկան անցքերը»:

Բայց և այնպես, այս պարագայում ևս պետք է ուշադիր լինել. ճիշտ է, Դուրյանը, հանգամանքների բերումով ծանոթ չլինելով Գ. Սունդուկյանի՝ 1863-ից բեմադրվող վոդևիլներին և Հ. Պարոնյանի արդիական առաջին կատակերգություններին⁹, նրանցից անկախ, թվում է, հանգեց ժամանակակից թեմատիկայի անհրաժեշտության գաղափարին, ասել է թե՛ բացեց հայ դրամատուրգիայի հետագա շրջանն ուղղորդող գլխավոր շավիղը, Բայց և այնպես այս առումով առաջնությունը պատկանում է *Խորեն Գալֆայանին* (Նար-Պեյ. 1832-1892): Վերջինս Թեոդոսիայում 1862-ին առանձին գրքով լույս ընծայեց իր «Ալաֆրանկա» կատակերգությունը¹⁰ դառնալով ժանրի առաջամարտիկն արևմտահայ դրամատուրգիայում: Այս տեսակետից շատ ցանկալի կլինի, եթե ուսանողությանը հանձնարարվի ընթերցել հիրավի արժեքավոր այդ պիեսը, և վերականգնվի պատմական ճշմարտությունը. չէ՞ որ Խորեն Նար-Պեյն ամեննին պատահական մեկը չէր հայ հանրային-քաղաքական, ավելին, հոգևոր-մշակութային կյանքում:

Դուրյանի դրամատուրգիայի ուսումնասիրությունից հետո անհրաժեշտ է սահուն անցում կատարել քնարերգության վերլուծությանը՝ դարձյալ շեշտադրելով կենսական ազդեցիկ պատկերներն ու մոտալուտ վախճանը: Խճանկարի մեթոդով առաջնորդվող ուսուցանողը բնականաբար կարող է բազմաթիվ փոքր հանձնարարություններ տալ ուսանողներին, Բայց և այնպես, մեր կարծիքով, չափազանց տպավորիչ կլինի մի փաստի հատուկ շեշտադրումը, այն է՝ ամենաձանր պահերին անգամ Դուրյանը ցուցաբերում է հոգու զարմանալի արիություն, ինչը ցույց է տալիս, որ կարճատև կյանքի վերջին ամիսներին բարձրացել էր հոգեպես, հասկացել հավերժի խորհուրդը: 1871-ի նոյեմբերին արդեն ստույգ գիտեր, որ ընդմիշտ հեռանում է: Հեռավոր օրերից մեզ է հասել եղբոր՝ Եղ. Դուրյանի «Երազ մը (Մանկության հիշատակ)» վերտառությամբ ոտանավորը, որը պատմում է եղբոր տեսիլի ու կանխազգացման մասին: Փոքրիկ եղբայրը՝ «իբրև անմիտ տըղա, որ կըրակին հետ կը խաղա», չպատկերացնելով, որ մահն իրենց

⁹ Հ. Պարոնյանն իր առաջին կատակերգությունը՝ «Երկու տերով ծառա մը» (1865), չի հավանել և չի տպագրել, իսկ ինչ վերաբերում է «Ատամնաբույժն արևելյան»-ին, թեև այն լույս է ընծայվել 1868-ին, սակայն, ինչպես հավաստում է Հրանտ Ասատուր, հեղինակը տպաքանակը հավաքել է գրախանութներից ու ոչնչացրել: Տե՛ս «Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում», աշխատասիրությամբ Ալ. Մակարյանի, Երևան, 2004, էջ 40:

¹⁰ Տե՛ս **Գալֆայան Խ.**, Ալաֆրանկա. կատակերգութիւն ի հինգ արարուածս, ի Թեոդոսիա, 1862:

արդեն «մոտեն կը խայթե», անկողնին գամված Պետրոսին պատմում է իր տեսած խորհրդանշական երազը.

«Եղբա՛յր, ըսի՛, այս գիշեր ես,
Մեր պարտեզին մեջը, գիտե՛ս,
Սալորիին վըրա տեսա
Չորս պտուղներ հունա հուսա,
Սակայն անոնք չէին սալոր
Կանանչ, կարմիր ու կեսկլոր,
Այլ երկընկեկ էին տանձեր,
Կամ թե այնպես մը ձևացեր՝
Թել կոթերով բյուրեղային
Արծաթափայլ կը շողային.
Անոնցմե մե՛կը ինքնիրեն
Փըրթավ հանկարծ ինկավ վերեն...»:
Հիվանդ Պետեկը տրտմանույշ՝
Մեկնեց երա՛զըս չարագույժ.
«Չորս պտուղ՝ չո՛րս եղբայրներես,
Հողին վըրա ինկնողն եմ ես»¹¹:

Այս ամենից հետո արդեն կարելի է սկսել ազատ ու ազնիվ գրույց «Սկյուտարի սոխակի» պոեզիայի շուրջ՝ յուրաքանչյուր դեպքում ուշադիր լսելով ուսանողի սեփական կարծիքը, մանավանդ որ այն կարող է լինել բավական հավաստի. չէ՞ որ նա խոսում է իր հասակակցի ցաված սրտի ու վիրավոր երագների մասին...

Ալ. Ա. Մակարյան
Պետրոս Դուրյանի կյանքի և ստեղծագործության ուսուցումը բուհում
Ամփոփում

Հողվածը նվիրված է բուհում Պետրոս Դուրյանի կյանքի և ստեղծագործության ուսուցման առանձնահատկությունների քննությանը: Մասնավորապես ընդգծվում է, որ վաղամեռիկ հանճարի ստեղծագործությունը խորքով հասկանալու կարևոր նախապայմաններից է նրա տխուր կյանքի զանազան դրվագների, ինչպես նաև բախտակից բանաստեղծների (Մ. Մեծարենց, Ջ. Լեոպարդի) ապրած դրամաների նմանությունների ու տարբերությունների քաջիմացությունը: Զանց չեն

¹¹ «Պետրոս Դուրյանը վավերագրերում և ժամանակակիցների հիշողություններում», էջ 83:

առնվել նաև քնարգությանը զուգահեռ՝ նամականու և ժամանակակիցների հուշերի մեկնաբանությունները: Այդ տեսակետից հատկապես քննարկվել է համագործակցային ուսուցման ժամանակակից մեթոդներից մեկը՝ խճանկարը, որը լայն հնարավորություններ է տալիս ուսանողներին՝ առավել խորությամբ ուսումնասիրելու Դուրյանի կյանքն ու ստեղծագործությունը:

A. A. Makaryan

Изучение жизни и творчества Петроса Дуряна в вузе

Резюме

Статья посвящена анализу особенностей изучения в вузе жизни и творчества Петроса Дуряна. В частности, указывается, что одним из важных предпосылок понимания творчества гениального поэта является хорошее знание разных эпизодов его печальной жизни, а также сходств и различий в пережитых драмах поэтов с похожей судьбой (М. Метсаренц, Дж. Леопарди). Параллельно с лирикой обращается внимание и на интерпретацию его мемуаров и воспоминаний современников. С этой точки зрения специально обсуждается один из современных методов коллективного обучения – мозаика, позволяющая студентам глубже изучить жизнь и творчество Петроса Дуряна.

A. A. Makaryan

The Teaching Petros Durian's Life and Creativity at the Universities

Summary

The article is devoted to the analysis of peculiarities in teaching Petros Durian's life and creativity at the universities. It particularly underlines that one of the significant preconditions for deeply understanding the creativity of the early deceased genius is the perfect knowledge of various episodes from his sad life, as well as, the similarities and differences of dramatic life of the poets that shared his fate (M. Metsarents, G. Leopardi). Alongside with lyrics the study of comments on epistolary works and memoirs is carried out. From this perspective one of the modern cooperative learning methods, namely, mosaics, which gives wide opportunities for the students to study Durian's life and creativity more deeply is particularly analyzed.

БЕЛЛА ХОДЖУМЯН

кандидат филологических наук, доцент
(зав. кафедрой русского языка ЕГУ)

УДК 37.016:378

ПРИНЦИПЫ ОБУЧЕНИЯ ЯЗЫКУ СПЕЦИАЛЬНОСТИ АРМЯНОЯЗЫЧНЫХ СТУДЕНТОВ-БАКАЛАВРОВ

Բանալի բառեր՝ մասնագիտական լեզու, միջմշակութային հաղորդակցում, բակլավրիատ, ուսումնական ձեռնարկ, տերմինաբանական բառարան, գիտական աշխատանք, ռեֆերատ, կուրսային աշխատանք, ավարտական աշխատանք, արտալսարանային աշխատանք, ուսանողական գիտաժողով, մասնագիտական վիկտորինա:

Key words: language of specialty, intercultural communication, bachelor's degree, textbook, terminological dictionary, scientific work, course work, graduation work, extracurricular activities, student scientific conference, quiz on the specialty.

В наши дни, в эпоху всемирного научного прогресса, развития культуры и образования, особое значение приобретает изучение иностранных языков. Овладение языками решает многие актуальные проблемы современной межкультурной коммуникации, позволяет приобщиться к мировой культуре и литературе.

В этой связи важную роль играет обучение иностранным языкам в рамках вузовской системы бакалавриата. Поддерживая и развивая давнюю связь с культурой и системой образования России, ЕГУ и сегодня не перестает совершенствовать методы обучения русскому языку как иностранному в рамках программы бакалавриата.

Практический курс русского языка в ЕГУ предназначен для студентов всех неспециальных факультетов с армянским языком обучения и рассчитан на два семестра. В частности, по профилю естественных факультетов кафедра русского языка (для естественных факультетов) разработала программу практического курса русского языка для бакалавриата в соответствии с требованиями нового времени [2].

Обучение русскому языку как иностранному на неспециальных факультетах предполагает два основных направления: обучение общелитературному языку и обучение языку специальности. Обучение общелитературному языку проходит с опорой на учебник, построенный по

всем требованиям новейшей методики преподавания русского языка как иностранного [1:471с].

В современной системе вузовского образования особая роль отводится обучению языку специальности, приобретающее особую важность и необходимость при подготовке студентов к будущей специальности. Обучение языку специальности на неспециальных факультетах обеспечивается учебными пособиями и терминологическими словарями по конкретным специальностям. По профилю естественных факультетов, помимо многочисленных российских пособий, соответствующей кафедрой русского языка ЕГУ тщательно разработаны и изданы специальные пособия, прошедшие успешную апробацию на конкретных факультетах [3: 1-91]. Указанные учебные пособия структурно состоят из следующих частей: текст по специальности, словарь, включающий новую лексику текста, предтекстовые задания и задания к тексту. Сам процесс обучения языку специальности основывается на следующей схеме: аудирование – восприятие – воспроизведение, которая и лежит в основе всех наших пособий для студентов естественных факультетов.

Лексика каждого урока включает слова, словосочетания и конструкции, имеющие непосредственное отношение к теме данного урока. Все задания, помещенные в разделе «Предтекстовые задания», рассчитаны на правильное восприятие, закрепление и дальнейшее использование изучаемой лексики. В указанном разделе студентам обычно предлагаются следующие виды заданий:

- подберите однокоренные слова;
- подберите синонимы;
- подберите антонимы;
- продолжите лексический ряд существительных;
- назовите слова, с которыми могут сочетаться данные существительные;
- замените данные словосочетания синонимичными глаголами;
- согласуйте прилагательные с данными существительными;
- подберите определения к данным существительным;
- выделите общий словообразовательный показатель в данных существительных;
- переделайте утвердительные предложения в отрицательные и т.п.

После тщательной отработки предтекстовых заданий студенты переходят к ознакомлению с текстом по специальности. Обязательно проводится чтение текста, основная лексика которого уже знакома студентам

из предтекстовых заданий, что значительно облегчает процесс восприятия самого текста.

Следующим этапом работы является работа с заданиями к тексту. В этом разделе студентам предлагается множество видов заданий, рассчитанных на воспроизведение и дальнейшее использование полученных знаний. Указанный комплекс заданий обычно приводится в конце урока и имеет целью закрепить текст, свободно используя всю предварительно отработанную лексику и терминологию данного урока. Перечислим некоторые виды заданий, обычно включаемых в раздел «Задания к тексту»:

- найдите в тексте конструкции, соответствующие данным схемам;
- сформулируйте основную мысль текста;
- найдите в тексте термины и терминологические выражения, переведите их на армянский язык;
- выпишите из текста определительные словосочетания;
- пользуясь информацией текста, дополните данные предложения;
- расскажите текст, используя данные слова и словосочетания;
- найдите в тексте ответы на данные вопросы;
- составьте план и перескажите текст по этому плану;
- сократите текст без ущерба для основной информации;
- расширьте текст, дополнив его собственной информацией;
- разделите текст на смысловые абзацы и озаглавьте их и т.п.

Особое место на занятиях по обучению языку специальности следует отводить работе с терминами и терминологическими выражениями, четкое знание которых необходимо будущим специалистам. Дело в том, что большинство утвердившихся в языке существующих терминов (по разным специальностям) интернационального происхождения, а некоторые из них имеют свои эквивалентные соответствия в национальных языках (в данном случае в армянском языке). Однако в последние годы наблюдается тенденция «национализации» интернациональных терминов, что вызывает некоторые трудности при их восприятии. На наш взгляд, современному студенту в первую очередь необходимо четко усвоить интернациональные формы терминов, и лишь после этого можно ознакомиться с терминологией, принятой в родном языке. Для обоснования нашего подхода к изучению терминологии можно привести хотя бы тот довод, что знание интернациональных терминов откроет дверь для специалиста нового поколения в международную науку, создаст перспективы для специальной деятельности.

Помимо основного текста, в наших пособиях присутствуют также рубрики типа «Это интересно знать», «Знаете ли вы?», включающие дополнительную информацию по изучаемой теме.

Мы перечислили коротко возможные виды актуальных и эффективных работ по обучению языку специальности, предусмотренные современными пособиями по специальности для студентов естественных факультетов. Однако этим работа по подготовке студентов к будущей специальности не ограничивается.

На практических занятиях по русскому языку в национальных группах не менее важной задачей преподавателя является ознакомление студентов с методами научной работы, привитие им умения писать рефераты, курсовые и выпускные работы, аннотации и т.п.

На уроках проводятся также дискуссии на специальные темы: обсуждаются те или иные точки зрения, положения, высказываются мнения и т.д. Студенты периодически выступают с информацией на конкретные специальные темы, которая потом обсуждается в аудитории.

Помимо практических занятий, в деле подготовки студентов к будущей специальности немаловажную роль играет также внеаудиторная работа: студенческие научные конференции и викторины по специальности. Подобная работа успешно практикуется на естественных факультетах.

Использованная литература

1.Балаян П.Б., Тер-Саркисян Л.А., Ходжумян Б.С. Учебник по русскому языку. Грамматика.Коммуникация.Речь. Ер.:ЕГУ, 2015.

2.Программа практического курса русского языка для естественных факультетов. Ер., 2015.

3.Ходжумян Б.С., Афанасьева Т.А. Русский язык. Пособие для студентов-экологов. Тексты по специальности. Ер.:ЕГУ, 2005.

Բ.Ս.Խոջումյան

Բնագիտական ֆակուլտետների բակալավրիատի հայալեզու ուսանողներին մասնագիտական լեզվի ուսուցանման սկզբունքները Ամփոփում

Հոդվածում ներկայացված են բակալավրիատի հայալեզու ուսանողներին մասնագիտական լեզվի ուսուցանման հիմնական սկզբունքները: Այդ գործընթացը ապահովվում է ուսումնական մասնագիտական ձեռնարկների և տերմինաբանական բառարանների միջոցով: Կարևոր է նաև ուսանողներին ծանոթացնել գիտական աշխատանքի մեթոդների հետ, սովորեցնել գրել ռեֆերատներ, կուրսային և

ավարտական աշխատանքներ, կազմել ամփոփագրեր: Ապագա մասնագետների պատրաստման գործում մեծ դեր է խաղում նաև արտալսարանային աշխատանքը՝ ուսանողական գիտաժողովներ և մասնագիտական վիկտորինաներ:

B. S. Khojumyan

Teaching the language of the specialty of bachelor Armenian – speaking students

Summary

The article is devoted to the problem of teaching the specialty language of bachelor Armenian – speaking students of natural faculties in the Russian language lessons. In order to effectively organize lessons on the specialty The Department of the Russian language (for natural faculties) have been developed special manuals for specific specialties, based on the modern methodology of teaching the language of specialty and saturated with the necessary lexical and grammar assignments and texts on the specialty. Special terminology dictionaries also help to learn the language of the specialty. In the preparation of students for the future specialty plays an important role familiar with the methods of scientific work, as well as extracurricular work.

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

պատմական գիտությունների թեկնածու

gayanemkrtumyan1@gmail.com

ՀՏԴ 37.016:94:008

**«ՀԱՅ-ԱՐԱՐԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. ԽԻԿ համակարգ (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում), մեթոդ, պատմամշակութային առնչություններ, մտազրոհ (մտքերի տարափ), դասախոսություն, Արաբական խալիֆայություն, դասընթացի շրջանակներում, դրամաշրջանառություն, գործնական հմտություններ, պատմական դեր:

Ключевые слова и выражения: Система СВВ (стимуляция – восприятие смысла - взвешивание), метод, историко-культурные соотношения, мозговой штурм (осадки мыслей), лекция, Арабский халифат, в рамках курса, валютный оборот, практические навыки, историческая роль.

Key words and expressions: SPW system (stimulation-perception of sense-weighting), method, historical and cultural relations, brainstorming (sediment of thoughts), lecture, The Arab Caliphate, within the framework of the course, currency turnover, Practical skills, historical role.

«Հայ-արաբական պատմամշակութային առնչություններ» առարկայի դասավանդումը նախատեսված է ԵՊՀ արաբագիտության բաժնի ուսանողների համար: Դասընթացի ուսուցումը կարևորվում է մի շարք հանգամանքներով, նախ և առաջ շոշափվող թեմաների ու հարցադրումների արդիականությամբ. այժմ, երբ միջպետական հարաբերություններ են հաստատվել Հայաստանի Հանրապետության ու արաբական երկրների միջև, էլ ավելի են կարևորվում այդ առնչությունների ունեցած պատմական դերը երկու ժողովուրդների փոխհարաբերությունների մեջ: Այս առարկան նաև միջմշակութային հաղորդակցության կարևոր գործառնություններ է իրականացնում, որի շրջանակներում ներկայացվում է հայ-արաբական հարաբերությունների պատմությունը սկսած հիմնականում VII դարի II կեսից մինչև ուշ միջնադար: Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին ծանոթացնել այն պատմական դարաշրջանին, որտեղ ձևավորվել ու զարգացել են այդ հարաբերությունները, հստակեցնել դրանց զարգացման շրջափուլերը, բաժանելով հետևյալ կետերի. ա) արաբական

արշավանքների շրջանը, մինչև 701թ., երբ Հայաստանը դեռևս պահպանում էր իր ներքին ինքնավարությունը, բ) Հայաստանի վերջնական նվաճումը Օմայյան խալիֆայության կողմից 8-րդ դարի սկզբից, գ) Աբբասյան խալիֆայության տիրապետության հաստատումը Հայաստանում, դ) ազգային-ազգագրական պայքարը Արաբական խալիֆայության դեմ և այլն: Դասընթացի շրջանակներում դրվում են մի շարք խնդիրներ. ա) ուսանողների մոտ զարգացնել հմտություններ վերլուծելու հայ-արաբական առնչությունների վերաբերյալ փաստական նյութեր, օգտագործելով հայկական և մուսուլմանական միջնադարյան աղբյուրները¹, բ) քննադատական մոտեցում ցուցաբերել հայ-արաբական հարաբերությունների վաղ և միջնադարյան շրջանների նկատմամբ, հենվելով արդի հետազոտողների ուսումնասիրությունների վրա², գ) ձևավորել ընդհանրական կարողություններ սահմանելու մշակութային առնչություններ հասկացությունը, որի տակ նկատի են առնվում պատմական, լեզվական շփումները, արաբերենից հայերենին անցած փոխառությունները, որոնք գտնվել են հայ հետազոտողների ուշադրության կենտրոնում³, դ) մտքերի փոխանակման ձևաչափով քննարկումներ անցկացնել, ե) արդիականացնել մոտեցումները մի շարք պատմական հիմնախնդիրների նկատմամբ և այլն: Դասընթացի յուրահատկությունն այն է, որ այն հիմք է հանդիսանում արաբագետների համար առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերված մասնագիտական հմտությունների շնորհիվ վերլուծել արդի շրջանում մուսուլմանական երկրներում ընթացող քաղաքական գործընթացները: Դասընթացի ավարտին ուսանողը ձեռք կբերի հայ-արաբական առնչություններին վերաբերող գիտելիքների իմացություն, կկարողանա դրանք կիրառել մերձավորարևելյան մի շարք քաղաքական վերլուծություններում, կըմբռնի մշակութային երկխոսության կարևորությունը երկու երկրների միջև:

Առարկայի դասավանդման մեթոդներն են հիմնականում աղբյուրագիտական վերլուծությունները, պատմահամեմատական մեթոդը:

¹ Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ՝ Գ.Վ.Աբգարյանի, Երևան, 1979, **Սամուէլ Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յաղագս գիտի ժամանակաց անցելոց, Վաղարշապատ, 1893, **Ղևոնդ**, Պատմություն, Երևան, 1982, **Al-Balazuri**, Futuh al-buldan, Bairut, 1983, **Ibn Jaafar al-Tabari**, Tarikh al-rusul wa al-muluk, vol.I, 1962, vol.II, 1990, vol.III, 1977, Kahira.

² **Դանիելյան Է.**, Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ-առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000, **Դավթյան Հ.**, Հայոց պատմական հնարավորությունները VI-VIII դարերում, Երևան, 2010:

³ **Мкртчян Н.**, Семитские языки и армянский, Ереван, 2005.

Մեծ տեղ են հատկացվում մուսուլմանական միջնադարյան աղբյուրների թարգմանություններին, դրանք համադրելով մուսուլմանական աղբյուրներից կատարված հայերեն թարգմանությունների⁴ և հայկական միջնադարյան աղբյուրների հետ, պատմական հավաստի համատեքստում ներկայացնելու պատմական փաստերը:

Դասընթացի ուսուցման եղանակներն են դասախոսությունները, բանավեճ-քննարկումները, լսարանային ներկայացումները, սեմինարները, հետքննական ստուգումները:

Կարծում ենք՝ «Հայ-արաբական պատմամշակութային առնչությունները» առարկայի ուսուցումը կարելի է կազմակերպել հետևյալ համակարգով՝

ԽԻԿ համակարգ- Խթանման փուլ, Իմաստի ընկալման փուլ, Կշռադատման փուլ: Խթանման փուլի նպատակներն են. 1) ի մի բերել ուսանողների՝ թեմային վերաբերող նախորդ գիտելիքները, 2) խթանել նրանց հետաքրքրությունը, 3) նախապատրաստել նոր գիտելիք ձեռք բերելուն: Իմաստի ընկալման փուլը դասի հիմնական փուլն է, որի ընթացքում իրականացվում է նյութի ուսուցումը: Այս փուլի հիմնախնդիրներն են. 1) ուսանողին հասանելի դարձնել նյութի բովանդակությունը, 2) ուսանողին ներգրավել դասընթացի մեջ, օգնել գտնելու այնպիսի ուղիներ, որոնցով ինքնուրույնաբար կարողանա հետազոտել նյութը:

Այս համակարգի երկու փուլերը կքննարկենք դասընթացի թեմաները ներկայացնելուն զուգահեռաբար, իսկ վերջին փուլին կանդրադառնանք ավելի ուշ: Դասընթացում կարևորվել են հետևյալ թեմաները. Արաբական արշավանքների ու տիրապետության հաստատման շրջանը (7-9-րդ դարեր): Մատնանշվում է, որ 640-ականներին դեպի Հայաստան սկսված արաբական արշավանքների արդյունքում Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու (639-654) և Ասորիքի կուսակալ Մուավիայի (639-661) միջև կնքված դաշնագրով հայերը երեք տարով ազատվում էին հարկեր վճարելուց, նախարարական դասը պահպանում էր իր ներքին ինքնավարությունը, Հայաստանը կարող էր ունենալ տասնհինգ

⁴ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց **Հ.Նալբանդյան**, Երևան, 1965, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, հաւաքեց և թարգմանեց **Բ.Խալաթեանց**, Վիեննա, 1919, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 16. Արաբական աղբյուրներ: Գ.Արաբ մատենագրեր, Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունը՝ **Ա.Տեր-Ղևոնդյանի**, Երևան, 2005:

հազարանոց հեծելազոր և այլն⁵: Ընդգծվում է, որ այս պայմանագիրը մեծ նշանակություն ունեցավ հայ-արաբական ռազմական գործակցության համար⁶: Հայոց իշխանը նաև իրավունք ստացավ իր իշխանությունը տարածելու Վիրքի, Աղվանքի, Մերձկասպյան շրջանների վրա, որոնց սահմաններում 701թ. կազմավորվեց Արմինիա վարչա-քաղաքական միավորը⁷:

Դասավանդվող նյութը հետաքրքիր դարձնելու նպատակով դասախոսն այդ ընթացքում կարող է կիրառել «մտքերի տարափ» մեթոդը՝ ուսանողներն ընդհանրապես ի՞նչ գիտեն Արաբական խալիֆայության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի մասին VIII-IX դարերում, ովքե՞ր էին ղեկավարում այն, ի՞նչ հետևանքներ ունեցավ այդ պայքարը և այլն: Գրեթե բացառված է, որ այդ ընթացքում ուսանողները չհիշեն և չներկայացնեն այդ պատմական դրվագները: Դասախոսը մի քանի հարցադրումով ստուգում է ուսանողների ընդհանուր իմացության աստիճանը, որին հաջորդում է իմաստի ընկալման փուլը: Այս փուլում ամենանպատակահարմարը «դասախոսություն» մեթոդի կիրառումն է: Ուսուցման ժամանակակից մեթոդների բազմազանության մեջ այն գուցե թվում է ավանդական, բայց և այնպես դասախոսությունը այսօր էլ ձևավորվում է նյութի փոխանցման ակտիվ հիմքը, որը հաղորդվող նյութի կենդանի, բանավոր ներկայացումն է դասախոսի կողմից: Ուրիշ խնդիր է, որ դասախոսությունը պետք է ներկայացնել հնարավորինս հետաքրքիր եղանակներով: Օրինակ, թեմային զուգահեռ ներկայացվում են նաև հայոց նախարարների ու կաթողիկոսների անմիջական շփումները արաբ ամիրաների ու խալիֆաների հետ, որի մասին փաստական նյութեր են հաղորդում հայ պատմագիրները⁸:

703թ. Վարդանակերտ ավանի մոտ հայերի տարած հաղթանակից հետո Սահակ Չորափորեցի կաթողիկոսը (677-703) հանձն առավ հանդիպել դեպի Հայաստան արշավող Մուհամմադ իբն Մրվան գորավարին, մեղմելու

⁵ Պատմություն Մեբեոսի, էջ 164:

⁶ **Հովհաննիսյան Ն.**, Արաբական երկրների պատմություն, հատոր I, Երևան, 2003, էջ 82-83:

⁷ Հայ ժողովրդի պատմություն, հատոր III, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, էջ 362:

⁸ Գիրակոս վարդապետի Գանձակեցոյ համառօտ Պատմութիւն, Վենետիկ, 1869, էջ 38, Մեծին Վարդանայ Բարձրբերդցոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1961, էջ 99:

նրա զայրութիւնը, հանձնելու նրան իր նամակը⁹: Պատմական այս դրվագը, որ ներկայացնում է Ղևոնդ պատմիչը, հետագա դարերի պատմագիրների կողմից ձեռք է բերել առասպելախառն, գունեղ գծեր. X դարի պատմիչ Հովհաննէս Դրասխանակերտցին գրում է, որ կաթողիկոսը ժամանելով Հարրան և զգալով մոտալուտ մահը, խնդրում է իր ձեռքին դնել նամակը: Եվ երբ արաբ զորավարը հասավ Հարրան, կաթողիկոսը արդեն վախճանվել էր, սկայն հոգւոյ ազդումէն զձեռն սրբոյն, որ անշնչութեամբ էր խափանեալ ... շարժեաց ընդդէմ ոստիկանին ի պատճառս աղերսանաց¹⁰: Չորավարը ծնկաչոքելով կաթողիկոսի մարմնի մոտ, բռնում է նրա ձեռքը և ասում, որ ճանաչել է կաթողիկոսի իմաստությունը նրա նամակից, որը գրված էր արաբերենով և «ի ոճի վեհութեան հետ արաբագիտութեան առաւելութիւնն ալ կը հաստատէ, քանի որ Սահակ իր ձեռքով գրեց»¹¹: Ահա այս «շեղումը», միջնադարյան պատմագրի պատմությունից կատարված փոքր մեջբերումը, կարծում ենք, կլիցքաթափվի ուսանողների հոգնածությունը:

Դասընթացի կարևոր թեմաներից է նաև արաբական ամիրայությունների հաստատումը Հայաստանում, որն ուներ ռազմական և քաղաքական դրդապատճառներ և կօգնէր արաբներին այստեղից շարունակելու պայքարը Բյուզանդիայի դէմ: Մատնանշվում է, որ արաբական ցեղերի հաստատմանը Հայաստանում նպաստեց նաև հայ նախարարական դասի զանգվածային արտագաղթը երկրից¹²:

Հետագայում Բագրատունի տոհմի իշխանները պայքար սկսեցին արաբական ամիրայությունների դէմ: Հատկապես բացասական դեր խաղաց Դվինի ամիրայությունը, որը երկար ժամանակ հենարան էր Ատրպատականի Սաջյան կառավարիչների համար¹³: Ամիրայությունները էլ ավելի խորացրին այն մասնատվածությունը, որը հատուկ էր Բագրատունյաց թագավորությանը: Ուսանողներին թեմայի վերաբերյալ գրականության ցանկը տալուց հետո նրանք են ներկայացնում արաբական

⁹ Պատմութիւն Ղևոնդեաց մեծի վարդապետի հայոց, Սանկտ Պետերբուրգ, 1887, էջ 30:

¹⁰ Հովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 97:

¹¹ **Օրմանեան Մ.**, Ազգապատում: Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկզբէն մինչև մեր օրերը, հատոր Ա., մայր աթոռ Ս. Էջմիածին, 2001, պոստակ 917:

¹² **Ալպոյաճյան Ա.**, Պատմութիւն հայ գաղթականության, Հ.Ա., Կահիրե, 1941, էջ 80-89:

¹³ **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 249:

ամիրայությունների խարդավանքների պատճառով Բագրատունիներից առանձնացած հայկական իշխանությունները, որոնց վերաբերյալ կա հարուստ գրականություն¹⁴:

Դասընթացում կարևորվել է նաև Ֆաթիմյան խալիֆայության մեջ հայազգի նախարարների խաղացած մեծ դերը, որոնց գործունեությունը բարձր է գնահատվել Ֆաթիմյան խալիֆաների կողմից: Մատնանշվում է, որ Ֆաթիմյան պետության մեջ հայերի զբաղեցրած նման դիրքը պայմանավորված էր Եգիպտոսում տիրող անկայուն իրավիճակով, երբ հայազգի վեզիրները կարգ ու կանոն հաստատելու համար երկրում իրենց ձեռքն էին վերցրել երկրի փաստական իշխանությունը: Ներկայացվում է հայազգի վեզիրների գործունեությունը գործունեությունը Եգիպտոսում¹⁵ և նշվում, որ 1073-1132թթ. վեզիրությունը գրեթե միշտ հայերի ձեռքում էր: Եվ որպեսզի ուսանողները չգտնվեն պասիվ ուկնդրողի դերում, դասախոսն ընդհատում է դասը, նորից հարցեր է ուղղում լսարանին նախորդ նյութի վերաբերյալ, ի՞նչ գործունեություն են վարել Եգիպտոսում հայազգի վեզիրները Բադր ալ-Ջամալին, Աֆդալ Շահնշահը, Վահրամ Պահլավունին¹⁶ և այլն:

Դասընթացում ընդգրկված է այնպիսի կարևոր թեմա, ինչպիսին է Կիլիկիայի հայկական թագավորության գոյամարտը ընդդեմ Մամլուքյան սուլթանության 1250-1375թթ.: Հետազոտողները հայ-մամլուքյան հարաբերությունների պատմությունը բաժանում են մի քանի փուլերի. Մամլուքյան սուլթանության ստեղծումը, որից հետո այն հակամարտությունների մեջ մտավ Կիլիկյան Հայաստանի հետ մոնղոլական պետության նախաձեռնությամբ և մասնակցությամբ¹⁷, իսկ արդեն XIII դարի կեսերին Կիլիկիան հայտնվեց երկու հզոր տերությունների հակասությունների կենտրոնում: Նշվում է, որ 1254թ. կնքվեց հայ-մոնղոլական համաձայնագիրը¹⁸, որն ապահովում էր Կիլիկյան Հայաստանի անվտանգությունը: Այս պայմանագրի մասին հայ

¹⁴ Հայ ժողովրդի պատմություն, հատոր III, ՀՍՄՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1976, էջ 75-126, Թովմայի վրդ. Արծրունույ Պատմութիւն տանն Արծունեաց, Տփղիս, 1917, Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երուսաղէմ, 1867:

¹⁵ **Սուրեան Գ.**, Ականաւոր հայեր Եգիպտոսին մեջ, Գահիրե, 1947/ Ibn al-Athir, al-Kamil fi al-Tarikh, v. VIII al-Kahira, 1935, Աղազարմ Մ. Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրա, Գահիրե, 1911:

¹⁶ **Աբուսահլ Հայ**, Պատմութիւն եկեղեցեաց և վանօրէիցն Եգիպտոսի, Վենետիկ, 1933, էջ 163-167:

¹⁷ **Микаелян К. Т.**, История Киликийского армянского государства, Ереван, 1952, с. 75.

¹⁸ Հեթում պատմիչ թարարաց, թարգմ. Ավգերյանի, Վենետիկ, 1842, էջ 43:

պատմագրության մեջ կան տարբեր կարծիքներ, որ այդ համաձայնագրով Կիլիկիան մտել է մոնղոլական պետության մեջ՝ պահպանելով իր ներքին ինքնավարությունը¹⁹: Թեմայի վերաբերյալ ուսանողներին հանձնարարվում է գրականություն²⁰, որից հետո հարց ու պատասխանի միջոցով նաև համապատասխան քարտեզների առկայությամբ ներկայացվում է Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին ու ներքին դրությունը 13-րդ դարի վերջին, 14-րդ դարի սկզբներին: Դասընթացի շրջանակում առանձին ուշադրություն է դարձվում նաև հայկական գաղթօջախների կազմավորման պատմությանը Մերձավոր Արևելքի երկրներում:

Մատնանշվում են արտագաղթի հիմնական պատճառները, հայոց պետականության անկումը, օտար նվաճողների ծանր լուծը, կեղեքումները, հարկերի ծանրությունը և այլն: Այսպիսի պատճառ էր նաև օտար տարրի ներթափանցումը Հայաստանում, 8-րդ դարում արդեն արաբական ցեղերը հաստատվել էին Հայստանում, իսկ սելջուկյան արշավանքներից հետո երկրում բնակվում էին քրդեր, սելջուկ-թուրքեր: Հայ բնակչությունը հիմնականում հաստատվեց Միջագետքում, Ասորիքում, Երուսաղեմում, Իրանում, որի մասին հաղորդում են միջնադարյան մի շարք աղբյուրներ²¹: Նշվում է, որ արդեն X-XI դարերում Միջագետքում և Ասորիքում կային հայկական իշխանություններ: Ուսանողներին գրականության ցանկը հանձնարարելուց հետո վերջիններս են ներկայացնում մանրամասն դրվագներ X դարում Սամոսատ, Ուռհայ և այլ քաղաքներ գաղթած հայ բնակչության գործունեության մասին, որոնք ոչ միայն կառավարում էին այդ քաղաքները, այլ նաև հոգևորականներ էին, հայտնի արհեստավորներ և առևտրականներ²²: Պարզաբանվում է հայ բնակչության ունեցած դերը Եգիպտոսում Այյուբյանների պետության (1169-1252) և Մամլուքյան սուլթանության (1250-1517) օրոք²³:

Դասընթացում մեծ կարևորություն է տրվել արաբական դրամների շրջանառության պատմությունը միջնադարյան Հայաստանում:

¹⁹ **Գալստյան Ա.**, Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից, Լենինական, 1945, էջ 52-58:

²⁰ **Տեր-Ղևոնդյան Վ.**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի երկրները, Երևան, 1994, Հայ ժողովրդի պատմություն, հատոր III, Երևան, 1976:

²¹ **Ալպոյաճյան Ա.**, Պատմութիւն հայ գաղթականության, հ. Բ., Գահիրե, 1955, էջ 511-512, Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 217-218:

²² **Առաքելյան Բ.**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հատոր 1, Երևան, 1958, էջ 107:

²³ **Ալպոյաճյան Ա.**, ԱՄՀ Եգիպտոսի նահանգը և հայերը, Գահիրե, 1960, էջ 36-40:

Հիշատակվում է, որ դեռևս VII դարում Արաբական խալիֆայությունում թողարկվեցին սասանյան և բյուզանդական դրամների ընդօրինակությամբ առաջին արաբական դրամները, որոնք հայտնի են այսպես կոչված արաբ-սասանյան և արաբ-բյուզանդական դրամներ անուններով: Իսկ արդեն Խալիֆայության համար միասնական դրամական սիստեմի ստեղծումն իրականացվեց Աբդ ալ-Մալիք խալիֆայի (685-705) դրամական նոր ռեֆորմով 696-697թթ²⁴: Հստակեցվում է, որ Հայաստանում աբբասյան դրամների թողարկման կենտրոնը Դվինն էր, դրամներ էին հատվում նաև Աղվանքում, Հյուսիսային Միջագետքում, հիմնականում պղնձից, ոսկուց և արծաթից: Ուսանողների համար հետաքրքիր կլինի իմանալ այն փաստը, որ եթե սկզբում դրամների վրա գրվում էր իսլամի կրոնական բանաձևը, ապա արդեն VIII դարի 2-րդ կեսից արձանագրությունները դառնում են ավելի ընդարձակ, որոնք նոր տվյալներ են ներկայացնում Խալիֆայության քաղաքական պատմության մասին:

Անհրաժեշտ է շեշտել, որ IX դարի 30-ական թվականներին սկսած Խալիֆայության քայքայման պրոցեսը առաջ բերեց նոր պահանջներ դրամների վրա ներկայացվող արձանագրությունների համար, որոնք կրճատվեցին: Թեմայի հետ կապված յուրաքանչյուր շրջափուլ բնորոշելուց հետո հնչեցվում է եզրահանգում՝ Հայաստանը արաբական տիրապետության օրոք այս դրամներով մեծ չափով իրականացրել է դրամական լայն շրջանառություն հարևան երկրների՝ Աղվանքի, Վիրքի, Միրիայի, Իրաքի քաղաքների հետ:

Դասընթացում քննարկվում է նաև արաբական վիմագիր արձանագրությունների առկայությունը Հայաստանում, որոնց թիվը 500-ից ավելի է²⁵: Այն վկայում է արաբերենի յուրօրինակ գործառնայթի մասին Հայաստանում, քանի որ արաբերենը օգտագործում էին ոչ միայն արաբ կառավարիչները, այլև Հայոց իշխանը, Բագրատունիների արքունիքը: Արաբերեն արձանագրությունները հանդիպում են ճարտարապետական հուշարձանների, գերեզմանաքարերի վրա և մեծ արժեք են ներկայացնում ոչ միայն հայկական, այլև արաբ-մուսուլմանական մշակույթի համար: Ուսանողների համար ուսանելի է իմանալ, որ մեզ հասած ամենահին արաբերեն արձանագրությունները թվագրվում են VIII դարի 2-րդ կեսով (Զվարթնոց), երբ Հայաստանը Արաբական խալիֆայության կազմում էր: Շեշտվում է, որ արձանագրությունների թիվը սկսած XI դարից ավելանում է, պայմանավորված քաղաքական կյանքի մի շարք հանգամանքներով, երբ

²⁴ Մուշեղյան Խ., Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երևան, 1983, էջ 24:

²⁵ Хачатрян А., Корпус арабских надписей Армении, 8-16-го.в.в., Ереван, 1987, с. 14:

Հայաստան ներխուժեցին թուրքական ցեղերը: Այս շրջանի (XIII-XIV դարերի) արաբերեն արձանագրությունները արտացոլում են մուսուլման (թուրք, մոնղոլ) էմիրների կառավարության շրջանը, որոնցով կարելի է ծանոթանալ նրանց տոհմաբանության պատմությանը: Հարկ է փաստել, որ այդ արձանագրությունները թույլ են տալիս ուսումնասիրելու նաև արաբերեն ձեռագրի զարգացման ընթացքը: Որոշ ձեռագրեր մշակվել են հայ վարպետների կողմից, որոնք ձևավորվել են հասարակական-մշակութային հաստատությունները: Դասընթացում դիտարկվում է նաև «Սասնա ծռեր» էպոսը որպես հայ-արաբական հարաբերությունների արտացոլում: Շեշտվում է, որ էպոսի հիմքում ընկած են պատմական դեպքեր և դեմքեր: Էպոսը արտացոլում է հայ ժողովրդի հերոսական պայքարը օտար նվաճողների դեմ²⁶: Էպոսը մեզ է հասել բանավոր: 1873թ. այն գրի է առել Գ.Սրվանձտյանը և 1874թ. հրատարակել իր «Գրոց բրոց» հայտնի ժողովածուի մեջ: Էպոսի գլխավոր կերպարներում խտացված ձևով հանդես է գալիս ժողովուրդը: Կիրառվում է «մտքերի տարափ» մեթոդը. ի՞նչ մշակումների է ենթարկվել հայկական էպոսը, քանի՞ ճյուղից է բաղկացած, ի՞նչ պատմական դեպքեր ու դեմքեր են հիշատակվում էպոսում, ո՞ր դարերի իրադարձություններ են արտացոլված էպոսում և այլն: Ուսանողները, բնականաբար, մեծ ակտիվությամբ և էնտուզիազմով կներկայացնեն վերոհիշյալ պատմական դրվագները, անգամ անգիր կարտասանեն էպոսից հատվածներ:

Կշռադատման փուլ

Սա ամբողջ դասընթացի բոլոր քայլերի, գործողությունների ու եզրակացությունների ամփոփումն է: Դասախոսը օգնում է, որ ուսանողները հանրագումարի բերեն իրենց գիտելիքները, գատորոշեն հիմնականն ու երկրորդականը, էական հասկացությունները և ամրակայեն հիշողության մեջ: Դասախոսը լսարանին է ուղղում ամբողջ դասընթացի վերաբերյալ ամփոփիչ հարցերը և վերջում ինքն է ամփոփում դրանց պատասխանները:

Գ.Մկրտումյան

**«Հայ-արաբական պատմամշակութային առնչություններ» առարկայի
դասավանդման մեթոդները
Ամփոփում**

²⁶ Աբեղյան Մ., Երկեր, հ., Գ., Երևան, 1968, «Սասունցի Դավիթ»՝ հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961:

Հոդվածը նվիրված է «Հայ-արաբական պատմամշակութային առնչություններ» առարկայի ուսումնասիրության մեթոդիկային: Մենք կարծում ենք, որ դասընթացը դյուրին ու գրավիչ մատուցելու համար նպատակահարմար է կիրառել ժամանակակից մեթոդներ, որոնցից են ԽԻԿ համակարգը (խթանում-իմաստի ընկալում-կշռադատում), մտազրոհը (մտքերի տարափ) և դասսխոսությունը: Հարցի պարզաբանումն իրականացվել է մի շարք հայ-արաբական հետաքրքիր թեմաների ուսումնասիրության օրինակով:

Г. Мкртумян

Методы обучения предмета “Армяно-арабские историко-культурные соотношения”

Резюме

Статья посвящена методике обучения предмета “Армяно-арабские историко-культурные соотношения”. Мы считаем, что для легкого и привлекательного предоставления курса целесообразно применять современные методы, как система СВВ (стимуляция – восприятие смысла - взвешивание), мозговой штурм (осадок мыслей) и лекция. Прояснение вопроса выполняется на примере изучения нескольких интересных армяно-арабских тем.

G. Mkrtumyan

Methods of teaching the subject "Armenian-Arabic historical and cultural relations"

Summary

The article is devoted to the method of teaching the subject "Armenian-Arabic historical and cultural relations". We believe that for easy and attractive provision of the course, it is advisable to apply modern methods, such as the SPW system (stimulation-perception of sense-weighting), brainstorming (sediment of thoughts) and lecture. The problem is clarified by examining several interesting Armenian-Arabic themes.

АННА МУРАДЯН
преподаватель ЕГУ
УДК 37.016:811.161.1

**ИЗУЧЕНИЕ СУФФИКСОВ АБСТРАКТНЫХ СУЩЕСТВИТЕЛЬНЫХ В
СОПОСТАВЛЕНИИ С АРМЯНСКИМИ ЭКВИВАЛЕНТАМИ НА УРОКАХ
РУССКОГО ЯЗЫКА**

Բանալի բառեր և արտահայտություններ. բառակազմություն, վերացական գոյականներ, բայական հիմք, ածականական հիմք, վերջածանց, բառ, նախնական ձև, գործողության անուններ, հատկանշի անուններ, հավաքական գոյականներ, վարժությունների համակարգ, ընկալում, վերարտադրում, մանրատեքստ:

Key words and expressions: word formation, abstract nouns, verbal nouns, adjective nouns, suffix, word, source form, derivational base, action names, property names, collective nouns, job system, perception, reproduction, microtext.

При изучении словообразования на практических занятиях по русскому языку на неспециальных факультетах особый интерес представляет группа отглагольных и отадъективных существительных. В целях достижения эффективного результата при обучении мы используем сопоставительный метод интерпретации. На первом этапе работы с выделенной группой существительных прежде всего необходимо провести классификацию по словообразовательным суффиксам. Понятно, что в классификации должны найти отражение наиболее употребительные суффиксы отглагольных и отадъективных существительных. Следующим шагом должен быть подбор к выделенным суффиксам армянских эквивалентов. В дальнейшем полезно будет обобщить значения, привносимые в слова соответствующими суффиксами, и сравнить эти значения в русском и армянском языках. После проведения досконального словообразовательного анализа студентам следует предложить разные типы заданий на данную тему с целью укрепления полученных знаний и дальнейшего их воспроизводства.

Мы разработали классификацию суффиксов отглагольных и отадъективных существительных, включающую следующие группы:

1. Суффиксы *-ние, -ение, -тие, -ие, -ание*.

Существительные, включающие выделенные суффиксы, продуцируются в основном от непостсуффиксальных глаголов. Типичными образующими являются суффиксальные, префиксальные, префиксально-суффиксальные и простые основы. В армянском языке указанным суффиксам соответствуют суффиксы *-նրթյուն*, *-ու*. Сравним: *сравнивать – сравнение* (*համեմատել – համեմատություն*), *молчать – молчание* (*լռել – լռություն*), *ждать – ожидание* (*սպասել – սպասում*), *решать – решение* (*լուծել – լուծում*).

2. Лексемы на *-ка*, *-овка*, *-ожка* в структурном отношении более далеки от глагола, чем имена на *-ние*. Образуются они преимущественно от префиксальных и простых глагольных форм. Круг исходных форм ограничен глаголами, субстантивами, адъективами. Широта словообразовательных связей морфа *-ка*, создаваемая свободным присоединением его практически к любой глагольной основе за счет опущения собственно глагольных морфов, вместе с компактностью формы данных имен делает эти лексемы естественными конкурентами дериватов на *-ние*.

Например: *улыбаться – улыбка*, *находить – находка*, *усмехаться – усмешка*.

В армянском языке выделенному русскому суффиксу соответствуют суффикс *-ու* (*մտքրել – մտքրում*) и нулевой словообразовательный показатель (*ժպտիլ – ժպիտ*).

3. При образовании имен с другими морфами происходит по меньшей мере отсечение глагольных финалей, часто влекущее за собой по ряду морфонологических причин чередование конечной основы фонемы, осложняющееся в некоторых случаях изменением корневых гласных. Например: *победить – победа* (*հաղթել – հաղթանակ*), *бороться – борьба* (*սիսրհարել – սիսրհար*), *верить – вера* (*հավատիլ – հավատարմություն*), *бредить – бред* (*զրնայել – զրնայում*), *встретиться – встреча* (*հանդիպել – հանդիպում*) и т.д.

4. Данную группу составляют имена качества на *-ость*, *-изна*, *-ота*, которым в армянском языке соответствуют существительные, включающие суффикс *-նրթյուն*: *мрачность* (*մթայություն*), *нежность* (*նրթյուն*), *близна* (*ճերմակություն*), *теплота* (*ջերմություն*). Рассмотрим примеры из художественных текстов, восстанавливая производящие основы данных существительных.

Лицо его было так мрачно, как пожелтевшая верба (Чехов А. Он понял!) → *Мрачность его лица напоминала пожелтевшую вербу*.

Сравним с армянским: *մթայ – մթայություն*:

Руки царя были нежны, белы, теплы, как у женщины (Куприн А. Суламифь) → Нежность, белизна, теплота рук царя напоминали женские руки.

Сравним с армянским: *նուրբ – նրբություն, ճերմակ – ճերմակություն, ջերմ – ջերմություն:*

В этих предложениях можно заметить, что непосредственно называя предмет, предложение лишается конкретно-предметного значения. Преобразуясь в предложение, анализируемые существительные из названия предмета становятся названием его свойств.

При прямом отнесении к денотату они теряют предметность, и их уже нельзя считать знаковыми заместителями предметов, вещей, явлений.

5. Группа собирательных имен на *-ство*, армянские эквиваленты которых оформляются преимущественно с помощью суффикса *-ություն*. Сравним, например: *беспокоиться – беспокойство (անհանգստանալ – անհանգստություն)*, *любопытный – любопытство*

6. (*հեղափոխիչ – հեղափոխիչություն*), *руководить – руководство (ղեկավարել – ղեկավարում)* и т.д.

Выполнение разработанных заданий по теме поможет студентам закрепить изученный материал. По указанной теме можно предложить большое разнообразие заданий, но в рамках данной статьи мы ограничимся представлением лишь некоторых из них. Практика изучения словообразования на неспециальных факультетах, в частности, словообразования отглагольных и отадъективных существительных, позволяет выделить в качестве наиболее эффективных следующие виды заданий:

1. С помощью соответствующих суффиксов образуйте существительные от данных глаголов и прилагательных: *читать, разговаривать, управлять, доказывать, добрый, честный, мужественный, густой, терпеть, страдать.*

2. Данные словосочетания измените по образцу: *изучать существительные – изучение существительных.*

Читать текст, любить музыку, образовать глагол, помогать другу, объединять силы, выполнять задание, использовать образец, ждать новостей, восхищаться красотой, изменить заглавие.

3. Составьте словосочетания, используя данные отглагольные существительные. Определите падеж управляемых слов: *выполнение (чего?) , решение (чего?), получение (чего?), управление (чем?), руководство(чем?) ,*

падение (чего? кого?), закрытие (чего?), прощание (с чем? с кем?), внушение (чего?), чтение(чего?), распределение (чего?), выращивание (чего?).

4. К данным существительным подберите подходящие определения. Определите род полученных словосочетаний: *глупость, белизна, смелость, доброта, новость, злость, густота, желтизна, грубость.*

5. Восстановите производящие основы данных существительных: *мужество, звонкость, преданность, крутизна, смелость, глубина, красота, присутствие, ожидание, расцветание, жужжание, удаление, деление, получение, предложение.*

6. Допишите второе предложение, вставив вместо пропуска соответствующее существительное, образованное от глагола (или прилагательного) предыдущего предложения.

Образец: Он **ждал** их. Это было тяжелое и мучительное

7. Данные словосочетания переведите на армянский язык. Обратите внимание на суффиксы отглагольных и отадективных существительных: *появление интервью, выполнение обещания, аристократическая бледность, просьба друга, душевное спокойствие, молчание матери, ослепительная белизна, безжалостная жестокость, посещение музея, холодное равнодушие, приятная свежесть, улыбка ребенка, просьба друга, жалоба больного, лай собаки, плач ребенка, беспокойство родителей.*

8. Составьте связный микротекст, опираясь на образец, предложенный в задании № 6.

Использованная литература

1. Вараксин Л.А. О типах словообразовательных значений// От текста к контексту. Вып.4. Ишим-Белово, 2004, с.43-48.
2. Коряковцева Е.И. Имена действия в русском языке. М., 1998.
3. Нильсон Барбо. Девербативы и коммуникативная организация текста. М.:Эдиториал УРСС, 2002, с.199-210.

Ա.Հ. Մուրադյան

Վերացական գոյականների վերջածանցների ուսումնասիրումը հայերեն համարժեքների համադրությամբ ուսաց լեզվի դասերին Ամփոփում

Հոդվածը նվիրված է ոչ մասնագիտական ֆակուլտետներում ուսաց լեզվի բառակազմության դասավանդմանը: Մասնավորապես՝

առանձնացրել ենք բայսահիմքից և ածականի հիմքից կազմված գոյականների խումբը: Հոդվածում առաջարկվում է նշված խմբի գոյականները ուսումնասիրել զուգադրական մեկնաբանության մեթոդով: Կատարվում է գոյականների դասակարգում ըստ վերջածանցների, որից հետո նրանց զուգադրումը հայերեն համարժեքների հետ: Հոդվածում ներկայացվում են նաև որոշ տեսակի վարժություններ, որոնք կնպաստեն ստացած գիտելիքների ամրապնդմանը և հետագա վերարտադրմանը:

A.H. Muradyan

Studying the suffixes of abstract nouns in comparison with Armenian equivalents in Russian language lessons

Summary

The article is devoted to the study of word formation in Russian language lessons at non-specialized faculties. In particular, we chose a group of verbal and octave subjective nouns. A comparative method is proposed for interpreting the word formation of the selected group of nouns. We do the classification of these nouns according to derivational suffixes and selection of Armenian equivalents. The article also offers some types of assignments on the topic under study, which will help to strengthen and further reproduce the knowledge gained.

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՑԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության
տեսության և պատմության ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 37.016:2

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ
ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ՀՈԳԵՎՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Բանալի բառեր և արտահայտություններ. ընտանեկան դաստիարակություն, կրոն, Աստվածաշունչ, հոգևոր, աշխարհիկ, արժեքներ:

Ключевые слова и выражения: семейное воспитание, религия, Библия, духовное, мирское, ценности.

Key words and expressions: family upbringing, religion, Bible, spiritual, secular, values.

Կրոնը ծնվում, զարգանում ու ձևավորվում է ժողովրդական մշակույթի բազմադարյան շերտերում: Որպես հասարակական գիտակցության ձև՝ այն պայմանավորում է ծնունդ տվող հասարակության և այդ հասարակության հետ փոխազդվող այլ հասարակությունների զարգացման ընթացքը: Կրոնական գաղափարների քարոզչությունն ուղղված է հավատացյալի մեջ որոշակի աշխարհայացքի ձևավորմանը: Ծնվելով որևէ էթնոսի ընդերքում՝ այն կարող է իր դաստիարակչական համակարգի շնորհիվ ձեռք բերել համաժողովրդական, համազգային և համամարդկային բնույթ: Կրոնական դաստիարակությունն ունի պատմական բնույթ: Այն իր զարգացման ընթացքում նպաստել է կրոնական ենթամշակույթի՝ հոգևոր գրականության և արվեստի առաջացմանը: Հոգևոր գրականությունը ներառում է Սուրբ գրքերի ամբողջությունը՝ որպես Աստծո խոսք՝ ուղղված անհատին ու խմբին, և դրանից բխող գրական, փիլիսոփայական, մեկնողական, քարոզչական նյութերը:

Համաշխարհային կրոններից մեկի՝ քրիստոնեության համար նմանօրինակ սուրբ գիրք է Աստվածաշունչը: Նրանում պատմվում է առաջին ընտանիքի առաջացման մասին, նախանշվում են տղամարդու և կնոջ միջև ցանկալի փոխհարաբերություններն ըստ աստվածային պատվիրանների: «... Քրիստոնեական ընտանիքի պատմությունն իր սկզբնավորումն առնում է Ծննդոց գրքից՝ Ադամի և Եվայի արարման

պատմությունից»¹: Ընտանիքը՝ որպես աստվածաստեղծ կառույց, գերակա իրողություն է սուրբգրային տեքստերում: Աստվածաստեղծ մարդիկ՝ Ադամն ու Եվան, բարու և չարի գիտության պտուղը ճաշակելուց հետո, միմյանց լրացնելով, Երկրի վրա պայքարում են իրենց զավակների գոյությունն ու հետագա սերունդների կենսագործունեությունն ապահովելու համար: Աստված իր պատկերով ստեղծած մարդկանց՝ «արու և էգ», պատվիրում է ոչ միայն բազմանալ, այլև տնօրինել բնությունը²: Ընտանեկան կարևոր արժեք է համարվում ամուսնական հավատարմությունը: Հին Կտակարանում Նաթան մարգարեն Դավիթ թագավորին, և Նոր Կտակարանում Հովհաննես Մկրտիչը Հերովդեսին քարոզում են հարգել ընտանեկան ավանդույթն ու չպղծել ընտանեկան հարաբերությունները: Պողոս առաքյալի թղթերում կարևորվում է ամուսինների փոխադարձ սերն ու հարգանքը. «Իրար հնազանդ եղեք...: Կանայք, հնազանդեցեք ձեր մարդկանցը ինչպես Տիրոջը: ...Մարդիկ, սիրեցեք ձեր կանանցը, ինչպես Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն եւ իր անձը մատնեց նորա համար»³: Սողոմոնի առակներից մի քանիսում արտացոլված են ամուսինների փոխհարաբերություններով պայմանավորված իրողությունները, օրինակ՝ «Կնիկների իմաստունը շինում է իր տունը, բայց յիմարը իր ձեռքովը քանդում է նորան»⁴:

Մեռային կյանքի մշակույթի հարցերին անդրադարձ կա, մասնավորապես, Երկրորդ Օրինացի ԻԲ գլուխում⁵: Առակների գրքի «Շնութիւնից գգուշացնող խրատներ» գլխում կարևորվում է բարոյական վարքագիծը՝ հիշեցնելով, որ հարկ է լսել ուսուցիչների, դաստիարակների և ծնողների խրատը. «Եվ ինչու՞ համար, որդեակս, օտարի սիրովն գմայլիս, եւ օտար կնկյա ծոցը գրկես»⁶: Առանցքային նշանակություն ունի Քրիստոսի «Լեռան քարոզում» առկա անդրադարձը ընտանեկան բարոյական

¹ «Եկեղեցի և ընտանեկան արժեքներ», էլ. հասցե՝ http://www.roundtableact.am/library/277612236_ART%20discussion%208%20Church&Family.pdf

² Աստուածաշունչ, Լոնտոն, Աստուածաշունչի բրիտանական եւ արտաքին ընկերություն, 1959, -1424 էջ, էջ 2

³ Նույն տեղը, էջ 1336

⁴ Նույն տեղը, էջ 751

⁵ Նույն տեղը, էջ 239

⁶ Նույն տեղը, էջ 743

արժեքների պահպանմանը. «Ամեն ով որ մի կնկյալ վերայ մտիկ տայ նորան ցանկանալու համար, նա արդեն շնացաւ նորա հետ իր սրտի մէջ»⁷:

Քրիստոնեական գրականությունը մերժում է մարդկանց անբնական սեռային բնույթի գործողությունները, հարաբերություններն ու հիվանդագին բարքերը: Մեղսալից Սողոմ և Գումոր քաղաքների հիմնահատակ ավերումը խորհրդանշում է այդ քաղաքներում ապրող մարդկանց սեռասոցիալական արժեքների հիմնարար մերժումը⁸:

Հոգևոր գրականության մեջ կարևորվում է մարդու որդեծնության կարողությունը, և միաժամանակ նրան պատվիրվում է երեխաներին դաստիարակել աստվածային պատվիրանների համաձայն: Շարադրվում են ծնողների և երեխաների պարտականությունները. «Որդի՛ք, հնազանդ եղէք ձեր ծնողներին Տէրով. Եւ հայրէ՛ք, մի՛ բարկացնէք ձեր որդկանցը. այլ մեծացրէ՛ք նորանց խրատով եւ Տիրոջ ուսմունքովը»⁹: Հարգալիք վերաբերմունք է պահանջվում ծնողի նկատմամբ, օրինակ՝ այն դրվագում, որում պատմվում է հարբած Նոյի և նրա որդիների հանդես բերած վարքագծի մասին¹⁰: Կարևորվում են ծնողների աստվածահաճո կենսակերպը, գործելակերպը, քանի որ դրանք, որպես ավանդույթ, որդիները պետք է ժառանգեն ծնողներից. «...եւ պահես նորա ամեն կանոններն ու պատուիրանքները՝ որ ես քեզ պատուիրում եմ՝ թէ դու, թէ քո որդին եւ քո որդիի որդին, քո կեանքի բոլոր օրերումը, որ քո օրերը երկար լինեն»¹¹:

Մարդու և հասարակության զարգացումը, առաջընթացը պայմանավորվում են Աստծո հանդեպ ունեցած սիրով և նրա պատգամներին նվիրվածությամբ. «...ձեզ պատուիրած բոլոր ճանապարհներովը գնացէք, որպէս զի ապրէք, եւ ձեզ համար բարի լինի, եւ ձեր ժառանգելու երկրումը ձեր կեանքի օրերը երկար լինեն»¹²: Այս առումով կարևորվում են ոչ միայն ծնողի, այլև կրոնական գործիչների անձնական դաստիարակչական օրինակը: Հիշենք Պողոս առաքյալի կոչը. «Ուրեմն աղաչում եմ ձեզ, որ ինձ նմանող լինիք»¹³: Ընտանեկան դաստիարակության

⁷ Աստուածաշունչ, Լոնտոն, Աստուածաշունչի բրիտանական եւ արտաքին ընկերություն, 1959, -1424 էջ, էջ 1090

⁸ Նույն տեղը, էջ 19

⁹ Նույն տեղը, էջ 1336

¹⁰ Նույն տեղը, էջ 10

¹¹ Նույն տեղը, էջ 22

¹² Նույն տեղը, էջ 219

¹³ Աստուածաշունչ, Լոնտոն, Աստուածաշունչի բրիտանական եւ արտաքին ընկերություն, 1959, -1424 էջ, էջ 1298

իրականցման առումով արժևորվում են առակները՝ սեղմ, իմաստուն, այլաբանորեն արտահայտված խորհմաստ ասույթները: Սուրբ գրքերում ընդգրկված է բարոյախրատական բովանդակությամբ «Գիրք առակացը»: Գրքի սկզբում կարևորվում է առակների դաստիարակչական արժեքը հատկապես աճող սերնդի համար. «Որդի՛ք, լսեցե՛ք հոր խրատը. եւ ականջ դրեք, որ իմաստութիւնն իմանաք»¹⁴: Առակաց գրքում քննարկվում են ծնող-երեխա փոխհարաբերությունները. «Իմաստուն որդին կ'ուրախացնէ իր հորը, եւ յիմար որդին իր մօր տրտմութիւնն է»¹⁵, «Յիմարը կ'անարգէ իր հոր խրատը, բայց յանդիմանութիւն պահողը իւելացի է»¹⁶: Մեկ այլ առակում կարևորվում է առողջ կենսակերպը. «Գինեմոլների մէջ մի լինիր... Լսի՛ր քո ծնող հօրը, եւ մի՛ անարգիր քո մօրը, երբոր պառավ է»¹⁷:

Ա. Նալչաջյանը գրում է, որ քրիստոնեությունն այնպիսի խոր ու բազմակողմանի ազդեցություն է գործել կյանքի բոլոր ոլորտների վրա, այնպես է ներթափանցել մարդկանց աշխարհընկալման ու մտածելակերպի մեջ, որ ներկայումս երեխաների դաստիարակության վերաբերյալ պատկերացումները մեծ մասամբ դեռևս գտնվում են քրիստոնեական ուսմունքի ազդեցության տակ: Ամուսնության և ընտանեկան բարոյականության խնդիրներում Հիսուսի դիրքորոշումները շատ խիստ էին: Ե՛վ տղամարդուց, և՛ կնոջից նա հավատարմություն էր պահանջում, իսկ գայթակղվելն ու ամուսնուն դավաճանելը համարում շնություն¹⁸:

Ըստ ավետարանիչների՝ Հիսուս Քրիստոսը ժողովրդին ուղղված իր դաստիարակչական քարոզների ընթացքում պարբերաբար օգտագործում է առակները և կարևորում դրանց նշանակությունը: Հատկապես առանձնանում է «Անառակ որդին» առակը, որում ծնողը կարևորում է որդու վերադարձը դեպի ընտանիք, դեպի նախնիներն ու ակունքները՝ դա համարելով անառակ որդու վերածնունդ¹⁹:

Նոր կտակարանում ի հայտ է գալիս մայրական դաստիարակության գաղափարը: Եթե մինչ Քրիստոսի ծնունդը նշվում է միայն Սուրբ Հոր մասին, ապա իդեալական մարդու ծննդից հետո խոսվում է նաև Սուրբ Մոր մասին: Հայրության գաղափարը մարմնավորվում է Հայր Աստծո, իսկ

¹⁴ Նույն տեղը էջ 741

¹⁵ Նույն տեղը, էջ 747

¹⁶ Նույն տեղը, էջ 752

¹⁷ Նույն տեղը, էջ 761

¹⁸ Նալչաջյան Ա. Ա. Էթնիկական մանկավարժություն, Երևան, Զանգակ-97, 2003. էջ 120-121

¹⁹ Աստուածաշունչ, Լոնտոն, Աստուածաշունչի բրիտանական եւ արտաքին ընկերություն, 1959, -1424 էջ, էջ 1181

օրինակելի մայրության գաղափարը բյուրեղանում է Տիրամայր Մարիամի կերպարներում:

Այսպիսով, ի մի բերելով սուրբգրային տեքստերում արտացոլված գաղափարները, կարելի է հավաստել, որ հոգևոր գրականության, հատկապես քրիստոնեական արժեքանության մեջ կարևորվում է ընտանեկան դաստիարակությունը, որում առանցքային է ծնողների պաշտամունքը: Ամուսնաընտանեկան հարաբերություններում փոխադարձ հնազանդությունը նախադրյալ է կենաց պայքարում համատեղ հաղթանակի հասնելու համար: Ընդամին առանձնակի շեշտվում է, որ տղամարդն իրեն պարտավոր է գոհել հանուն իր կնոջ: Քրիստոնեական հոգևոր գրականության մեջ առկա է իդեալական որդու՝ Հիսուս Քրիստոսի օրինակը, որը մարմնավորում է ինքնագոհության գաղափարը: Քրիստոնեական կրոնի առանցքային անձնավորության կյանքն ու գործունեությունը պարզունակ հերոսացում չեն: Նրա մեծությունը պայմանավորված չէ թուր ու նիզակ բանեցնելու վարպետությամբ. օծյալ Փրկիչը մարդկային սրտի Երուսաղեմը նվաճում է իմաստությամբ ու մարդասիրությամբ: Նա ներառնվում է արարչագործական բարոյականության հաղթանակի համար մղվող պայքարում՝ հոգու հաղթանակը կարևորելով ֆիզիկականից: Նրա ֆիզիկական մահը հետևանք է մարդկային դավաճանության, ստի և կեղծիքի: Մահկանացու կնոջից ծնված Աստծո որդու պայքարը հանուն ճշմարտության որոնման և միջանձնային փոխհարաբերությունների կառուցումն ըստ աստվածահաճո սկզբունքների դաստիարակչական ազդու օրինակ են աճող սերնդի համար: Նոր Կտակարանում մարդկային վարքագծի բարոյականությունը բխեցվում է մարդու և Աստծո նկատմամբ տաճած սիրուց, իսկ երեխաների հնազանդությունն իրենց ծնողների նդիվում է որպես ճիշտ դաստիարակություն ստանալու նախապայման: Եթե նախաքրիստոնեական կրոնը փորձում էր դաստիարակել մարդու (օրինակ՝ Յեսսեի Դավիթ, Հերովդես), որը փորձում էր լուծել իր բնագրային պահանջմունքները՝ ինքնապահպանումը և բազմացումը, ապա հետքրիստոնեական շրջանում կրոնը փորձում է մարդուն ուժեղացնել հոգեպես և սրբացնում է ընտանիքը: Քրիստոնեական գրականության մեջ առաջնահերթ են ընտանեկան դաստիարակության գաղափարները, որոնցում կարևորվում են սերը, հարգանքը, բարությունը, փոխօգնությունը, ինքնաճանաչումը, ինքնագոհությունը հանուն ընտանեկան կառույցի և ընտանիքի անդամների:

Ըստ Տեր Ադամ քնն. Մակարյանի՝ «... Եկեղեցին կարևորում և առաջնային է համարում գիտելիքների մատուցումը երեխայի հոգևոր աշխարհի ձևավորմամբ, որը մաս չի կազմում կրթության վերաբերյալ

աշխարհիկ տեսակետի»²⁰: Կրոնական գաղափարախոսության ուղղվածությամբ պայմանավորված են նրա դաստիարակչական խնդիրները, և դրանից էլ բխում է ընտանեկան կրոնական դաստիարակությունը: Ենթադրելի է, որ ընտանեկան մշակույթով պայմանավորված՝ երեխայի համար հոգևոր գրականության բովանդակությունը բացարձակ ճշմարտություն է, այսինքն՝ Աստված կատարելություն է, որի օրինակով էլ նա դաստիարակվում է: Ընդ որում հոգևոր գրականության մեջ արծարծված ընտանեկան դաստիարակության գաղափարներն ուղղված են ոչ միայն աճող սերնդի դաստիարակությանը, այլև հասուն մարդկանց վերադաստիարակմանը:

Որպես ուսմունքների և ծեսերի ամբողջություն՝ կրոնը նպատակաուղղված է նախնական մեղքից մարդու ազատմանը, նրա վերափոխմանը, դաստիարակմանն ու վերադաստիարակմանը և որոշակի կենսակերպ վարելու նվիրվածության միջոցով՝ աստվածայինին հաղորդակից դառնալուն: Հոգևոր համատեքստում ընտանեկան դաստիարակությունը փորձում է ստեղծել ինքնապահովման հավերժական համակարգ: Անհատի ձևավորման միջոցով կրոնը լուծում է ոչ միայն իր ինքնապահպանական, այլև իր հետևորդների կենսապահովման հարցերը: «Քրիստոնեական տեսակետով կրթվելու, պետության օգտին հավատացյալի կողմից ծառայություններ մատուցելու վերջնական նպատակ են համարվում հոգևորը, Աստծո կամքի իրագործումը, հոգևոր և հավիտենական իրողությունների նկատառումը»²¹:

Դարեր շարունակ հայ հասարակությունը երեխաներին դաստիարակել է քրիստոնեական արժեքներին համապատասխան, և չնայած հայոց բազմադարյան մանկավարժական մշակույթի առկայությանը՝ այսօր մանկավարժական գիտությունը կանգնած է լուրջ մարտահրավերների առջև: Աներկբա իրողություն է այն, որ հնարավոր չէ ընտանեկան դաստիարակությունն արդյունավետ իրականացնել՝ առանց հաշվի առնելու ժողովրդի մշակույթում առկա մանկավարժական փորձը, ինչպես նաև դաստիարակվող անհատի կամ խմբի դավանաբանական պատկերացումները, քանի որ կրոնը հասարակական և պետական կյանքի կարևոր երևույթներից է:

²⁰ «Կրթության մասին», էլ. հասցե՝ <http://www.surbzoravor.am/post/view/krtutyanyan-masin>

²¹ «Կրթության մասին», էլ. հասցե՝ <http://www.surbzoravor.am/post/view/krtutyanyan-masin>

Ա. Լ. Մանուկյան

**Շնտանեկան դաստիարակության գաղափարների արտացոլումը
հոգևոր գրականության մեջ
Ամփոփում**

Հոդվածում քննարկվում են քրիստոնեական արժեհամակարգի՝ Աստվածաշնչում արտացոլված ընտանեկան դաստիարակության գաղափարները: Հոգևոր գրականության մեջ նկարագրված օրինակելի ընտանեկան փոխհարաբերությունների, կրոնական գործիչների խրատական բնույթի քարոզների և ծնողի ու երեխայի ցանկալի վարքագծի վերաբերյալ նրանց ունեցած տեսակետների վերլուծությամբ կարևորվում է հոգևոր գրականության դերը ընտանեկան դաստիարակության մեջ:

А.Л.Манукян

**Идеи семейного воспитания отражённые в духовной литературе
Резюме**

В статье обсуждаются идеи семейного воспитания в системе христианских ценностей, отражённых в Библии. Анализируя образцовые семейные отношения, описанные в духовной литературе, нравоучительные проповеди религиозных деятелей и их взгляды на желаемое поведение родителя и ребенка, автор подчеркивает важную роль религиозной литературы в сфере семейного воспитания.

A.L. Manukyan

**The reflection of family upbringing ideas in spiritual literature
Summary**

The article discusses the ideas of family upbringing in the Christian values system reflected in the Bible. Analyzing exemplary family relations described in spiritual literature, moralizing sermons of religious figures and their views on the desired behavior of the parent and child, the author emphasizes the important role of religious literature in pedagogy.

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վանաձորի պետական համալսարանի
մանկավարժության ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 373.5:811.19

**ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐԸ ՄԻՋԻՆ
ԴՊՐՈՑՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. խոսքի զարգացում, բառապաշարի հարստացում, կառուցողական մեթոդներ, զուգադրությունների աղյուսակ, սահմանման քարտեզագրում, լեզվամտածողության ձևավորում, աշխարհընկալում:

Ключевые слова и выражения: обогащение словарного запаса, конструктивные методы, таблица сопоставлений, картография определения, формирование лингвомышления, мировосприятие.

Key words and expressions: speech akt development, vecobulary enrichment, structural methods, comporison table, definition mapping, formation of linguistic way of thinking, world perception.

Գիտակցության մեջ աշխարհի պատկերը մտքի և լեզվի օբյեկտիվ միանությունն է: Տրամաբանական և լեզվական պատկերները հիմնականում համընկնում են, և լեզուն դառնում է գիտելիքներ ձեռք բերելու ամենակայուն միջոցը: Բառերի, նախադասությունների հիմնական բովանդակությունը կազմում է աշխարհընկալման հասկացական միջուկը, առարկայական իմաստը: Մարդկային հասարակության բառային իմաստավորման համար կարևոր նշանակություն ունի այն տեղեկությունը, որը մենք ստանում ենք բառերի և նրանց կապակցությունների միջոցով: Ուստի կարևոր է, թե ի՞նչ են հաղորդում բառերն ու լեզվական միավորները և ինչպես կարող են ազդել աշակերտի աշխարհընկալման վրա:

Երեխաների լեզվական ունակությունների ձևավորման առաջին փուլում կյանքի ճանաչողության գլխավոր միջոցը մայրենի լեզուն է, որը սովորողի մտավոր զարգացմանը զուգընթաց ներկայանում է անսպառ հարստությամբ: Աշխարհը երեխայի առջև բացվում է մայրենի լեզվի, ավելի ճիշտ, այն լեզվի միջոցով, որին նա առնչվում է սոցիալական միջավայրում: Դա հաստատվում է խոսքի և գլխուղեղի մեխանիզմների հետ նրա հարաբերության բնագավառում կատարած հետազոտություններով: Վ. Պենֆիլդը հանգել է այն հետևության, որ երեխայի համար տանը լեզվին տիրապետելը կյանքի ճանաչողության մեթոդն է, միջոցը՝ ստանալու այն,

ինչ երեխան ուզում է: Նա չի գիտակցում, որ լեզու է սովորում, և դա նրա գլխավոր գիտակցված նպատակը չէ: Բառերն իմանալով՝ երեխան ճանաչում է կյանքը¹: Բառի մեջ միտքն անմիջապես որոշակի կերպարանք է ստանում, կայունանում է, հետևաբար տրամաբանական հատկություններ է ձեռք բերում, բացի այդ՝ դառնում է այնքան ճկուն, որքան ճկուն է լեզուն:

Լեզուն և մտածողությունը սերտ կապի մեջ են, նրանք փոխադարձաբար պայմանավորում են միմյանց: Հարուստ միտք ունենալու համար պետք է ունենալ հարուստ խոսք, ինչին նպաստում են հարուստ բառապաշարը, թևավոր խոսքերն ու դարձվածքները, պատկերավորման միջոցները, ոճական հնարներն ու քերականական ձևերի ճշգրիտ ընտրությունը: Այս հանգամանքով է պայմանավորված երեխայի բառապաշարի հարստացմանն ու խոսքի զարգացմանը միտված մեթոդական հնարների և մեթոդների մշակումը:

Որքան երեխան լավ տիրապետի լեզվին, այնքան շատ գիտելիքներ ձեռք կբերի, իսկ գրագետ մարդն ունի հարուստ ու ճկուն լեզու, ինչն էլ հիմք է հանդիսանում դիպուկ ու գեղեցիկ խոսք ձևավորելու համար: Խոսքի միջոցով կարող ենք որոշել մարդու, երեխայի ինտելեկտուալ զարգացածությունը: Կիրթ ու գրագետ մարդն իր մտքերն արտահայտում է պարզ, սահուն, արտահայտիչ և տրամաբանական ճիշտ կառուցվածքով:

Աշակերտի խոսքի ձևավորմանը նպաստում են հիմնականում 4 գործոն՝ տուն, դպրոց, հասարակական միջավայր և համացանց: Նայած թե տանը, հասարակության մեջ խոսքային ինչպիսի միջավայրում է մեծանում երեխան, կախված այն հանգամանքից, թե սոցիալական ի՛նչ կայքերից է օգտվում, ի՛նչ է կարդում ու լսում համացանցում, ըստ այդմ էլ ձևավորվում է նրա խոսքը: Իսկ քանի որ այսօր թե՛ առօրյա կյանքում, թե՛ համացանցից օգտվելիս հանդիպում ենք բարբառային, ժարգոնային և օտարածին բառերի, ուստի մաքուր գրական լեզվի համար պայքարը ձեռք է բերում համընդհանուր նշանակություն: Այդ պայքարը պետք է սկսվի մեր երեխաների հայեցի դաստիարակությունից, քանի որ նրանք են հայոց լեզվի ժառանգորդներն ու փոխանցողները, մեր ապագան կերտողները: Ուստի երեխայի խոսքի ձևավորման ուղղությամբ պետք է տարվի հետևողական աշխատանք: Այդ է պատճառը, որ մայրենիի դասավանդման գործընթացում մեծ տեղ է հատկացվում հատկապես աշակերտի խոսքի զարգացմանը: Առաջին հերթին ուսուցչի խնդիրն է աշակերտի բառապաշարից դուրս մղել գրական հայերենում չընդունված ձևերը՝ փոխարինելով դրանք ճիշտ տարբերակով, մաքրել նրա խոսքը, բացատրել, որ ժարգոնային ձևերն ու

¹ В. Пенфильд и Л. Робертс, Речь и мозговые механизмы, Л.,1964, с.221.

օտար բառերը խճողում են նրա լեզուն և խոսքը դարձնում աղքատ ու անհրապույր: Միջին դպրոցում, հատկապես մայրենիի դասագործընթացում, ուսուցման հիմնականատակն է սովորողների լեզվագործածական ունակություններ զարգացնել՝ հասարակական կյանքում լիարժեք հաղորդակցվելու նպատակով: Մայրենի լեզուն դպրոցական կրթության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ այն միաժամանակ և՛ ուսումնասիրության առարկա է, և՛ մյուս առարկաների յուրացման միջոց: Այն իր մեջ ներառում է երկու կողմ՝ 1. բուն լեզվի իմացություն, այսինքն՝ այդ լեզվով հաղորդակցվելու, տարբեր բնույթի գրավոր ու բանավոր շարադրանք ստեղծելու կարողություն, 2. լեզվի քերականական կառուցվածքի իմացություն, որը ենթադրում է տեսական լեզվաբանական գիտելիքներ: Հանրակրթական դպրոցում մայրենի լեզվի դասավանդումը զուգակցում է այս երկու կողմերը, ընդ որում, հատկապես տարրական դպրոցում և միջին դպրոցի 5-6-րդ դասարաններում հայոց լեզու և գրականություն առարկաների համակցված (միասնացված) դասավանդման պայմաններում առաջնությունը տրվում է առաջին (արտահայտչական և հաղորդակցական) կողմին՝ երկրորդի (լեզվի կառուցվածքի) վերաբերյալ սահմանափակվելով միայն ամենաանհրաժեշտ տեղեկություններով²:

Հայոց լեզվի ուսուցման նպատակն է սովորողի մեջ մշակել ժամանակակից գրական հայերենին համապատասխան խոսք կառուցելու, իր խոսքը վերահսկելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, բառապաշարը հարստացնելու, ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու, մայրենի լեզվով ամենատարբեր բնույթի տեքստեր և գրականություն կարդալու, այն ընթրնելու կարողություններ: Կարևորվում է նաև բառարաններից, հանրագիտարաններից և այլ տեղեկատուներից օգտվելու, իր տարիքին ու կրթական փուլին համապատասխան գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականություն կարդալու, կարդացածը վերաշարադրելու և համառոտագրելու հմտությունների մշակումը, գործնական բնույթի զանազան փաստաթղթեր կազմելու կարողությունը, ինչպես նաև տարբեր իրադրություններում համապատասխան խոսքային վարքագիծ դրսևորելու ունակությունը: Մեր օրերում անհրաժեշտություն է աշակերտի խոսքի զարգացմանը նպաստել նաև մեդիահամտությունների

² Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ (1-9 դասարաններ), էջ 8:

կիրառմամբ, որի հիմնանպատակը նոր սերնդին տեղեկատվական նոր պայմաններում ապրելուն պատրաստելն է:

Ինչպես հայտնի է, ուսուցումը պասիվ գործընթաց կամ ընդօրինակում չէ, այլ ակտիվ գործունեություն, որի ընթացքում նոր ընկալումը ձևավորվում է աշակերտի գիտակցության մեջ արդեն գոյություն ունեցող գիտելիքների կառույցում: Միջին դպրոցի աշակերտի մեջ սեփական աշխարհը ձևավորելու և հասկանալու կարողություններ զարգացնելը ուսուցչի էական նպատակը պետք է լինի: Ուսուցիչը պետք է քաջալերի առաջադրված խնդիրներն ինքնուրույնաբար պարզելու աշակերտների ջանքերը: Այս առումով բավականին արդյունավետ է կառուցողական կրթության մեթոդներով դասավանդումը, որն ունի հետևյալ առանձնահատկությունները.

- աշակերտներն ավելի շատ կենտրոնանում են կարևոր գաղափարների, քան փաստերի վրա,
- կապեր են հաստատում գիտելիքների տարբեր մասերի միջև,
- մեկնաբանում են սեփական գործողություններն ու գաղափարները, նշում դրանց հնարավոր կիրառման ոլորտները³:

Որպեսզի աշակերտը կարողանա ինքնուրույն ներկայացնել իր խոսքը, արտահայտել ու մեկնաբանել իր տեսակետը, անհրաժեշտ է, որ նա ունենա համապատասխան բառապաշար, և որքան շատ բառեր ու արտահայտություններ կարողանա գործածել իր խոսքում, այնքան պարզ ու հասկանալի կձևակերպի իր միտքը: Ուստի ուսուցչի խնդիրն է առաջին հերթին հարստացնել բառապաշարն ու զարգացնել աշակերտի խոսքում բառամիավորներն ակտիվ գործածելու կարողություններն ու հմտությունները:

Ստորև բերենք աշակերտի բառապաշարի հարստացմանը և խոսքի զարգացմանն ուղղված կառուցողական կրթության մի քանի մեթոդներ՝ օրինակները քաղելով Մ. Կորյունի «Այգեպան Մոսին» հեքիաթից:

Ինչ խոսք, հեքիաթում առկա դարձվածքները (*սիրտ անել*, գլուխ դնել), պատկերավորման միջոցները (արծաթաբաշ նժույգ, փիրուզե թիթեռներ, ոսկեթև մեղուներ, *վերջալույսը ոսկու մեջ էր ընկղմել երկիրն ու երկինքը, ժպտում էին վարդի տունկերը*), տեքստի վերջում զետեղված բառային աշխատանքները⁴ նպաստում են աշակերտների բառապաշարի

³ Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004, էջ 45:

⁴ Դ.Գյուրջինյան, Թ.Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի, 5-րդ դասարան, Երևան, 2015:

հարստացմանը: Սակայն այդքանը բավարար չէ. այդ արտահայտչամիջոցները աշակերտի սեփականությունը դարձնելու համար ուսուցիչը պետք է օգտագործի նաև ուսուցման լրացուցիչ մեթոդներ ու եղանակներ, որոնց միջոցով սովորողները կկարողանան կիրառել իրենց սովորած նոր բառերն ու արտահայտությունները իրենց խոսքում, հիմնավորել իրենց տեսակետը, հաղթահարել կախվածությունն ուսուցչից և առավել ինքնուրույն դառնալ: Գեղեցիկ խոսք կառուցելը աշակերտների համար պետք է դառնա առաջին պայման: Բառապաշարը հարստացնելու համար տրվում է հետևյալ առաջադրանքը. դասը ներկայացնելու ընթացքում աշակերտը նախապես հայտարարված բառերը, արտահայտությունները փոխարինում է հոմանիշներով: Այս առաջադրանքը նպաստում է ոչ գործուն բառապաշարի ակտիվացմանը: Նորություն չէ, որ բառապաշարը հարստանում է աստիճանաբար երեխայի կենսավորված հարստացմանը զուգահեռ և դառնում է աշակերտի սեփականությունը, երբ այն կիրառվում է խոսքում: Ուստի աշակերտներին արտահայտվելու հնարավորություն տալու համար այնուհետև փորձում ենք բնութագրել հեքիաթի հերոսներին: «Զուգադրությունների աղյուսակ» մեթոդի միջոցով աշակերտները բնութագրում են այգեպան Մոսիին և թագավորին՝ նշելով նմանություններն ու տարբերությունները: Այնուհետև կատարում են եզրահանգում ու ներկայացնում իրենց տեսակետը հերոսների և նրանց արարքների վերաբերյալ: Այս մեթոդի կիրառման շնորհիվ աշակերտները ձեռք են բերում համեմատական վերլուծություն կատարելու հմտություններ, կարողանում են համակարգված եզրահանգումներ կատարել, թե բնավորության գծերից ինչն է լավ, ինչը՝ վատ, սովորում են համեմատել- հակադրել:




Նմանություններ
Ունեն նպատակ
Ունեն ձգտումներ
Ուզում են երջանիկ ապրել

Տարբերություններ
Ունեցվածք են ձեռք բերում տարբեր
Ճանապարհներով:
Մոսին աշատասեր է, թագավորը՝ գավթող:
Մոսին ազնիվ է, թագավորը՝ խարդախ:
Մոսին ընդունված է ժողովրդի կողմից,

1. Աշխատասիրությունը միշտ խրախուսվում է, ուրիշի ունեցվածքին տիրանալը քննադատվում:
2. Աշխատասիրության շնորհիվ պետք է ապրուստ ձեռք բերել, իսկ բռնությունն ու անարդարությունը միշտ կհանդիպեն ընդդիմության:
3. Չի կարելի չարաշահել ուժն ու իշխանությունը, որովհետև միասնականությունն ավելի ուժեղ կարող է լինել:

Խոսքի զարգացման համար արդյունավետ մեթոդ է նաև «հասկացության/ սահմանման քարտեզագրում» մեթոդը. դասից ընտրում ենք հիմնական գաղափարը, օրինակ՝ աշխատասիրություն: Աշակերտներին հանձնարարում ենք թիմերով աշխատել նոր հասկացության քարտեզ ստեղծելու համար: Տալիս ենք համապատասխան ցուցումներ՝ քարտեզի լրացման հետ կապված: Քարտեզագրումն ավարտելուց հետո հանձնարարում ենք քարտեզից օգտվելով՝ տալ հասկացության լիարժեք սահմանումը, որը պետք է կազմված լինի մի քանի նախադասություններից, ոչ թե կարճ սահմանումից. այն պետք է պարունակի հասկացության հատկությունները կամ բնորոշ գծերը և առանձնահատուկ օրինակները:

Այս մեթոդն օգնում է աշակերտներին արտահայտել իրենց մտքերը տվյալ հասկացության վերաբերյալ, կերտել տեսողական պատկերացում, որն օգնում է մտապահել, գաղափարները տեսնել իրական գույներով (օրինակ՝ աշխատասիրության դաստիարակչական ազդեցությունը մարդկանց վրա):



Աշակերտի խոսքի զարգացմանը կնպաստի նաև իրենց տպավորությունների արտահայտումը «քառաբաժան» մեթոդական հնարով, թե ի՞նչ զգացողություն ունեցան կարդալու ընթացքում, հերոսների արարքները ի՞նչ ներգործություն ունեցան իրենց վրա, ինչպե՞ս են գնահատում յուրաքանչյուր հերոսի արարքը:

<p>Ի՞նչ տեսա</p> <p>Ճաղկած այգիներ, գյուղատնտեսական գործիքներ բահ, փոցխ և այլն, աշխատող մարդիկ....</p>	<p>Ի՞նչ զգացի</p> <p>Թարմ օդի բույրը, աշխատողների ուրախությունը, որ մարդիկ երջանիկ են....</p>
<p>Ի՞նչ մտածեցի</p> <p>Աշխատանքը ուրախություն է բերում մարդկանց, աշխատող մարդը երջանիկ է....</p>	<p>Ի՞նչ հասկացա</p> <p>Եթե ուզում ես երջանիկ լինել, պետք է աշխատես և վաստակես քո սեփական քրտինքով....</p>

Բարոյախրատական տեսանկյունից՝ հեքիաթի ուսումնասիրման ընթացքում ստեղծագործության հերոսի՝ այգեպան Մոսիի օրինակով աշակերտների մոտ ձևավորվում է սեր աշխատանքի, աշխատասիրության հանդեպ, թագավորի օրինակով ներկայացվում են և քննադատվում բնավորության բացասական գծերը (նախանձ, ազահություն, երդմնազանցություն), իսկ ի դեմս աշխատավոր գյուղացիների՝ ուսուցանվում է այն գաղափարը, որ միասնականությունը ամենամեծ զենքն է նպատակին հասնելու ճանապարհին:

Վերջում կարելի է հարցնել աշակերտներին, թե իրենց կյանքում երբևէ եղել է դեպք, երբ իրենք գոհ են եղել իրենց աշխատասիրությունից: Օրինակ՝ աշակերտուհիներից մեկը կպատմի, թե ինչպես է օգնել իր մայրիկին տնային գործերում, և երբ մայրիկն իրեն գովեստի խոսքեր է ասել, ինքը կրկնակի ուրախացել է նախ նրա համար, որ թեթևացրել է մայրիկի հոգսը, ապա՝ որ արժանացել է գովասանքի:

Աշակերտների մոտ գեղեցիկ խոսելու ցանկությունը խթանելու համար ուշադրություն ենք դարձնում հեքիաթի հետևյալ տողերին. «Այգեպան Մոսին այնպիսի գորություն է ունենում, որ ինչ քար ու ապառաժի ձեռք է տալիս, վարդ ու մանուշակի է փոխում, ինչ անապատ ոտք է դնում, ծաղկած այգի է դարձնում», ապա աշակերտի խոսքը

համեմատում ենք անապատի հետ, որը ծաղկեցնելու համար աշակերտներն ունեն իրենց գործիքը՝ բառապաշարը: Իսկ արդյո՞ք նրանք օգտագործում են այն իրենց խոսքը կառուցելիս: Երեխաները պետք է հասկանան, որ իրենց խոսքը պետք է լինի գեղեցիկ ու քերականորեն ճիշտ ոչ միայն մայրենիի դասերին, այլ նաև մյուս առարկաներն ուսումնասիրելիս:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ մեր օրերում տեղեկատվական նոր տեխնոլոգիաները, համացանցը դարձել են տեղեկատվության ամենաարագ ու մատչելի միջոցը, սակայն դրանց առկայությունը նվազեցրել է հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ, իսկ տպագիր աղբյուրներից օգտվելու ավանդույթը գրեթե վերացել է, ու թեև աշակերտի բառապաշարի հարստացման համար կան բազմաթիվ մեթոդներ ու եղանակներ, սակայն, այնուամենայնիվ, գիրքը բոլոր դեպքերում մնում է թե՛ գիտելիքների ձեռքբերման ամենահզոր միջոցը, թե՛ գեղագիտական ապրումների անսպառ աղբյուրը: Գրական ստեղծագործությունների ուսումնասիրությունը եղել և մնում է սովորողի բառապաշարի հարստացման, պատկերավոր մտածողության, երևակայության ու ստեղծագործական կարողությունների զարգացման ամենաարդյունավետ միջոցը, բացի դրանից, այն նաև գրական ճաշակի ձևավորմանը զուգընթաց աշխարհաճանաչողության, ինքնաճանաչման, ինքնագնահատման ու ինքնակատարելագործման արդյունավետ միջոց է և մեծապես նպաստում է բարձր արժեքների՝ հայրենասիրության, մարդասիրության, կարեկցանքի ու հանդուրժողականության, ընկերասիրության ձևավորմանը:

Հ. Խաչատրյան

Խոսքի զարգացման մեթոդական հնարները միջին դպրոցում

Ամփոփում

Հոդվածում անդրադարձ է կատարվել բառերի ու լեզվական միավորների ազդեցությանը աշակերտների աշխարհընկալման վրա, նշվել է մայրենիի դերը կյանքի ճանաչողության գործընթացում: Ներկայացվել են այն գործոնները, որոնք նպաստում են միջին դպրոցականների բառապաշարի հարստացմանն ու խոսքի զարգացմանը:

Առաջարկվել են սովորողների խոսքի զարգացման մի քանի ժամանակակից մեթոդներ ու հնարներ:

А. Хачатрян

Методические приемы развития речи в средней школе

Резюме

В статье рассматривается вопрос о влиянии слов и языковых единиц на мировоззрение школьников, отмечается роль языка в процессе познания жизни, а также представлены те факторы, которые способствуют обогащению словарного запаса школьников и формированию их речи. В статье освещаются требования, предъявляемые к учителю, который должен стремиться к развитию навыков употребления языка в интересах самих учащихся.

Также предложены некоторые современные методы для обогащения словарного запаса и развития речи школьников.

Н. Khachatryan

Methodological techniques of Speech development in secondary schools

Summary

The article touches upon the influence of words and language units on students' world outlook. It emphasizes the role of the language in the process of life cognition. The article also introduces those factors, which contribute the enrichment of students' word-stock and speech formation. The demands made by the teachers in favour of students' language use skill improvement are also highlighted.

The article suggests some methods of word-stock enrichment and speech improvement.

ԳՈՀԱՐԻԿ ՄԿՐՏՁՅԱՆ

Գորիսի Ա. Բակունցի անվան

թիվ 1 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

ՀՏԴ 37.016:821.19

**ԸՆԹԵՐՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՄ ՓՈՐՁՆ ՈՒ
ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. գիրք, գեղարվեստական երկ, ուսուցիչ, աշակերտ, ընթերցանություն, սահուն ընթերցում, առոգանություն, շեշտադրում, ձև, բովանդակության, մարդկային բանականություն, հույզերի ներդաշնակություն, երանգապնակ, մտահորիզոնի ընդլայնում, բառապաշարի հարստացում, գրական ճաշակ:

Ключевые слова и выражения: книга, художественное произведение, учитель, ученик, чтение, плавное чтение, произношение, акцентирование, форма, содержание, разум человека, гармоничность эмоции, палитра для красок, расширение кругозора, обогащение лексики, литературный вкус.

Key words and expressions: a book, a work of fiction, a teacher, a student, reading, fluent reading, an accent, an emphasis, a form, contents, human reason, harmony of emotions, a plate of shades, expanding one's horizons, enriching vocabulary, literary taste.

Ընթերցման կարողությունների և ընթերցասիրության ձևավորումը վճռական նշանակություն ունի անձի զարգացման համար, քանի որ դրանով անհատը ձեռք է բերում մարդկային իմացության նվաճումներին հաղորդակից լինելու հնար: Ընթերցանությունը հետապնդում է գործնական, կրթական, դաստիարակչական նպատակներ, որոնց համակարգում կարևոր է, որ աշակերտը վարժ ու սահուն կարդալ սովորի, անընդհատ տեղեկատվություն ձեռք բերի, դառնա ընթերցող, ընթերցասեր:

Ընթերցանության կազմակերպման բազմաթիվ մեթոդներ և մեթոդական հնարներ են մշակված, որոնք բնագրի վրա տարվող աշխատանքը պետք է դարձնեն բազմազան: Գրական երկի գեղեցիկ ընթերցումը դժվարին գործ է: Դրան հասնելու համար հարկավոր է ոչ միայն կատարել լուրջ ու տևական աշխատանք, այլև գործադրել մեթոդական ճիշտ եղանակներ:

Դասի ընթացքում գեղեցիկ ընթերցման օրինակ պետք է ցույց տա ուսուցիչը. ինքն էլ պետք է լինի նյութի առաջին ընթերցողը: Մինչ

երկի ընթերցումը՝ ուսուցիչը պետք է իմանա նրա յուրաքանչյուր պարբերությունը, նախադասությունն ու բառը ինչպիսի շեշտադրությամբ, հնչերանգով պետք է կարդալ:

Գեղարվեստական երկերի ընթերցումը լինում է երկու տեսակ՝ նպատակային և տարերային: Նպատակայինը բացահայտում է գրական երկը ձևի և բովանդակության միասնության մեջ: Սա ակտիվ գործընթաց է: Ընթերցանության այս ձևը բացահայտում է բառի անպարագիծ աշխարհը, որը բաղադրված է բնության գույներից, բույրերից, ձայներից, մարդկային բանականության և հույզերի ներդաշնակությունից: Բառի գեղարվեստական, բանաստեղծական և կոլորիտային հարուստ երանգապնակի առանձնահատկությունների շնորհիվ է, որ մեծ են Նարեկացին, Թումանյանը, Իսահակյանը, Վարուժանն ու Մեծարենցը, Չարենցն ու Դեմիրճյանը... Մեկի մոտ բառերից ճառագում է լույսը, լսվում են խորհրդավոր մեղեդիներ, մեկի մոտ բառին արտահայտչականություն է տալիս հեթանոս ոգին, մյուսի մոտ՝ բնության երկնառաք աղոթքը: Բառի հրաշքի ըմբռնումը ուժեղացնում է գրական ստեղծագործության հուզական և գեղագիտական ներգործությունը: Գեղարվեստական ստեղծագործությունների ուշիմ ընթերցումով աշակերտը ճանաչում է մարդուն և աշխարհը, ճանաչում և հայտնագործում է իրեն, հանդիպում երբևէ համակած ապրումների, երազանքների ու խոհերի, թափանցում մարդու բարդ ու նուրբ հոգեբանության ոլորտները, իմաստավորում դրանք, սովորում ճիշտ ապրել: Ուսուցանվող երկը կարող է դեռահասի համար դառնալ աշխարհի ու մարդու վրա բացվող լուսավոր պատուհան, եթե քրտնաջան աշխատի տվյալ ստեղծագործության, հատկապես՝ գեղարվեստական բառի վրա: Աշակերտը պետք է դառնա գրողի ստեղծագործական լաբորատորիայի զգայաչափը: Գեղարվեստական երկի ստեղծագործական ընթերցումը իրականացվում է տանը և դպրոցում, հատկապես դասի ընթացքում ուսուցչի անմիջական ղեկավարությամբ: Ուսուցիչը պետք է լինի օրինակելի ընթերցող, ասմունքող, մեկնաբան, մեկնող, ցուցադրող: Նա պետք է ներդաշնակություն ստեղծի երկի հիմքում ընկած ապրումի և աշակերտի հոգեկան ռիթմի միջև: Ընթերցումը գրական երկի վերլուծության իրական ուղիներից մեկն է: Արտահայտիչ ընթերցել նշանակում է ճիշտ կարդալ կետադրական նշանները, նուրբ արվեստով կիրառել հոգեբանական դադարները, որոնք չեն կետադրվում, բայց օգնում են առավել լիարժեք բացահայտել ստեղծագործության հոգեբանական ենթատեքստը:

Փոքրածավալ գրվածքը դասարանում առաջին անգամ ընթերցվում է ամբողջությամբ: Միջին ծավալի կամ մեծածավալ գրվածքի միայն այն մասը, որը հանձնարարվում է տանը սովորելու համար: Բացատրվում և

գրվում են դժվար հասկանալի մտքերը, գրական, գրաբարյան, բարբառային, փոխառյալ բառերը բնագրում: Բառապաշարը հարստացնելու համար շատ բառեր իրենց հոմանիշներով ու բացատրություններով գրվում են բառատեսերերում: Դասարանում ընթերցանության ժամանակ շտկվում են արտասանության, առոգանության հետ կապված բոլոր սխալները: Աշակերտները ավելի շատ դժվարանում ու սխալներ են անում շեշտադրության և դադարառության դեպքում: Ասմունքի համար նյութը մշակելիս հիմնականում պահանջվում է տեսողական վերլուծություն: Ոչ թե հեղինակն այստեղ այսպես է ասում, այլ ես այսպես եմ պատկերացնում իմ ասելիքը: Եվ դրան հասնելու համար հանձնարարվում է աշակերտին իր բառերով պատմել ուսուցանվող երկը, որը նախապայման է ստեղծում որոնելու և ինքնուրույն գտնելու արտահայտչական միջոցներ: Երբ աշակերտը պատմում է իր խոսքերով, իր արտահայտչամիջոցներով ստեղծում է իր խոսքարվեստը, որն էլ հարկավոր է ասմունքի համար: Նյութն ամբողջությամբ ընկալվելուց հետո բաժանվում է գեղարվեստական հատվածների և վերլուծվում: Հատվածների բաժանվելիս պետք է հիշել, որ յուրաքանչյուր գեղարվեստական մաս կամ կտոր պիտի ունենա որոշակի սկիզբ և վերջ, պիտի լինի ամբողջական մաս: Պիտի պարզել, թե գրական երկի որ հատվածն է իր մեջ ամփոփում նյութի հիմնական միտքը և անգիր ասելիս այդ հատվածը առավել արտահայտիչ դարձնել: Ասմունքողը պետք է տեսնի պատկերը և ձայներանգի միջոցով արտահայտի զգացածը՝ ենթատեքստը: Երկն ընթերցողը հնչող գեղարվեստական խոսքի համար պետք է ունենա երկի կատարողական արվեստի որակը որոշող երկու կարևոր խնդիր՝ ինչ եմ ասում, որը մեր մշակած նյութն է, ում եմ ասում, որ ասմունքողի օբյեկտն է: Այս երկու տարրերի առկայությունից ծնվում է երբորդ անհրաժեշտը. ինչպես եմ ասում, որ գեղարվեստական կատարումն է: Այս ամենատարրական սկզբունքները անպայման պետք է ուսուցանել սովորողներին:

Աշակերտների մտահորիզոնի ընդլայնման, բառապաշարի հարստացման, գրական ճաշակի ձևավորման կարևորագույն օղակներից մեկն էլ արտադասարանական ընթերցանությունն է: Սովորաբար ամեն ուսումնական տարվա վերջում հանձնարարում եմ հաջորդ տարվա համար նախատեսված արտադասարանային թեմաները՝ արձակուրդին ընթերցելու: Ինչպես նաև հանձնարարում եմ գրել կարդացած գրքի համառոտ բովանդակությունը, հերոսների անունները: Տրամադրում եմ նաև իմ գրադարանը: Նոր ու սումնական տարին սկսում եմ լսելով ընթերցած գրքերը:

Մանկավարժական աշխատանքի փորձը ցույց է տալիս, որ լավ նախապատրաստված ամեն մի ընթերցում աշակերտների մեջ առաջացնում է ոչ միայն մեծ հետաքրքրություն, աշխուժություն, այլև մշակում ու կատարելագործում է ձայնի ելևէջման ու երանգավորման, զեղեցիկ կարդալու հմտություն:

Г. Мкртчян

Мой опыт и соображения развития техники чтения

Резюме

Умение читать, привитие любви к чтению имеют решающее значение для развития личности, так как благодаря чтению личность приобретает возможность соприкоснуться с достижениями человеческого разума. Для организации чтения существуют разнообразные методы, выработаны методические приёмы, которые делают многообразной, интересной работу над подлинниками. Внеклассное чтение- это одно из важнейших звеньев чтения, которое способствует расширению умственного кругозора учеников, обогащению словарного запаса, формированию вкуса. Опыт работы в школе показывает, что хорошо подготовленное чтение пробуждает в учениках не только большой интерес, но и формирует, совершенствует умение красивого, выразительного чтения.

G.Mkrtchyan

My experience and considerations of developing reading technique

Summary

Reading capacity and reading skills are crucial for the development of a person, as the latter achieves the ability to communicate thanks to the achievements of human knowledge. There are many techniques and methods for organising the reading which make working on the text more varied. One of the most important aspects of broadening students' outlook, enriching their vocabulary, forming their literary taste is the extracurricular reading. Pedagogical experience shows that every well-prepared reading evokes not only great interest and liveliness among the students but also works out and improves the sound reproduction, coloring and the ability to read beautifully.

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐ

Բանալի բառեր. արժեհամակարգ, ազգային արժեքներ, պետական պատվեր, կրթակարգ, վերջնարդյունք:

Ключевые слова: ценностная система, национальные ценности, государственный заказ, система обучения, результат.

Key words. value system, national values, state order, education system, outcome.

Հայաստանի Հանրապետության բոլոր դպրոցներում արժեքային որոշակի համակարգի առկայությունը կրթության անհրաժեշտ բաղադրիչներից մեկն է, որով սովորողներին փոխանցվող գիտելիքները, կարողություն-հմտություններն ուղղվում են ընդհանրական համակարգված արժեքային հիմքերի ձևավորմանը և դրանով՝ պետության, ազգի և անհատի ներդաշնակ փոխհարաբերության ապահովմանը: Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատ-քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը [1, էջ 61]: Այս համատեքստում սովորողը պետք է ընդհանուր գիտելիքներ ունենա սեփական իրավունքների մասին, հարգի հասակակիցների իրավունքները՝ անկախ սեռից, դավանանքից, գիտակցի բոլորի հավասարության և յուրաքանչյուրի անձեռնամխելիության սկզբունքները և ազատությունը, լինի հանդուրժող, մարդասեր, օրինապահ, ազնիվ, պատասխանատվությամբ օժտված:

Ուստի յուրաքանչյուր ուսուցչի առջև կանգնում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա յուրաքանչյուր սովորողի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ:

Վերջին երկու տասնամյակում արժեզրկվեցին արժեքների դաստիարակման գաղափարաբանական հիմքերը: Նախկին արժեքային դիրքորոշումները կորցրեցին իրենց ազդեցությունը: Ուսումնական առարկաների դաստիարակության խնդիրների մեջ լռություն տիրեց: Եվ դա պահանջեց կրթական ընդհանուր ռազմավարության վերանայում: Որոշակի արժեքային համակարգի ձևավորման պահանջներ դրվեցին նաև ուսումնական բոլոր բնագավառների, առարկաների առարկայական չափորոշիչներում: Հանրակրթական դպրոցում ուսուցանվող ցանկացած ուսումնական առարկա սովորողի արժեհամակարգի ձևավորման գործընթացում որոշակի մասնաբաժին ունի: Առարկայական չափորոշիչների արժեհամակարգի բաղադրիչներում առկա են համամարդկային, քրիստոնեական և այլ արժեքներ, որոնք կմնան թղթի վրա, քանի դեռ մենք, մանկավարժներս, չենք բացահայտում դրանց իրականացման ճիշտ մեխանիզմներն ու ուղիները: Քանի որ հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում արժեքների համակարգի ձևավորումը օրենսդրական պահանջ է, ուստի դրանց կատարումը պարտադիր պահանջ է բոլոր ուսուցիչների համար:

Կյանքը սրընթաց առաջ է շարժվում: Գլոբալացման գործընթացը կրթության համակարգի առջև նոր մարտահրավերներ է առաջադրում: <Տեխնոգեն հասարակությունը և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների մուտքը նոր չափանիշներ են պահանջում, որոնք տարբերվում են երեկվա չափանիշներից: Ինչպիսի՞ն կլինի կրթությունը, ապագայի կրթությունը: Այսօր աշխարհը նոր կրթական մոդելներ է փնտրում: Ովքե՞ր կձևավորեն այն առանցքը, որով հնարավոր կլինի դիմագրավել ժամանակի փորձություններին> [2, էջ 11]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության <արդիականացումը> համաշխարհային գլոբալացման համատեքստում, <Կրթությունը XXI դարում> գիտակրթական հանդես, N1, էջ 50-83, Երևան 2014 թ.:

2.Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, <Մանկավարժություն> գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004, N1/2, էջ 6-15:

Ն. Բարսեղյան

Ազգային արժեքների ձևավորումն իբրև պետական պատվեր Անփոփում

Հոդվածում կարևորվում է անհատի, որպես քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը: Հաջողված կրթական համակարգ ունի այն երկիրը, որը ձևավորում է կրթակարգով ամրագրված արժեքային

համակարգ, ինչի վերջնարդյունքում ունենում ենք ազնիվ, օրինապահ, մարդասեր, հանդուրժող, համագործակցող քաղաքացի: Մովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացում յուրաքանչյուր ուսումնական բնագավառ իր մասնաբաժինն ունի:

Н. Барсегян

**ФОРМИРОВАНИЕ НАЦИОНАЛЬНЫХ ЦЕННОСТЕЙ,
ГОСУДАРСТВЕННЫЙ ЗАКАЗ**

Резюме

В статье рассматривается важность государственного заказа в формировании ценностной системы гражданина как личности. Стержнем ценностной системы личности является образование. Удачную образовательную систему имеет то государство, которое формирует обеспеченную программой систему ценностей, благодаря которой воспитывается честный, законопослушный, толерантный и общительный гражданин. В процессе формирования ценностной системы учащиеся каждая обучающая сфера играет свою значимую роль.

N. Barseghyan

FORMATION OF NATIONAL VALUES AS A STATE ORDER

Summary

The article emphasizes the importance of value system formation of an individual as a citizen as a state order. Education is based on the value system of an individual. The country with successful education shapes a value system based on education order, which ultimately leads to the formation of an honest, law-abiding, humane, tolerant and cooperative citizen. Each educational field has its share in the formation process of learners' value system.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ,

Երաժշտության բաժնի վարիչ,

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ

ՆԱԻՐԱ ՄԱՂՈՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ

երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս

ՀՏԴ 78 (091)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ
ԿԱՅԱՑՈՒՄԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Հայաստանի կոմպոզիտորների միություն, Երևան, Արտաշես Ոսկերչյան, Մուշեղ Աղայան, 1932-1940թթ.:

Ключевые слова и выражения: Союз композиторов Армении, Ереван, Арташес Воскерчян, Мушег Агаян, 1932-1940 годы.

Key words and expressions: Union of Composers of Armenia, Yerevan, Artashes Voskerchyan, Mushegh Aghayan, the years 1932-1940

1932-ին ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշմամբ ստեղծվեց ՄՍՀՄ կոմպոզիտորների միությունը, հասարակական կազմակերպություն, որը միավորում էր ՄՍՀՄ կոմպոզիտորներին և երաժշտագետներին: «Այդ որոշումը դարձավ ստեղծագործական զարգացման կարևորագույն լծակ խորհրդային կոմպոզիտորների և ողջ երաժշտական ֆրոնտի համար»¹:

Ստեղծված հասարակական կազմակերպությունն իր առջև դրեց հետևյալ հիմնական խնդիրները՝ միավորել իր անդամներին գաղափարապես բարձր, գեղարվեստորեն նշանակալից այնպիսի երկեր ստեղծելու նպատակով, որոնք հաստատում են սոցիալիստական ռեալիզմի սկզբունքները, զարգացնում ՄՍՀՄ ժողովուրդների ազգային մշակույթի ավանդույթները, նպաստել կոմպոզիտորների և երաժշտագետների

¹ **Վոսկերչյան Արտաշես,** Յերաժշտական հարցեր, Յերեվան, Պետական հրատարակչություն, 1937, էջ 3:

ստեղծագործական աճին ու պրոֆեսիոնալ վարպետության բարձրացմանը: 1932-40թթ. ՄՍՀՄ կոմպոզիտորների միության կազմակերպություններ են ստեղծվում Մոսկվայում և Լենինգրադում, միութենական և ինքնավար հանրապետությունների մայրաքաղաքներում, մի քանի մարզային կենտրոններում:

1932թ. մայիսի 9-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմն ընդունում է «Հայաստանի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշումը, համաձայն որի վերացվում է Հայաստանի պրոլետարական երաժիշտների ասոցիացիան, և Խորհրդային Հայաստանի երաժիշտների միասնական միության կազմակերպման համար ձևավորվում է հանձնաժողով հետևյալ կազմով՝ Արտաշես Ոսկերչյան (նախագահ), Կարո Զաքարյան, Անուշավան Տեր-Ղևոնդյան, Հարո Ստեփանյան, Հ.Եղիազարյան, Մամսոն Գասպարյան, Ռոմանոս Մելիքյան, Մուշեղ Աղայան²:

Հունիսի 3-ին Երևանում տեղի է ունենում Երաժիշտների համաքաղաքային ժողովը՝ նվիրված ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշմանը. ներածական խոսքով հանդես է գալիս Ա.Ոսկերչյանը: Մտքերի փոխանակությանը մասնակցում են Մ.Քրիշչյանը, Ա.Տեր-Ղևոնդյանը, Վ.Բունին, Հ.Եղիազարյանը, Օվս. Տեր-Գրիգորյանը, Մ.Միրզոյանը, Մ.Ավետիսյանը, Խ.Թոռոջյանը, Դ.Լեկզերը, Հ.Վարդանյանը, Մ.Գասպարյանը³:

24-ամյա Արտաշես Կարապետի Ոսկերչյանը (1908-1993), ով 1931թ. ավարտել էր Երևանի կոնսերվատորիան, դեկավարեց Կոմպոզիտորների միության աշխատանքները մինչև 1935թ.: Նրա անունն այսօր զարմանալիորեն ոչինչ չի ասում մեր երիտասարդ սերնդի երաժիշտներին, քանի որ եթե չհաշվենք երաժշտագիտական նրա մի քանի հոդվածներն ու «Յերաժշտական հարցեր» հոդվածների ժողովածուն⁴, նրա վաստակը գրականագիտության ոլորտում է. հայ մշակույթի պատմության մեջ նա իր հետքը թողեց որպես գրականագետ, գրաքննադատ, բանասիրական գիտությունների դոկտոր (1966), պրոֆեսոր (1967), հայ և ռուս գրականության ու հասարակական մտքի պատմության, մարքս-լենինյան

² Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 12 մայիսի, 1932, N 111:

³ Տե՛ս Մինչև վերջն ուղղել սխալներն ու վերակառուցել երաժշտական ֆրոնտը, «Գրական թերթ», 10 հունիսի, 1932, N 11:

⁴ **Վոսկերչյան Արտաշես**, Յերաժշտական հարցեր, Յերեվան, Պետական հրատարակչություն, 1937, 184 էջ:

զեղագիտության հարցերի մասնագետ:

1935-ին Ա.Ոսկերյանն ավարտելու էր (էքստեն) Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետը, 1939-ից դասախոսական աշխատանքով էր զբաղվելու Երևանի բուհերում, մասնակցելու էր Հայրենական մեծ պատերազմին, իսկ 1969-ից ռուս գրականություն էր դասավանդելու Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում: Նրա հեղինակությամբ լույս էին տեսնելու «Ստ. Շահումյանի գրական հայացքները» (1947), «Սովետահայ գրականության և գրական ժառանգության հարցեր» (1954), «Ռուս մեծ քննադատներ և հրապարակախոսներ» (1957), «Степан Шаумян и вопросы литературы» (1959), «Հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները» (1962), «Քննադատություն և հրապարակախոսություն» (1968), «Ալ. Մյասնիկյանը և գրական հարցերը» (1974), «Ռուս գրականություն: Ակնարկներ» (1977), «Сурен Спандарян – публицист и критик» (1979), «Ռուս և հայ գրականության հարցեր» (1982) գրքերը⁵:

Նորաստեղծ Միության ակունքներում կանգնած գործիչները գիտակցում էին, որ Միությունը պետք է ակտիվորեն համագործակցի հանրապետության երաժշտական կոլեկտիվների հետ՝ որոշակիորեն ուղղորդելով նրանց աշխատանքները: Այս իմաստով ծրագրային կարելի է համարել Ա.Ոսկերյանի՝ «Խորհրդային արվեստի» 1933թ. մայիսյան համարում լույս տեսած «Արդյունքներ յեվ խնդիրներ (խորհրդային կոմպոզիտորների համագումարի առթիվ)» հոդվածը: Ըստ հոդվածի հեղինակի՝ Միության նպատակն էր համախմբել կոմպոզիտորներին սոցիալիստական շինարարության շուրջ և նպաստել նրանց ստեղծագործական զարգացմանը⁶. «Ստեղծագործական խնդիրներին նվիրված դիսպուտների, յերեկոների կազմակերպումը և այլն, հետապնդել են այդ նպատակը»⁷: Կոմպոզիտորները զբաղված էին ստեղծագործական լուրջ աշխատանքով, մինչդեռ կատարողական կադրերի սակավությունը խոչընդոտում էր նրանց ստեղծագործությունների կատարումն ու մասսայականացումը: «Այս բանում, - նկատում է Ա.Ոսկերյանը, - խորհրդային կոմպոզիտորներին պետք է օժանդակեն այն կազմակերպությունները (ռադիո, օպերա, կոնսերվատորիա և այլն), որոնց

⁵ Տե՛ս **Ոսկերյան Արտաշես**, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 8, Երևան, 1982, էջ 631:

⁶ Տե՛ս **Վոսկերյան Ա.**, Արդյունքներ յեվ խնդիրներ (խորհրդային կոմպոզիտոր-ների համագումարի առթիվ), «Խորհրդային արվեստ», 1933, N 5, մայիս, էջ 3:

⁷ Նույն տեղում:

ձեռքումն են կենտրոնացած կատարողական ուժերը»⁸:

Հեղինակն իրավացիորեն ընդգծում է երաժշտական քննադատության կարևոր դերն ու նշանակությունը, որն այդ տարիներին օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով գտնվում էր ցածր մակարդակի վրա, և կարևորում է բարձրորակ քննադատության անհրաժեշտությունը: Նա երաժշտական ճակատի նշանակալի բնագավառ է համարում նաև մասսայական երաժշտական աշխատանքներն ու կադրերի պատրաստումը՝ ընդգծելով դրա հրատապությունը: Դրա հետ մեկտեղ նա գտնում է, որ «Ռադիո-երաժշտական հաղորդումների մեջ մեծ տեղ պետք է տալ նոր ստեղծվող խորհրդային երաժշտության մասսայականացմանը»⁹:

1934թ. ապրիլի 21-ին կազմակերպվում է Պետօպերային թատրոնի «Կարմեն» բեմադրության քննարկումը: Զեկուցումով հանդես է գալիս Ռ.Թերլենեզյանը, ապա ելույթ են ունենում Ա.Բուրջայանը, Ռ.Հովհաննիսյանը, Ա.Հովհաննիսյանը, Ս.Լիսիցյանը, Ս.Գասպարյանը, Ա.Ոսկերչյանը¹⁰: Մա հետագայում պետք է դառնար Կոմպոզիտորների միության գործունեության կարևոր ուղղություններից մեկը:

Իսկ Հայկինոյում 1936թ. մարտի 4-ին տեղի ունեցած կինոնկարների երաժշտական ձևավորմանը նվիրված խորհրդակցության արդյունքում, որին մասնակցում էին կինոաշխատողները և երաժիշտները, Հայկինոյին կից կազմակերպվում է երաժշտական բաժին¹¹: Սրանով իսկ դրվեցին հայկական կինոերաժշտության հիմքերը. այսուհետև ֆիլմերի համար երաժշտություն են գրում պրոֆեսիոնալ կոմպոզիտորները. նախաձեռնություն, որը պիտի շարունակվեր, և կինոերաժշտությունը պետք է դառնար բազմաթիվ ֆիլմերի հաջողությունը մեծապես պայմանավորող գործոն: Մարգիս Բարխուդարյանը երաժշտություն է գրում «Շունն ու կատուն» մուլտիպլիկացիոն (1936), «Կարո» (1937) և «Քաջ Նազար» (1940) գեղարվեստական կինոնկարների համար, Աշոտ Սաթյանը՝ «Վեց համազարկ» (1937), «Լեռնային արշավ» (1939), «Գվարդիական կինը» (1942), «Դուստրը» (1943) և «Դավիթ-Բեկ» գեղարվեստական կինոնկարների համար (1944) ևն: 1938թ. Արամ Խաչատրյանը երաժշտություն է գրում «Ձանգեզուր», իսկ 1939թ. Հարո Ստեփանյանը՝ «Լեռնային հեղեղ» գեղարվեստական

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 4:

¹⁰ **Սազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեփոխություն (1920-1945), պատ. խմբ.³ Մ.Մուրադյան, Երևան, 1979, էջ 128: «Խորհրդային Հայաստան», N 4, 1934, էջ 32:

¹¹ Երաժշտական բաժին Հայկինոյում, «Խորհրդային Հայաստան», 5 մարտի, 1936, N 53:

ֆիլմերի համար:

1935թ. Միության ղեկավարությունն ստանձնում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում Մակար Եկմայանին աշակերտած, ապա Պետերբուրգի (1907-1911) և Մոսկվայի (1925-1930) կոնսերվատորիաներում երաժշտական կրթություն ստացած, որպես երաժիշտ-մանկավարժ և երգիչ (բարիտոն) աշխատած, ինչպես նաև Երևա-նում, Թիֆլիսում և Մոսկվայում համերգներով հանդես եկած, իսկ 1930թ. Երևան տեղափոխված երաժշտագետ և կոմպոզիտոր Մուշեղ Ղազարոսի Աղայանը (1883-1966)¹²:

1936թ. մարտի 8-15-ը տեղի է ունենում Հայաստանի կոմպոզիտորների ստեղծագործական խորհրդակցությունը՝ նվիրված «Պրավդայում» տպագրված երաժշտական հարցերի վերաբերյալ հոդվածների քննարկմանը. ելույթ են ունենում Կ.Զաքարյանը, Օվս.Տեր-Գրիգորյանը, Բ.Քուչնարյանը, Ա.Մայիլյանը, Հ.Ստեփան-յանը, Մ.Միրզոյանը, Մ.Մազմանյանը, Ռ.Թերլեմեզյանը, Տ.Հախում-յանը, Վ.Սամվելյանը, Հ.Պողոսյանը¹³:

Հայ կոմպոզիտորների մասնագիտական աճի համար կարևոր էին ստեղծագործական շփումները և նրանց երաժշտության պրոպագանդան Հայաստանի սահմաններից դուրս, մասնավորապես Մոսկվայում: 1937թ. ապրիլի 19-ին Մոսկվայի Միությունների տան Սյունազարդ դահլիճում բացվում է Սովետական կոմպոզիտորների միության առաջին համամիութենական համագումարը¹⁴, իսկ մայիսի 10-ին տեղի ունեցած ԽՍՀՄ կոմպոզիտորների համամիութենական խորհրդակցության մասնակիցները դիտում են Կարո Զաքարյանի «Մարջան» օպերան¹⁵:

¹² Տե՛ս Աղայան Մուշեղ, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 1, Երևան, 1974, էջ 244:

¹³ Տե՛ս **Մազմանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 185: Հանուն ռեալիստական խորհրդային երաժշտության, «Խորհրդային Հայաստան», 17 մարտի, 1936, N 63: **Джаниян Г.** Творческое совещание композиторов, “Коммунист”, 14 марта, 1936, N 63. Против формализма, сумбура и хаоса в музыке, “Коммунист”, 18 марта, 1936, N 64:

¹⁴ Տե՛ս **Захаров В.** Развивать и совершенствовать советскую музыку, “Правда”, 19 апреля, 1937, N 110. Открытие первого Всесоюзного съезда советских композиторов, “Правда”, 20 апреля, 1937, N 111. Всесоюзный съезд советских композиторов, “Правда”, 22 апреля, 1937, N 113. На первом Всесоюзном съезде советских композиторов, “Правда”, 23 апреля, 1937, N 114:

¹⁵ **Мелик-Вртанесян К.** Успех оперы “Марджан”, “Коммунист”, 14 мая, 1937, N 108:

1939թ. հունվարի 11-12-ը տեղի ունեցած Հայաստանի կոմպոզիտորների հանրապետական առաջին կոնֆերանսում զեկուցումով հանդես է գալիս Մուշեղ Աղայանը, իսկ մտքերի փոխանակությանը մասնակցում են Հ.Ստեփանյանը, Ա.Տեր-Ղևոնդյանը, Գ.Եղիազարյանը, Մ.Միրզոյանը, Ա.Աղաբաբյանը, Ա.Շահինյանը, Կ.Սարաջևը, Դ.Դեմիրճյանը, Զ.Վարդանյանը, Ռ.Թերլեմեզյանը, Ս.Գասպարյանը, Ա.Կարատովը, Էդ.Կզարթմյանը: Ընտրվում է Հայաստանի սովետական կոմպոզիտորների միության վարչություն հետևյալ կազմով՝ Հարո Ստեփանյան (նախագահ), Կ.Զաքարյան, Մ.Մազմանյան (տեղակալ), Ա.Տեր-Ղևոնդյան, Մ.Աղայան¹⁶:

Մ.Աղայանին փոխարինում է 1923-1926 թվականներին Մոսկվայի Գնեսինների անվան երաժշտական տեխնիկումում ուսանած, 1930թ. Լենինգրադի կոնսերվատորիայի՝ Վ.Վ.Շչեքբաչյովի ստեղծագործական դասարանի շրջանավարտ Հարո Լևոնի Ստեփանյանը (1897-1966), ով պիտի դառնար «Սովետական Հայաստանի երաժշտական մշակույթի զարգացման գործի ակտիվ կազմակերպիչներից» մեկը¹⁷: Նա Երևանի կոնսերվատորիայում 1930թ. հիմնադրված ստեղծագործական դասարանի առաջին դասատուներից էր՝ Սարգիս Բարխուդարյանի և Վարդգես Տայանի հետ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր՝ ընտրված 1938թ. հունիսի 12-ին, հետագայում՝ ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր (1951), ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1960)... Միությունը թևակոխում է իր գործունեության նոր ու արգասաբեր փուլ: Աստիճանաբար բարձրանում են կոմպոզիտորների դերն ու նշանակությունը հանրապետության մշակութային ու հասարակական կյանքում:

¹⁶ *Մազմանյան Ռ., նշվ. աշխ., էջ 212-213: Թերլեմեզյան Ռ., Երաժշտագետների կոնֆերանսի արդյունքները, «Նորհրդային Հայաստան», 15 հունվարի, 1939, N 12: К открытию 1-ой республиканской конференции композиторов Армении, “Коммунист”, 11 января, 1939, N 9. Закарян К. Задачи нашей конференции, там же. Сатян А. Радостно жить и творить, там же. Б-ян С. На конференции композиторов Армении, “Коммунист”, 14 января, 1939, N 11. Конференция композиторов Армении, “Сталинец”, 15 января, 1939, N 6:*

¹⁷ *Տիգրանյան Գ., Ստեփանյան Հարո Լևոնի, Հայկական սովետական հանրապետության, հատոր 11, Երևան, 1985, էջ 129:*

Ա.Ասատրյան, Ն.Մադոյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ
ԿԱՅԱՑՈՒՄԸ
Ամփոփում

Հոդվածը նվիրված է Հայաստանի կոմպոզիտորների միության ստեղծմանն ու առաջին քայլերին: Առանձնացվել է Միության գործունեության 1932-1940թթ. ժամանակահատվածը, երբ Միությունը ղեկավարել են Արտաշես Ոսկերչյանը և Մուշեղ Աղայանը: Այս փուլում հենց նախանշվեցին Միության հետագա գործունեության որոշ ուղղություններ դրվեցին կինոերաժշտության հիմքերը, հայ երաժշտությունը հնչեց Հայաստանից դուրս նն:

А.Асатрян, Н.Мадоян
СОЗДАНИЕ И СТАНОВЛЕНИЕ СОЮЗА КОМПОЗИТОРОВ
АРМЕНИИ

Резюме

Статья посвящена истории создания и первым шагам Союза композиторов Армении. В деятельности Союза выделены годы с 1932го по 1940й, когда его руководителями были Арташес Воскерчян и Мушег Агаян. Именно в этот период были predetermined некоторые направления деятельности Союза, заложены основы киномузыки, армянская музыка зазвучала за пределами Армении и т.п.

A.Asatryan, N.Madoyan
FOUNDATION AND ESTABLISHMENT OF ARMENIA UNION OF
COMPOSERS

Summary

The paper describes the history of foundation and the first steps of the Union of Composers of Armenia. The years 1932-1940 have been highlighted, when Artashes Voskerchyan and Mushegh Aghayan headed the Union. It was the period when some of the further activities of the Union were predetermined, the foundations for film music were set, Armenian music was to be heard far beyond the boundaries of Armenia, etc.

ՍԱԹԵՆԻԿ ՂԱՓԼԱՆՑԱՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
երաժշտության տեսության ամբիոնի դասախոս,
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի հայցորդ
ՀՏԴ 781.7

**ՄԻՀՐԱՆ ԹՈՒՄԱՃԱՆԻ ՖՈՒՎԼՈՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԵՎ
ՀԱՎԱՔՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Միհրան Թումաճան, հավաքչական աշխատանք, «Հայրենի երգ ու բան»:

Ключевые слова и выражения. Мигран Тумаджан, собирательская работа, „Айрени ерг у бан”.

Keywords and expressions. Mihran Tumajan, collectional work, „Hayreni Erg ou Ban”

Երաժշտական ֆոլկլորագիտության երախտավորների շարքում բացառիկ տեղ ունի Միհրան Թումաճանը (1890-1973): Մինչև 20-րդ դարի 60-ական թվականները հայ երաժշտական ֆոլկլորագիտության տրամադրության տակ եղած ձայնագրությունները կատարված էին Արևելյան Հայաստանում և ներկայացնում էին կենտրոնական Հայաստանի և մասնավորապես Վանա լճի ավազանի, Շիրակի և Արարատյան դաշտավայրի ազգագրական գոտիների երգաստեղծությունը: Արևմտյան Հայաստանի ազգագրական գոտիների ֆոլկլորը մեզ համար անմատչելի էր հասկանալի պատճառներով:

Միհրան Թումաճանը իր հարստագույն հավաքածուով եկավ լրացնելու այդ բացը, ամբողջացնելու գիտության պատկերացումները ամենատարբեր ազգագրական գոտիների հայ բազմառոճ և բազմաժանր ժողովրդական երգաստեղծության մասին: Լինելով Կոմիտասի լավագույն աշակերտներից մեկը, նա իր ուսուցչից սովորել էր սիրել և գնահատել ժողովրդական բառն ու բանը, երգն ու նվագը: Իր ողջ գիտակցական կյանքը նվիրելով հարազատ ֆոլկլորին, նա կարողացավ «պեղել» և մարդկային հիշողությունից կորզել այն անգնահատելի գանձերը, որոնք կարող էին կորչել, եթե չլիներ Թումաճանի անձնվեր, սխրանքի հավասար աշխատանքը:

Երաժիշտ-բանահավաքի իր մոլեռանդ գործով Թումաճանը զբաղվել է ավելի քան չորս տասնամյակ, անկախ նրանից, թե ճակատագրի բերումով

աշխարհի որ կողմում է հայտնվել, կյանքի ինչ պայմաններում և բարոյական ինչ վիճակի մեջ է գտնվել նա՝ հայրենիքից հեռու:

Նա օժտված է եղել մի առանձնահատուկ, գուցե բնատուր շնորքով՝ «մամիկներին» ու «պապիկներին» տրամադրել, խոսեցնել ու մանավանդ՝ երգացնել: Որպես մասնագետ-բանահավաք, նա միշտ պատրաստ է եղել գրի առնելու ժողովրդական երգն ու խոսքը՝ որտեղ և երբ էլ լինի: Նախքան իր ժողովածուի պատրաստումը Թումաճանն անցել է գիտելիքների ձեռքբերման և փորձառության երկար ճանապարհ:

Այդ գիտելիքները Թումաճանը կուտակել էր ողջ կյանքի ընթացքում՝ սկսած Կոմիտաս Վարդապետին աշակերտելու արգասաբեր տարիներից, այնուհետև Եվրոպայում ստացած որոշակի պատրաստվածությունից, մինչև տարիների ընթացքում ինքնակրթությամբ կատարելագործվելը Վահան Թոփալյանի «Հայ մշակութային հիմնարկություն» գանձարանում¹ և Ամերիկայի խոշորագույն գրադարաններում:

Ֆուլկրոբագիտական և ազգագրագիտական հարուստ գիտելիքների վրա հիմնված նրա հավաքչական գործունեության արդյունքը ամփոփված է «Հայրենի երգ ու բան» ժողովածուում: Հեղինակի մտահղացմամբ բազմահատորյակը պետք է հրատարակվեր հինգ հատորներով:

Հայաստանի կառավարության հրավերով 1966 թվականի հոկտեմբերին Երևան ժամանած և ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտում աշխատանքի անցած Մ.Թումաճանը 1966-1973թթ. հասցրեց հրատարակել իր հարուստ հավաքածուի մի մասը. Առաջին հատորը² լույս տեսավ 1972-ին, Ռ.Աթայանի խմբագրությամբ:

Արևմտյան Հայաստանի ավանդական երաժշտության և բանահյուսության՝ Մ.Թումաճանի գրանցած արժեքավոր հավաքածուն Արվեստի ինստիտուտը հրատարակեց հետմահու: Երկրորդ հատորը³ հրատարակվեց հեղինակի մահվանից տասը տարի անց՝ 1983-ին (խմբագիրներ՝ Ռ.Աթայան և Ա.Նազինյան): Երրորդ⁴ և չորրորդ⁵ հատորների

¹ Վահան Թոփալյանի այս գանձարանը այժմ հանրային մի հաստատություն է Բոստոնում, ուր կարելի է գտնել ոչ միայն հայկական, այլև համաշխարհային գրականության ու մշակույթի վերաբերյալ հազվագյուտ գանձեր:

² Թումաճան Միհրան, Հայրենի երգ ու բան, հ. 1: /Խմբ.՝ Ռ.Աթայան/. - Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972. - 263 էջ, 1թ. քարտեզ, 1թ. նկ.:

³ Թումաճան Միհրան, Հայրենի երգ ու բան, հ. 2: /Խմբ.՝ Ռ.Աթայան, Ա.Նազինյան/. - Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983. - 439 էջ:

⁴ Թումաճան Միհրան, Հայրենի երգ ու բան, հ. 3: /Կազմ.՝ Զ.Պ.Թագակյան: Խմբ.՝ Ռ.Ա.Աթայան/. - Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986. - 220 էջ:

կազմումն իրագործել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Զավեն Թագակչյանը՝ ըստ հեղինակի ծրագրածի և դիտողությունների: Հինգերորդ հատորում Մ.Թումաճանը նախատեսել էր զետեղել իր հավաքածուի թրքալեզու և քրդալեզու հայկական երգերը: Այդ հատորը դեռ սպասում է պատրաստման և հրատարակման:

Առանձնահատուկ պետք է նշել Մ.Թումաճանի գրած առաջաբանը առաջին հատորի համար, որում կենտրոնացված են նրա մտքերը հայ ավանդական երգամտածողության և իր հավաքչական աշխատանքի սկզբունքների մասին, նրա արժեքավոր հանձնարարականները երիտասարդ մասնագետներին: Շարադրանքում առկա հեղինակային բոլոր մեջբերումները արված են հենց այդ առաջաբանից:

Իր մտահղացումը կյանքի կոչելիս Թումաճանը լավ էր հասկանում, որ տեսական գիտելիքները դեռ ոչինչ են, եթե չեն ամրապնդվում գործնական հավաքչական աշխատանքով: Թումաճանի համոզմամբ առաջնահերթը հենց այդ աշխատանքն էր, որը հայ մարդու համար միակ ճանապարհն էր «...ժողովրդի դարավոր մշակույթի այս փշրանքների լեզուն լսելով, մեր ավերակների տակ մնացած ջարդուփշուր հարստությունները միավորելու և սրանով մեր սրտերի արտը մշակելու, մեր տները շեն պահելու, մեր ժառանգությանը տեր կանգնելու...»⁶:

Թումաճանը մեծ կարևորություն էր տալիս ֆուլկլորի ավանդականությանը, սուրբ համարելով այն ամենը, ինչ ավանդականորեն գալիս է հնից: Նա իրավացիորեն գտնում էր, որ ժողովրդի մեջ հնչող ամեն ինչը չէ, որ համարվում է ժողովրդական երգ: Ժողովրդական է համարվում միայն այն, «ինչ որ ժողովուրդը հավաքականորեն իր սրտից ու մտքից քամել կամ խտացել է իր առօրյա ապրումների ընթացքում, **ավանդականության** կնիքը դնելով վրան»⁷:

Այս մտքի շարադրանքում կարևորվում է ոչ միայն ավանդականության դերը, այլ ժողովրդական արվեստի հավաքականության գաղափարը: Նա հստակորեն գատում է միմյանցից անհատական ստեղծագործության և հավաքական մտածողության արգասիք հասկացությունները: Նա գտնում է, որ ի սկզբանե անհատական

⁵ Թումաճան Միհրան, Հայրենի երգ ու բան, հ. 4: /Կազմ.՝ Զ.Թագակչյան, իւմբ.՝ Հ.Պիկիչյան/. - Եր.: «Զանգակ-97», 2005. – 432 էջ:

⁶ Թումաճան Միհրան, Հայրենի երգ ու բան. հ. 1, էջ 8:

⁷ Նույն տեղում, էջ 7:

ստեղծագործությունը, երբ գոյատևում է անգիր վիճակում և ստանում է «բազում ոճերի և ասությունների» երանգներ, չի կարող այլևս անհատական համարվել: «...Այդ ստեղծագործությունները...հավաքականության եռնեփող կաթսայի մեջ տարրալուծվելով մի հյուսվածք են ստացել, որն այլևս սեփականություն չի ճանաչում»⁸: Մրանք ֆոլկլորագիտական այն հիմնահարցերն են, որոնց արձարժմանը կարևոր տեղ է հատկացնում Մ.Թումաճան-բանահավաքն իր աշխատանքում:

Հետաքրքրական է Թումաճանի մոտեցումը նոտագրության խնդրին: Գիտակցելով, որ եվրոպական նոտագրության կանոնները երբեմն հակասության մեջ են մտնում հայ ժողովրդական երգի բնույթի հետ, նա հարկ է համարել հատուկ անդրադառնալ այդ խնդրին: Չհրաժարվելով երգերը մետրական չափի ենթարկելուց, նա ժողովրդական սկզբնաղբյուրի բնույթը չխաթարելու ելք է փնտրել և ի վերջո առաջնորդվել հետևյալ սկզբունքով: «Մեղեդիները եվրոպական նոտագրության կանոններով չափի տակ դնելիս, ջանացել ենք ըստ կարելվույն չխախտել բնագրի պատկերը: Դժվարություն հարուցած պարագաներում հետևել ենք խոսքերի տաղաչափական կառուցվածքին, երբեմն գործածել կիսատրոհակներ և այլ միջոցներ երաժշտական նախադասությունը դյուրահաստակ անելու համար»⁹:

Ֆոլկլորագիտական հիմնահարցերի մասին խոսելիս Թումաճանն առաջարկում է իր յուրահատուկ լուծումները, տալով գիտական անհրաժեշտ հիմնավորումներ: Այսպես օրինակ, պարերգերի մասին խոսելիս, նա կանգ է առել մասնավորապես երաժշտական չափի ու շեշտի և բանաստեղծական տեքստի շեշտադրության սերտ կապի վրա, ուշադրություն է հրավիրել դրանց խոսքերի քառյակներում առկա անհարթությունների վրա, ինչը կարող է բազմապիսի անհամաձայնություններ առաջացնել խոսքի և եղանակի միջև: Նման դեպքերում, ըստ Թումաճանի, խոսքի և մեղեդու միջև ներդաշնակություն ստեղծողը կրկնակն է «Այսպիսի երգերում կրկնակների մեջ է, որ ընդհանրապես գտնում ենք չափի ու շեշտի ամենազմայլելի ազուցվածքներ»¹⁰: Այս մոտեցումը միանգամայն արդարացված է, քանի որ պարերգի «դեմքը» հենց կրկնակն է: Նրանով է ժողովուրդը ճանաչում և իրարից զատում պարերգերի տեսակները, նրա բովանդակությամբ է պայմանավորվում պարերգի բնույթը: Բանագետ Արուսյակ Սահակյանն

⁸ Նույն տեղում, էջ 7:

⁹ Նույն տեղում, էջ 15:

¹⁰ Նույն տեղում, էջ 15:

առաջարկել է պարերգի կրկնակը կոչել «հիմնատող կրկնակ», ի տարբերություն փոփոխվող «թափառիկ խաղիկների»:

Չափազանց հետաքրքիր են Մ.Թումաճանի մտքերը հայեցի և ոչ հայեցի երգամտածողության վերաբերյալ: Հավաքածուի մեջ տեղ գտած մեծաթիվ թրքալեզու և քրդալեզու երգերի մասին խոսելիս, նա հստակ սահմանագիծ է անցկացնում հայեցի մտածողություն և բովանդակություն ունեցող օտարալեզու երգերի և զուտ օտար երգերի միջև, պնդելով, որ տվյալ դեպքում լեզուն չէ, որ որոշիչ է: Նա գրում է. «Հայեցի և ոչ հայեցի երգերի ինքնորոշության համադրական վերլուծման համար բավականին ապահով մեթոդը պետք է լիներ լադային ելևեջների, չափաբերության և մանավանդ շեշտային հատկությունների բաղդատություն անելը»¹¹: Իր պարզաբանումը նա շարունակում է այսպես. «Չնայած խառն կամ թուրքերեն լեզվին, այս երգերն իրենց պարունակությամբ իսկ սերտորեն կապված են հայկական կյանքին ու ավանդական սովորություններին և դրանց հայկական ազգային պատկանելությունը կասկածի տեղիք չի տալիս: Նույնիսկ միայն թուրքերեն երգված այդպիսի երգերում պարունակությունը բացառապես հայ բարքերն են, ինչպես մկրտությունը, թաղումը, ուխտագնացությունը, հայկական զանազան տոները և մասնավորապես հարսանեկան ավանդական ծիսակատարությունները»¹²:

Լինելով ժողովրդական երգի խոր գիտակ, Թումաճանը լավ էր հասկանում տարբերակի արժեքը: Մինևույն երգի բազմաթիվ տարբերակների առկայությունը նա արժեքավոր է համարում հետևյալ երկու նկատառումներով: Նախ՝ ընդհանրացված և ավելի լիարժեք պատկերացում է կազմվում տվյալ երգատեսակի մասին, և երկրորդ՝ բազմապիսի ելևեջումները և ռիթմական դարձվածքները բարբառային բազմազանության պատկերի ուսումնասիրության ավելի լայն հնարավորություն են տալիս: «Այս սովորաթիվ փոփոխակների շնորհիվ երգողների գործածած երաժշտական ելևեջներին ու դարձվածքներին մոտից ընտելանալու ապահով առիթ ենք ունեցել, ինչ որ եղել էր մեզ մտահոգող ամենաեական հարցը՝ զանազան վայրերի յուրատեսակ երգեցողության ինքնատիպ հնչյունաշարերի բնույթին վարժեցնել մեր լսողությունը և ըստ այնմ առաջնորդվել մեր ժողովրդական և ավանդական երգերի մեջ բյուրավոր ձևերով ի հայտ եկող բարբառային ձայների երաժշտական և հնչյունային նրբություններն զգալու»¹³:

¹¹ Նույն տեղում, էջ 15:

¹² Նույն տեղում, էջ 16:

¹³ Նույն տեղում, էջ 18:

Այս հանգամանքը չափազանց էական նկատելով, Մ.Թումաճանը առաջարկում է ամենայն ուշադրությամբ և հետևողականությամբ զբաղվել բարբառագիտական ուսումնասիրություններով, հանձնարարում «ուշի ուշով սերտել ու հասկանալ փշրված ու բեկբեկ բեկորների լեզուն, որ խոսում են դարավոր անցյալի շքեղությամբ»¹⁴:

Մ.Թումաճանի խոր համոզմամբ, հայ երաժիշտների համար ամենակարևորն է՝ փնտրել հայեցի ոճը և աստիճանաբար ընտելանալ նրա յուրահատկություններին: Խոսքը երաժիշտների լայն շրջանակին է վերաբերվում. սավաճը կարևոր է թե՛ երաժիշտ-ֆոլկլորագետի, թե՛ կատարող նվագաձուկ և թե՛ ազգային երգ կատարող վոկալիստի համար: Թումաճանը նոտագրված տեքստի ետևում տեսնում է ոգեղեն մի բան, որն աննշմարելի է և հնարավոր չէ արտահայտել սովորական նոտագրության միջոցով: Նա գտնում է, որ «դժվար է, արդարև, ազգային - ժողովրդական լեզվական ու հնչյունային տվյալները երաժշտական արդի ընդունված քերականությամբ լիարժեք կերպով բացատրել»¹⁵: Հայ երաժշտությունը և խոսքն ունեն իրենց «բոլորովին ինքնահատուկ», սակայն անշոշափելի կողմը, որ ուսուցանելի չէ, կարելի է միայն զգալ և հարազատությամբ վերարտադրել: Թումաճանի կարծիքով՝ «եթե փափագ ունենք մեր հայեցի երգերը հայեցիորեն երգելու, ապա առանց նախապաշարումի կամ սնտոի ծանծաղամտության պետք է ասենք, թե երաժշտական բոլոր կիրթ ու քնքուշ մարզանքներն ու գովելի շնորհքները տակավին բավական չեն մեր երգերի այդ անշոշափելի շունչը ի հայտ բերելու»¹⁶:

Այդ անշոշափելին որսալու, զգալու և սեփականելու ճանապարհը գիտնականը տեսնում է ազգային երգին խորապես ծանոթանալու, այն սիրելու և ուսումնասիրելու մեջ: Գնահատելով և սիրելով ազգային ժառանգությունը, մենք հարգանքի տուրք ենք տալիս նախ և առաջ մեր իմաստուն նախնիներին, հպարտությամբ լցվում մեր հարստագույն ժառանգության նկատմամբ, սրբացնելով դարերի խորքից մեզ հասած ավանդը:

Չափազանց ուսանելի են Թումաճանի խորհուրդ-պահանջները երիտասարդ բանահավաքներին: Նա պահանջում է, որ բանահավաքը, մինչև երգասացին հանդիպելը, խորապես ծանոթանա ուսումնասիրվող ազգագրական գոտու բնությանը, աշխարհագրությանը, այդ տարածքի ժողովրդի նիստուկացին, բարքերին ու ավանդույթներին: Միայն այս

¹⁴ Նույն տեղում, էջ 19:

¹⁵ Նույն տեղում, էջ 19:

¹⁶ Նույն տեղում, էջ 19:

ամենի իմացության շնորհիվ է հնարավոր մտերմիկ զրույց ունենալ երգասացի հետ, գտնել նրա սրտի բանալին և, մոռանալ տալով նրա առօրյա հոգսերը, հմտորեն «կորզել» նրանից հոգու և մտքի ծայքերում պահված գանձերը: Խոր գիտելիքներով օժտված լինելով հանդերձ, նա երբեք չպետք է զգացնել տա, թե ավելին գիտե, քան նրա համար երգող մամիկը, հակառակը, պետք է նրա ապրումներին համընթաց գնա, իրախուսի, խանդավառի և խանդավառվի երգասացի հաղորդածով:

Շատ կարևոր է Մ.Թումաճանի այն ցուցումը, թե երգի եղանակը նոտագրելիս, բնավ պետք չէ միջամտել: Ոչ միայն պետք չէ միջամտել երգասացի երգած պահին, այլ նաև պետք չէ շտկել նոտագրությունը: Նույնիսկ թվացյալ «անկանոնություններ» չպետք է շտկել, այլ նոտագրել այնպես, ինչպես երգվել է: «Երգեր հավաքողը մի պահ պետք է մոռանա, թե ինքը երաժիշտ է: Գուցե տարօրինակ թվա, երբ ասենք, թե երաժիշտը ինքն իրեն պետք է համարի իբրև մի անզետ, որը սակայն, իր ունեցած երաժշտական բոլոր գիտելիքների ու քերականությունների վրա կոթնած, կարող է մեքենական ամենանուրբ ճարտարությամբ երգվածը գրի առնել այնպես, ինչպես որ է: Երգն այսպիսի «տգիտությամբ» գրի առնելուց հետո է միայն, որ երաժիշտն իր գիտությամբ ու հմտությամբ, իր դատողության ու տրամաբանության բովից անց է կացնելու այն և նշանակելու է՝ ընտիր, երբեմն գերընտիր, լավ, միջակ կամ խառն, պակասավոր և այլն»¹⁷: Այսինքն, նա պահանջում է նմուշը նոտագրել առանց «գեղարվեստական մաղով անցկացնելու», գտնելով, որ խիստ ընտրությունը ուսումնասիրման, և ոչ հավաքչական գործ է:

Մ.Թումաճանը մեծ նշանակություն է տալիս ստույգ անձնագրային տվյալների նշումին, քանի որ հաճախ հանդիպում են դեպքեր, երբ երգասացը տեղից-տեղ անցնելով, տարբեր վայրերում բնակվելով, չի կարող ներկայացնել որևէ ազգագրական գոտու ստույգ պատկեր, նրա գիտցածները կարող են խառնիխուռն լինել: Այդպիսի անձնավորության հաղորդածը ճշգրիտ ուսումնասիրելու համար պետք է ձեռքի տակ ունենալ ստույգ տեղեկություններ բոլոր բնակավայրերի մասին, ընդհուպ մինչև նյութի գրառման վայրը:

Զգուշավոր վերաբերմունք պետք է ունենալ նաև այն դեպքում, երբ երգասացը «շինելու», հարմարեցնելու, տեղին և անտեղի բացատրություններ տալու ճարտարություններ ունի: Այսպիսի դեպքում Թումաճանն առաջարկում է համբերատար ձևով՝ առանց վրդովմունքի և

¹⁷ Նույն տեղում, էջ 27:

վիրավորանքի, զգուշությամբ մեղմել երգասացի ավելորդ խանդավառությունը:

Թումաճանը զգուշացնում է, որ գոյություն ունեն նաև ուսումնական երգողներ, «որոնք երբեմն պարտք են համարում ժողովրդական հորինվածքն իրենց քիմքի համեմատ շտկել, սրբագրել»¹⁸: Դա է պատճառը, որ Թումաճանն իր հավաքչական աշխատանքի ժամանակ անաղարտ ֆոլկլորային նուշ ձայնագրելու ակնկալությամբ նախապատվությունը տվել է անուսում երգասացներին:

Այս բոլոր դիտարկումները ցույց են տալիս, որ գործ ունենք խոր գիտելիքներով զինված խոշոր մասնագետի, ֆոլկլորագիտության և ազգագրագիտության բնագավառի լուրջ տեսաբանի հետ: Նրա՝ սրբազան ակնածանքով և անսահման գործվանքով ստեղծած այս ժողովածուի մեջ ամփոփված ողջ նյութը, հեղինակային նախաբաններով և ծանոթագրություններով, կարող է շատ օգտակար լինել հայ երաժշտական արվեստը և հոգևոր մշակույթն ուսումնասիրողների համար: Հավաքչական, ազգագրագիտական և երաժշտագիտական այն հայեցակարգը, որը ստեղծագործական հավատամք էր Թումաճանի համար, իրավամբ կարող ենք գնահատել իբրև ուղեցույց, ուղերձ՝ ուղղված ներկայիս և ապագա այն նվիրյալներին, ովքեր շարունակելու են ազգանվեր այդ գործը:

Մ.Ղափլանյան

**Միհրան Թումաճանի ֆոլկլորագիտական հայացքները և
հավաքչական աշխատանքի սկզբունքները
Ամփոփում**

Հոդվածը նվիրված է հայ երաժշտական ֆոլկլորագիտության երախտավորներից մեկի՝ Մ.Թումաճանի (1890-1973) ֆոլկլորագիտական հայացքներին և հավաքչական աշխատանքի սկզբունքներին, որոնք ամփոփ ձևով ներկայացված են նրա «Հայրենի երգ ու բան» ժողովածուի նախաբանում: Ծանոթացումն այդ հայացքներին և սկզբունքներին կարող է մեծապես նպաստել արդի ֆոլկլորագիտության զարգացմանը:

С.Капелян

**Фольклористические взгляды и принципы собирательской работы
Миграна Тумаджана
Резюме**

Статья посвящена фольклористическим взглядам и принципам собирательской работы Миграна Тумаджана (1890-1973) - одного из

¹⁸ Նույն տեղում, էջ 27:

заслуженных деятелей армянской музыкальной фольклористики, представленные в предисловии его сборника „Айрени ерг у бан” (Армянские народные песни). Ознакомление с этими взглядами и принципами может весьма способствовать развитию современной фольклористики.

S. Ghaplanyan

**The folkloristic views and the principles of the collectional work of
Mihran Tumajan
Summary**

The article is devoted to the folkloristic views and the principles of collectional work of Armenian musical folklore scholar Mihran Tumajan (1890-1973), summarized in the preface of his collection „Hayreni Erg ou Ban”(Native folk Songs and Folk Sayings). The knowing of these views and principles can greatly contribute the development of modern folklore science.

ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների
պատմության ամբիոնի ասպիրանտ
ՀՏԴ 93/94

**ՎԱԽՈՒՇՏԻ ԱՐՔԱՅԱԶՆԻ ԿՅԱՆՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ,
ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Վախուշտի Արքայազն, Վախթանգ 6-րդ, պատմություն, աղբյուրագիտություն, պատմական աշխարհագրություն, Վրաստան, Ռուսաստան, օտար աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին:

Key words. Prince Vakhust, Vakhtang The Sixth, history, source studies, historical geography, Georgia, Russia, foreign sources about Armenia and armenians.

Ключевые слова. Принц Вахушти, Вахтанг 6-ой, история, источниковедение, историческая география, Грузия, Россия, иностранные источники об Армении и армянах.

Պատմական գիտության զարգացման ներկայիս փուլը բնորոշվում է մեզ հասած պատմական սկզբնաղբյուրների օբյեկտիվ և բազմակողմանի քննության, դրանց հասարակական ու սոցիալական վերաիմաստավորման վերելքով:

Ինչպես հայտնի է պատմական սկզբնաղբյուրները ներկայացնում են մարդկային հասարակության զարգացումը և այն գիտական վերլուծության ենթարկելու հնարավորություն են տալիս, ինչպես նաև տեղեկություն են պարունակում մարդկության գոյության ընթացքում ստեղծված ամեն ինչի մասին՝ ներառյալ հասարակական կյանքի բոլոր բնագավառները:

Աղբյուրագիտական հետազոտության խնդիր է հանդիսանում աղբյուրների օբյեկտիվության աստիճանը քննող և դրանց՝ աղեկվատությունը պատմական իրավիճակի հանդեպ ստուգող մեթոդների մշակումը, ինչպես նաև նրանց փոխանցած տեղեկությունների վերահանումը հետագա մշակման նպատակով:

Մեծ հասարակական մտածողների, գաղափարախոսների, ու քաղաքական գործիչների աշխատանքների ուսումնասիրումը, որոնք ունեցել են հսկայական նշանակություն հասարակության ու գիտության զարգացման վրա, միշտ էլ արդիական են համարվում: Նրանց

աշխարհայացքի ձևավորման վրա վճռական դեր է ունենում այն քաղաքական միջավայրը ու պատմական պայմանները, որոնցում նրանք ապրում, ստեղծագործում ու գործում են:

Հայոց պատմության և Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն օտար աղբյուրները: Այդ աղբյուրների դերը հատկապես մեծ է այն ժամանակավիշակում, երբ հայ ժողովուրդը զուրկ էր պետականությունից: Նման ժամանակաշրջան է 17-18-րդ դարերը: Այս ժամանակահատվածում թուրք-պարսկական լծի պայմաններում գիտության, այդ թվում պատմագրության, զարգացման համար անհրաժեշտ պայմանները բացակայում էին: Որպես հետևանք այս ժամանակաշրջանի մասին հայկական աղբյուրների կողմից հաղորդվող տեղեկությունները սահմանափակ են:

Այլ էր իրավիճակը հարևան Վրաստանում: Չնայած կենաց ու մահու պայքարին՝ պետականության գոյությունը նպաստում էր պատմագիտության զարգացմանը: Այս շրջանի խոշորագույն վրացի գիտնականներից էր Վախուշտի Բագրատիոնին (մոտավորապես 1696-1757թթ.)¹: Վերջինս Վրաստանում պատմագրությունը հասցրեց լրիվ նոր՝ գիտական, մակարդակի: Անուրանալի է նրա դերը նաև Վրաստանի և ողջ տարածաշրջանի պատմական աշխարհագրության ուսումնասիրության գործում: Նա իր «Վրաստանի պատմություն» աշխատության «Պատմություն» և «Աշխարհագրություն»² մասերում հանգամանակից

¹ Ст'а Вахушти Багратиони, История Царства Грузинского, перевод Н. Т. Накашидзе, Тбилиси, 1976, стр. 8.

² Վախուշտիի հիմնական աշխարհագրական աշխատանքը հիմնականում նվիրված է Վրաստանին և դիտվում է որպես հավելում նրա հիմնական պատմական աշխատանքի: Աշխատանքի ձեռագիր բնօրինակում աշխարհագրական մասերը հաջորդում են պատմական մասերին հեշտացնելու համար դրանց ընկալումը: - Վախուշտիի աշխատանքի առաջին ուսումնասիրող Մ. Բրոսսեն նշում է, որ աշխատանքը բաղկացած է լիովին անկախ և ինքնուրույն երկու՝ պատմական և աշխարհագրական մասերից և առանձնացրել է երկրորդը՝ աշխարհագրականը (1842 թվականի իր հրատարակության մեջ): Իրականում, եթե չհաշվենք առաջին և երկրորդ գլուխները, որոնք կարելի է ընդհանուր համարել ամբողջ աշխատանքի համար, մնացած աշխատանքում երկու բովանդակային մասերը լիովին պարզ կարելի է բաժանել: Հետևաբար Վրաստանի աշխարհագրական նկարագրություն մասը կարելի է դիտարկել և ուսումնասիրել որպես առանձին աշխատություն: Օգտվել ենք հետևյալ հրատարակությունից, որը ներառում է աշխատանքի և պատմական և աշխարհագրական մասերը և հրատարակվել է ձեռագրերի հրատարակման բոլոր չափանիշներին համապատասխան Տե'ս յճԹՕԼՕՅ

անդրադարձել է նաև Հայաստանի՝ Վրաստանի վարչական կազմի մեջ գտնվող հատվածի քաղաքական իրավիճակին, էթնիկ կազմին, պատմական աշխարհագրությանը: Վախուշտի Բագրատիոնիի գիտական գործունեության արդյունք հանդիսացող այս աշխատությունը հանդիսանում է կարևորագույն սկզբնաղբյուր Հայոց պատմության և Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրության համար: Աշխատանքի պատմական մասում առավել կարևոր է 15-ից 18-րդ դարերի իրադարձությունների ներկայացումը:

Ներկա հոդվածը վերաբերում է վրաց գիտնական ու պետական գործիչ Վախուշտի Բագրատիոնիի կյանքին ու գործունեության լուսաբանմանը, ինչպես նաև այն պայմաններին, որոնք էապես ազդել են նրա պատմամտածության ձևավորման վրա:

Վախուշտի Բագրատիոնիի մասին կենսագրական տեղեկությունները բավականաչափ սահմանափակ են: Այնուամենայնիվ կա հնարավորություն ընդհանուր գծերով վերականգնել վրաց մեծ գիտնականի կյանքի ու գործունեության պատկերը:

Վախուշտի Բագրատիոնին վրաց (Քարթլիի թագավորության) Վախթանգ 6-րդ թագավորի արտասանական որդին էր³: Նրա մայրը հասարակ գեղջկուհի էր⁴: Նա ծնվել է 1696 թվականին⁵: Դաստիարակվել է եղբոր՝ Բաքար արքայազնի հետ: Նրանց դաստիարակությամբ, բացի Ռուսոյան թագուհուց, զբաղվել է արքունական հոգևորական Իեսե Գարսևանաշվիլին և նրա եղբայր Գեորգին⁶, ինչպես նաև Սուլթան Սաբա-Օրբելիանին: Նա կրթություն է ստացել նաև եվրոպական միսիոներների մոտ, ինչը հետք է թողել գիտնականի հետագա գործունեության վրա⁷: Նրանց հետ Վախուշտին մտերմացել է մոտավորապես 16 տարեկան հասակում Թբիլիսիում: Սակայն Վախթանգը իմանալով այդ մասին և վախենալով, որ որդին կաթոլիկ կդառնա արգելեց նրան շփվել

ցեոջրեზა, ტომი 4, ბატონიშვილი ვახუშტი აღწერა სამეფოსა საქართველოსა, თბილისი, 1973 (այսուհետ յ. ც.):

³ Маруашвили Л., Вахушти Багратиони, его предшественники и современники, Москва, 1956, стр. 26.

⁴ Царевич Вахушти, География Грузии, Перевод Г Джанашивили, Тифлиси 1904, стр. X.

⁵ Նույն տեղում:

⁶ Вахушти Багратиони, История Царства Грузинского, Перевод и введение Н. Т. Накашидзе, Тбилиси 1976, стр. 8:

⁷ David Marshal Lang, The last years of Georgian Monarchy 1658-1832, New York 1958, p 127.

միսիոներների հետ⁸: Կան տեղեկություններ, որ Վախուշտին տիրապետել է հունարենին, լատիներենին, ռուսերենին ու հայերենին: Լատիներեն նա կարող էր սովորել հենց միսիոներների մոտ, հայերեն՝ Թբիլիսիում և Բորչալոյում եղած ժամանակ, իսկ ռուսերեն՝ Ռուսաստանում, ուր նա ապրել է բավականին երկար ժամանակ:

1717 թ.-ին նա ամուսնացել է Մարիայի՝ Գեորգի Աբաշիձեի դստեր, հետ⁹:

Հետագայում 1717-ից 1724 թվականներին նա ակտիվորեն մասնակցել է երկրի քաղաքական կյանքին: 1719 թվականին ղեկավարել է Լիախվի կիրճ ուղարկված գորաջոկատը, որի նպատակը կենտրոնախույս էրիսթավ Շանշեյի դեմ պայքարն էր¹⁰: Հաջորդ տարի ակտիվորեն մասնակցել է Իմերեթում Ալեքսանդրին գահին հաստատելու համար պայքարին. լինելով կազմակերպչի դերում¹¹: 1724 թվականին նշանակվել է Ներքին Քարթլիի¹² գորքերի հրամանատար¹³: Այս պաշտոնում եղած ժամանակ նրան հանձնարարվել է անցկացնել մարդահամար, որը և նա հաջողությամբ իրականացրել է: Այդ մարդահամարի արդյունքները պահպանվել են մինչև օրս և հրատարակվել Թաղայաշվիլու կողմից: 1722 թվականին ղեկավարել է երկիրը, այն ժամանակ, երբ Վախթանգը և Բաքար արքայազնը գորքով Գանձակում էին ու սպասում էին Պետրոս արքային¹⁴: Այս ընթացքում նա Թբիլիսիում ընդունել է Ռուսաստանի դեսպաններ Ի. Տոլստոյին ու Բ. Թուրքեստանիշվիլուն, քննարկել, նրանց հետ երկու երկրների համագործակցության հարցեր¹⁵:

⁸ Царевич Вахушти, География Грузии, Перевод Г. Джанашвили, Тифлиси, 1904, стр. 9.

⁹ Царевич Вахушти, География Грузии, Перевод Г. Джанашвили, Тифлиси, 1904, стр. X(10).

¹⁰ ქართლის ცხოვრება, ტომი 4, ბატონიშვილი ვახუშტი აღწერა სამეფოსა საქართველოსა, თბილისი, 1973, გვ. 504. (այսուհետ յ.ց.):

¹¹ Абрамидзе Теймураз, Географические и исторические изыскания Вахушти Багратиони в контексте грузинской эпохи 18-ого века, Вестник КГУ им. Н.А. Некрасова, № 1, 2013, стр. 138.

¹² Ներքին Քարթլին ընդգրկում էր Քարթլիի հարավ-արևելյան հատվածը՝ Փամբակ, Տաշիր, Աշոցք (վրացերենում՝ Աբոց) (ձուց), Սումխիթի:

¹³ յ.ց., გვ. 504.

¹⁴ Նույն տեղում, էջ 507.

¹⁵ Абрамидзе Теймураз, Географические и исторические изыскания Вахушти Багратиони в контексте грузинской эпохи 18-ого века, Вестник КГУ им. Н.А. Некрасова, № 1, 2013, стр. 138.

Վախուշտիի քաղաքական գործունեության մասին հստակ տեղեկություններ հաղորդում է անձամբ հեղինակը իր աշխատանքում, որից օգտվելով կփորձենք վերականգնել նրա քաղաքական դիմանկարը:

Վախթանգ արքայի Խորասան մեկնելու պատճառով նա երկրի գահը պարսից շահի համաձայնությամբ փոխանցում է իր որդի Բաքարին¹⁶: Նրա երկիրը ղեկավարելու ընթացքում (1717-1719 թվականի ամառ) Քարթլիում տեղի են ունենում ներքին խռովություններ: Էրիսթավներից Դաթունան, զրկվում է տիտղոսից, ինչը խռովության ալիք է բարձրացնում, որի ճնշման նպատակով Վախուշտին զորքով ուղարկվում է նրա դեմ, սակայն մինչև նրա ժամանանումը մահանում է Դաթունան, իսկ նրա որդիները գնում են Կախեթ ու Վախուշտին գրավում է նրանց տիրույթները¹⁷: Որդիներից Շանշեն մեկնում է շահի մոտ, սակայն ձերբակալվում է նրա կողմից և հանձնվում Վախթանգին, ով նոր էր վերադարձել Աֆղանստանից¹⁸: Հետագայում Շանշեն փախուստի է դիմում և հաստատվում Լիախվիում և կրկին Վախուշտին ուղարկվում է նրա ետևից, սակայն սկզբնական հաջողություններից հետո պարտություն է կրում կախեթցիներից, և միայն Իմերեթից ստացված օգնությունը ստիպում է Շանշենին հանձնվել Վախուշտիին ու նրա եղբայր Բաքարին¹⁹: Սակայն հետագայում էլ վերջինիս հաջողվեց փախուստի դիմել: Այս դեպքերից հետո Վախուշտին ուղարկվում է Իմերեթ, թուրքերի դեմ պայքարում օգնելու համար: Նույն տարում Գանձակի խանը գալիս է Շուլավեր և գրավում այն²⁰: Լսելով դա արքան Վախուշտիին զորքով ուղարկում է նրա դեմ: Այստեղ Վախուշտիի բանակը կոտորում է Բորչալու ցեղին, սակայն խանը դուրս չի գալիս Աղջակալայի²¹ ամրոցից: Սակայն հաջորդ օրը տեղի է ունենում ճակատամարտ, որում Վախուշտին հաղթանակ է տանում և վերադառնում Թբիլիսի²²: Այնտեղից նա Բաքարի կողմից ուղարկվում է Մցխեթ, քանի որ Դեմետրե Կապլանաշվիլին, ում Մցխեթի բնակիչները խնդրել էին

¹⁶ Ժ.Գ., 83. 511.

¹⁷ Նույն տեղում, էջ 497-498.

¹⁸ Նույն տեղում, էջ 501.

¹⁹ Նույն տեղում, էջ 515.

²⁰ Նույն տեղում, էջ 501.

²¹ Աղջակալա անունով բազմաթիվ բնակավայրեր կային ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի տարածքում, այս դեպքում հեղինակը նկատի ունի Լոռիից հյուսիս-արևելք և Թբիլիսիիսըց հարավ արևելք գտնվող ամրոցը (Robert H. Hewsen, Armenia, a historical atlas, Chicago and London, 2001. P. 170).

²² Ժ.Գ., 83. 516.

գրադեցնել քաղաքը, արքայից գորք էր խնդրում²³: Դրանից առաջ ուղարկվել էր Վախթանգ արքայի եղբայր Իեսեն, ու հաղթել կախեթցիներին, սակայն հետո չջանկանալով կռվել հեռացել էր Մուղրան: Վախուշտին 6 հարյուր գորքով մոտեցավ ու պաշարեց Մցխեթը: Այդ ժամանակ եկեղեցում աղոթող կախեթցիներին մցխեթցիները փակեցին այնտեղ ու այդ ժամանակ արքայական գորքը մտավ ու գրավեց քաղաքը: Ձերբակալվեցին ապստամբ էրիսթավները և տարվեցին Թբիլիսի արքայի մոտ: Հետագայում Վախուշտին ուղարկվեց Մարտկոպի, որը ևս ավերեց ու վերադարձավ Թբիլիսի²⁴:

Բոլոր այս արշավանքները ուղղված էին երկրի կենտրոնախույս ուժերի դեմ և այս պայքարում, ինչպես տեսնում ենք, առաջամարտիկը հենց Վախուշտին էր: Թերևս այս իրադարձությունները մեծապես ազդեցին քաղաքական գործչի ու գիտնականի հզոր կենտրոնացված պետություն ունենալու տեսլականի ձևավորման վրա:

Հավելենք որ Վախուշտին հանդիսանում էր նաև ավատատեր: Նրան էր պատկանում 60 գյուղական ծուխ²⁵, որը այդքան էլ մեծ թիվ չէր, էթե համեմատենք արքայական ընտանիքի մյուս անդամների հետ թագավորը ուներ 554 , թագուհին՝ 393, Սիմոն արքայազնը՝ 116, Բաքար արքայազնը՝ 173²⁶:

1724 թվականին Վախուշտին Վախթանգ արքայի և նրա արքունիքի հետ տեղափոխվում է Ռուսաստան և հաստատվում Աստրախանում, իսկ 1727թ-ին տեղափոխվում Մոսկվա, հաստատվում Պրեսնիե ավանում, որտեղ և ապրում է մինչև կյանքի վերջ: Մոսկվայում նա զբաղվում էր մշակութալուսավորչական և գիտական ակտիվ գործունեությամբ՝ դրա համար ունենալով բոլոր հնարավորությունները՝ լավ կրթված էր, ուներ պետական կառավարման հարուստ փորձ և հարուստ կապեր ռուսական ռազմաքաղաքական ու մշակութային վերնախավի հետ: Նա արդեն կայացած պետական գործիչ էր և ուներ ձևավորված հայացքներ, որոնց հիմնական գաղափարներն էին՝ Վրաստանի անկախությունը ու միասնականությունը, երկրի պառակտվածության հաղթահարումը, անջատողականության հաղթահարումը: Սրանով պետք է պայմանավորել այն հանգամանքը, որ լինելով ազգությամբ վրացի նա իր

²³ Նույն տեղում, էջ 502:

²⁴ Նույն տեղում, էջ 497.

²⁵ David Marshal Lang, The last years of Georgian Monarchy 1658-1832, New York 1958, p. 65-67.

²⁶ Նույն տեղում էջ 66:

աշխատանքներում աչքի չի ընկնում ընդգծված հակահայկական հայացքներով (Հայ վրացական միջէթնիկ հարաբերությունները այս շրջանում մեղմ ասած հարթ չէին ու կային բազմաթիվ հակասություններ, որոնք նկատել են նույնիսկ շատ քիչ ժամանակով Վրաստանում եղած ճանապարհորդները²⁷): Դա կարելի է պայմանավորել մի շարք հանգամանքներով և առաջին հերթին նրանով, որ Վրաստանում ուսումնասիրվող ժամանակաշրջանում կենտրոնախույս ուժերը հիմնականում վրացական վերնախավի ներկայացուցիչներ էին: Դրան հակառակ Վրաստանում ապրող, կամ Վրաստանի վարչատարածքային կազմում գտնվող հայկական երկրամասերի հայ բնակչությունը ոչ միայն չէր դրսևորում կենտրոնախույս ձգտումներ, այլ կողմ էր վրացական կենտրոնացված հզոր պետության գոյությանը, որը կունենար ուժեղ թագավորական իշխանություն: Փաստորեն այս հարցում Վրաստանի հայ բնակչության ու Վախուշտիի, այս դեպքում որպես վրացական միասնական հզոր պետության գոյության ջատագովի ու վրացական թագավորական տան ներկայացուցչի, հայացքները համընկնում էին:

Արդ անդրադառնանք Վախուշտիի աշխատանքի արդյունք հանդիսացող հիմնական աշխատության՝ Վրաստանի պատմության, կառուցվածքին ու բովանդակությանը:

Աշխատանքի կառուցվածքը:

Աշխատանքի ձեռագիրը, կազմված հեղինակի կողմից ունի հետևյալ կառուցվածքը՝

- Խոսք ընթերցողին ներկա աշխատանքի նշանակության մասին
- Վրացիների ավանդույթների ու սովորությունների մասին²⁸
- Վրացական թագավորության պատմությունը մինչ 1469 թ.-ը նրա բաժանումը երեք թագավորությունների ու հինգ իշխանությունների²⁹
- Նախաբան³⁰

²⁷ Жан Шарден, Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг., Тифлиси 1902 г., стр. 204.

²⁸ Այստեղ տրված է Վրաստանի ազգագրական նկարագիրը անհիշելի ժամանակներից մինչև տասնութերորդ դարի առաջին կեսը:

²⁹ Աշխատանքի այս հատվածը նախորդ հեղինակների աշխատանքների խմբագրում ու վերաշարադրում է Վախուշտիի կողմից

³⁰ Հեղինակը նշում է Վրաստանը բաժանվեց Քարթլիի, Իմերեթի, Կախեթի թագավորությունների միջև, սակայն նրա բնակչությունը մնաց նախկինը քարթվելական, որը խոսում է նույն լեզվով, գրում քարթվելերեն, խոնարհվում

- Ժամանակակից Քարթլիի նկարագրությունը՝ նրա սահմանների, լեռների, գետերի ու բնակավայրերի նշումով
- Քարթլիի արքաների կյանքը ու գործերը (1469–ից 1745 թթ)
- Հերթիի, Կախեթիի, Կուխեթի, Դուշեթի և Դիդղեթի նկարագրությունը ու պատմությունը
- Ժամանակակից Օսեթիայի և Կովկասյան լեռնականների նկարագրությունը
- Սամցխե Սաաթաբագոյի հայտնի վայրերի նկարագրությունը
- Սամցխե Սաաթաբագոյի կյանքը՝ պատմությունը
- Էգրիսի կամ Աբխազեթի կամ Իմերեթի նկարագրությունը
- Էգրիսի կամ Աբխազեթի կամ Իմերեթի կյանքը՝ պատմությունը
- Ժամանանագրական ցուցանակ³¹
- Ժամանակագրական ցուցանակ³²
- Ներկա գրքում հիշատակվող արքաների, երկրների, ու վայրերի անվանումների ցանկ
- Վրացական ու հունական թվագրությունների զուգահեռ ցուցակ:

Վախուշտիի հիմնական աշխատանքը վերաբերում է Վրաստանի աշխարհագրական նկարագրությանը, Վրաստանի պատմական տարածքի

խաչերին ու սրբապատկերներին, որոնց վրա վրացերեն գրություններ են, պահպանում ավանդույթները նախկին թագավորների՝ Վախթանգի, Դավիթ Շինարարի, Թամարի մասին: Չնայած նման ամուր կապերին վրացիները ներքին ու գլխավորապես արտաքին պատճառներով բաժանվեցին առանձին քաղաքական միավորների: Դրանից հետո տարեգրությունները սկսեցին անուշադիր վարել, թագավորների ու իշխողների, սրբերի գործերը գրի էին առնվում համառոտ սիգելներում, հուշարներում, եկեղեցական գրքերում, հակիրճ պատմություններում, կամ փոխանցվում էին բանավոր: Դրանք համակարգելու համար անհրաժեշտ էր աշխատանք , որը անողները գտնվեցին, ովքեր մեր հոր՝ Վախթանգի անունով գրեցին պատմություն, բայց թույլ տվեցին նրանում բազմաթիվ հակասող տեղեկություններ ու սխալներ, ինչը ստիպեց մեզ մեր վրա վերցնել նոր աշխատանք և ներկայացնել պատմությունը ու ժամանակագրությունը մշակված տեսքով յ.Յ., ՅՅ. 16-17.

³¹ Ցույց է տալիս Վրաստանում, Պարսկաստանում և մասամբ Թուրքիայում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները 1201-1755 թթ.:

³² Ցույց է տալիս վրացական արքաներին ու կաթողիկոսներին ժամանակակից եվրոպական ու ասիական արքաներին սկսած Փարնավազ արքայից:

ձևավորման պրոցեսին, նրա թագավորություններին ու իշխանություններին:

Պետության տարածքի ձևավորման պրոցեսի, նրա բնական պայմանների նկարագրությունը, տնտեսությունը, պետության կառավարման մեխանիզմները հենց կազմում են երկրի աշխարհաքաղաքական մտքի առարկան³³: Փաստորեն, բացի պատմական կարևոր սկզբնաղբյուր լինելուց Վախուշտիի աշխատանքը հանդիսանում է վրացական աշխարհաքաղաքական դպրոցի հիմնասյուններից մեկը, իսկ Վախուշտին՝ վրացական աշխարհաքաղաքականության հիմնադիրը: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր երկրի աշխարհաքաղաքական միտքը անցնում է զարգացման մի քանի փուլեր, նշենք, որ պատմականության պահպանման անհրաժեշտությունից ելնելով պետք է Վախուշտիի աշխատանքը դիտարկել իր ժամանակաշրջանի՝ այն է զարգացած ֆեոդալիզմի կոնտեքստում, հաշվի առնելով ժամանակաշրջանի պատմական, քաղաքական և աշխարհագրական մտքի առանձնահատկությունները: Վախուշտիի գաղափարները ընկան վրացական աշխարհաքաղաքական արևելյան դպրոցի հիմքում, ինչն էլ հետագայում նպաստեց Վրաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ ընդգրկվելուն: Հավելենք, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Քարթլիի թագավորության ռուսական կողմնորոշումը միանշանակ չէր: Մինչև դեպի հյուսիս աշխարհաքաղաքական շրջադարձ կատարելը Վախթանգ արքան հույսեր էր կապում եվրոպական պետություններից հնարավոր օգնության հետ: Որպես ապացույց կարող ենք նշել Սուլթան Սաբա-Օրբելիանիի³⁴ եվրոպական դեսպանությունը (1713-1716թթ.)³⁵, որի նպատակը Ֆրանսիայից ու Հռոմի պապից օգնություն ստանալն էր: Սակայն

³³ Гладкий Ю.Н. Россия в лабиринтах географической судьбы. СПб., 2006, с. 21.

³⁴ Վրաց հայտնի հասարակական պետական գործիչ, Օրբելիանի իշխանական տան ներկայացուցիչ, հեղինակել է իր Եվրոպայում կատարած ճանապարհորդությունների նկարագիրը, մասնակցել Կովկասի քարտեզի կազմելուն Գիյոմ Դելիլի կողմից:

³⁵ Սուլթան Սաբա Օրբելիանիի Եվրոպայից վերադառնալուց հետո Վրաստանում տեղի ունցան կարևոր փոփոխություններ: Վախթանգը հասկանալով, որ եվրոպական երկրներից չի կարող իրական օգնություն ակնկալել, ընդունեց մահմեդականություն և ստացավ վրացական գահը պարսկական իշխանություններից: Նշելի է, որ այս նույն ժամանակ նա արգելեց Վախուշտիին շփվել միսիոներների հետ: Արքայի այս քայլը կրում էր ոչ թե դաստիարակչական բնույթ, ինչպես հաճախ նշվում է գրականության մեջ, այլ վկայում էր Վրաստանի արտաքին քաղաքականությունում կտրուկ շրջադարձի մասին:

Եվրոպական կողմնորոշումից զատ վրացական արքունիքում ազդեցիկ էր նաև Պարսկաստանի հետ համագործակցությունը շարունակելու կողմնակից Բաքար արքայազնը: Նրա և Վախթանգ արքայի միջև հարաբերությունները սրվեցին հատկապես 1722թ.-ին, երբ Վախթանգը պատրաստվում էր շարժվել Գանձակ ռուսական բանակի հետ միավորվելու համար: Դրա փոխարեն Բաքարը առաջարկում էր օգնության գնալ շահին, թույլ չտալու համար աֆղանների կողմից Սպահանի գրավումը³⁶: Հաղթող դուրս եկավ ռուսական կողմնորոշումը, որի արդյունքում Վախթանգը պարտություն կրեց ու ստպված քր լքել Վրաստանը ու տեղափոխվել Ռուսաստան:

Դ. Կարապետյան

Ամփոփում

Այսպիսով Վախուշտի Բագրատիոնին բացի հայտնի պատմաբան ու աշխարհագրագետ լինելուց նաև ականավոր պետական ու ռազմական գործիչ էր, ով իր հոր Վախթանգ արքայի ու եղբոր Բաքար արքայազնի հետ պայքարում էր երկրի անկախության պահպանման համար: Այդ պայքարի ընթացքում ձեռք բերված դասերը ու գիտելիքները հետագայում ընկան նրա աշխատանքների հիմքում, որոնցում կենտրոնականը Վրաստանի միասնականության գաղափարն էր:

Д. Карапетян

Резюме

Подводя итоги можем отметить, что, помимо известного историка и географа, Вахушти был также видным государственным и военным деятелем, который воевал вместе со своим отцом, царем Вахтангом и своим братом-принцем Бакаром за независимость страны. Уроки и знания, приобретенные в ходе этой борьбы, впоследствии легли в основу его работы, в которой центральной идеей было единство Грузии.

D. Karapetyan

Summary

To summarize we note,- In addition to being a famous historian and geographer, Princ Vakhust was also a prominent state and military figure who fought with his father, King Vakhtang and his brother, Prince Bakar, for the independence of the country. The lessons and knowledge acquired during that struggle later fell into the foundation of his work in which Georgia's unity was the central idea.

³⁶ История Грузии, Том 1, Тбилиси, 1962, стр. 341.

ՎԵՂԻ ԳԱՎԱՌԸ 1590 Թ. ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՐԿԱՅՈՒՑՈՒՑԱԿՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. Վեղի, Օսմանյան կայսրություն, Ռևան, օսմանյան հարկացուցակ, հարկեր, քիլե, աքչե:

Ключевые слова: Веди, Османская Империя, Реван, османский налоговый реестр, налоги, киле, акче.

Keywords: Vedi, Ottoman Empire, Revan, ottoman tax register, taxes, kile, akçe.

Օսմանյան կայսրությունը 16-րդ դարի վերջերին Սեֆյան Իրանի դեմ ռազմական գործողությունների արդյունքում, ի թիվս այլ տարածքների, գրավելով ողջ Այսրկովկասը, ձեռնամուխ է եղել նոր շրջանների աշխարհագրի անցկացմանը միտված քայլերին: Այդ գործընթացը ներառել է նաև Երևանի վիլայեթի 1590 թ. հանգամանալից աշխարհագիր-ցուցակները¹, որտեղ անբակտելի մաս է կազմել Վեղիի գավառը²:

Վեղիի հարկացուցակը կարևոր սկզբնաղբյուր է շրջանի ժողովրդագրության և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման համար: Աշխարհագրի շնորհիվ կարելի է պարզել գյուղանունները, այնտեղ հաշվառված մարդկանց քանակը, նրանց անունները, գավառի էթնիկական կազմը, գյուղերից գանձվող հարկերը և մի շարք կարևոր այլ հարցեր:

Ըստ 1590 թ. օսմանյան հարկացուցակի տվյալների, Վեղիին են պատկանել 53 գյուղ: Դրանց թվում են եղել Մեծ Վեղի, Աշթի, Փոքր Վեղի, Քարաբաղ, Ջիդին³, Բաղչաջաք, Մունլա Մեյֆ Ալդին, Խոսրով, Մեծ Դիքլու, Փոքր Դիքլու, Չուբանդազ, Վերին Քարաբիդ, Ներքին Քարաբիդ, Օշար, Քըզըլվիրան, Ջենջիրլու, Ինջա Դիրե, Աղչաքիլիսե, Քաղիքենդի, Աղչավիրան, Գութուս, Հաքաս, Չանլու, Ջարմալիս, Քուսուս, Ջարդաքլու, Փունուս, Քարաջա Աբդալ, Գյոլ քենդի, Թինաս, Շեյխաջաք, Քինգաք,

¹ Başbakanlık Osmanlı Arşivi, TT, 0633, Tapu Tahrir Defteri, 52,5 X 20, Numaralı 394 (այսուհետև՝ BOA).

² BOA. Էջ 214-227:

³ Գյուղանվան ճշգրտությունը հստակ չէ:

Ախփարս, Խամուղ, Մանքիք, Ջիմմի,⁴, Անգիզ, Մուսա Դերվիշ, Շահրիյար, Սուլթան Սարայ, Ալի Քարա, Մաքար Դերվիշ, Շաքար Ալքուջ, Քարախաչ, Միրարուս, Արմուք, Գել Դերվիշ, Քամիշլու, Փոքր Դիքլու, Քուրավան, Միրաքլու Բուջադը և Փիրիլու գյուղերը:

Նշյալ գյուղերի ճնշող մեծամասնության դիմաց որևէ բնակիչ արձանագրված չէ և միայն 9 գյուղ է աչքի ընկել հաշվառված գյուղացիներով: Այդ բնակավայրերից էին Մեծ Վեդին, Աշթին, Փոքր Վեդին, Քարաբաղը, Ջիդինը, Մունլա Սեյֆ Ալդինը, Խոսրովը, Մեծ Դիքլուն և Քուրավանը:

Գյուղերի համատեքստում մեծ կարևորություն է ներկայացնում ամենաշատ բնակչություն արձանագրված բնակավայրերի ուսումնասիրությունը, որոնց շրջանում աչքի է ընկել Մեծ Վեդին, ուր նշված է 81 շունչ: Դրան հաջորդել է Մեծ Դիքլուն՝ 40 հաշվառված անձով: Ինչ վերաբերում է մյուս 7 գյուղում հաշվառված մարդկանց տվյալներին, ապա նրանց թիվը տատանվել է 7-ից 33-ի միջև:

Հարկացուցակում գրանցված մարդկանց վիճակագրությունը հնարավորություն է տալիս ներկայացնելու գավառի ժողովրդագրական պատկերը: Աշխարհագրի թարգմանությունը ցույց է տալիս, որ գյուղերում բնակվել են այլադավաններ⁵ և մահմեդականներ. ընդ որում նրանք ապրել են միայն առանձին գյուղերում: Հարկ է նշել, որ անձնանունների քննությունից կարելի է փաստել, որ ոչ մահմեդականները եղել են հայազգի:

Վեդիի աշխարհագրում հայերը արձանագրված էին 3 գյուղում՝ Քարաբաղում (33 շունչ), Ջիդինում (7 շունչ) և Խոսրովում (10 շունչ): Ինչ վերաբերում է գավառի մահմեդականներին, ապա նրանք, բնականաբար, բնակվել են բնակչությամբ աչքի ընկած մյուս 6 գյուղում: Այսպես օրինակ՝ Մեծ Վեդիում գրանցվածների թիվը կազմել է 81 շունչ, Աշթիում և Փոքր Վեդիում 28-ական շունչ, Մունլա Սեյֆ Ալդինում՝ 21 շունչ, Մեծ Դիքլումում՝ 40 շունչ և Քուրավանում՝ 27 շունչ:

Վերոնշյալ տվյալներից ստացվում է, որ գավառում հաշվառվել է 50 հայ և 225 մահմեդական: Հարկ է նկատել, որ հարկացուցակում հայերի շրջանում որևէ ամուրի գրանցված չէ, ուստի եղել է նույնքան ընտանիք: Դրան զուգահեռ, մահմեդական ընտանիքների թիվը կազմել է 197-ը, որը պայմանավորված է եղել 28 ամուրիի գոյությամբ: Այսպիսով, ընթացիկ փաստերից երևում է, որ հայերը գավառում կազմել են փոքրամասնություն:

⁴ Գյուղանունը հարկացուցակում լավ չի երևում:

⁵ Այն բնորոշվել է «کبران»-«Գյաբռան» եզրույթով, որը վերաբերել է ոչ մահմեդականներին:

Թեպետ բնակչությանը աչքի ընկած քիչ գյուղերին, այնուամենայնիվ, դրանց շրջանում եղել են այգիներ, պարտեզներ և չիֆթեր⁶: Հատկապես շատ էին այգիները, որոնց թիվը գավառում 214 հատ էր: Ամենաշատը նկատելի է Քարաբաղում և Մեծ Վեդիում, որտեղ եղել են համապատասխանաբար՝ 93 և 88 այգի: Այգիներին զուգահեռ նշվել են նաև մի շարք պարտեզներ, որոնք գավառում 19 հատ էին: Ինչ վերաբերում է չիֆթերին, ապա նրանց թիվը ամբողջ գավառում չի գերազանցել 10-ը:

Աշխարհագրի հաջորդ հատվածը վերաբերում է գավառում սահմանված հարկերին: Նկատելի են իսփենջի⁷, բեննաքի⁸, դյոնումի, ցորենի, գարու, կորեկի, սիսեռի, քաղցուի, մրգի, ոսպի, բրնձի, բամբակի, այգիների, ինչպես նաև՝ չիֆթլիքների մուքաթիայի⁹, փեթակի, բանջարանոցի, խոտի, արոտի, ձմեռակացի, ոչխարների, դաշտապահության և հողի թափուի¹⁰, հարիջի¹¹, բադիավայի¹² և հարսնության, ջրաղացների և ներկատնի համար գանձվող հարկերը:

Վերոնշյալ հարկերի մեծամասնությունը գանձվել է յուրաքանչյուր գյուղից: Դրանք էին՝ իսփենջի կամ բեննաքի հարկը¹³, ինչպես նաև դյոնումից, ցորենից, գարուց, կորեկից, փեթակից, բանջարանոցից, խոտից, արոտից, ձմեռակացից, ոչխարների հարկից, դաշտապահության և հողի թափուից, հարիջից, բադիավայի և հարսնության հարկերից պահանջվող

⁶ Չիֆթ կամ չիֆթլիքը այն հողակտորն էր, որը մշակվել է մի զույգ եզան միջոցով: Երևանի վիլայեթում չիֆթի չափը ամենաբերրի հողերում կազմել է 80 դյոնում (1 դյոնումը՝ երկարությամբ և լայնությամբ՝ 40 քայլ), միջին արգասաբեր հողերում՝ 100 դյոնում, իսկ ոչ լավ տեղերում՝ 130 դյոնում: Այն բաժին էր հասնում միայն ամուսնացած մահմեդական տղամարդկանց:

⁷ Հարկի տեսակ, որը վճարել են ոչ մահմեդական չափահաս տղամարդիկ:

⁸ Հողագործ մահմեդականի ֆեոդալին վճարած հարկերից մեկն է. կար երկու տեսակի բեննաք՝ էքինլու և ջաբա: Էքինլու բեննաքի հարկ էին վճարում այն հպատակները, որոնք ունեին կես չիֆթից պակաս հողակտոր, իսկ ջաբա բեննաքի հարկ վճարողները հող չունեին:

⁹ Խոսքը բերքի հաստության դիմաց միանվագ սահմանված վճարի մասին է:

¹⁰ Հողաբաժին պահելու իրավունք, որը տալիս էր ֆեոդալ հողատերը: Դրա դիմաց՝ գյուղացին պետք է վճարեր ֆեոդալին:

¹¹ Հարիջ էր կոչվում այն հպատակը, ով իր ֆեոդալի տիրություններից դուրս մեկ այլ տեղ հող ուներ:

¹² Եկամտի լրացուցիչ աղբյուրների հետամուտ լինելով՝ օսմանցի կառավարիչները տուգանում էին գյուղացիներին: Բադիավան գանձվող տուգանքների և հարկի ընդհանուր անունն է:

¹³ Կախված կրոնական և դասակարգային տարբերությամբ:

տուրքերը: Մնացյալ հարկերը, պայմանավորված տվյալ գյուղի սոցիալ-տնտեսական հնարավորություններով, պայմանական բնույթ ունեին:

Դատելով սահմանված հարկաչափերից՝ կարելի է փաստել, որ ամենաբարձրը ցորենից, բամբակից և գարուց պահանջվող հարկադրուքներն էին, որոնք ամենաշատն էին զարգացած գավառում:

Ուշագրավ է, որ օսմանյան իշխանությունները Վեդիի գավառում որոշ հարկերի դիմաց սահմանել էին նրանց հստակ դրամական չափը: Այսպես օրինակ՝ ցորենի և ոսպի մեկական քիլեից¹⁴ սահմանվել է 8-ական աքչե¹⁵, իսկ գարու ամեն մի քիլեից գանձվել է 6-ական աքչե:

Հարկերի համատեքստում կարևոր է նաև ջրադացների և ներկատների քանակի ուսումնասիրությունը: Պարզվում է, որ գավառում հաշվառված է եղել 41 ջրադաց, որից 5-ը շահագործման ենթակա չէին: Դրանցից գանձվել է 30-ական աքչե: Ինչ վերաբերում է ներկատներին, ապա գավառում դրանք երկուսն էին, որից մեկը Մեծ Վեդիում էր, իսկ մյուսը՝ չբնակեցված Ջենջիրլու գյուղում: Առաջին գյուղում դրա դիմաց գանձվել է 1000 աքչե, իսկ Ջենջիրլուում ներկատնի հարկաչափը սահմանված չի եղել:

Մեկ այլ ուշագրավ իրողություն, որը կապված գյուղերից գանձվող ընդհանուր հարկաչափերին: Ընթացիկ հարկացուցակից պարզվում է, որ ամենաբարձր հարկերը գավառում գանձվել են Մեծ Վեդիում, որի չափը կազմել է 80000 աքչե: Իսկ ամենափոքր հարկաչափը սահմանված էր Աղաքիլիսե գյուղում՝ 1000 աքչե: Ինչ վերաբերում է մնացյալ գյուղերի դիմաց սահմանված հարկաչափերին, ապա դրանք խիստ տատանվել են:

Այսպիսով, Վեդիի օսմանյան հարկացուցակը կարևոր տեղեկություններ է հաղորդում գավառի ժողովրդագրական տվյալների վերաբերյալ: Բացի այդ, դրա միջոցով, կարելի է վերհանել գյուղերի սոցիալ-տնտեսական պատկերը՝ բնակեցվածությունն՝ ըստ գյուղերի և տեղեկանալ գյուղերից գանձվող հարկաչափերին:

¹⁴ Ընդդեմի (ցորեն, գարի և այլն) չափման միավոր, որը տարբեր է եղել ըստ ժամանակաշրջանի:

¹⁵ Արծաթե դրամի միավոր: Օսմաներեն նշանակում է սպիտակավուն: Օսմանյան աքչեները հավասար էին մեկ քառորդ դիրհեմ արծաթի, իսկ դիրհեմը հավասար էր 3.06 գրամի:

Գ. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

**ՎԵՂԻ ԳԱՎԱՌԸ 1590 Թ. ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿՈՒՄ
ԱՄՓՈՓՈՒՄ**

Վեղի գավառի հարկացուցակը կարևոր սկզբնաղբյուր է ժողովրդագրության և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման համար: Վեղիի աշխարհագիրը տեղեկություններ է հաղորդում գյուղերի քանակի, բնակչության էթնիկ կազմի, գանձվող հարկերի մասին և այլն: Գավառում հաշվվել է 53 գյուղ, որից 44-ում բնակչություն արձանագրված չէ: Վեղիում բնակչության մեծամասնությունը կազմել են մահմեդականները: Գյուղաբնակները իշխանություններին վճարել են տարատեսական հարկեր, որոնց մեծ մասը գանձվել է յուրաքանչյուր գյուղից:

Г. МИРЗАБЕКЯН

**ПРОВИНЦИЯ ВЕДИ В ОСМАНСКОМ НАЛОГОВОМ РЕЕСТРЕ 1590 Г.
РЕЗЮМЕ**

Налоговый реестр провинции Веди важный источник по исследованию демографических и социально-политических вопросов. Перепись Гарни предоставляет данные об количестве сел, этническом составе, взимаемых налогах и тд. В провинции насчитывалось 53 сел из которых в 44-и не были зафиксированы жители. Большинство населения Веди составляли мусульмане. Крестьяне сел платили османским властям различные налоги большая часть которых собиравалось с каждого села.

G. MIRZABEKYAN

**THE VEDI PROVINCE IN THE 1590 OTTOMAN TAX REGISTER
SUMMARY**

The tax register of Vedi province is an important source from the aspect of demography and socio-economic issues. The tax register of Vedi gives an opportunity to research the quantity of villages, ethnic composition, taxes, etc. The province contains a list of 53 villages including 44 ones where it is not registered population. The most population of Vedi were Muslims. The villagers paid different taxes to the Ottoman authorities mostly them collected from every settlements.

ԿԱՐՍԻ ԹԱԳԱՎՈՐ ԳԱԳԻԿ Բ-Ի 1065 Թ. ԳԱՂԹԸ

Բանալի բառեր. Բագրատունիներ, գաղթ, Գորանդուխտ, Վանանդ, Գագիկ Բ Կարսեցի, սելջուկ-թուրքեր, դիվանագիտություն, Մարիամ Կուրապաղատ:

Ключевые слова: Багратиды, переселение, Горандухт, Вананд, Гагик II Карсский, тюрки-сельджуки, Аристакес Ластивертский, дипломатия, Мариам Курапалат.

Key words: Bagratids, migration, Gorandukht, Vanand, Gagik of Kars, Seljuk Turks, Aristakes of Lastiver, diplomacy, Mariam the Kuropalattisa.

1. Կարսի թագավորության հիմնման նախադրյալները

IX-րդ դարի վերջին Բագրատունիների վարած շրջահայաց քաղաքականության շնորհիվ վերականգնվեց հայոց թագավորությունը: Բագրատունի առաջին գահակալ Աշոտ Ա-ի (887-891)¹ միավորիչ գործունեության շնորհիվ կենտրոնախույս ձգտումներ դրսևորած Վանանդի (Կարս) իշխան Սահակ-Մլեհի ապստամբությունը 888 թ. ճնշվեց, իսկ Վանանդ գավառը հարքունիս գրավվեց² և Բագրատունիների տիրույթի վերածվեց: Այն ամրացվեց և դարձավ հայոց սպարապետների նստավայրը: Կարսի դերը և նշանակությունը ավելի մեծացավ Աբաս Բագրատունու (929-953) կառավարման ժամանակահատվածում: Նա 929 թ. Կարսը դարձրեց իր թագավորանիստը³: Աբաս Բագրատունին Կարսում ձեռնամուխ եղավ շինարարական լայն գործունեության, նրա հրամանով սկսվեց (930 թ.)

¹ Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աշոտ Ա Բագրատունի. թագավոր Հայոց (թագադրության թվականը և գահակալության տարիները), Եր., 2014, էջ 66:

² Տե՛ս «**Հովհաննես Դրասխանակերտցույ Պատմություն Հայոց**», ՄՀ, ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 446-448: Սահակ-Մլեհի մասին մանրամասն տե՛ս Գարեգին Ա կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 87-88, 175, 239-240:

³ Տե՛ս **Եղիազարյան Ա.**, «Հայոց Աբաս թագավորի գահակալության առաջին շրջանը», Բանբեր Երևանի համալսարանի հայագիտություն, 2016, 1(19), էջ 23-36:

Կաթողիկե սուրբ Առաքելոց եկեղեցու կառուցումը⁴: Աբաս Բագրատունու ծավալած գործունեության մասին Ստեփանոս Տարունեցին (Ասողիկ) գրում է. «Աբաս խաղաղութեան և շինութեան պատճառ եղեալ աշխարհիս Հայոց, ըստ քաղցր բարուց իւրոց եւ ըստ քաջազար զարութեանն»⁵: Կարսի՝ ինքնուրույն թագավորություն հռչակման համար կարևոր ազդակ հանդիսացավ Աշոտ Գ Ողորմածի (953-977) կառավարման ժամանակ թագավորանիստը Կարսից 961 թ. Անի տեղափոխելը: Ստեղծված իրադրության պայմաններում Կարսը առանձնացվեց որպես փոխարքայություն, և կառավարիչ նշանակվեց Բագրատունի գերակայի եղբայր Մուշեղը (963-984): Առիթից օգտվելով՝ Մուշեղ Բագրատունին, 963 թ. Կարսը հռչակեց թագավորություն⁶: Կարսի թագավորը ընդունում էր Անիի Բագրատունի թագավորի գերակայությունը. թերևս սրանով պետք է պայմանավորել դեպքերի նման սահուն ընթացքը: Կարսի թագավորությունը գոյատևեց մեկ դար (963-1064): Այն իր տարածքներում ընդգրկում էր ութ գավառ՝ **Վանանդ (Կարս)**⁷, **Գաբեղեանք**⁸, **Հանունիք**⁹, **Աբեղեանք**¹⁰, **Ջարիշատ**¹¹, **Կարմիր փորակ**¹², **Ջարեհավան**¹³, **Կեչոր**¹⁴: Թագավորության

⁴ Տե՛ս **Ստեփանոս Տարունեցի Ասողիկ**, Պատմություն տիեզերական, ՄՀ, ԺԵ. հատոր, Ժ դար, Պատմագրություն, գիրք Բ., Եր., 2011, էջ 749:

⁵ **Ստեփանոս Տարունեցի Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 749 :

⁶ նույն տեղում, էջ 755:

⁷ Այրարատ նահանգի 9-րդ գավառն էր, Ախուրյան գետի հովտում: Միջին դարերում այստեղ էր գտնվում հռչակավոր Կարս քաղաքը իր անառիկ միջնաբերդով: Վանանդ գավառի տարածությունն էր 4725 կմ²: Կարս քաղաքը, դառնալով խոշոր կենտրոն, մոռացության մատնեց Վանանդ անունը, և այնուհետև (XI դարից) գավառը կոչվում էր Կարս: Տե՛ս **Երեմյան Ս.Տ.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց-ի» (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Եր., 1963, էջ 82:

⁸ Այրարատ նահանգի 2-րդ գավառը՝ 1275 կմ² մակերեսով. ընդգրկում էր այժմյան Կաղզվանի շրջանը, տե՛ս նույն տեղում, էջ 46:

⁹ Այրարատ նահանգի 4-րդ գավառը, շուրջ 1400 կմ² մակերեսով, ուներ համանուն Հանիկ (Յանիկ կամ Ավնիկ) ավանը և բերդը, տե՛ս նույն տեղում, էջ 62:

¹⁰ Այրարատ նահանգի 3-րդ գավառը: Աբեղեանք գավառը գտնվում էր Երասխ գետի ձախ ափին և Մեծրաց լեռների (Մողանլու-դաղ) միջև, Մժընկերտ գյուղի շրջանում:... Այս գավառի մոտավոր տարածությունն էր՝ 1000կմ², տե՛ս նույն տեղում, էջ 31:

¹¹ Ջարուշաղ գյուղ, վերջերս վերանվանվել է Արփաշա, տե՛ս նույն տեղում, էջ 52: Հմմտ. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Եր., 1988, էջ 279:

ընդհանուր տարածքը կազմում էր 10 հազար քառ. կմ¹⁵: Կարսի թագավորությունը, նպաստավոր դիրք ունենալով և գտնվելով առևտրական ճանապարհների հանգուցակետում, տարանցիկ առևտրի կապող օղակ էր վրացական առևտրային կենտրոնների՝ Արտանուճի, Դմանիսի, Թբիլիսի հետ: Բացի այդ, Կարսը նույնպիսի դեր էր խաղում Սև ծովի և Տրապիզոն նավահանգստային քաղաքի համար¹⁶: Հավանաբար Կարսի թագավորության այս ժամանակահատվածի բարգավաճ վիճակն է նկատի ունեցել ժամանակակից պատմիչ Արիստակես Լաստիվերտցին՝ այն բնութագրելով որպես հղիացած. «Թե՛ որպես անհարին հարսի քաղաքն **յղիացեալ** որ կոչի **Կարս**»: Մեկ այլ դեպքում պատմիչը կարսեցիների մասին գրում է. «**հարստացեալք բազում ընչեղութեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ**»¹⁷: Կարսի թագավորության խաղաղ բարգավաճումը շարունակվեց նաև Աբաս Բ Կարսեցու (1020-1049) կամ Աբաս «**շահնշահ**»-ի կառավարման ժամանակ¹⁸: Աբաս Բ Կարսեցին մեծ կարևորություն է տվել բանակի մարտունակությանը, նրան հաջողվել է ստեղծել մարտունակ բանակ և իր մասնակցությունը բերել Անիի Բագրատունի տերերի ռազմական գործողություններին՝ ընդդեմ արաբ ամիրաների: Աբաս Բ Կարսեցու մահից հետո Կարսի թագավորությունը ժառանգեց նրա որդին՝ Գագիկ Բ Կարսեցին (1049-1065)¹⁹:

¹² Գավառ Մեծ Հայքի Այրարատ աշխարհում, տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.3, էջ 59:

¹³ «Սուկավետ (Ջրաբախշ) լեռնապարի այժմ Հայկական պարի հյուսիսային փեշերին է փոխվում Ջրաբեկվան գավառակը համանուն ավանով», տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՄՀ ԳԱ հրատ., հ. III, Եր., 1976, էջ 98:

¹⁴ Նախկին Արշարունիքի արևմտյան մասն էր կազմում Կչըռոբ գավառը՝ համանուն քաղաքով և Ծառաքար ամրոցով, տե՛ս նույն տեղում:

¹⁵ Տե՛ս **Еремян С. Т.**, “Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке”, ԼՀԳ, 1971, N 3, էջ 4:

¹⁶ Տե՛ս **Առաքելյան Բ.**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, հ. 1., Երևան, 1958, էջ 81:

¹⁷ **Արիստակիսի Լաստիվերտցոյ Պատմութիւն**, աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 83-84:

¹⁸ Աբաս Բ Կարսեցին կրտսեր որդին էր Գագիկ Ա շահանշահի, տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 163: Իսկ Աբաս Բ Կարսեցուն «շահնշահ» տիտղոսով հանդիպում ենք Մատթեոս Ուռ-հայեցու երկում. «Յայնմ ժամանակին էր Գագիկ ի Կարս որդին Աբասայ շահնշահի», տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 150:

¹⁹ «Արդ ի թուականութեանն Հայոց 498-ի թագաւորութեանն Վրաց Դաւթի (իմա՝ Բագրատի – Ա. Ս.), և Հայոց Գագկայ շահանշահի որ ի Վանանդ, և ի

2. Պատմական աղբյուրները Գագիկ Բ Կարսեցու մասին

Կարսի Բագրատունի վերջին շահնշահի²⁰ Գագիկ Բ Կարսեցու մասին պատմական աղբյուրների անդրադարձները խիստ դրական են: Մատթեոս Ուռհայեցին գրում է. «...**Եւ էր Գագիկ այր հանճարեղ և իմաստասեր**»²¹, իսկ Սմբատ սպարապետի երկում կարդում ենք. «... էր և յաւուրսն յայնոսիկ **Գագիկ, որդին Աբասայ Կարցոյ. այր իմաստասեր և լի ամենայն հանճարով**, և տեղեակ հին և նոր կտակարանաց»²²: Գագիկ Բ-ի հրամանով արաբերենից հայերեն թարգմանված բժշկարանի խորագրում ինքն անվանվում է «**հաղթող թագավոր**». «**Բժշկարան, գոր փոխած է ի տաճիկ լեզուէ ի Հայս, ի ժամանակս յաղթող թագաւորին Հայոց Գագկայ**»²³: Ինչպէս ցույց են տալիս պատմական տվյալները, Գագիկ Բ Կարսեցին իր ժամանակի լավ կրթություն ստացած ռազմական և քաղաքական հմուտ գործիչներից էր: Նա ամուսնացած էր արխագա-վրացական թագավոր Բագրատ Դ-ի (1027- 1072) քրոջ՝ **Գորանդուխտի**²⁴ հետ: Գագիկ Բ-ի ընտանիքի մասին որոշակի պատկերացում է տալիս նրա կողմից պատվիրված Ավետարանը՝ Եղմ. 2556 **ձեռագիրը**: Ուսումնասիրողների մեծ մասի կարծիքով Ավետարանը գրվել է մինչ Գագիկ Բ-ի գաղթը²⁵: Ավետարանի մի մանրանկար թույլ է տալիս պատկերացում կազմել թագավորի ընտանիքի, նրանց արդուզարդի, զգեստների մասին²⁶:

կայսերակալությանն Յունաց Մանամախին», տե՛ս **Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 373:

²⁰ «Երրորդութիւն] սուրբ, ողորմե[ա] Գագկայ Շահանշահին», տե՛ս **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարան ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 239:

²¹ **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 150:

²² **Սմբատայ Սպարապետի Տարեգիրք**, Վենետիկ, 1956, էջ 66:

²³ **Գարեգին Ա կաթողիկոս**, Յիշատակարան ձեռագրաց, նշվ. աշխ., էջ 671-673: Հմմտ. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, Մաշտոցի անուան Մատենադարանի, Եր., 1984, էջ 1116:

²⁴ «Ջստացող սրբոյ աւետարանիս զԳագիկ Շահանշահ ` որդի Աբասայ, զԳորանդուխտ թագու[ւ]լիի և զՄարեմ յիշես», Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարան ձեռագրաց, նշվ. աշխ., էջ 239-241:

²⁵ Տ. Ա. Իզմայիլովան գտնում է, որ Կարսի Գագիկ արքայի Ավետարանը գրվել է մինչ 1064 թ., տե՛ս **Измайлова Т. А.**, Армянская миниатюра XI века, Москва, 1979, с. 192., իսկ ըստ Ս. Տեր-Ներսիսյանի՝ 1045-1054 թթ. ընթացքում, , տե՛ս **Der Nersessian S.**, "L'Evangile du Roi Gagik de Kars: Jerusalem, N. 2556," REArm., 1984, N. S., t. XVIII, pp. 85-107:

²⁶ Մանրանկարը ուսումնասիրել և նկարագրել է Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսեանը. «Պատկերը կը ներկայացնէ աջ կողմը թագաւորը, ձախը՝ թագուհին, երկուսին ճիշտ մէջտեղը աղջիկ մը, հաւանականաբար իրենց դուստրը, կարմրագոյն զարդանկար

3. Կարսի թագավորության անկումը և գաղթը

Գագիկ Բ-ի թագավորության խաղաղ բարգավաճումը շարունակվեց մինչև 11-րդ դարի երկրորդ կեսը: Այս ժամանակ տարածաշրջանում հայտնված սելջուկ-թուրքերը ծանր կացության մեջ դրեցին Հայաստանի մի շարք տարածքներ, այդ թվում նաև Կարսը: Պատմիչների հաղորդած տեղեկություններից երևում է, որ Կարսի վրա առաջին հարձակումը իրականացրել է սելջուկ զորական Գթլմուշը: Նա 1054 թ. հունվարի 6-ին գրավել է քաղաքը՝ մեծ ավերածություններ գործելով և կողոպուտի ենթարկելով՝ հեռացել: Այս դեպքերի կապակցությամբ Արիստակես Լաստիվերոցին գրում է. «Քաղաքս (իմա՝ Կարս – Ա.Մ.) այս ի բազում ժամանակաց հետև չէր զփորձ չարեաց առեալ, վասն որոյ յանոգս և յանկասկածի կէին, հարստացեալք բազում ընչեղութեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ: Արդ ի գալ մեծի յայտնութեան տեառն մերոյ, ի գիշերին՝ յորում ուրախական ձայնիւ դասք քահանայից հանդերձ բազմամբոյ ժողովրդովքն զպաշտօն աւուրն կատարէին, յանկարծակի ի վերայ հասին զօրք անօրինացն: Եւ քանզի առանց գիշերագիտաց էր քաղաքն, մտեալ ի ներքիս, սուր ի վերայ առն եղեալ, անողորմ կոտորեցին զամենեսին, որ յոյժ ողբոց արժանի է պատմութիւնս: Քանզի օրէն է քաղաքաց ի տէրունական տօնսն բազում զարդարանք վայելչանալ արանց և կանանց, ծերոց և տղայոց ըստ ուժոյ և ըստ կարողութեան, ըստ նմանութեան զարնանաբեր ծաղկանոցաց: Որ և զոսս այսպէս գտեալ, յանկարծակի վայիւք և ողբովք լի եղև քաղաքն: Ջրահանայսն ի պաշտամանն լռեցուցին, և զսաղմոսասացսն ի սաղմոսական երգոցն. հատաւ երգ օրհնութեան ի բերանոյ դպրաց և տղա-

բազմոցի (թախտ) մը վրայ երեքը նստած ծալապատիկ մէկ շարքի վրայ... Թագաւորին գլուխը վերի մասէն կտրուած է մինչև քթին վարի ծայրը: Որոշ կերևին սև, խիտ կարճ խուզած միրուքը, բերանը և պէխը: Ձեռքերը բաց են աղօթելու ձևով: Հագին ունի երկար շուրջառածև զգեստ կամ պատմուճան՝ կարմիր, կապոյտ և մանիշակի գոյներով զարդանկարուած: Երկու ուսերուն վրայ՝ դէպի կուրծքը երկար քառակուսի երկու սպիտակ զարդեր. քառակուսիներուն մէջ ոսկեգօծ զարդանկարած: ... Թագուհուն դէմքը կտրուած է քթի վերի արմատէն վեր: Քիթը, բերանը, այտերն ու կզակը շատ որոշ են ու նրբանկար: ... Հագին ունի երկար պարեգօտ մը կարմիր կանաչ զարդերով: ... Մէջտեղը նստած համեմատաբար փոքրահասակ աղջկան դէմքը անաղարտ մնացած է. կտրուած է միայն գագաթը՝ յօնքերէն վեր: Թագուհուն նման վզին վրայ ունի երկու կարգ մանեակներ մարգարտաշար», տե՛ս **Մեսրոպ Կայ. Տեր-Սովիսեան**, «Կարուց Գագիկ թագաւորի մանրանկարը», Արարատ, 1910, ապրիլ, էջ 683-685:

յոց:... Մեծահարկի և զպատուական վաճառականք չարաչար մահուամբ սպանեալք. երիտասարդք և ըմբշամարտք ի փողոցսն սրակոտորք. պատուական ալիք ծերոցն արինաշաղախ առ նոքօք անեալք. և այսպիսօրէն գործովք սպառեցաւ քաղաքն կայ, նա միայն ապրեցաւ: Եւ մնացեալ զօրն ողջոյն ի տեղուջն խիլ արկեալ բրեցին զտունսն, և ապա հուր հարեալ այրեցին զքաղաքն, և ինքեանք առ ալ զգերի և զկապույտ քաղաքին գնացին յաշխարհն իւրեանց»²⁷:

Պատմիչի տեղեկությունից ակներև է դառնում, որ Կարս քաղաքը վաղուց ի վեր աղետալի փորձության չէր ենթարկվել և բնակիչներն ապրում էին անհոգ ու ապահով: Բայց Տիրոջ հայտնության մեծ տոնի (հունվարի 6) գիշերը, երբ քահանաների դասը օրվա արարողությունն էր կատարում, հանկարծակի վրա հասավ անօրենների զորքը, և գիշերապահների բացակայության հետևանքով սելջուկները անողորմաբար կոտորում են բոլորին: Սակայն նրանց չի հաջողվում գրավել Կարսի անառիկ միջնաբերդը²⁸: Առաջին հարվածից հետո Կարսի թագավորությունը շուտով ենթարկվելու էր սելջուկ-թուրքական առաջնորդ Տուղրիլ բեկի հարձակմանը, ով, հետապնդելով Գթլմուշին, շուտով հայտնվում է Կարսի մատույցներում²⁹: Բայց այս անգամ Գագիկ Բ Կարսեցուն հաջողվում է զորք դուրս բերել սելջուկ-թուրքերի դեմ և համառ մարտերի գնով նրանց հետ շարտել:

Այս դեպքերը հիշատակում է Արիստակես Լաստիվերտցին. «Եւ եկեալ ի սահմանս Վանանդայ, որոց ի դիմի հարեալ քաջագուն իշխանքն Գագկայ որդոյ Աբասայ, և բազում նախճիրս ի տեղուջն գործեալ: Որոց ի վերայ հասեալ զօրք անօրինացն ի մէջ փակեցին. և քանզի յերկարել պատերազմին և յահագին կոտորածէն ի զօրութենէ պակասեալք էին ինքեանք և երիվարք իւրեանց, վասն որոյ ոչ կարեցեալ զպատնէշ թշնամեացն պատառել և ելանել, յորոց սուր ի վերայ եղեալ կոտորեցին յազատացն արս երեսուն: Իսկ զմի ոմն յազատացն կալեալ, որում անուն էր Թաթուլ, որ էր այր հօգօր և պատերազմասէր, զոր առեալ տարան առ Սուլտանն: Եւ քանզի կարեվէր խոցեալ էր զորդի Արսուբանայ Պարսից ամիրային, զոր իբրև ետես Սուլտանն՝ ասէ. Եթէ դա ապրի, զքեզ ազատեմ.

²⁷ Արիստակիսի Լաստիվերտցոյ Պատմութիւն, նշվ.աշխ., էջ 83-84:

²⁸ Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 10, Բյուզանդական աղբյուրներ, Գ, **Հովհաննես Սկիլիցես**, թարգմանությունը բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ **Հրաչ Բարթիկյանի**, Եր., 1979, էջ 178:

²⁹ Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հ. Բ., Երևան, 1967, էջ 704: Հմմտ. **Բոռնազյան Ս.**, Հայաստանը և սելջուկները 11-12-րդ դդ., Եր., 1980, էջ 68-70:

ապա թէ մեռանի, զքեզ դմա մատաղ հրամայեմ առնել: Որ յետ սակաւ աւուրց մեռաւ: Իսկ նորա պատասխանեալ. Թէ իմ է զարկածն, չէ կենաց. ապա թէ այլում է, զայն ոչ գիտեմ: Սուլտանն իբրև լուաւ թէ մեռաւ, հրամայեաց սպանանել զնա, և զաջ բազուկ նորա հատեալ, ետ տանել Արսուբանայ ի մխիթարութիւն, թէ ի վատ բազկէ չէ մեռեալ քո որդին»³⁰:

Այս տեղեկությունից պարզ է դառնում, որ Վանանդ հասած սելջուկների գորքի մեծ մասին Գագիկ Բ Կարսեցու զինվորները կոտորում են: Սակայն սելջուկներին էլ հաջողվում է սպանել 30 զինվորների և գերի վերցնել Գագիկի զինվորներից քաջ ու պատերազմասեր Թաթուլին: Նրան տանում են Տուրքիլ բեկի մոտ: Թաթուլը վիրավորել էր թուրք Արսուրբան ամիրայի որդուն, և բեկը տեսնելով նրան, ասում է, որ եթե որդին ապրի, Թաթուլին ազատ կարձակի, բայց եթե մեռնի, ինքը կհրամայի, որ Թաթուլին նրա առաջ զոհեն: Թաթուլը պատասխանում է, որ եթե իր հարվածից է վիրավորվել ամիրայի որդին, չի ապրի, եթե ուրիշից է զարկվել, դա այլ խնդիր է: Շուտով ամիրայի որդին մեռնում է, և սուլթանը հրամայում է Թաթուլին ևս սպանել, նրա աջ բազուկն էլ տանել ամիրային՝ իբրև մխիթարություն:

Կարսի թագավորության վերջին դեպքերը ապացույց են այն բանի, որ Գագիկ Բ Կարսեցին ուներ մարտունակ բանակ և ի գորու էր պայքար մղել արտաքին թշնամու դեմ: Սակայն Կարսի թագավորության անկախությունն էլ շուտով կորսվեց: Սելջուկ առաջնորդ Ալփասլանը պատվիրակություն ուղարկեց Գագիկ Բ Կարսեցու մոտ և առաջարկեց հնազանդվել իրեն: Գագիկ Բ, լինելով հմուտ դիվանագետ, խորամանկության դիմեց՝ երկիրը ազատելով վերահաս ավերումից: Մատթէոս Ուռհայեցին գրում է. «Յայնմ ժամանակին էր Գագիկ ի Կարս որդին Աբասայ շահնշահին և յղեաց առ նա դեսպան սուլտանն, զի գայցէ նմա յերկրպագութիւն: Եւ էր Գագիկ այր հանճարեղ և իմաստասեր և խորհեցավ հնարս զերծանիլ խաղաղութեամբ ի սուլտանէն. յայնժամ զգեցաւ սեւ զգեստ սգաւորի և նստաւ ի վերայ սեաւ բարձի. և յորժամ տեսաւ զնա դեսպանն սուլտանին, հարցուկ լինէր և կամեցաւ զատճառն ուսանիլ, եթէ Վասն էր ես սևօք, զի ահա այր դու թագաւոր ես: Եւ նա ասէր՝ թէ Յորժամ մեռաւ իմ բարեկամն Տուրքիլ սուլտանն՝ եղբայր Ապասլանայ ես յայնմ աւուր զգեցայ զայս սեւ զգեստս: Եւ հիացեալ այրն այն և երթեալ պատմեաց սուլտանին, և նա զարմանայր յոյժ և յարուցեալ ամենայն բանակովն եկն առ Գագիկ ի Կարս և արար ընդ նմա սէր և ուրախութիւն մեծ և զգեցոյց նմա զգեստ

³⁰ Արիստակիսի Լաստիվերտցոյ Պատմութիւն, նշվ.աշխ., էջ 88:

թագավորական»³¹: Այստեղից պարզ է դառնում, որ Գագիկ Բ Կարսեցին Ալփասլանի պատվիրակներին դիմավորում է սև հագուստ հագած, սև բարձի վրա նստած: Նա պատճառաբանում է, թե ինքը սև հագուստ է հագել և սգում է Տուրքիլ բեկի մահը: Ալփասլանը բանակով գալիս է Կարս: Գագիկ Բ Կարսեցին մեծ ընդունելության է արժանացնում սուլթանին, վերջինս հանում է Գագիկի սև հագուստը և հագցնում թագավորական հանդերձանք:

Չնայած այն հանգամաքին, որ Գագիկի Բ Կարսեցու հմուտ դիվանագիտությամբ Կարսը առժամանակ զերծ մնաց ավերածությունից, այնուամենայնիվ հաշտվողական գործելակերպ դրսևորելով, նա բանակցությունների մեջ մտավ բյուզանդական կայսր Կոստանդին X Դուկասի (1059-1067) հետ, որի արդյունքում Կարսի ընդարձակ և ծաղկուն թագավորության դիմաց բյուզանդական կայսրը Գագիկ Բ Կարսեցուն տարածքներ տրամադրեց Փոքր Հայքում: Այս մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Վարդան վարդապետը. «Իսկ թագաւորն Կարուց Գագիկ որդի Աբասայ նեղեալ յերկիրէ Թուրքացն՝ տայ զՀայրենիս իւր ի Յոյնս, և առնու զԾամրնդաւ, և զԼառիա և զԱմասիա և զԿումանա, և զպռաստինս հարիւր, որ է գեօղեան»³²: Այսպես, Գագիկ Բ Կարսեցին իր թագավորության փոխարեն կայսրությունից ստացավ Ծամնդավ³³, Լարիսա³⁴, Կումանա³⁵, Ամասիա քաղաքները և 100 գյուղ:

Կարսի թագավորության անկումը խորապես սգացող պատմիչ Մատթեոս Ուռհայեցիի Գագիկ Բ Կարսեցու գաղթի վերաբերյալ գրում է. «Եւ եղև զնկի աւուրցս այսոցիկ թողեալ Գագիկ զԿարս և զնաց ի Հոռոմս. և

³¹ **Մատթեոս Ուռհայեցի**, նշվ.աշխ., էջ 151:

³² **Հուսթումն պատմութեան Վարդանայ վարդապետի** լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 102: Հմմտ. **G. Dédéyan**, "L'immigration arménienne en Cappadoce au XI^e siècle", Byzantion, t. XLV, Bruxelles, 1975, p. 61:

³³ Բերդաքաղաք Փոքր Հայքում, այսօրվա Կուսկալեսի (Ջամանթի կալեսի), Կեսարիա քաղաքից 30-35 կմ արևելք Սարոս գետի Ծամնդավ վտակի ապառժոտ լեռան վրա, տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Դ-Կ, Եր., 1988, էջ 841: Հմմտ. **Hild Friedrich und Marcell Restle**, "Kappadokien (Kappadokia, Charsianon, Sebasteia und Lykandos)", Tabula Imperii Byzantini (այսուհետև՝ TIB), Band. 2, Wien 1981, S. 300-301:

³⁴ Լարիսան ներկայիս Մանսինիկն է, որը գտնվում է Սեբաստիա քաղաքից 76 կմ հեռու, Գյուրունի Սիվազ-ում (Սվազ), տե՛ս TIB, S. 221: Հմմտ. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.2, Դ-Կ, Եր., 1988, էջ 565:

³⁵ Կումանա (Ջառ) քաղաքի անունը առաջացել է Կումանի անունից, այն գտնվում է Սարոս գետի վերին հոսքի շրջանում, Կեսարիայից 85 կմ հեռու, և ընկած է Անտիտավրոսի ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Կատանիայում, տե՛ս TIB, S.208-209:

թագաւորն Տուկիծ տայր նմա զԾամնդաւ. և անդ եկեալ Գագիկ ազատօք իւրովք և թողեալ գտունն հայրենեաց իւրոց: Արդ՝ այսպիսի նմանութեամբս զերեցաւ տունն Հայոց, և արեամբ լցաւ առհասարակ ամենայն աշխարհն, որ իբրև գծով ծփայր ծայրէ ի ծայր, և քակտեալ ապականեցաւ հայրենատունն մեր իլեալ, խախտեցաւ հիմն բնակութեան Հայաստան ազգացս...³⁶: Մատթէոս Ուռհայեցու վկայությունից պարզ է դառնում, որ Գագիկ Բ Կարսեցին հանդիսացել է «**Հայոց տան**» վերջին ներկայացուցիչը, ով ի գորու էր կազմակերպել երկրի անվտանգությունը, սակայն, վախենալով սելջուկների հարձակումներից, իր ազատանու ուղեկցությամբ գաղթեց հայրենիքից: Գագիկ Բ-ի հեռանալուց հետո բյուզանդական կայսրությունը Կարսի թագավորության կառավարիչ նշանակեց Գրիգոր Բակուրյանին³⁷: Իսկ արդեն նոր տարածքում Գագիկ Բ Կարսեցին իր նստավայրը դարձրեց Ծամնդավը: Հենց այստեղ էլ հանգրվանեց հայոց նոր հովվապետ Գրիգոր Բ Վկայասերը (1066-1105), ով կաթողիկոս էր ընտրվել Գագիկ Բ Կարսեցու միջնորդությամբ:

Սակայն պատմագրության մեջ որոշակի տարակարծություն կա այս խնդրի շուրջ: Ըստ Սամուել Անեցու՝ կաթողիկոսի ընտրության հարցում բյուզանդական կայսեր հետ անձամբ բանակցել է Գագիկ Բ-ի դուստր Մարիամը. «զի վտարեցաւ աթոռ հայրապետութեան ի Սեբաստիայ եւ իսափանեցին Յոյնք ձեռնադրել կաթողիկոս Հայոց, մինչև Մարիամ, դուստր թագաւորին Գագկա մեծաւ աղաչանաւք խնդրեաց յարքայէն Հռոմոնց եւ նայ լուաւ աղաչանացն Մարիամու: Եւ առաքեաց Մարիամ, խնդրեաց եւ եգիտ զԳրիգորիս գորդի Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունի ազգաւ»³⁸: Մ. Չամչեանցն էլ գրում է. «ՇԺԴ (1065) Իսկ Մարիամ թագուհին դուստր Գագկայ Աբասեան՝ որ սիրեցեալն էր և պատուեալ յաչս կայսերուհոյն Եդոքսիայ՝ բազում աղերսանօք խնդրել ի նմանէ, հաճեցոյց զնա հաւանեցուցանել զկայսրն վասն ընտրելոյ գոք կաթողիկոս հայոց: Եւ կայսրն զիջեալ հաւանեցաւ ընդ այն. և ետ հրաման արքունական գրով, գոր և կնքեաց ոսկի մատանեաւ: Յայնժամ Գագիկ Աբասեան ժողով գումարեալ եպիսկոպոսաց և վարդապետաց ի Ծամնդաւ ուր ինքն նստէր, խնդիր արար գտանել գոք արժանի կաթուղիկոսութեան Եւ յետ բազում քննուէ և բանից՝ միաբան հաւանութեամբ հաստատեցին ընտրել զՎահրամ գորդի Գրիգոր

³⁶ Մատթէոս Ուռհայեցի, նշվ.աշխ., էջ 151:

³⁷ Տե՛ս Երեմյան Ս. Կ., «Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке», էջ 13:

³⁸ Սամուել Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Մաթևոսյան Կ., Եր., 2014, էջ 190:

Մագիստրոսի»³⁹: Պետք է նշել, որ այս տեսակետները երկբայելի են, քանի որ Գագիկի Բ Կարսեցու կենդանության ժամանակ դուստրը վստահաբար չէր կարող բանակցություններ վարել կայսեր հետ, բացի այդ պատմական մյուս աղբյուրներում խոսվում է Գագիկի բանակցություններ վարելու մասին: Ըստ Վարդան վարդապետի՝ բյուզանդական կայսեր հետ կաթողիկոսի ընտրության հարցում անձամբ բանակցել է Գագիկ Բ Կարսեցին. «Եւ գնացեալ առ կայսր՝ ինդրէ հրամանս ձեռնադրել Հայոց պատրիարզ զՎահրամ որդի Գրիգորի Մաժիստրոսի և տուկի. որ կոչեցաւ ի ձեռնադրելն Գրիգորիս»⁴⁰: Ըստ Ներսես Շնորհալու ևս Գագիկ Բ-ի միջնորդությամբ է տեղի ունեցել կաթողիկոսի ընտրությունը.

**«Յայնժամ արքայն մեր կոչեցեալ
Գագիկ անուն վերաձայնեալ,
Այն որ ըզԿարս ի Յոյնս տրւեալ
Եւ զԾամրնդաւ դրդեակն առեալ,
Չանիւ մեծաւ գուն գործեցեալ,
Ինչքս բազումս անթիւ ծախեալ,
Նա և ըզԿարս նախասացեալ
Այսըր ինդրոյ փոխանակեալ,
Զի հովուապետ Հայոց դարձեալ
Նըստցի յաթոռն ունայնացեալ: ...
Ընդ որ հանուրց կամաց հաճեալ,
Առ ի խընդիրըն յորդորեալ,
ԶԳրիգորիս յառաջ ածեալ,
Որ և Վահրամ նախաձայնեալ»⁴¹:**

Իսկ բանասեր Հ. Պերպերյանը կարծում է, որ Կաթողիկոսի ընտրությամբ շահագրգռված Գագիկ Բ Կարսեցին իր թագավորությունը հանձնեց բյուզանդական կայսրությանը ոչ թե սելջուկ-թուրքերի արտաքին սպառնալիքի պատճառով, այլ հայոց կաթողիկոսությունը վերականգնելու համար, ինչը և խոստացվել էր կայսրության կողմից⁴²: Հ. Պերպերյանի համար կովան է Ներսես Շնորհալու՝ վերը բերված հատվածը, սակայն

³⁹ **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 989:

⁴⁰ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, էջ 102:

⁴¹ **Ներսեսի Շնորհալոյ Բանք Չափաւ**, Վենետիկ, 1928, էջ 592-593: Հմմտ. **Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց**, Մոսկվա, 1860, էջ 59, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. 2, կազմեց Հակոբյան Վ., Եր., 1956, էջ 339:

⁴² Տե՛ս **Պերպերեան Հ.**, «Հայոց կաթողիկոսական աթոռին բարձումը 11-րդ դարուն երկրորդ կիսուն», ՀԱ, Վիեննա, 1967, յուլիս-սեպտեմբեր, թիւ 7-9, էջ 327-346:

պետք է նշել, որ սա քննություն չբնող տեսակետ է, և պատմական աղբյուրները կասկածի տեղիք չեն թողնում, որ Գագիկ Բ Կարսեցին տարածքների փոխանակման գնաց գուտ **«նեղեալ յերկիրէ Թուրքացն»**:

Այսպես, 1066 թ. ապրիլի 16-ին Գագիկ Բ Կարսեցու միջնորդությամբ Գրիգոր Վկայասերը ձեռնադրվեց հայոց հովվապետ⁴³: Բայց սա Գագիկ Բ Կարսեցու վերջին ձեռնարկումն էր: Նրա հետագա գործունեության մասին պատմական աղբյուրները լռում են: Գագիկ Բ Կարսեցու մասին վերջին հիշատակությունը Մատթեոս Ուոհայեցունն է՝ Անիի Գագիկ Բ Բագրատունի (1042-1045) թագավորի Կիզիստրա ամրոցում 1079 թ. Մանդալեի որդիների ձեռքով արգելափակվելու և սպանվելու առիթով. «Յասմիկ թուականութեան սպանա Գագիկ շահնշահ որդի Աշոտոյ՝ որդոյ Գագկայ՝ որդոյ Սմբատայ՝ որդոյ Երկաթայ, Բագրատունի ազգաւ:.. և եկեալ հազար արամբ ի դաշտն Առժախասայ ի բերդն՝ որ ասի Կիզիստրայ և էին բերդատերքն երեք եղբայրք իշխանք Հռոմոնց՝ որդիք Մանտալեի. և Գագկայ թողեալ զգորսն իւր ի յայլ կողմն ճանապարհին՝ և ինքն երեք արամբք երթայր դիմօք առ նոսա:... Եւ յաւուրն ութերորդի Ժողովեցան ի վերայ բերդին ամենայն տունն Հայոց, **Գագիկ Աբասայ** որդին և ամենայն ցեղն Մենեքսիմայ՝ **Ատոմ և Ապուսահլ** և այլ ամենայն իշխանքն Հայոց և զաւուրս ինչ պատերազմեալ ի վերայ բերդին՝ ոչինչ կարացին առնել, վասն զի ամուր էր յոյժ. և որք բռնեալ էին զԳագիկ՝ ոչ համարձակէին թողուլ ի յահէ Գագկայ»⁴⁴: Սակայն Գագիկ Բ Կարսեցու 1079 թ. հիշատակությունը կասկածելի է, քանի որ պատմագրության մեջ նրա մահվան թվականի վերաբերյալ ևս գոյություն ունի որոշակի տարակարծություն: Մամուել Անեցին որպես Գագիկ Բ Կարսեցու մահվան թվական նշում է 1067 թ.. «**1067.** Դիւմէնն («ի Կոստանդնուպոլիս») ամս Ե (5): **Մեռաւ Գագիկ շահանշահ թագաւորն Վանանդայ**»⁴⁵, Կիրակոս Գանձակեցին՝ 1071 թ. «Բայց զկնի Վասիլ կայսեր, թագաւորեաց Կոստանդին. և յետ նորա Ռոմանոս ծերն. և զնկի նորա Սիխայէլն. և ապա Կիւռզի. յետ նորա Մոնումախն: Առ սովաւ ասեն զերթն Գագկայ ի յոյնս: Եւ յետ նորա Կիո Թողոնն. և ապա Դուկիծն. և յետ նորա Դիւմէնն: Յառաջին ամի սորա մեռաւ **Գագիկն Շահանշահ, թագաւորն Վանանդայ:** Եւ յութերորդ ամի իշխանութեան իւրոյ ել **Դիւմէնն** բազում զօրօք ի Պարսս ի պատերազմ, և եկն

⁴³ **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա., Էջմիածին, 2001, էջ 1493-1494:

⁴⁴ **Մատթեոս Ուոհայեցի**, նշվ.աշխ., էջ 219-220:

⁴⁵ **Մամուել Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն, էջ 192:

ի Մանագլերտ և առ զնա»⁴⁶: Իսկ Մ. Չամչյանը նրա մահվան թվականը համարում է 1080 թ. « ՇԻԹ (1080)... Սոյնպէս և ստուեր այնր իշխանութեան, որ մնացեալ էր ի միւս Գագիկ որդի Աբասայ, և յԱտովմ և յԱբուսահլ յորդիս Սենեքերիմայ Արծրունոյ, բարձաւ ի միջոյ ի մահու նոցա»⁴⁷: Այս խնդրին անդրադարձել է Ն. Ադոնցը, ով, քննության ենթարկելով պատմական աղբյուրները, Գագիկ Բ Կարսեցու և Անի Գագիկ Բ Բագրատունու մահը թվագրում է 1072 թվականից առաջ⁴⁸: Մեզ առավել հավանական է թվում, որ Գագիկ Բ Կարսեցին մահացել է 1077 կամ 1078 թ.: Այս եզրահանգման համար հիմք ենք ընդունել հայերեն ձեռագիր հիշատակարաններում առկա վկայությունը, ըստ որի նրա դուստրը՝ Մարիամը, 1077/78 թթ. ստացել է բյուզանդական կուրապաղատի կոչում. «Ի հինգհարիւրորդի քսան եւ վ[եց] եր[որ] դի (1077) ամի թուաբերութեանս Հայոց, ի թագաւորութեանն Յունաց Միխայիլին, որդոյ Տուկծին կայսեր Հոռո[մոց], **ի կուրապաղատութեանն Մարեմայ բարեպաշտի եւ հզա[ւ]րի»⁴⁹**: ՄՄ 268 ձեռագրում էլ որպէս Մարիամի կուրապաղատության թվական նշված է 1078 թ. «Ի հինգհարիւրորդի քսան [երորդի եւսթներորդի (1078) ամի թուաբերութեան Հայոց, ի թագաւորութեանն Յունաց Միխայիլին, որդոյ Տուկծին [կայսերն Հոռոմոց], ի **կուրապաղատութեանն Մարեմայ բարեպաշտի»** (թ. 268 ա): Մարիամի ժառանգություն փաստի մասին վկայում է նրա արձձե կնիքը, որի վրա գրված էր բյուզանդական կուրապատի տիտղոսը⁵⁰:

⁴⁶ **Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց**, աշխատասիրությամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 104:

⁴⁷ **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 1005:

⁴⁸ Մասնավորապէս Անիի Գագիկ Բ Բագրատունու մահվան ավելի հստակ թիվ է առաջարկում 1071թ., տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե, Հայ բյուզանդական ուսումնասիրություններ, Եր., էջ 512-515:

⁴⁹ Հայերեն ձեռագիր հիշատակարաններ, Ե-ԺԲ դր., աշխատասիրությամբ **Ա. Մ. Մաթևոսյանի**, Եր., 1988, էջ 109:

⁵⁰ Տե՛ս **u Dédéyan G.**, Les Arméniens entere Grecs, Musulmans et Croises, vol. 1, Lisbonne, 2003, էջ 299-301:



Կնիքի առաջնամասում պատկերված էր «օղիգիտրիա» պատկերագրական տիպի Կույսը, որը տիպիկ էր այդ ժամանակահատվածի բյուզանդական կառավարող շրջաններում: Կնիքի վրա հունարեն գրված է «Աստծո մայր», և դրա շուրջը հայերեն գրված է. «Մարեմ Կուրապաղատ»: Հակառակ կողմում հունարեն գրված է. «Աստծո մայր, Կարսի Գագիկի դուստր Մարիա Կուրապաղատին օգնական եղիր»⁵¹: Անշուշտ, այդ կոչումը տրվել էր հոր մահից հետո:

Մարիամ կուրապաղատի մասին հիշատակություն ունի նաև Բար Հեբրեոսը, ով նկարագրում է նրա տիրույթներում թուրք Ավշինի գորքով հաստավելը⁵²: Մարիամը երկար չի իշխում: Նա հորից ժառանգություն ստացած տարածքներից գրկվում է, որը հետևանք էր արտաքին գործոնի, այն է՝ սելջուկների արշավանքի. հանգամանք, որ պատճառ էր հանդիսացել նաև Գագիկ Բ Կարսեցու զաղթի:

⁵¹ **Thomas F. Mathews with Theo Maarten van Lint**, “The Kars-Tsamandos Group of Armenian illuminated Manuscripts of the 11th Century”, Neslihan Asutay-Effenberger & Falko Daim (Hrsg), Der Doppeladler. Byzanz und die Seldschuken in Anatolien vom späten 11. bis zum 13. Jahrhundert. Mainz: Verlag des Römisch-Germanischen Zentralmuseum Mainz, 2014, pp. 85-95 ([https://books.ub.uni-heidelberg.de/propylaeum/catalog/book/53/file:///C:/Users/28.03.2017/Downloads/53-30-697-1-10-20160614%20\(3\).pdf](https://books.ub.uni-heidelberg.de/propylaeum/catalog/book/53/file:///C:/Users/28.03.2017/Downloads/53-30-697-1-10-20160614%20(3).pdf)), կանչված՝ 17.07. 2017: Հմմտ. **Cheyne Jan-Claude**, La société Byzantine l’apport des sceaux, Paris, 2008, vol. 1, p.183:

⁵² Տե՛ս **The Chronography of Gregory Abul-Faraj** the son of Aaron, Ed. E.A.W. Budge. Vol.1: Translation from Syriac, London, 1932, p 220.

Ա. Ստեփանյան

**Կարսի թագավոր Գագիկ Բ-ի 1065 թ. գաղթը
Ամփոփում**

Այսպիսով, Գագիկ Բ Կարսեցին, ժառանգելով Կարսի թագավորության գահը, կարողացավ մինչև սելջուկների ավերիչ արշավանքները երկրում խաղաղություն պահպանել: Անիի գրավումից հետո, վախենալով սելջուկների գործած ավերածություններից, Գագիկ Բ Կարսեցին բանակեց բյուզանդական կայսրության հետ և, ստանալով առանձնաշնորհումներ Փոքր Հայքում և Կապադովկիայում, իր ընտանիքի և ազատանու հետ տեղափոխվեց այնտեղ: Գագիկ Բ Կարսեցու մահից հետո էլ նրա իշխանությունը չվերացավ, անցնելով դստերը՝ Մարիամին, ով հանդիսացավ իր իշխանության շուրջ համախմված հայության հովանավորը մինչև սելջուկների արշավանքը: Այստեղ հաստատված գաղթահայությունը հետագայում իր մասնակցությունն էր բերելու Կիլիկյան Հայաստանի հիմնման գործում:

А. Степанян

Переселение Гагика II Карсского в 1065г.

Резюме

Гагик II Карсский, унаследовавший трон Карсского царства, сумел до разрушительного вторжения сельджуков сохранить мир в стране. После захвата Ани, опасаясь разрушений от нашествий сельджуков, Гагик II Карсский договорился с Византийской империей и, добившись привилегий в Малой Армении и Каппадокии, перебрался туда со своей семьей. После смерти Гагика II Карсского власть перешла к его дочери Мариам, которая стала покровительницей собравшихся под ее властью армян до вторжения сельджуков. Мигрировавшие и обосновавшиеся здесь армяне были в дальнейшем сыграли активную роль в создание Киликийского Армянского царства.

A. Stepanyan

Resettlement of Gagik II of Kars in 1065.

Summary

Gagik II of Kars, who inherited the throne of the Kars Kingdom, managed to preserve peace in his country up to the devastating Seljuk invasions. After the capture of Ani, fearing destructions by the Seljuk invaders, Gagik II of Kars made

an agreement with the Byzantine Empire and received privileges in Armenia Minor and Cappadocia and moved with his family there. After the death of Gagik II of Kars he was succeeded by his daughter Mariam, who up to the Seljuk invasion took care of the Armenians gathered under her authority. The migrant Armenians who settled here later took active part in the creation of the Cilician Armenian Kingdom.

ՆԱՐԵ ՆԱԴԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ
ՀՏԴ 730

ԽԱՉԱՏՈՒՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ՄՈՆՈԻՄԵՆՏԱԿԱՆ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Բանալի բառեր. Խաչատուր Իսկանդարյան, դիմաքանդակներ, հմտություն:

Ключевые слова: Хачатура Искандарян, портретные скульптуры, умение.

Key words: Khachatur Iskandaryan, portrait sculptures, skill.

ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանի ստեղծագործական գործունեության մեջ մեծ տեղ են զբաղում մանրաքանդակները, որոնցով քանդակագործը սկսել է զբաղվել ստեղծագործական կյանքի առաջին տարիներից, սակայն արվեստագետի թողած գեղարվեստական ժառանգության մեջ առկա են նաև մոտ 20 մոնումենտալ քանդակներ:

Երևանում, Լենինականում (ներկայիս Գյումրի), Աշտարակում, Վարդենիսում և այլ վայրերում կիսանդրի-հուշարձանների ստեղծմամբ Խաչատուր Իսկանդարյանը սկսում է իր գործունեությունը մոնումենտալ քանդակագործության ոլորտում: Արվեստագետի ինքնատիպ գործերից է Գյումրիում տեղադրված՝ խմբավար, երգահան, ՀԽՍՀ և ՎԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Տիգրանյանի հուշարձանը (1961, բրոնզ, ճարտարապետ՝ Էդմոն Տիգրանյան): Հայկական ազգային օպերայի հիմնադիրներից մեկի կերպարն աչքի է ընկնում մարմնաձևերի կառուցիկ և ներդաշնակ համաչափությամբ, լույսի ու ստվերի ճիշտ հարաբերությամբ և չափաբաշխումով: Այս վերջինն առանձնապես դժվարին խնդիր է հարուցում Իսկանդարյանի առաջ հատկապես այն դեպքում, երբ քանդակը կերտվում է ոչ թե շենքի ներսում դրվելու համար, որտեղ լույսի աղբյուրը մի մշտական ուղղություն ունի, այլ փողոցում, որտեղ արևի շողերը լուսավորում են քանդակը մերթ այս, մերթ այն կողմից: Տիգրանյանի հուշարձանը, որն ունի ողորկ մակերևույթի փափուկ մշակում, հավասարապես և շահավետորեն դիտվում է օրվա բոլոր ժամերին, բոլոր կողմերից: Կոմպոզիտորի կերպարն ավելի իրական ներկայացնելու համար Իսկանդարյանն երաժշտին պատկերել է ակնոցով, որի շրջանակները թանձրացնում են կոմպոզիտորի ակնախոռոչների ստվերները:

Տիգրանյանի՝ վերնից ներքև ուղղված հայացքը, պարտիտուրին հազիվ հպվելով, սահում է ցած: Կիսախուփ աչքերը, փոքր-ինչ խոժոռ հոնքերը, լայն ճակատի կնճիռները ստեղծագործական ներշնչանք են արտահայտում: Բնորդի գլխի բնական ու թեթև թեքվածքն իր մեջ այնքա՛ն երաժշտականություն է կրում, որ այս հուշարձանը դիտելիս շատերը կարող են անսխալ որոշել քանդակված կերպարի ով լինելը: Մեզ համար անտեսանելի և միայն իր համար լսելի նվագախումբը, կարծես, մեղմահունչ երաժշտություն է նվագում, իսկ կոմպոզիտորի ձախ ձեռքն օդում վարում է նվագի ընթացքը, մինևույն ժամանակ զսպում ու մեղմում հնչողությունը: Կոմպոզիտորի ներքին լսողության մեջ հնչում են նրա գրած երաժշտության տակտերը: Նա ամբողջովին երաժշտության մեջ է, իսկ երաժշտությունը՝ նրա մեջ:

Գեղարվեստական ինքնատիպ լուծում է ստացել աշխարհահռչակ աստղագետ և աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանին ներկայացնող բրոնզաձուլ կիսանդրին՝ դրված գրանիտե բարձր պատվանդանի վրա (1982 թ., Ճարտարապետ՝ Ստեփան Քյուրքյան): Կիսանդրին գտնվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի հրապարակում: Խաչատուր Իսկանդարյանը, խոսելով Վիկտոր Համբարձումյանի հուշարձանի մասին, նշում է հետևյալը. «Վիկտոր Համբարձումյանին առաջին անգամ հանդիպել էի 1946 թ. Մոսկվայի գլխավոր փողոցներից մեկում: Ես հետևեցի նրան որոշ ժամանակ: Որպես երիտասարդ քանդակագործ՝ ուշադրություն դարձրի նրա քայլվածքին, ժողովրդի մեջ առանձնացող նրա անհատականությանը: Անցան տարիներ, Սովետական միության կրկնակի հերոս Վիկտոր Համբարձումյանի կիսանդրին պիտի կանգնեցվեր նրա ծննդավայրում: Այդպես գնահատվում էր մեծ գիտնականի վաստակը հայրենիքին մատուցած ծառայությունների համար:

Հայաստանի նկարիչների միությունն ինձ հանձնարարեց Համբարձումյանի կիսանդրին: Տարիներ շարունակ փայփայած երազանքս իրականացավ: Ես միշտ իմ մտապատկերում ունեի նրա քանդակի մարմնավորումը: Պատկերացնում էի ինչպես պիտի կերտեի այն մարդուն, ով իր անունով աշխարհին ճանաչելի դարձրեց մեր ազգը: Հարկ էր ընդգծել և՛ գիտնականի մեծությունը, և՛ մարդկային իր տեսակը՝ զուսպ, համեստ, ճշմարիտ: Կիսանդրին պիտի կանգնեցվեր Թբիլիսիում, որտեղ նա ծնվել էր. այդպես էր նախնական պայմանը: Բայց գիտնականը համառեց, նա իր Թբիլիսիում ծնված լինելու հանգամանքը պատահականություն էր համարում և ասում էր. «Կարող էր, չէ՞ մայրս Ֆրանսիա մեկնել, ի՞նչ է, դրանով ես ֆրանսիացի էի դառնալու: Արմատներով Վարդենիսից եմ, և քանդակս պիտի դրվի

Վարդենիսի հրապարակում»¹: Քանդակագործի հիշողության մեջ կիսանդրու հետ կապված հետևյալ զվարճալի դրվագն էլ է տպավորվել. «Երբ աշխատանքը մոտ էր ավարտին, Համբարձումյանը եկավ: Ուշադիր նայեց, ճակատային մասում ինչ-որ բան դուրը չեկավ. ձեռքերը տարավ դեպի ճակատն ու ասաց. «Էս երեսը մի քիչ պակաս է»: Բոլորս հազիվ մեղմ ժպտացինք: Ո՞վ իրեն թույլ կտար ծիծաղել մեծ գիտնականի ասածի վրա, այն էլ այն տարիներին»²:

Վիկտոր Համբարձումյանը քանդակագործի ավարտուն հուշարձանում ներկայացված է ազնիվ և իմաստուն դեմքով, ըստ որում, առաջին իսկ հայացքից հանդիսատեսը զգում է, որ այդ իմաստությունն ու ազնվությունը ոչ թե քանդակագործի դրած կնիքն է քանդակվողի դեմքի վրա, այլ կերպարվող անձի հարազատ հատկությունը, որն արվեստագետը կարողացել է տեսնել ու մարմնավորել: Քանդակագործը, հզոր անհատականությանը պատկերելիս, ասես, որսացել է էականն ու մշտականը, դրանք զատորոշել անցողիկից, շեշտել բնավորությունն ու հոգեվիճակը: Համբարձումյանի դիրքը հանգիստ է, վեհ: Քանդակին առանձնակի հմայք է հաղորդում մեծ գիտնականի դեմքին հազիվ նշարվող ժպիտը³: Համբարձումյանի փոքր-ինչ ներս ընկած աչքերում, լայն ու կնճռոտ ճակատին և, ընդհանրապես, նրա ողջ կերպարի մեջ քանդակագործը տեսել, նկատել ու արտացոլել է գիտնականին բնորոշ բոլոր առանձնահատկությունները: Նրա կենտրոնացված հայացքը, ձգված կեցվածքն արտահայտում են Համբարձումյանի բանիմացությունն ու ողջախոհությունը: Աշխատանքն աչքի է ընկնում իր հանդիսավորությամբ: Իսկանդարյանը Համբարձումյանին պատկերել է այնպես, որ դիտողը կերպարում հարազատին տեսնի: Պատկերված է ոզեշունչ կերպար, որն օժտված է հայրենասիրությամբ, լավատես է և ամբողջ էությամբ հավատում է իր գործի ճշմարտությանը: Այստեղ մոնումենտալ ձևերը պայմանավորվում են կերպարի ներքին բովանդակությամբ, որով և բացահայտվում է պատկերվողի բնավորության ուժը: Հուշարձանը դրված է այնպես, որ օրվա մեծ մասը դեմքին արև է ընկնում: Ցերեկվա լույսի առատ խրճերը, ընկնելով կիսանդրու վրա, մերթ սահում են նրա մակերեսով`

¹ Տե՛ս **Սամվելյան Գ.**, Վիկտոր Համբարձումյանի միակ կիսանդրին Հայաստանում / «Ուրբաթ», Երևան, 1988, 13 օգոստոսի:

² Նույն տեղում:

³ Տե՛ս ՀՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյան. քանդակ, գեղանկար, գրաֆիկա: Ալբոմ (կազմող Սյուզաննա Փիլոսյան), Երևան, 2010, էջ 9:

շեշտելով պլաստիկ լայնալանջ ձևերը, մերթ լույսի և սովերների մեղմ խաղ են ստեղծում, իսկ երբեմն էլ գոյացնում են խոր սովերներ՝ ինչպես, օրինակ, դեմքի շուրջը, որի շնորհիվ փափուկ լուսավորված դեմքն ավելի պայծառ է դառնում: Ի դեպ, Իսկանդարյանը մեզ ցույց է տվել կիսանդրու խնամքով պահպանած էսքիզների վրա գրված Համբարձումյանի հետևյալ գրությունը. «Քանդակված իմ կիսանդրին գտնում եմ հաջող: Շատ բավարարված եմ: Տալիս եմ իմ համաձայնությունը»: Ապա ստորագրությունն է՝ ակադեմիկոս Համբարձումյան, և տարեթիվը՝ 7. 12. 1982⁴:

Հուշարձաններից շատերն այսուհետ դրվում են բնական ազատ ձևերով լուծված ցածր պատվանդանների, քարե սալերի ու հարթակների վրա՝ քաղաքային պարտեզներում, այգիներում և պուրակներում աճող ծառերի տակ⁵: Իսկանդարյանի կոթողային սակավաթիվ աշխատանքներից այդ առումով ուշադրության է արժանի 1987-ին Երևանում տեղադրված «Հակոբ Մեղապարտ»՝ գրանիտե խոշոր, սիլուետային շեշտակի ռիթմով օժտված խորաքանդակը (Ճարտարապետ՝ Մարգարիտ Հայրապետյան): Հուշարձանի ստեղծման պատմությունը սկսվում է 1968-ից, երբ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի կողմից կազմակերպված մրցություն հուշարձանը պատրաստելու իրավունքը ստանում է Խաչատուր Իսկանդարյանը⁶: Նշենք, որ մինչև 19-րդ դարի վերջը Հակոբ Մեղապարտի անունը մոռացության մեջ էր: Թեև հայ առաջին տպագրիչի հրատարակություններից երկուսը 1860-ական թվականներից ծանոթ էին հայ բանասիրությանը, բայց անհայտ էր նրանց տպագրության նույնիսկ մոտավոր տարեթիվը, անհնար էր որոշել նրանց հրատարակման վայրը, ոչ ոք չգիտեր տպագրիչի անունը: Վերջինս ո՛չ հավաստի պորտրեններ ունի, ո՛չ էլ հորինված կերպարանքների պատկերագրային ավանդույթ, և Իսկանդարյանը նրա կերպարն ինքն է հորինել, և հորինել է հիմնականում հաջող: Քանդակագործը, մանրամասն ուսումնասիրելով Հակոբ Մեղապարտի գործունեությունը, ներկայացրել է ֆիզիկապես և մտքով գորեղ մի կերպար: Այստեղ Իսկանդարյանը մոնումենտալիզմի է հասել բարձրաքանդակի ընդհանրացված ձևերի շնորհիվ: Սա բարդ ռակուրսներով, դիտակետերով ոչ այնքան հարուստ, պարզ ուրվագծված

⁴ Խաչատուր Իսկանդարյանի հետ մեր զրույցներից:

⁵ Տե՛ս **Ադապյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, էջ 193:

⁶ Տե՛ս **Մենեչյան Ս.**, Հայ առաջին տպագրիչի հուշարձանը / «Գրքերի աշխարհ», Երևան, 1987, 21 հունիսի:

աշխատանք է: Ըստ երևույթին, Իսկանդարյանն ազդվել է Հին Արևելքի, մասնավորաբար՝ հին եգիպտական նկարիչների և քանդակագործների աշխատանքներից: Նա Մեղապարտի գլուխը ներկայացրել է կիսադեմ, իսկ թիկնեղ ուսերն ու հաղթ իրանը քանդակել ճակատային հանդիպահայաց դիրքով:

Մոնումենտալ-դեկորատիվ արձանագործությունը հոգեբանական խոր վերլուծություններ չի սիրում, դա խորթ է նրա բնությանը: Այն ավելի շատ գործ ունի ժուժկալ միջոցներով արված, ընդհանրացումների ձգտող ու լայն մեկնաբանություն գտած կերպարների հետ: Աշխատանքում քանդակագործը հետապնդել է առավելապես ֆորմալ-ձևական և կոմպոզիցիոն նպատակներ: Դա է պատճառը, որ բարձրաքանդակում չպետք է որոնել հոգեբանական խոր ու բազմակողմանի դրսևորումներ, բայց այնտեղ կան սուր դիտված և ընդհանուր գծերով արտահայտված բնութագրումներ: Հակոբ Մեղապարտի քանդակն աչքի է ընկնում կոմպոզիցիոն յուրահավաք ու ձիգ համակարգով, կերպարային լիավարտ բնութագրով: Այսպես, մեծաչափ հուշարձանի կենտրոնում տպագրիչն աջ ձեռքով հենվել է սեղանին, իսկ ձախով ներկայացնում է «Ուրբաթագիրքը»: Նրա գլխի և ուսերի դիրքը, հակադրվելով աթոռակին դրված աջ ոտքի հետադարձ ձևին, դինամիկ, կտրուկ կոնտրաստ է ստեղծում: Վերևում լույսը խորհրդանշող պատուհան է, որ հայ իրականության մեջ բերում է առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը», տպագրիչի պարզած ձեռքում: Ներքևում իրար վրա շարված 5 գիրք է քանդակված՝ «Ուրբաթագիրքը», «Պատարագատետրը», «Աղթարքը», «Պարգատումարը», «Տաղարանը»: Գրքերի տակ շրջանակի մեջ վերցրած երկգիծ քառակուսու մեջ խաչաձև տպարանանիշն է: Չորս մասի բաժանված շրջանակում լատինական սկզբնատառեր են՝ D. I. Z. A. (Dei Servus Jacobus Zanni Armenius) ինչը նշանակում է հետևյալը՝ «Աստվածատուր հայ Հակոբ Մեղապարտ»:

«Երեկոյան Երևան» օրաթերթի հրատարակած «Հակոբ Մեղապարտի հուշարձանը Երևանում» անստորագիր հոդվածում գրված է հետևյալը. «Խորհրդանշական է, որ Հակոբ Մեղապարտի հուշարձանը կանգնեցված է նրա անունը կրող պոլիգրաֆկոմբինատի շենքի մոտ, ուր կյանք են ստացել Հայկական սովետական հանրագիտարանը, տասնյակ այլ արժեքավոր գրքեր, ուր տպագրվել է հանրապետության պոլիգրաֆիական արտադրանքի շուրջ կեսը: Այս հուշարձանի բացումով ժողովուրդը նշել է մեծ երախտավորի ծննդյան 475-ամյակը: Իսկանդարյանի ինքնատիպ

լուծումներով ու գեղարվեստական արտահայտչականությամբ կատարված կոթողի անկյունում պատկերված է հայերեն տպված առաջին գիրքը...»⁷:

Ինչպես արդեն նշեցինք, հուշարձանը Իսկանդարյանի և ճարտարապետ Մարգարիտ Հայրապետյանի համագործակցության արդյունքն է: Արձանի պարզ պատվանդանը մտահղացված և իրականացված է որպես մեկ ներդաշնակ միասնություն: Կարևոր է նաև գրանիտե պատվանդանի ավելորդություններից զերծ ձևերի օրգանական կապն արձանի հետ: Պլաստիկական արտահայտչականությունը, քանդակի հստակ և ամբողջական սիլուետը, հագուստի լայն ու ձգված ծալքերի համաչափ ռիթմը հանդիսավոր են դարձնում արձանը:

Խաչատուր Իսկանդարյանի անհատականությունը և ստեղծագործական խառնվածքն առկա են նրա յուրաքանչյուր գործում՝ լինի դա դիմաքանդակ, մանրաքանդակ, թե մոնումենտալ կամ դեկորատիվ աշխատանք: Հիմնականում պլաստիկական լակոնիկ եղանակով վերարտադրելով բնորոշների անձնական դիմագծերը, քանդակագործը ձգտել է տիպական ընդհանրացումների՝ մարմնավորելով տարբեր բնավորության ու զբաղմունքի տեր մարդկանց, և ստեղծել անհատականության հանդեպ մեծ ուշադրությամբ աչքի ընկնող, պլաստիկական համոզիչ և գեղարվեստական արտահայտիչ ձևերով կատարված, ներքին բովանդակությամբ լի կերպարներ:

Ն. ՆԱԴԱՐՅԱՆ

Խաչատուր Իսկանդարյանի մոնումենտալ քանդակները Անփոփում

Տվյալ հոդվածը ներկայացնում է Խաչատուր Իսկանդարյանի դիմաքանդակները: Քանդակագործը վարպետությամբ ու սիրով է ներկայացրել իր ժամանակակիցներին, մտերիներին, մեր մշակույթի անվանի գործիչներին (Դ. Դեմիրճյան, Ն.Նիկողոսյան, Օ.Դուրյան, Ռ. Ղազարյան, Կոմիտաս, Մ. Կոստանյան, Մ. Մկրտչյանի Մ.Սարյան...): Վարպետը յուրաքանչյուրի համար գտել է հետաքրքրական լուծում՝ հանդես բերելով մասնագիտական հնարքներին տիրապետելու նուրբ ճաշակ և հմտություն:

⁷ Հակոբ Մեղապարտի հուշարձանը Երևանում / «Երեկոյան Երևան», Երևան, 1987, 9 հոկտեմբերի:

Н. НАДАРЯН

Монументальные скульптуры Хачатура Искандаряна

Резюме

Данная статья представляет портретные скульптуры Хачатура Искандаряна. Скульптор с любовью и мастерством представил своих современников, друзей, известных деятелей искусства (Д. Демирчян, Н. Никогосяна, О. Дурян, Р. Казарян, Комитас, М. Костанян, М. Мкртчян, М. Сарьян...), найдя для каждого портрета особое решение и демонстрируя при этом высокий уровень профессионального мастерства, тонкий вкус и умение.

N. NADARYAN

The Monumental sculptures of Khachatur Iskandaryan's

Summary

The article presents Khachatur Iskandaryan's portraits sculpture. Masterly and with deep love the sculptor has presented his contemporaries, friends, prominent artists of our culture (D. Demirchyan, H. Nikoghosyan, O. Durian, R. Kazarian, M. Kostanyan, M. Mkrтчyan, Komitas, M. Saryan...). The sculptor has found interesting solution for each, demonstrating refined taste and skills in possession of professional proficiency.

**ԱՌՆՈՂ ԹՈՅՆԲԻԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՐՏԳՈՐՇՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ՀԱՏՈՒԿ ՀՈՒՇԱԳԻՐԸ
(1917 թ. ՀՈԿՏԵՍԲԵՐ)**

Բանալի բառեր. Առնոլդ Ջոզեֆ Թոյնբի, Ջեյմս Բրայս, Միացյալ Թագավորություն, «Կապույտ գիրք», Դաշնակիցներ, հայկական սփյուռք, պանթուրքիզմ, համախլամական, հայաստանյայց առաքելական եկեղեցի, ուղղափառներ:

Ключевые слова и выражения: Арнольд Джозеф Тойнби, Джеймс Брайс, Соединенное королевство, “Синяя книга”, союзники, армянская диаспора, пантюркизм, общеисламское, армянская апостольская церковь, православные.

Առնոլդ Ջոզեֆ Թոյնբին (1889-1975) 20-րդ դարի ամենականավոր բրիտանացի պատմաբաններից մեկն է, ինչպես նաև իր ժամանակի միջազգային քաղաքականության խոշորագույն մասնագետներից մեկը: Նա երկար տարիներ դասավանդեց Լոնդոնի համալսարանի (University of London) և Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքագիտության դպրոցում (London School of Economics and Political Science): Թոյնբին հեղինակել է բազմաթիվ գրքեր: Նրա առաջին գիրքը՝ «Հայերի խոշտանգումները» վերնագրով է: Մի ողջ ազգի սպանություն, որը նա գրեց 1915 թ, լուսաբանում և ողջ աշխարհին ահազանգեց հայոց ցեղասպանությունը:

1916 թ Լոնդոնում Ջեյմս Բրայսի հեղինակությամբ և Թոյնբիի խմբագրությամբ լույս տեսավ «Հայերի վիճակը Օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ»¹ փաստաթղթերի ժողովածոն, որտեղ զետեղվեցին բազմաթիվ հաղորդագրություններ և վկայություններ հայոց ցեղասպանության վերաբերյալ, որոնք մերկացրեցին երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը: Հատկանշական է, որ ժողովածոն պատրաստվել էր բրիտանական արտգործնախարարության կողմից և հրատարակվեց 1916 թվականի հոկտեմբերին՝ իբրև բրիտանական խորհրդարանի պաշտոնական «Կապույտ գիրք» զեկուցագիր: Ժողովածոն բաժանված էր 20

¹ *The Treatment of Armenians in the Ottoman Empire: Documents presented to Viscount Grey of Fallodon*, Hodder and Stoughton, London, 1916.

գլխի, որտեղ բերվում էին բազմաթիվ ականատեսների վկայություններ, զեկույցներ, հաղորդագրություններ, մամուլի լուրեր և նամակներ: Այս կարևոր «ամբողջական և իրական» փաստավավերագրական ժողովածուն նպաստեց Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում և աշխարհի այլ երկրներում ուժեղ հասարական ակիբի ձևավորմանը՝ ի պաշտպանություն բնաջնջվող հայության և Հայկական հարցի հանգուցալուծման:

Թոյնբին 1915-ից սկսեց իր աշխատանքները բրիտանական արտգործնախարարությունում (Foreign Office) և նրա՝ պատերազմի տարիներին հեղինակած մի շարք քաղաքական հուշագրերը վերաբերում էին Հայկական հարցին: Թոյնբիի «Հայերի խոշտանգումները, մի ողջ ազգի սպանություն» գիրքը ցնցեց անգլիախոս աշխարհը: 1917 թ հունիսին Թոյնբին նաև գրեց «Թուրքիայի անցյալն ու ապագան» գիրքը, որտեղ նա մեկ անգամ ևս հաստատում էր, որ թուրքերը փորձեցին բնաջնջել հայերին, սակայն իրենց նպատակին չհասան, քանի որ եղան հայեր, ովքեր հրաշքով փրկվեցին: «Հայ ժողովուրդը և Հայաստանը պետք է մեկընդմիջտ ազատագրվեն թուրքական լծից»,- պնդում էր Թոյնբին,- «Եվ Հայաստանը պետք է վերահաստատի իր անկախությունը՝ իր մեջ ընդգրկելով վեց հայկական նահանգները, ինչպես նաև Կիլիկիան, որը կապահովի ելք դեպի Միջերկրական ծով»:²

1917 թվականի հոկտեմբերի 9-ին Թոյնբին բրիտանական արտգործնախարարության տեղեկատվական բաժանմունքի համար պատրաստեց հատուկ հուշագիր՝ «Ազգությունների հարցը Կովկասում» որը անդրադառնում էր Հարավային Կովկասի երեք հիմնական ազգությունների՝ հայերի, վրացիների և թաթարների³ տվյալ ժամանակի քաղաքական և հասարակատնտեսական իրավիճակի վրա: Հուշագիրը պատրաստվեց այն ժամանակ, երբ Մեծ Բրիտանիայի և Դաշնակիցների համար Կովկասը սկսեց ավելի ու ավելի կարևոր դեր խաղալ:

«Ազգությունների հարցը Կովկասում» հատուկ հուշագրում նշվում էր, որ մինչև փետրվարյան հեղափոխությունը, Կովկասը տնօրինվում էր ռուսական փոխարքայության կողմից, որի կենտրոնը Թիֆլիսում էր: Փոխարքան տնօրինում էր բոլոր այն Ռուսական կայսրության տարածքները, որոնք գտնվում էին Ազով-Աստրախան սահմանագծից դեպի հարավ: Կովկասի նախկին փոխարքայության մեջ մտնում էր Հյուսիսային

² Arnold Toynbee, *Turkey: A Past and a Future*, Hodder and Stoughton, 1917, p. 57.

³ Այդ ժամանակ ադրբեջանցիները առավել հայտնի էին այդ անվամբ և միայն պաշտոնապես սկսեցին ադրբեջանցի անվանվել խորհրդային մարդահամարներում միայն 1930-ականների կեսերից:

Կովկասը և դրան սահմանամերձ հարավային Ռուսաստանի այլ տարածքներ, ինչպես նաև Անդրկովկասը, որի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր շուրջ 13 միլիոն:⁴

Դրանցից շուրջ 4.5 միլիոնը ռուսներ էին, ուկրաինացիներ և կոզակներ,⁵ շուրջ երկու միլիոնը՝ վրացիներ: Մոտ 1.5 միլիոնը հյուսիսային Կովկասի տարբեր ազգություններ էին, շուրջ կես միլիոնը՝ իրանական ծագում ունեցող ազգեր (օսեր, թաթեր և պարսիկներ), շուրջ 2.5 միլիոնը՝ թաթարներ (շիա և սուննի) և մոտ 2 միլիոնը՝ հայեր:

Թոյնբին նշում էր, որ հայերն ու թաթարները (որոնք հետագայում սկսվեցին անվանվել ադրբեջանցիներ) ունեն ազգակիցներ Թուրքիայում և Պարսկաստանում: Մինչև հայերի 1915 թվականի կոտորածը, Օսմանյան կայսրությունում հայերը կազմում էին ողջ հայության շուրջ կեսը: Իսկ թաթարները Պարսկաստանի

Ատրպատականի նահանգում կազմում էին շուրջ 1-2 միլիոն: Ռուսաստանում տեղի ունեցած Փետրվարյան հեղափոխությունից հետո, Կովկասի փոխարքայության կազմալուծումից հետո Կովկասի ժողովուրդները առերեսվեցին իրենց բազմաբնույթ ազգամիջյան խնդիրների հետ:⁶

Թոյնբին նշում էր, որ վրացիները գոհ էին, երբ 19-րդ դարի սկզբին տարածաշրջանում հաստատվեց ռուսական տիրապետությունը: Վրաստանի ազնվականությունը ևս օգտվեց Ռուսաց կայսրության ավատատիրական համակարգից, նրանցից շատերը ընդգրկվեցին ռուսական բանակի շարքերը, ինչը նոր հնարավորություններ էր ստեղծում՝ ընդարձակելու իրենց ունեցվածքը և դիրքը: Վրացիները, ըստ նրա, կարծես կողմ էին ռուսականացմանը, սակայն սա իր հետ բերեց նոր կրթական համակարգ, որը ստեղծեց նոր վրաց մտավորականություն: 1904-1906 թթ ռուսական հեղափոխությունը նաև հիմք դրեց վրաց երկու առաջին կուսակցություններին՝ Սոցիալ-դեմոկրատներին և Սոցիալ-հեղափոխականներին, որոնք ստեծվել էին նույնանուն ռուսական կուսակցությունների հիման վրա և սերտորեն համագործակցում էին նրանց հետ:⁷

⁴ CAB 24/28, Department of Information. Intelligence Bureau (Section E). Special Memorandum. The Nationality Problem in the Caucasus, October 9th, 1917.

⁵ Խոսքը նաև հյուսիսային Կովկասին կից տարածքների մասին էր որտեղ ռուսները զգալի մաս էին կազմում: Կոզակները նշվում էին իբրև առանձին ժողովուրդ:

⁶ CAB 24/28, Department of Information. Intelligence Bureau (Section E). Special Memorandum. The Nationality Problem in the Caucasus, October 9th, 1917.

⁷ Նույն տեղում:

Այս երկու կուսակցությունները, ինչպես նաև վրաց ազնվականությունը կողմ էին Ռուսաստանի հետ միաձուլմանը: Պարզապես ըստ Թոյնբիի՝ առաջինները ուզում էին դա անել ձախ, իսկ վրաց ազնվականությունը՝ աջ գաղափարախոսության հիման վրա: Փետրվարյան հեղափոխությունից հետո վրաց մարքսիստ Սոցիալ-դեմոկրատներ Նիկոլայ Չխեիձեն և Իրակլի Մերեթելին ղեկավարեցին Բանվորների և զինվորների պատգամավորների Պետրոգրադի խորհուրդը, որը ժամանակավոր կառավարության հետ մեկտեղ հանդիսանում էր Ռուսաստանի գերագույն գործադիր իշխանությունը: Սակայն նա ընդգծում էր, որ և՛ վրաց հեղափոխականները, և՛ ազնվականները չեն վայելում լայն զանգվածների աջակցությունը: Վրաստանը հետամնաց էր և չունեք արդյունաբերություն, ինչը գրեթե բացառում էր սոցիալիստական գաղափարների տարածմանը այս երկրամասում: Հետևաբար, վրաց սոցիալիստ մենշևիկները հիմնականում ներգրավված էին ռուսական քաղաքականության մեջ, իսկ վրաց ազնվականությունը ռուսական միապետության անկումից հետո կորցրեց իր երբեմնի դիրքը ու հեղինակությունը:⁸

Փետրվարյան հեղափոխությունից հետո առաջ եկան ավելի ազգայնական և պահպանողական կուսակցություններ, որոնք օգտվելով ավելի ազատ միջավայրից՝ սկսեցին ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա քարոզել Վրաստանի ինքնավարության վերականգնումը:

Մատնանշվում էր, որ թաթարները (ադրբեջանցիները) երբեք չեն ունեցել իրենց սեփական պետականությունը, իսկ հայերի վերջին պետականությունը անկում ապրեց 1375 թվականին: Նշվում էր նաև, որ վրացիները, ի տարբերություն հայերի և թաթարների, ովքեր ունեին ազգակիցներ (նախկին Ռուսական կայսրության) սահմանից այն կողմ, ավելի հեշտությամբ կարող են հռչակել իրենց անկախությունը, քանի որ հիմնականում բնակվում են նախկին Ռուսական կայսրության սահմանների ներքո: Սակայն վրացիների ամենամեծ խնդիրը իրենց սակավաթվությունն էր, որը ըստ Թոյնբիի՝ պետք է որ թերևս հրապուրեր իրենց՝ դաշինք կազմելու կա՛մ հայերի, կա՛մ թաթարների հետ:⁹ Նա հավելում էր, որ թաթարների քաղաքական կուսակցությունները սկսեցին ձևավորվել միայն 1917 թ Փետրվարյան հեղափոխությունից հետո: Այդպիսով, թաթարները հայերի և վրացիների նկատմամբ հետ էին իրենց

⁸ Նույն տեղում:

⁹ CAB 24/28, Department of Information. Intelligence Bureau (Section E). Special Memorandum. The Nationality Problem in the Caucasus, October 9th, 1917.

քաղաքական հասունության տեսանկյունից: Թաթարների թույլ կողմերից էր նաև այն հանգամանքը, որ նրանք պառակտված էին մահմեդականության շիա և սուննի դավանանքների տարբերությունների պատճառով:¹⁰

Թոյնբին գեկուցագրում նշում էր, որ թաթարները, ի տարբերություն հայերի և վրացիների, եկվորներ են, որոնց քոչվոր նախնիները գաղթել էին տարածաշրջան 11-15 դդ.: Նա նշում էր, որ թաթարները երբեք չեն ունեցել սեփական թագավորությունը, և տարածաշրջանում հաստատվելուց հետո, մշտապես մաս են կազմել տարբեր թյուրքական կայսրությունների (սելջուկների, մոնղոլների, և հետագայում Պարսկաստանի տարածքում գտնվող, տարբեր միավորներ):¹¹ Սակայն ի տարբերություն Վրաստանի, որը աղքատ երկիր էր թաթարների տարածքներում գտնվում էին եկամտաբեր Կասպից ծովի նավթահորերը: Թոյնբին հավելում էր, որ դանդաղ կերպով սկսում էր ձևավորվել թաթար մտավորականությունը: Ռուսաստանուն տեղի ունեցած Փետրվարյան հեղափոխությունից հետո թաթարները նաև ավելի եռանդուն կերպով սկսեցին համագործակցել Ռուսաստանի այլ մահմեդականների հետ: Դրանով հանդերձ թաթարները, ի տարբերություն հարևան վրացիների, շնորհիվ իրենց թյուրքական լեզվի և մահմեդական կրոնի՝ կարող էին այդ երկու ընդարձակ աշխարհների հետ համապատասխան կապեր ստեղծել:¹²

Ըստ գեկույցի՝ Կովկասում (հյուսիսային և հարավային Կովկասը միասին վերցրած) գոյություն ունեին հավելյալ մեկուկես միլիոն մահմեդականներ: Դրանցից մոտ մեկ միլիոնը տարբեր բնիկ կովկասյան ազգություններ էին և շուրջ կես միլիոնը՝ իրանական ծագում ունեցող ազգեր (հիմնականում թալիշներ, թաթեր և պարսիկներ): Հետևաբար նշվում էր, որ մահմեդականները, իրար հետ վերցրած, ավելի շատ թվաքանակ են կազմում, քան հայերն ու վրացիները միասին վերցրած: 1917 թվականի ապրիլի 28-ին Բաքվի թաթարները կազմակերպել էին Կովկասի մահմեդականների համաժողով: Թոյնբին շեշտում էր, որ թաթարները շատ առումներով կիսում էին օսմանցի թյուրքերի հակահայ տրամադրությունները, և թաթար մտավորականությունը իր գրականությունը կերտելիս հիմնականում հենվել էր օսմաներենի վրա, և այդպիսով նրանք փորձ էին արել իրար մոտեցնել երկու գրական

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Olivier Roy, *The New Central Asia: Geopolitics and the Birth of Nations*, I. B. Tauris, 2007, p. 6.

¹² CAB 24/28, Department of Information. Intelligence Bureau (Section E). Special Memorandum. The Nationality Problem in the Caucasus, October 9th, 1917.

թյուրքերեն լեզուները և դրանով ամրապնդել այս երկու թյուրքական հատվածների կապերը, որոնց արանքում հայերն էին ու Հայաստանը: Թաթարները նաև իրենց ներկայացուցիչներ էին ուղարկել Համառուսաստանյան մահմեդականների վեհաժողովին (1917 թվականի մայիսի 14):¹³

Բաքվում տեղի ունեցած Կովկասի մահմեդականների համաժողովում թաթար ներկայացուցիչները և Կովկասի մյուս մահմեդականները պնդում էին, որ Ռուսաստանը պետք է վերակազմակերպվի ժողովրդավարական և դաշնային սկզբունքների հիման վրա: Թոյնբին նշում էր, որ թեպետ թաթարները կարող են շատ առումներով օգտվել համախլամական և համաթուրանական հոսանքներից, սակայն վերջիններիս համեմատաբար հետամնացությունը խանգարում էր իրենց ճիշտ կազմակերպվել առավելագույնս քաղելու համար այս առավելություններից: Շիաների և սուննիների վիհը հավանական էր, որ խորանար: Նաև այնպիսի հարց, ինչպիսին էր կանանաց իրավահավասարության հարցը, բարձրացվում էր որոշ թաթար մտավորական շրջանակների կողմից և առաջացնում էր պառակտում իրենց և պահպանողական իսլամականների միջև:

Ըստ Թոյնբիի՝ հայերի ընդհանուր թիվը Ռուսաստանում շուրջ 2 միլիոն էր, և նրանք վրացիների պես Կովկասի բնիկ ժողովուրդներից էին: Նա շեշտում էր, որ Կարսի նահանգը, Երևանը և Ելիզավետպոլի նահանգում գտնվող Ղարաբաղի երկրամասը հին հայկական տարածքներ էին: Անին, հայոց ականավոր հին մայրաքաղաքներից մեկն էր և հայկական եկեղեցու կենտրոնը ավելի քան 15 դար գտնվում էր Էջմիածնում, և հայաբնակ տարածքներում առկա էր թաթարական տարր, որը ժամանակին ներխուժել և հաստատվել է այս տարածքներում:¹⁴

Մոտ 160,000 հայեր ապրում էին Թիֆլիսում (քաղաքի թվաքանակով ամենաշատ ազգությունը): 1915 թվականի Իթթիհատի կողմից հայերի համատարած բնաջնջումի ժամանակ շուրջ 250,000 հայ վերապրողներ ապաստան էին գտել Արևելյան Հայաստանում: Օսմանյան կայսրության շուրջ 2 միլիոն հայերի մեծ մասը (արդեն 1917 թվականի դրությամբ) համատարած կոտորածի ժամանակ կամ սպանվել էր կամ բռնի մահմեդականացվել: Ըստ Թոյնբիի՝ վերապրողներից շատերը, որոնց զգալի մասը Միլիայի և Միջազգետքի անապատներում էր, մահանում էին սովից և համաճարակներից:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

Պատերազմը մեծ փոփոխություններ մտցրեց ողջ տարածաշրջանով մեկ: Հայերը, որոնք Ռուսահայաստանում և Թուրքահայաստանում ընդհանուր վերցրած ավելի շատ էին, քան ողջ Կովկասի մահմեդականները և երկու անգամ ավելի, քան վրացիները, Օսմանյան կայսրությունում ստացան ահավոր հարված, որը բնաջնջեց ողջ հայության ավելի քան մեկ երրորդը: Թոյնբին շեշտում էր, որ Փետրվարյան հեղափոխությունից հետո թաթարները սկսեցին պանթուրքիստական և համախլամական կապեր հաստատել Ռուսաստանի իրենց արյունակիցների և կրոնակիցների հետ, իսկ վրացիները գրեթե բան չկորցրեցին, սակայն միևնույն ժամանակ, սահմանափակ են իրենց կարողությունների մեջ: Հայերի ամենամեծ առավելություններից, ըստ Թոյնբիի, իրենց սերն էր դեպի կրթությունը: Սա նաև նախանձ էր առաջացնում հայերի հարևանների մոտ, որոնք նաև սրա պատճառով դիմեցին նրանց նկատմամբ բռնությունների:

Նա հավելում էր, որ հայերի առավելություններից է նաև այն, որ իրենք ունեն աշխարհի տարբեր երկրներում սփյուռք: Մասնավորաբար Թոյնբին հիշատակում էր Նոր Ջուղան, Մումբայը, Կալկաթան, Մինգապուրը, Ալեքսանդրիան, Կահիրեն, Պլովդիվը, Լեմբերգը, Տրիեստը, Վենետիկը, Լոնդոնը, Մանչեստրը, Նյու Յորքը և Չիկագոն՝ իբրև կարևոր առևտրատնտեսական հայկական կենտրոններ, որոնք ունեին լուրջ ազդեցություն տարբեր երկրների հասարակաքաղաքական կյանքում: Ամերիկահայերի հզոր համայնքի կողքին նաև կանգնած էին ամերիկացի միսիոներները, ովքեր Թուրքահայաստանում ունեին լուրջ ներկայություն իրենց տարբեր հաստատություններով հանդերձ: Փաստորեն ամփոփում էր իր զեկուցագիրը Թոյնբին.«Հայերը արդեն ունեին համաշխարհային մի ցանց, որը թաթարները փորձում էին կրկնօրինակել՝ հաստատելով կապեր Ռուսաստանի այլ երկրամասերում ապրող մահմեդականների և թյուրքերի հետ: Բացի դրանից հայերը աշխարհի տարբեր երկրներում ունեին բազմալեզու մամուլ, որը Կովկասյան ժողովուրդներից ոչ մեկը չունեի, և որը իրենց մեծ առավելություն էր տալիս մյուսների նկատմամբ: Սակայն հայերի կրոնական դավանանքը, համեմատած վրացիների և թաթարների հետ, իրենց թույլ կողմերից էր, քանի որ վրացիները ուղղափառ էին և իբրև այդպիսին՝ կարող էին կապ ստեղծել մյուս ուղղափառ երկրների հետ, իսկ թաթարները փորձում էին անել նույնը՝ շնորհիվ իրենց մահմեդական դավանանքի: Սակայն հայաստանյայց առաքելական եկեղեցին, թեպետ քրիստոնեական էր, սակայն տարբերվում էր մյուս եկեղեցիներից, որի պատճառով ստեղծվում էր որոշակի խռչնդոտ: Այդ բացը, ըստ Թոյնբիի, որոշ չափով լրացվում էր հայ կաթողիկե և հայ ավետարանական (բողոքական) եկեղեցիների շնորհիվ, որոնք նպաստում էին հայերի կապերի սերտացմանը հատկապես Արևմուտքի հետ:

Ի տարբերություն թաթարների, որոնք իրենց կազմակերպությունները հիմնում էին իսլամականության վրա՝ հայերը, այս հարցում շատ ավելի առաջ էին, քանի որ քաղաքականությունը գատել էին եկեղեցուց և կրոնից: Վրացիները կրոնական առումով ենթարկվում էին Ռուսաց ուղղափառ եկեղեցուն, սակայն ըստ Թոյնբիի՝ սկսել էին կատարել առաջին քայլերը, որ հաստատեն ազգային եկեղեցի և վարեն ավելի ազգային քաղաքականություն:¹⁵

Գ. Назарян

**«МЕМОРАНДУМ О НАЦИОНАЛЬНОЙ ПРОБЛЕМЕ НА КAVKAZE»
АРНОЛЬДА ТОЙНБИ, ПРЕДСТАВЛЕННЫЙ МИДОМ ВЕЛИКОБРИТАНИИ
(ОКТАБРЬ 1917 г.)**

Известный историк Арнольд Тойнби является автором книги, написанной в 1915 г. об армянском геноциде («Зверства в Армении: Убийство Нации»). В том же году Тойнби начал работать в разведывательном департаменте МИДа Великобритании и во время Первой мировой войны написал целый ряд меморандумов по армянскому вопросу. В «Меморандуме о национальной проблеме на Кавказе», написанном в октябре 1917 г., автор отметил три основные национальности, проживающие в Закавказье: армяне, грузины и татары, (которые после 1930-х в советской переписи были переименованы в азербайджанцев). Тойнби представил сходства и различия между этими народами, каждый из которых имел свои сильные и слабые стороны. Меморандум был написан в то время, когда Кавказ стал стратегически важным объектом для британцев после провала на Кавказском Фронте, который защищала русская армия, это означало, что турки и немцы могут использовать эту возможность для вторжения и захвата всего кавказского региона до Каспийского моря и возможно дальше.

¹⁵ Նույն տեղում:

**ARNOLD J. TOYNBEE'S "THE NATIONALITY PROBLEM IN THE
CAUCASUS" PREPARED BY THE BRITISH FOREIGN OFFICE (OCTOBER OF
1917)**

The renowned historian Arnold J. Toynbee began his academic calling in 1915 by writing *The Armenian Atrocities: The Murder of a Nation*, which documented the Armenian Genocide. That same year Toynbee began working for the Intelligence Department and wrote several important Foreign Office memoranda which dealt with the Armenian Question and related subjects. One of these; *The Nationality Problem in the Caucasus*, was written in October of 1917 and focused on the three main nationalities of Transcaucasia: Armenians, Georgians and Tatars (who after 1930's were officially renamed by the Soviets as Azerbaijanis). Toynbee presented similarities and differences between these three nationalities, each having a number of strengths and weakness. The memorandum was written during a time when Caucasus became an important strategic point for the British since the collapse of the Caucasus front held by the Russian army meant that the Ottoman Turks and Germans would use the opportunity to launch an invasion of the whole region and possibly move beyond the Caspian Sea.

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՍՍՏՏՐՅԱՆ

«Վախ» հասկացության զուգադրական վերլուծությունը
հայերենում և անգլերենում 3

ՌՈՒԶԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Անգլերենի և հայերենի՝ առնմանման համեմատական
քննություն 14

ՆԱՐԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Գրաբարի ապառնի դերբայը միջին հայերենում 21

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Արցախի անկախությունը Բոզդան Վերոյանի գերագույն
երազանքն էր 29

ՌՈՒԶԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ, ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Շեքսպիրի ստեղծագործությունների առաջին հայերեն
թարգմանությունները 37

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՇԱՐՈՒՐՅԱՆ

Միրո բուլգակովյան մեկնաբանումը
հոգեվերլուծության հայեցակարգից 47

ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մկրտիչ Արմենի «Երևան» վեպը 57

ՏԱԹԵՎԻԿ ՄԵՐԶԱՆՅԱՆ

Բարոյահոգեբանական անկման ընդհանրությունները
Նար-Դոսի «Հոգուն վրա հասավ» և «Սև փողերի տոկոսը»
նորավեպերում 67

ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ Հրաչյա Հովհաննիսյանի պատկերաստեղծման արվեստը	76
ՕՏԵԼՅԱ ԴԱԼԱՔՅԱՆ Վ. Պետրոսյանի «Դիմանկարներ կյանքի նովելներից» շարքը	84
ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ Մարդու և բնության կենսահոգեբանական կապերը Զորի Բալայանի ստեղծագործություններում	89
ՎԱՐԴՈՒՀԻ ՄԿՐՏՉՅԱՆ Բնությունը Համո Սահյանի պոեզիայում	94
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ	
ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ Պետրոս Դուրյանի կյանքի և ստեղծագործության ուսուցումը բուհում	100
БЕЛЛА ХОДЖУМЯН Принципы обучения языку специальности армяноязычных студентов-бакалавров	111
ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ «Հայ-արաբական պատմամշակութային առնչություններ» առարկայի դասավանդման մեթոդները	116
АННА МУРАДЯН Изучение суффиксов абстрактных существительных в сопоставлении с армянскими эквивалентами на уроках русского языка	126
ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ Ընտանեկան դաստիարակության գաղափարների արտացոլումը հոգևոր գրականության մեջ	131

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ Խոսքի զարգացման մեթոդական հնարները միջին դպրոցում	138
ԳՈՀԱՐԻԿ ՄԿՐՏՅԱՆ Ընթերցման տեխնիկայի զարգացման իմ փորձն ու նկատառումները	148
ՆՎԱՐԴ ԲԱՐՍԵՂՅԱՆ Ազգային արժեքների ձևավորումը պետական պատվեր	152
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ	
ԱՆՆԱ ԱՍՏԱՏՐՅԱՆ, ՆԱԻՐԱ ՄԱԴՈՅԱՆ Հայաստանի կոմպոզիտորների միության ստեղծումը և կայացումը	155
ՄԱԹԵՆԻԿ ՂԱՓԼԱՆՅԱՆ Միհրան Թումաճանի ֆուլկլորագիտական հայացքները և հավաքչական աշխատանքի սկզբունքները	162
ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Վախուշտի Արքայազնի կյանքը, գործունեությունը, պատմաքաղաքական հայացքները	171
ԳԵՈՐԳԻ ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ Վեդի գավառը 1590 թ. Օսմանյան հարկացուցակում	181
ԱՐԱՐԱՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ Կարսի թագավոր Գագիկ Բ-ի 1065 թ. գաղթը	186
ՆԱՐԵ ՆԱԴԱՐՅԱՆ Խաչատուր Իսկանդարյանի մոնումենտալ քանդակները	201

ԳԵՎՈՐԳ ՆԱԶԱՐՅԱՆ

Առնույժ Թոյնբիի բրիտանական արտգործնախարարության
«Ազգությունների խնդիրը Կովկասում» հատուկ հուշագիրը
(1917 թ. հոկտեմբեր)

208